891.99
Ա-55

«Ժամանակակից Մատենաշար» ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻՒՐԱՏ

391.99

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑ

# ԱՆԻՆ ԾԱԽՈՒԵՑԱՒ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԱՒԵՐԱԿ ԱՆԻՆ

2019

891.99
Ա-55

52

«Ժամանակակից Մատենաշար» ՎԱՂԻՆԱԿ Ս ԲԻՒՐԱՏԻ

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑ

# ԱՆԻՆ ԾԱԽՈՒԵՑԱՒ

ԿԱՄ

(ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1034–1064)

Աշխարհաբարի վերածեց ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

Կ. ՊՈԼԻՍ

1910

Տպագրիչ-Հրատարակիչ ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻՒՐԱՏ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ռուսահայ ծանօթ գրող Պ. ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑի ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ վէպը, որ՝ մօտաւորապէս քանի պրակներէ պիտի բաղկանայ, Եըլտըզէ Սասունի ընթերցողներուն համար, արեւմտեան աշխարհաբարի վերածուած է այս անգամ: Մասնաւորապէս կը յանձնարարուի կարդալ այս յուզումնալից պատմական վէպը, որ մեր ազգային պատմութեան է՛ն տխուր դրուագներէն մէկը կը կազմէ եւ կը պարզէ բոլոր գաղտնի մեքենայութիւնները, որոնց զոհ գնաց Բագրատունեաց այս հոյակապ մայրաքաղաքը, իր նազար ու մէկ եկեղեցիներով ու շքեղակերտ պալատներով, որոնց վեհաշուք աւերակները մինչեւ այսօր սարսուռով կը համակեն ո՛չ միայն մերազնեայ, այլ նոյն իսկ օտարազգի ճամբորդները, եւ պեղումներու անսպառելի գանձ մը կը բանան հնախոյզներու առջեւ, հայկական վաղեմի փառքերու փոշիները քրքրելու եւ անհուն աւերակներուն մէջէն լոյս աշխարհ հանելու հայ ճարտարապետութեան ու քաղաքակրթութեան թաքուն հնութիւնները:

Ահա՛ թանկագին մատեան մը, որ իրաւամբ պիտի գայ իր յատուկ տեղը գրաւել ամեն հայրենասէր հայու մատենադարանին մէջ:

31 Յուլիս 1910 ՀՐԱՏԱՐԱԿԻՉԸ

Կ. Պոլիս

408
40

# ԱՆԻՆ ԾԱԽՈՒԵՑԱՒ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

(1034—1064 թ.)

## Ա.

## ԱՆԽԻՂՃ ՎԱՃԱՌՔ

Քունի մէջ էր Անի քաղաքը...

Նորահարսի նման սպիտակ, արծաթագոյն մշուշով էր քօղարկուեր և ինկած՝ երազներու քաղցր գիրկը, սլացեր էր վե՛ր, վե՛ր դէպի երկինք ու ամենուն աչքին ծածկուեր: Ախուրեան գետն էր միայն, որ օձի նման գալարուելով կը քերէր Անիի ստորոտները և իր պղտոր, ուռած ալիքներով զարնուելով դուրս ցցուած ժայռի կտորներուն կը փրփրար, կը կատղէր, ինքն իրեն կը շուարէր և յետոյ գլուխն առնելով կը կորսուէր հեռո՛ւ...

Բայց կը սահէին ժամերը, երբ բարակ զեփիւռ մը շնչելով շոյեց Անին և գորովագութ մօր նման վեր բարձրացնելով անոր քողը իր անոյշ, մեղմիկ համբոյրը դրոշմեց Անիի հազար ու մէկ եկեղեցիներու գմբեթներուն ու ինքը կարծես վախվխելով փախաւ հեռու դէպի ազատն Մասիս...: Այն ժամանակ սիրուն էր Անին: Լուսնի ցուրտ ճառագայթներն ինկան անոր աշտարակ-

11.02.2013
19376



ներուն, յուրաններուն, գմբեթներուն ու պալատներուն վրայ ու անոր տակին դիւթական սիրուն պատկեր մը։

Դիւթական պատկեր մը կը ներկայացնէր Հայոց Թագաւորութեան խնամակալ Վեստ Սարգսի պալատը, որուն ստորոտին տակ Ախուրեանը կը շռնչէր, կը փոթորկէր, կը զարնուէր, այնպէս զի դուրս նետուի հրուանդանի այդ կտորը, ու հանդարտ և ազատօրէն առաջ հոսի։ Բայց անոր ճիգը կ'ելլէր ի դերեւ։

Ժայռը, որուն վրայ կառուցուած էր այդ պալատը, խիստ ամուր և անսասան էր։ Նոյն իսկ այդ ժամանակն էր, որ Վեստ Սարգիս իշխանը վերջացնելով իր գիշերուան ընթրիքը, բարձրացուց պատուհանի թանձր վարագոյրը և դուրս նայեցաւ։ Դիտեց իր ոտքերուն տակ տարածուած քաղաքը և յուզուեցաւ։ Ի՞նչ էր զինքը յուզողը, յայտնի չէր։ Այդ պահուն, քաղաքին մէջ կը տիրէր խոր լռութիւն մը. երբեմն միայն կը լսուէր պահապաններուն ոտքերու ձայները, որոնք չափաւոր, բայց դանդաղ քայլերով կը շրջէին պարիսպներուն ու աշտարակներուն վրայ, ու հեռուն կը դիտէր։ Այդ ժամանակ գիւղացին ու քաղաքացին, իշխանն ու ազնուականը իրենց անդորր քունին մէջ էին ընկղմած և բան մը չէր յուզեր անոնց սիրտն ու հոգին. իսկ խաշնարածի հօտերն ու ջոկերը ազատութեամբ կը բոցնէին կանանչ խոտը և երփներանգ ծաղիկները։ Գամփռներն անգամ անուշ կը քնանային և ասոնց քունն ալ չէր վրդովէր ո՛չ հարամին և ո՛չ վայրենի գազանը։ Գիշերային այդ պահուն ամէն ինչ խաղաղ էր ու անդորր և խաղաղութեան կենդանի վկաներ՝ Անիի 1001 եկեղեցիներու գմբեթներն էին, որոնք ա՛յնպէս գեղեցիկ կը փայլէին լուսնի արծաթագոյն ճառագայթներուն տակ...։

Վեստ Սարգիս իշխանը այնպէս հրապուրուեցաւ Անիի դիւթիչ, կախարդական տեսարանով, որ աչքերէն



կայծակներ թռան և լայն բանալով աչքերը, կանչեց.

— Հրաշալի՛դ իմ Անի... ո՛հ, ե՞րբ արդեօք դուն ինծի պիտի պատկանիս և ե՞րբ արդեօք գլուխս պիտի պսակուի արքայական թագով...։ Ա՜խ, ես ոչինչ չեմ խնայեր ո՛չինչ, միայն թէ իղձերս կատարուին և գոռոզ Անին իմ հրամանով միայն շարժի... Գահը... բայց ո՞վ կ'արժանացնէ զիս այդ գահին ու թագին։ Գագիկը, իսկական ժառանգը կենդանի է, իսկ իր պաշտպանը, Վահրամ Պահլաւունին իշխանը արթուն։ Մի՞թէ թոյլ կուտա՞յ ինծի այդ բանը գլուխ հանելու...։

Վեստ Սարգիսը լռեց եւ ինկաւ մտածմունքի մէջ։

Վրդովալից էր անոր մտածմունքը։ Վրէժխնդրութեան և բարկութեան կայծակներ դուրս կը թռչէին անոր աչքերէն, իսկ խրոխտ դէմքը, երբեմն կը գունատուէր, երբեմն կ'այլայլէր, իսկ երբեմն դառնապէս կը յուսահատէր...։ Ո՞րու դէմ կը բարկանար ան, կամ ո՞րու կը ժպտէր, յայտնի չէր. միայն թէ այդ ատեն, իր գլուխին վրայէն կ'անցնէին փոթորիկներ, զարհուրելի քան ովկէանի ահեղ ալեկոծութիւնը, որոնք շառաչելով կը զարնուէին իրար, կը փշրուէին, կը նահանջէին ու տեղի կուտային անվրդով խաղաղութեան։

Յանկարծ Վեստ Սարգիսը ցնցուեցաւ և իր լայն բացած աչքերը յառեց դէպի Անիի մէկ փողոցը, ուր սեւ կէտ մը կ'երեւնար։ Այդ սեւ կէտը շիտակ դէպի իր պալատը կ'ընթանար։

— Այս ի՞նչ բան է, մրմռաց Վեստ Սարգիսը, արդէն կէս գիշեր է և փողոցին մէջ դարձեալ մարդ կը տեսնուի։ Այս տեղ անպատճառ բան մը կայ։

Սեւ կէտը հետզհետէ մօտենալով պալատին, կանգ առաւ և շփոթած, սկսաւ աջ ու ձախ նայիլ։

Դրան մօտ կանգնած պահապանը կտրեց առաջքը և խրոխտ ձայնով հարցուց.

— Ո՞վ ես, ի՞նչ կ՚ուզես։

— Իշխանը տեսնել կը փափաքիմ, պատասխանեց, հազիւ լսելի ձայնով մը։

— Բայց այս կէս գիշերո՞վ...

— Այո՛, խիստ կարեւոր գործ ունիմ իրեն յայտնելու։

— Սպասէ՛ ուրեմն, ըսաւ պահապանը եւ երեք անգամ զարկաւ դուռին զանգակը։

Վեստ Սարգիսը շատ զարմացեր էր այդ անակնկալ հիւրին համար, եւ հրամայելով ընդունիլ զայն, ինքնիրեն ըսաւ.

— Տեսնե՛նք, ի՛նչ կ՚ուզէ ինքն, անակնկալ այցելուն, ըսաւ ու ներս մտնելով սկսաւ անհամբերութեամբ պտըտիլ սենեակին մէջ։

Քանի մը րոպէ յետոյ ներս մտաւ գիշերային այցելուն եւ չփոթած, կանգ առաւ դռներուն մօտ։

Վեստ Սարգիսը սուր, թափանցող ակնարկ մը ձգեց անոր վրայ ու զարմացաւ։

Իր առջեւ կանգնած էր միջին հասակով մարդ մը, քահանայական զգեստով։ Դէմքը գունատ էր ու այլայլած. կարծես թէ դեռ նոր ոճիր մըն էր գործեր։

— Նստեցէ՛ք, տէ՛ր հայր, ինչպէս կ՚երեւի դուք շատ յոգնած էք, ըսաւ իշխանը եւ առաջարկեց քահանային նստել։

Քահանան նստաւ ցոյց տրուած գահաւորակին վրայ։ Կը ջանար հանգիստ երեւնալ, բայց սրտի բաբախումը չէր դադրեր դեռ լուռ էր եւ ոչ մէկ բառ չէր կրնար արտասանել։

Վեստ Սարգիսը կը խորազննէր ան ու կը մտածէր։

Այցելուի դէմքը ծանօթ էր իրեն. տեսեր էր այդ քահանան, բայց թէ ո՞ր տեղ, չէր կրնար մտաբերել։

— Իշխա՛ն, վերջապէս ըսաւ քահանան, եւ դողով



աջ ու ձախ նայեցաւ, ես կարեւոր բան մը պիտի հաղորդեմ քեզ, սակայն այդ բանը խոր գաղտնիք պիտի մնայ իմ եւ քու մէջ։

Վեստ Սարգիսի աչքերը տեսակ մը փայլ ստացան. հոգին կը գուշակէր, որ այդ իսկ րոպէին պիտի զարհուրելի լուր մը լսէր։

— Կարող ես վստահ ըլլալ, տէ՛ր հայր, ըսաւ Վեստ Սարգիս։

— Բայց մեզ ոչ ոք չի՞ լսեր։

— Ո՛չ ոք։ Զգուշութեան համար, ես բոլոր դռները կը փակեմ եւ կիջեցնեմ վարագոյրները, ըսաւ իշխանը եւ տեղէն ելլելով փակեց դռները եւ իջեցուց թանձր վարագոյրները։

Մինակ մնացին ճրագի աղօտ լոյսին տակ։ Իշխանը նստաւ քահանային կողքին եւ լուռ անոր կը նայէր, իսկ քահանան դեռ լուռ կը դիտէր սենեկի թանկագին զարդարանքները, որ յունական ճաշակով էին զարդարուած։

— Խօսէ՛, ես պատրաստ եմ քեզ լսելու, ըսաւ իշխանը խորհրդաւոր ձայնով մը։

— Իշխա՛ն, երդուի՛ր Անիի 1001 եկեղեցիներու վրայ. որ այս բանը կը մնայ մեր մէջ գաղտնիք, պատասխանեց քահանան։

— Կ՚երդնո՛ւմ։

— Լսէ՛ ուրեմն ըսաւ քահանան այնքան ցած ձայնով, որ հազիւ կը լսուէր. — դու ինծի պէտք է որ գիս տեսած ըլլաս եւ ճանչնաս։ Ես Կիրակոս քահանան եմ. Կաթուղիկոսի դրան հիւրընկալը։

— Ա՜... կը յիշեմ։ Ես տեսեր եմ քեզ։

— Չորս տարի է որ վերադարձեր եմ։

— Բայց ո՞ւր էիր գացեր։

— Կոստանդնուպոլիս, Հռոմոց թագաւորին մօտ։

— Հռոմայ Թագաւորի՞ն... բայց ի՞նչ կ'ընէիր այդտեղ, հարցուց Վեստ Սարգիսը զարմացած և իր աչքերը յառեց Կիրակոս քահանային վրայ:

— Ես գացեր էի բոլորովին մասնաւոր գործով, երբ բաղտը զիս այնպիսի բանի մը հանդիպեցուց որ տակն ու վրայ պիտի ընէ իմ կանքս, եթէ դուն չ'օգնես ինծի:

— Ըսէ՛, ես պատրաստ եմ օգնել քեզի, եթէ կարողանամ:

— Օ՜... միայն քեզ ճանչցայ այդ գործին յարմար, որովհետեւ քու մասիդ Յունաստանի մայրաքաղաքին մէջ լաւ լուրեր կը պտըտին:

— Ի՞նչպէս:

— Անոնք կը գովեն քեզ և իրենց մարդը կը համարեն. իսկ ինծի ալ այդ տեսակ մարդ մը պէտք էր:

— Ի՞նչպէս, վերջապէս ըսէ՛ և համբերութիւնս մի՛ հատցներ:

— Շտապել պէտք չէ, իշխա՛ն, ես քեզ այս բոպէխայնպիսի գաղտնիք մը պիտի յայտնեմ, որմէ դուն կը սարսափիս:

— Զարմանալի մարդ մըն ես, տէրտէ՛ր, ըսէ՛ վերջապէս գաղտնիքը:

— Լսէ՛, քեզի յայտնեմ որ մեր Յովհաննէս-Սմբատ Թագաւորը Պետրոս Կաթողիկոսին ձեռքով Անին իր շրջակայքով իր մահուանէ ետքը կը յանձնէ Յոյներուն: Հետեւապէս անոր տուած այդ թղթին զօրութեամբ Անին իր շրջակայքով կը պատկանի Յոյներու, բայց...,.:

— Բայց... շարունակեց Վեստ Սարգիսը, որ կ'այրէր անհամբերութենէն:

— Բայց Յոյները այդ չեն պահանջեր, որովհետեւ Անին իր շրջակայքով...:

— Ի՞նչ...:

— Ի՛նծի կը պատկանի ըսաւ Կիրակոս քահանան և



չեչտակի նայեցաւ ուղիղ իշխանի աչքերուն:

— Ինչպէ՛ս, խուլ ձայնով մը հարցուց Վեստ Սարգիս և չանթահարի նման վեր թռաւ տեղէն և իր աչքերը յառելով քահանայի երեսին կ'ուզէ կարդալ աչքերուն մէջ թէ այդ քահանան չ'ըլլա՛յ թէ խելագարուած էր:

— Հանդարտ, իշխա՛ն, հանդա՛րտ, ես խելագարուած չեմ:

— Պարզէ՛ միտքդ, տէ՛ր հայր, ես դեռ չեմ հասկցած թէ ի՞նչպէս Անին քուկդ կ'ըլլայ:

— Շա՛տ պարզ: Այն թուղթը, որով կը յանձնէր Յովհաննէս Թագաւորը Անին և իր շրջակայքը Յոյներու, այդ թուղթը... քովս է:

— Ո՞ւր է, ո՞ւր է այդ թուղթը, ցոյց տուր ինծի, գրեթէ գոռաց Վեստ Սարգիս և խելագարի նման վեր թռչելով տեղէն, նախ չուրջը նայեցաւ, ապա տարաւ դէպի իր սրի երախակալը: Գլխուն մէջ չար միտք մը ծնաւ.—սպաննել Կիրակոս քահանան և տիրանալ այդ թանկագին թղթին. բայց զսպեց ինքզինք, երբ նկատեց, որ, քահանային վերարկուին տակ նոյնպէս սուր մը փայլեցաւ:

— Հանդա՛րտ, իշխա՛ն, մեր աղմուկը կրնան լսել և զուր կասկածի տակ ձգել:

Վեստ Սարգիսը զինաթափ եղաւ և աւելի մեղմ հարցուց:

— Պատմէ՛ տէ՛ր հայր, թէ ի՞նչպէս այդ թուղթը քու ձեռքդ ընկաւ:

— Ես մայրաքաղաքին մէջ էի, երբ Կոստանդին Թագաւորը իր մահուան ժամանակ կանչեց զիս իր մօտ և տալով այդ թուղթը, ըսաւ «Տա՛ր հա՛յ քահանայ, այս թուղթը տա՛ր Թագաւորիդ և ըսէ՛ անոր իմ կողմէն թէ՝ ինչպէս ամէն մահկանացու, ե՛ս ալ յաւիտե-

նականութեան չեմքին վրայ եմ կանգնած, և չեմ ուզեր ուրիշի սեփականութիւնը յափշտակել. Թո՛ղ ուրեմն նա առնէ իր Թագաւորութիւնը, և իր որդիներուն տայ» (1029 Թ.)։ Կոստանդին Թագաւորը մեռաւ և ես այդ Թուղթը քովս պահեցի մինչև այսօր։ Հիմա խորհրդիդ կը դիմեմ Թէ ի՞նչպէս վարուիմ այդ Թղթի հետ, որ կարող է մեծ ապահովութիւն տալ ինծի, արդեօք նորէն վաճառե՞մ Յունաց նոր կայսեր, Թէ՞ յանձնեմ մեր Թագաւորին։

— Վաճառե՜լ... Անին վաճառե՜լ, բացագանչեց Վեստ Սարգիսը խորին մռմռուքով և ապա վայրկեան մը լուռ մնալէ յետոյ շարունակեց.

— Իսկ ո՞ւր է Թուղթը հիմա քո՞վդ է։

Տիրեց լռութիւն։ Երկո՛ւքն ալ կը մտածէին, երկուքն ալ մտքով կը սլանային փառքի և հարստութեան ետևէն և այն՝ փարթամ Անիի փրկանքով, հայրենիքի վաճառքին գնովը...։

— Այո՛, ես համաձայն եմ, վերջապէս ըսաւ Վեստ Սարգիսը, այդ բանը կը նպաստէ նպատակիս հասնելուն և ես ու դուն ապահով կ՚ըլլանք։

— Ուրեմն դուն ալ համաձա՞յն ես ինծի հետ, որ Անին վաճառուի մեր հանգստութեան և փառքին համար, հարցուց վերստին Կիրակոս քահանան և անոր սրտին վրայէն ծանր բեռն իջաւ, երբ լսեց Վեստ Սարգիսի դրական պատասխանը։

Կիրակոս քահանան գտեր էր իր համախոհը։ Մինակը ծանր էր կատարել այդ վատԹար վաճառքը։

— Համաձա՛յն եմ, վաղուընէ պէտք է Պոլիս երԹաս, Յունաց նոր կայսեր՝ Միխայէլի մօտ և անոր յանձնես այդ Թուղթը։ Անոնք մեծ փրկանք կուտան այդ Թուղթին և ատով մեր ճամբան կը հարթուի։ Ես այդ մասին հարկաւոր նամակներ կուտամ։



— Ապրի՛ս, իշխան, ես չեմ սխալիր ընտրութեանս մէջ, պատասխանեց Կիրակոս քահանան ոգևորութեամբ։

Այնուհետև երկար խօսեցան երկու այդ անարժան մարդիկը՝ հոգևորական և աշխարհական, և բաժնուեցան իրարմէ ա՛յն ժամանակ միայն, երբ Անին կ՚ուզէր նոր արթննալ իր անուշ քունէն։

Աննշմարելի Կիրակոս քահանան կերպով մը դուրս ելաւ Վեստ Սարգիսի պալատէն և կորսուեցաւ Անիի փողոցներուն մէջ...։

## Թ.

## ԽԵՆԹԸ

Անին կ՚արթննար...։

Բաձրադիր կաթուղիկէները կը Թօթուէին իրենց վրայէն գիշերային մթութեան քողը և հպարտութեամբ վեր պարզելով իրենց ճակատը, կը սպասէին ողջունելու առաւօտեան անդրանիկ ճառագայթները։

Հազար ու մէկ եկեղեցիներն արդէն կը դղրդէր առաւօտեան «երրորդ» ձայնը, իսկ Անիի շրջականներն ոչխարի մայիւնը, կովերու բառաչիւնը, ձիերուն խըրխինջոցը և հովիւներու սրնգի ու երգի ձայները, որոնք մի խառնուելով եկեղեցիներու զանգերու ձայներուն հետ, մարդկային հոգին կը ցնցէին տեսակ մը կենդանութեամբ, առանձին աշխուժութեամբ, որմէ յետոյ ամէն մարդ լիառատ շրթունքով աղօթք կը մրմնջէր և համբուրելով եկեղեցիի դռները, կ՚երթար իր գործին։

Փողոցները կամաց կամաց կը լեցուէին մարդիկներով։ Կեանքը սկսաւ եռ գալ. իսկ եկեղեցիներու մէջ կ՚սկըս-

ւէր քաղցրանուագ «Սլէլուն» : Իշխանն ու զինուորը, ծերն ու երիտասարդը, կինն ու երախան եկեղեցիներու մէջ ծնկաչոք կ'աղօթէին և գոհութիւն կը մատուցանէին Տէրոջը, իսկ յետոյ կ'սկսէ, Անեցիներու առօրեայ կեանքը, — ծխնելոյզներէն կը բարձրանար ծուխը, մատաղահաս աղջիկները կուժը ուսերնին դէպի աղբիւրները ու Ախուրեանը կըշտապէին, դարբինը կը փչէր իր փուքը և երկաթը կը չոկէր, վաճառականը՝ իր առեւտուրը կը սկսէր, զինուորը՝ իր զինուորական վարժութիւնը, իսկ մանրիկ երեխաները՝ փոքրիկ աղջիկներն ու տղաները կը լեցուէին իրենց տուներուն առջեւ՝ փողոցներու մէջ և կը սկսէին իրենց մանկական զուարթ խաղերը :

Խումբ մը բոկոտն տղաքներ կը խաղային փողոցին մէջ, երբ առանցմէ մէկը ուշադրութիւնը դէպի փողոցի ծայրը դարձնելով, կանչեց.

— Խենթը՛, խենթը՛ կ'ուգայ... :

Մանուկները վայրկեանապէս դադրեցուցին իրենց ուրախ գոռու-գոչիւնը և սլացան դէպ ի փողոցի ծայրը, ուր երեւցաւ խենթը խումբ մը մանուկներով շրջապատուած :

Խենթը միջակ հասակով մարդ մըն էր, մազերը գզգզուած, երկար մօրուքը անկանոն թափթփած, հագուստները պատառոտուն և բոկոտն : Ձեռքը երկար, ծուռմուռ փայտ մը, որուն վրայ երբեմն երբեմն կը կռթնէր ու կատաղութեամբ [illegible?] աչքերը կը դարձնէր չուրջը, ուշադրութեամբ նայելով ամէն անցորդի, կանգ կ'առնէր, կը խօսէր ու կը խօսակցէր : Երախաներէն շատերը կը ծաղրէին զինքը կը քաշէին անոր պատառոտուն հանդերձներէն, իսկ մէկ քանիներ լուռ կը հետեւէին անոր օտարոտի շարժումները : Իսկ հասակաւոր մարդիկ, մանաւանդ ստորին դասին պատկանողները, թէ՛ կին և թէ՛ մարդ «սուրբի կապած» կ'անուանէին զայն



և ամէն յարգանքներ ցոյց կուտային իրեն : Ո՞վ էր այդ խենթը, ո՞ր տեղացի էր, կամ ո՞ր տեղէն կուգար ան առտուները և կամ ո՞ւր կ'երթար, — ոչ ոքի յայտնի չէր : Ամբողջ քաղաքացիք անիկա կը ճանչնային խենթ անուան տակ, որ առաւօտները խիստ կանուխ կը տեսնուէր Անիի փողոցներուն մէջ և գիշերը ուշ ատեն կ'անյայտանար... :

Ահա ձեռքի փայտը ճօճելով կ'անցնի առաջ դէպի Վեստ Սարգսի պալատը, և տեղ տեղ կանգ առնելով՝ կը գոչէ.

Մի հարցնէք թէ ով եմ ես
Վա՜յ ինծի, վա՜յ ինծի
Սիրուն ու շէն Անին եմ ես
Վա՜յ ինծի, վա՜յ ինծի . . .

Կիներն ու հարսները դռներու բացուածքէն կը նայէին խենթին, գլուխնիրնին կը ճօճէին և զանազան ենթադրութիւններ կ'ընէին : Անոնք կը հաւատային թէ սուրբերը կը խօսեցնեն խենթը և թէ՝ Անիի գլխուն մեծ չարիք մը կայ գալիք :

Շատ տեղ, ուր կանգ կ'առնէր խենթը և իր «վա՜յ ինծի, վա՜յ ինծի»ն կըսէր, կանայք կը խաչակնքէին իրենց երեսները և խենթին հաց, պանիր, ձու և այլն կ'առաջարկէին. սակայն խենթը կը նայէր անոնց, գլուխը կ'երերցնէր և ճօճելով իր փայտը կ'առաջանար :

— Է՛յ. Թողէ՛ք զիս, թողէ՛ք, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ... :

Աղջի՛, Մախո՛ւն, կը լսէ՞ք խենթը. ան ալ չարիք մը կը գուշակէ Անիի գլխուն, ինչպէս որ անցած գիշեր կը գուշակէր մեր դրկից Մարօն, և դարձաւ կին մը իր հարեւանուհիին, որ մտամոլոր կը նայէր խենթին ետեւէն :

— Հա՛, Եղսօ՛ ջան, ճիշտ է, աշխարհի վերջը եկեր

է, ժամանակները գէշ, ո՛չ մեծ կայ, ո՛չ փոքր, Աստուծոյ բարկութիւնը շուտով պիտի իջնէ Անիի գլխուն, պատասխանեց հառաչելով:

— Հարկաւ Աստուծոյ բարկութիւնը պիտի իջնէ. Աստուա՛ծ ի՛նչպէս կարող է համբերել այն լրբութիւններուն, որ մեր ջահիլները կը գործեն: Մի՞թէ անցեալ օրուան դէպքը Մայր տաճարին մէջ թէ ինչ օյին հանեցին խե՛ղճ հայր սուրբի գլխուն: Անոնք հայր սուրբի կարճ հասակին վրայ ծիծաղել ուզելով ահագին գրքակալ մը դրեր էին առջևը, որպէս զի խեղճը չ'կարենայ Աւետարան կարդալ ու իրենք վրան խնդան: Հա՛, լաւ խնդացին, անոր անէծքը զուր չ'անցնիր Անեցիներու գլխուն:

— Թո՛ղ Տէրը փրկէ մեզ, պատասխանեց Եղօն, և ներս գնաց:

Մինչդեռ երկու հարևանուհիները կը խօսակցէին այդ միջոցին խենթը Դարբնոց փողոցէն չեղելով Ժամու Բուն փողոցը և իր փայտը շարժելով կանգ առաւ Արքունի պալատին մօտ, ուր կ'ապրէր այդ ժամանակ Վեստ Սարգիս իշխանը: Վերը նայեցաւ, վարը նայեցաւ ու կարծես հիացաւ անոր նուրբ քանդակները ու պատերու դեղին ու սև քարերը, կազմած զարդերը տեսնելով. բայց յանկարծ գոյնը նետեց, աչքերը կատաղութեամբ լեցուեցան և դրեթէ խեղդուած ձայնով մը կանչեց.

Մի հարցնէք թէ՛ ով եմ ես
Վա՛յ ինձի, վա՛յ ինձի,
Սիրուն ու շէն Անին եմ ես . . . :

փայտը պինտ մը գետինը զարկաւ, քանի մը յիմար ոստիւններ ըրաւ և ապա դիմելով Վեստ Սարգիս իշխանի ծառաներուն՝ գոռաց.



— Ի՞նչ էք կեցեր, խենթին գինի տուէ՛ք, գինի...:

— Արի՛, խենթ, արի՛, գինի տանք քեզի կանչեցին ծառաները:

— Հօ՜, հօ՜, հօ՜, ըսաւ խենթը, փայտով ետ քշեց երեխաները և անցնելով սիւնազարդ սրահէն, մտաւ խոհանոց, ուր ծառաները համով կերակուրներ կը պատրաստէին իշխանին համար: Խենթին գինի տուին, ան առնելով գաւաթը, դատարկեց, մի քանի ծամածռութիւններ ըրաւ ու խնդացուց ծառաները:

— Խենթ, գինի դեռ կ'ուզես կը հարցնէին:

— Տուր գաւաթ մըն ալ, ըսաւ և նոյնն դատարկելով սկսաւ աւելի խնդութիւններ ընել ու զուարճացընել ծառաները:

Կարճ ժամանակ անցաւ և խենթը յանկարծ ձեռքերը գլխին զարկաւ, փայտը մէկդի շպրտեց և առանց խօսք մը ըսելու պառկեցաւ անկիւն մը: Քիչ յետոյ իր խռմփոցը լսուեցաւ:

Ծառաները բնաւ ուշադրութիւն չ'դարձուցին անոր վրայ. կը ճանչնային խենթը, և այդ առաջին անգամը չէր, որ խենթը մէկ երկու գաւաթ գինի խմելէ յետոյ կը քնանար խոհանոցը: Անոնք արդէն մոռցան խենթը և հիմա սկսան իրարու հետ կատակներ ընել:

— Կարօ՛, այս գիշեր ո՞վ էր, մեր իշխանին մօտ եկաւ, հարցուց ծառայ մը դռնապանին որ դեռ նոր մըտած էր իր բաժին կերակուրը առնալու:

— Չ'գիտեմ, քահանայ մըն էր և գիտե՞ս լոյսը կը բացուէր երբ հեռացաւ: Այս գիշեր մեր իշխանը չի քնացաւ:

— Ի՞նչ կար որ: Մի՞թէ կարևոր գործ էր:

— Չե՛մ գիտեր: Ախոռապանին արդէն հրամայուած է չորս ընտիր ձիեր պատրաստել այս գիշերուան համար: Կարծեմ թէ այդ քահանային հետ Հոռոմոց երկիրը պիտի ուղեկցին:

Խենթը, որ ամենեւին քնացած չէր, այլ դիտմամբ քնացած կը ձեւանար, ցնցուեցաւ երբ այդ խօսքերը լսեց, բայց շուտով զսպեց զինքը, որպէս զի ծառաները խելամուտ չ'ըլլան ու անուշ մը քնացած ձեւացնելով, իր խռմփոցը շարունակեց:

— Զարմանալի՜ բան, մեր իշխանը հռոմներ չատ կը սիրէ, միշտ անոնց հետ կը թղթակցի:

— Հա՛, բայց Աստուած վե՛րջը բարի ընէ, ըսաւ դռնապանը և դուրս ելաւ: Խօսակցութիւնը ընդհատուեցաւ:

Խենթը մէկ քանի անգամ դարձաւ կրակի վրայ խորովուողի մը նման, ապա յանկարծ վեր թռաւ տեղէն, վայրկենաբար չորս կողմը նայեցաւ և կանչեց:

— Է՜յ, հէ՜յ... ջո՜ւր տուէք ինծի սիրտս կ'էրի, ջո՜ւր...:

Ջուր տուին, խմեց, փայտը կրկին ձեռք առաւ և դուրս ելաւ խոհանոցէն, կրկին կանչեց իր հին երգը:

Բայց այս անգամ ձայնը կը դողար ու սրունքները կը ծալլուէին: Իսկ ուշադրութեամբ նայողը կը կը տեսնէր, որ անոր աչքերէն առատօրէն կը թափէր արցունքը, և գլորուելով անոր գզգզուած մօրուքի վրայէն գետինը կ'իյնար:

Խենթը կուլար:

Գ.

## . ՓՈԹՈՐԻԿԻ ՄԷՋ ԷՆ

Բնութեան տարերքը կատղած էին:

Սպառնալից ամպերը կծկուած էին, ամէն ինչ կորսուած էր, խորին անթափանցելի խաւարին մէջ:

Զարհուրելի փոթորիկ մը պիտի պայթէր Անիի գլխուն. մրրիկը սոսկալի կատաղութեամբ կը փչէր և բուքին ուժով յարձակելով Անիի պարիսպներուն վրայ կ'ուզէր խորտակել, հիմնայատակ ընել զանոնք, բայց դիմադրութեան հանդիպելով՝ ետ կը նահանջէր դէպի արձակ ու ազատ դաշտերն ու ձորերը և այն տեղ կը սկսէր յուսահատ ոռնումը...:

Անիի շրջակայքը քամին կ'ոռնար ու կուլար լալագին, կը կորսուէր հեռու և կ'անյայտանար լեռներու մթին խորշերուն մէջ: Բնութեան տարերքի այդ արհաւիրքի պահուն, չորս ձիաւոր մարդեր ոտից ցգլուխ զինւած, մօտեցան Անիի Կարուց դռանը և կանգ առին: Այդ դուռը փակ էր և պահապանը չէր երեւնար:

— Անիծեալ պահապանը չէր երեւնար, ո՞վ գիտի մեզի համար դուռը բանայ, մռմռաց ձիաւորներէն մէկը:

— Հա՛, խնդիր ալ է թէ, մեզի պէտք չէր անոր թթուած դէմքը տեսնել պատասխանեց միւսը:

Առաջ անցան և սկսան դուռը ծեծել: Իսկոյն եբեւցաւ պահապանը և իր երկայն նիզակին կրթնած, կանչեց.

— Ո՞վ կայ հոն:

— Բա՛ց դուռը, ըսաւ ձիաւորներէն մէկը և ձին առաջ քշեց խիզախօրէն:

— Սպասեցէ՛ք, չէ՛ կարելի, նշանաբանը ըսէ՛ք:

— Կեցցէ՛ Գագիկ, ըսաւ ձիաւորը:

— Ճի՛շտ այդպէս է, անցէ՛ք, բայց լաւ օր չէք տեսներ այս փոթորկին, ըսաւ պահապանը և դուռը բանալով ձիաւորը ձգեց Անիի պարիսպներէն դուրս և քիչ յետոյ չոնչխնով նորէն փակելով մռմռաց.

— Զարմանալի մարդիկ կան, որ այս տեսակ փոթորկի ժամանակ ալ հանգիստ չեն մնար և կը մտածեն ճամբորդել: Ինչ է, միթէ չեն կրնար սպասել լուսնար:

Մինչդեռ պահապանը դուռը կը փակէր և ինքնիրեն կը մռմռար, ձիաւորները չտապով կը սլանային դէպի Կարին տանող ճամբան:

— Աստուա՛ծ վկայ, լաւ ժամանա՛կ ընտրեցինք: Մեզ ոչ ոք չ'նշմարեր, ըսաւ ձիաւորներէն մէկը:

— Այո՛, լաւ ժամանա՛կ ընտրեցինք, բայց մրրկի պէտք բռնուինք. կը տեսնե՞ս ինչպէս կը փչէ. կրնայ մեզ ձորը ձգել, կամ ժայռէն վար գլտորել, պատասխանեց միւսը:

— Չէ՛, քամին բան մը չկրնար ընել, եթէ դեւերը մեզ չը մոլորեցնեն, սրախօսեց միւսը:

Դեւերը գործ չունին հոս, մռմռաց միւսը և ձեռքը դողալով դէպի ծոցը տարաւ, ուր թուղթ մը չօշափեց: Կարծես թէ կը վախնար որ դեւերը չ'յափշտակեն այդ թանկագին թուղթը, որուն բովանդակութիւնը միայն ի՛նքը գիտէր:

Ձիաւորները լռիկ կ'առաջանային. մրրիկը, հետզհետէ կը կատղէր և հեռուէն կը լսուէր արդէն որոտման խուլ դղրդիւնը. քիչ յետոյ պիտի սկսէր տեղատարափը: Եւ արդէն, գիշերային ճամբորդները դեռ մէկ քանի մղոն չէին հեռացեր, երբ առաջին փայլակը, դողդողալով, վայրկեան մը միայն լուսաւորեց և դարձեալ խոբին խաւարի մէջ ընկղմեց շրջակաները:

Այդ միջոցին առջեւէն գացող ձիաւորը՝ յանկարծ սանձը քաշեց և կեցուց երիվարը:

— Ի՞նչ կայ, տէ՛ր հայր, ինչո՞ւ ձին կեցուցիք հարցուցին միւս ձիաւորները, շրջապատելով առջեւէն գացող ձիաւորը, որ մեզի ծանօթ Կիրակոս քահանան էր:

— Փայլակի լոյսին տակ մարդ մը անցաւ մեր ճամբուն մէկ կողմէն միւսը, և խրամատին մէջ պահուըտեցաւ: Կը վախնամ որ մեզ լրտեսողներ ըլլան:

— Օ՜, այդ անկարելի է, իշխանէն մենք հրաման



ունինք, որ սպաննենք ամէն լրտես կամ մեզ արգելք եղող, պատասխանեց միւսը:

— Պէտք է քիչ մըն ալ սպասել և կրկին փայլակի լոյսով դիտել շրջակայքը, եթէ ոչ, ծուղակի մէջ կ'իյնանք:

Փայլակը նորէն շողաց աւելի երկար և աւելի ահարկու, բայց շուրջը ամայութիւն կը տիրէր և ոչ մէկ շարժուն կէտ չէր երեւնար: Կիրակոս քահանան լայն բացած աչքերով կ'ուզէր մէն մի քար, մէն մի թուփ խուզարկել, սակայն վայրկենական լոյսով բան մը չէր կրնար ընել:

— Չէ՛. տէ՛ր հայր, բա՛ն մը չկայ, ինչպէս կ'երեւայ գազան կամ ուրիշ կենդանի մըն է եղեր. որ չպատսպարելով անցեր է մեր ճամբուն վրայ, թէ չէ ո՞վ կը համարձակի դուրս ելլել այս եղանակին: Միթէ մտադի՞ր են անոնք գազաններուն կերակուր դառնալու:

— Այո՛, ա՛լ ոչ ոք չ'երեւնար, բայց ես սխալած ըլլալու չեմ: Կարծեմ թէ մարդ մըն էր որ անցաւ, ըսաւ Կիրակոս քահանան, մտմտալով:

— Դաշտը ընդարձակ է, մենք կրնանք շեղիլ մեր ճամբէն, և փոխանակ շիտակ ճամբէն երթալու՝ դաշտին մէջէն երթալ և յետոյ դարձեալ շարունակել ճամբան:

— Չէ՛, այդ անկարելի է: Գիշերը մութ է, և մենք ճամբան կրնանք կորսնցնել կամ խրամատներու հանդիպիլ:

— Վախցող մարդը գիշերով տունէն պէտք չէ՛ մեկնի ըսաւ մէկը, և ձին առաջ քշեց: Անոր հետեւեցան միւսները: Քանի մը քայլ դեռ չէին ըրած, երբ յանկարծ, քարերու տակէն մարդ մը դուրս ելաւ ու կեցաւ ձիաւորին առջեւ:

— Անձնատուր եղէ՛ք, ապա թէ ոչ ձեզի մա՛հ կը սպառնայ, գոռաց այնպիսի խռոխտ ձայնով մը, որ մեր

ճամբորդներուն մարմինէն ցուրտ դող մը անցաւ։ Անոնք պահ մը քարացածի նման անշարժ մնացին և յետոյ, երբ փայլակի լոյսին տակ դիտեցին, որ զիրենք շրջապատողը՝ միայն հետիոտ մարդ մըն է, խելքերնին գլուխնին ժողովեցին և սուրերնին հանելով յարձակեցան անոր վրայ։

— Ինչ, դուք կռուի՞լ կ՚ուզէք, կանչեց նոյն ձայնը և իր ձեռքի ահագին փայտով զարկաւ ձիաւորին, որ տեղն ու տեղը շունչը փչելով՝ վար գլորուեցաւ ձիէն։ Միւս ձիաւորները տեսան իրենց ընկերոջ մահը և աւելի կատաղութեամբ յարձակեցան. սակայն իրենց թրերով վնաս մը չկարողացան տալ երկար փայտին, որ աջ ու ձախ հարուածներ կը հասցնէր և մէկը միւսին ետեւէն կիսամեռ կը տապալէր։ Այդ խառնակութեան ժամանակ ձիաւորներէն մէկը չեղելով ճամբէն, կորսուեցաւ թմբի մը ետեւ, երբ դարան մտնող մարդը իր փայտով այնպիսի հարուած մը իջեցուց վերջին ձիաւորին, որ ան չ՚կրցաւ անգամ մը ձայն հանել և փայտի մը պէս գլորեցաւ գետին։ Դարան մտած մարդը՝ փայտը դեռ աջ ու ձախ կը պտըտցնէր ու ինքնիրեն կ՚ըսէր։

— Ո՞ւր էք, ալ չկա՞ք, ալ չկա՞ք...։

Տեսնելով որ ա՛լ մարդ չկար, որու հետ կարող ըլլար կռուիլ, դարան մտած մարդը փայտը մէկդի նետեց և մօտենալով կիսամեռ մարդուն, որուն բերանէն փրփուր և արիւն կը պոռթկար, գոչեց.

— Էյ, անիծեալ արմատ, ըսէ՛, ո՞ր սատանի քամին կը տանէր ձեզ և ո՞ւր։

Ինկած մարդը մահամերձ խռխռոց կը հանէր և մէկ քանի անկապ կցկտուր խօսքեր կ՚արտասանէր։ Կարծես թէ իր լայն բացած աչքերով կուզէր տեսնել թէ ո՞վ էր իրեն հետ խօսողը։ Եւ երբ փայլակի լոյսին տակ նշմարեց իրեն վրայ կռթնած մարդը սոսկալով ցնցուեցաւ,



ճիգ ըրաւ գլուխը բարձրացնելու, բայց նորէն գլուխը վար ձգելով կանչեց.

— Խենթը՛...

— Հա՛, խենթը, լաւ ճանչցար, ըսէ՛, ո՞ւր կ՚երթայիք, եթէ ո՛չ մաս մաս կ՚ընեմ քեզ։

Բայց վիրաւորը մէկ քանի անկապ խօսքեր ալ ըսաւ և յանկարծ մորթուած հաւի մը նման քանի մը ցնցումներ ընելով մնաց անշարժ. Մեռած էր։ Մեր խենթը, երբ անոր մահը դիտեց, զայն ձգեց և մօտեցաւ միւսներուն ճամբան, երեք դիակ միայն գտաւ, որոնց հագուստները և գրպանները քրքրելէ յետոյ, ուզեց չորրորդ ձիաւորն ալ խուզարկել, բայց անոր դիակը չ՚գտաւ։ Խենթը սոսկաց։

— Ո՞ւր է չորրորդը։ Չորս էին անոնք։ Չորս ձի, չորս մարդ։ Վա՛յ ինձ, փախա՛ւ, տարաւ, ըսաւ ու երկու ձեռքով գլուխը ծեծեց։

Այդ միջոցին ճիշտ իր գլխուն ամպը կարծես ճաթեցաւ. լսուեցաւ որոտման ահռելի դղրդիւնը և խոշոր անձրեւը սկսաւ թափիլ խենթի գլխուն...։

Խենթը պահ մը կանգ առաւ, խոր ա՛խ մը քաշեց և իր փայտն առնելով, առաջ անցաւ և կորսուեցաւ խոր մթութեան մէջ։

Գ.

## ԿԻՐԱԿՈՍ ՔԱՀԱՆԱՆ

Վոսփորի գեղարուեստական ափերուն վրայ, 1044 թուականին կը ծաղկէր ու կը բարգաւաճէր Բիւզանդիոնի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս։ Մէկ կողմէն Պոնտական (Սեւ ծով) իսկ միւս կողմէն Միջերկրական ծովերու եզերքներէն վաճառականական նաւերը կը

չտապէին դէպի Յունաց այդ քաղաքը և վաճառականութեան հետ միասին կը ծաղկեցնէին նաև այդ քաղաքին ճարտարապետութիւնը։ Առտուան ժամը տասն է։ Կ. Պոլիսը խիստ մեծ խռարանցումի մը մէջ էր։ Կեանքի եռուզեռը կ'ըսկսէր եւ ամէն դասակարգի մարդիկ մրջիւններու նման անց ու դարձ կ'ընէին զանազան փողոցներու մէջ։ Բեռնակիրները նաւահանգիստներուն մէջ կը փոխադրէին նաւերէն զանազան ապրանքներ, կամ դէպի նաւերը կը կրէին հակերով բեռները։ Փոքրիկ նաւակներով կ'անցնէին իշխաններն ու իշխանուհիները Վոսփորի մէկ եզերքէն միւսը, իսկ զինուորականները զարդարուած զէնքով ու զրահով, փայլուն զգեստներով և հեծած նժոյգներու վրայ, արագապէս կը սլանային Կ. Պոլսոյ փողոցներէն։ Այդ միջոցին, Յունաց Միքայէլ կայսեր պալատն ալ կը դղրդար պալատականներով, իշխաններով և զինուորականներով։ Թէեւ խումբ մը պահապաններ կը հսկէին պալատին մուտքը, սակայն ամէն դասակարգի մարդիկ անց ու դարձ կ'ընէին պալատի շքեղ աստիճաններէն, ներկայանալու Միքայէլ կայսեր։ Ընդհանուր դահլիճին մէջ արդէն հաւաքուած էին շատ խնդրարկուներ և պալատի սենեկապետը մէկ մէկ կը հրաւիրէր զանոնք կայսեր առանձնասենեակը, ուր ինքը կայսրը գահի վրայ բազմած կ'ընդունէր այցելուները և կը լսէր անոնց խնդիրը։

Դահլիճի այցելուներուն մէջ կը գտնուէր հայ քահանայ մըն ալ, որ եկեր էր ներկայանալու կայսեր կարեւոր գործի մը համար, որ դեռ գաղտնիք էր ամէնուն համար և այդ էր պատճառը, որ դեռ անոր վրայ ո՛չ ոք ուշադրութիւն չէր դարձներ։

Թէեւ աննշան հայ մը, և այն ալ քահանայ, դեռ շատ պիտի սպասէր, մինչեւ որ արժանանար կայսեր տեսութեանը, որովհետեւ ամենէն առաջ կ'ընդունուէին



պաշտօնական և զինուորական անձինք, որոնք մեծ յարգանք կը վայելէին այդ ժամանակ թէ՛ պալատին և թէ՛ քաղաքին մէջ։

Միջահասակ մարդ մըն էր այդ քահանան, ճաղատ և խորամանկ աչքերով, որոնք թաղնուած էին անոր դուրս ինկած յօնքերուն տակ։ Մօրուքը ցանցառ և չէկ, իսկ դէմքին արտայայտութիւնը խրոխտ և յանդուգն։ Արդէն մէկ քանի ժամէն աւելի էր որ կը սպասէր, բայց դեռ չէին հրաւիրեր զինքը։ Յայտնի էր, անհամբերութեամբ կը սպասէր այն րոպէին, ուր զինքը ներս պիտի հրաւիրէին և իր գործը պիտի վերջացնէր։

Ըստ երեւոյթին, այդ «գործը» զինքը անհանգստութեան մէջ էր ձգած։ Մինչեւ իսկ մէկ քանի անգամ մտածեց մեկնիլ պալատէն, հրաժարիլ իր մտադրութենէն, բայց կրկին կը զսպէր զինք, կը սպասէր հետեւանքին. կը սպասէր վերջացնել իր գործը, որմէ կախուած էր իր ապահովութիւնն ու երջանկութիւնը։ Այդպէս կը մտածէր, այդպէս համոզուած էր ան։

Վերջապէս իրեն եկաւ կարգը, և ներս հրաւիրուեցաւ։ Առաջին անգամ սիրտը դող ինկաւ, բայց յետոյ ինքզինք հաւաքեց և ներս մտաւ կայսեր առանձնասենեակը։ Երկիւղածութեամբ աչքերը վերցուց և տեսաւ, որ ինքը Յունաց հզօր կայսեր առջեւ կը գտնուի։ Իսկոյն ծունկ չոքեց և համբուրեց կայսեր քղանցքը։

Կայսրը խրոխտ էր և դեռ չէր դիջանէր իւր նայուածքը ուղղելու դէպի ողորմելի քահանայ մը։ Վերջապէս խօսեցաւ.

— Ո՞վ ես և ի՞նչ կ'ուզես, ըսաւ։

— Կիրակոս հայ քահանայ կ'ըսեն ինծի, ամենահզօր կայսր, ըսաւ դողդոջուն ձայնով քահանան և երկնցուց դէպի կայսրը թղթի փաթեթ մը։

Միքայէլ կայսրը կարդաց թուղթը և գոյնը նետեց։

Ուրախութեա՞ն թէ՛ բարկութեան վրդովմունք մըն էր
որ անցաւ կայսեր դէմքին վրայ — յայտնի չէր, միայն
թէ թղթի ընթերցումը խոր տպաւորութիւն մը գործեց
անոր վրայ: Ըստ երեւոյթին այդպիսի բան մը չէր սպա-
սեր: Դեռ նոր իր զինուորականներուն հետ կը խօսէր
Հայաստանի մասին ու ծրագիրներ կը կազմէր Հայաստա-
նը ձեռք ձգելու և յանկարծ բաղդի բերմունքով, իր
ձեռքն կը տրուի Հայոց Յովհաննէս-Սմբատ թագաւորին
առ իւր նախորդն ուղղած կտակի թուղթը, որով անիկա
Հայաստանը Յոյներուն կը յանձնէ:

— Ո՞վ տուաւ քեզ այս թուղթը, հարցուց կայսրը:

Ձեր նախորդ Կոստանդին կայսրը, Տէ՛ր, մահուան
անկողնէն կանչեց զիս և տալով այդ թուղթը, հրա-
մայեց ետ տալ Հայոց Յովհաննէս-Սմբատ թագաւորին,
սակայն ես...

— Սակայն դո՞ւ...

— Ես պահեցի քովս որպէս զի յանձնեմ Ձերդ
Մեծութեան:

Կայսրը լուռ, ապուշ կրթած աչքերով կը նայէր
դաւաճանին ու կարծես մտքովի կ'ըսէր. «Հայրենիքիդ
ստոր և ցա՛ծ դաւաճան»: Նա սոսկումով կը լսէր Կի-
րակոս քահանայի խօսքերը և կը զարմանար, որ այդ
ըսողը հայ է և այն ալ՝ հայ քահանայ մը:

— Ի՞նչ կ'ուզես ասոր փոխարէն, հարցուց կայսրը
կարճ լռութենէ մը ետքը:

— Ահա՛ այս նամակիս մէջ յիշուած է ամէն ինչ,
պատասխանեց Կիրակոս քահանան և յանձնեց կայսեր
ուրիշ գրութիւն մը: Կայսրը կարդաց այդ նամակն ալ
ու գոհունակութեան ժպիտ մը փայլեցաւ անոր դէմքին
վրայ: Այդ նամակը՝ հայ իշխան Վեստ Սարգիսէն էր,
որ Հայաստանը՝ Յոյներուն կը խոստանար տալ, միայն թէ
վարձատրէին զինքը: Ան ամէն պատրաստակամութիւն



կը յայտնէր օգնելու, Հայաստանը Յոյներու ձեռքէ
տալու:

— Ըսէ՛, խնդրէ՛ ինձ ինչ որ կը ցանկաս, ես կը
կատարեմ խնդիրդ, ես կը տեսնեմ որ դուն հաւատարիմ
ծառայ մ'ես ինծի, ըսաւ կայսրը, ժպիտը երեսին:

— Ես Ձերդ Մեծութեան առողջութիւնը կը ցան-
կամ և կը խնդրեմ վարձատրել զիս, որպէս զի ապա-
հովցընեմ կեանքիս վերջին մնացորդը, ըսաւ Կիրա-
կոս քահանան գլուխը վար ծռելով:

Միքայէլ կայսրը ցաւակցաբար գլուխը շարժեց:
Նա զգաց որ անպիտան քահանան իր ապահովութեան
համար կը ծախէ իր հայրենի ազատութիւնը, ուստի
դառնալով իր պալատականներուն, ըսաւ.

— Ամենալաւ պատիւները տուէք այս քահանային և
մեծ քանակութեամբ ոսկիով վարձատրեցէք: Սա մեծ
ծառայութիւն մ'էկ՛ըրէ մեզի: Յետոյ դառնալով Կիրակոս
քահանային աւելցուց.

— Յայտնեցէ՛ք իմ համակրանքս Հայոց թագաւո-
րութեան խնամակալ իշխան Վեստ Սարգսին և ըսէ՛ք,
որ ինք ալ կը վարձատրուի ինէ և շուտով զօրավար-
ներէս մէկը կուղարկեմ Հայաստանը գրաւելու. այն
ժամանակ, ես վստահ եմ, որ Հայերը ազատ շունչ կը
քաշեն զանազան բաղդախնդիր իշխաններու բռնա-
թիւններէն և բարբարոսներու յարձակումներէն:

Կիրակոս քահանան գլուխը խոնարհեց կրկին համ-
բուրեց կայսեր զգեստի փեշին ծայրերը և գոհ սրտով
մեկնեցաւ:

Ամէն բան կատարուած էր...:

Ե.

# ԾԵՐՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

1040 թուականին մեռնելով Յովհաննէս-Սմբատ Հայոց թագաւորը, Հայաստանը երերուն դրութեան մէջ ինկաւ: Վերջին օրհասը մօտ էր, և Բագրատունեաց շառաւիղը պիտի մարէր ընդ միշտ: Այդ էր թուլամորթ թագաւորին կտակը, ա՛յդ էր անոր թողած յիշատակը: Ան մեռնելով ժառանգ չ'թողուց: Ո՛չ, թողուց, բայց ոչ կենդանի, խօսուն արարած, որ կարենար լուանալ իր խայտառակ թուլամորթութիւնը, այլ թուղթ մը, կտակ մը, որով իր նախնիքներէն սրբագործուած երկիրը՝ իր մահէն յետոյ կը յանձնէր Յոյներուն: Շատ սուղ ծախսեց ինքզինք. հազարաւորներու և տասնեակ հազարաւորներու իր վերջին արիւնով ու տանջանքով ապահովցուց իր վերջին օրերը և ազգին ազատութիւնը կորսնցնելով՝ գերեզման իջաւ...:

Սև յիշատակ: Ճիշտ այդ ժամանակն էր և դեռ թուլամորթ թագաւորին հոգին կը պտըտէր Անիի վրայ, երբ հայ իշխաններէն մէկը՝ Վահրամ Պահլաւունին սև սուգի մէջ էր մտեր: Ան սուգ կը պահէր ո՛չ թէ թագաւորին համար, այլ ազգին, Անիի 1001 եկեղեցիներուն համար: Ան կ'զգար որ անոնք պիտի կործանուէին, որ Հայաստանը պիտի կործանուէր ի՛ր իսկ ազգէն օտարներու ոտնակոխ ըլլալով պիտի տանջուէր, չարչարուէր և անէ՛ծք միայն պիտի կարդար իր թագաւորին:

Վահրամ Պահլաւունիին յայտնի էր թագաւորին կըտակին գոյութիւնը և այդ բանը խիստ կը յուզէր և կը կսկծեցնէր անոր սիրտը: Երեք օր էր որ դուրս չէր ելած, ոչ ոքի երես չէր ուզեր տեսնել, ոչ մէկը չէր ուզեր ընդունիլ, այլ փակուած իր սենեակին մէջ, ինկեր



էր մտածութեանց ծովը՝ և ելք մը կը փնտռէր Հայաստանը՝ այդ անելանելի դրութենէն ազատելու, բայց ոչ մէկ բանի վրայ չէր կրնար կանգ առնել: Մտքերը, ահարկու կերպով կը պաշարէին զայն, և տակն ու վրայ կընէին անոր սիրտը: Երբեմն երբեմն այդ մտքերը վիթխարի գազաններու նման գլուխնին վեր կը բարձրացընէին և կը յուզէին անոր սիրտը, կը ճնշէին, տակն ու վրայ կընէին զինքը, կարծես թէ պիտի ցամքէր անոր արիւնը երակներուն մէջ, կամ ցնդէր ուղեղը: Այդ ժամանակ, վայրենի մռնչիւն մը միայն դուրս կը թռչէր անոր բերնէն, և անոր խոր աչքերէն բոց ու կրակ կը ժայթքէր: Վա՜յ այն թշնամիին, որ այդ ժամանակ անոր կ'երեւնար. ան պատրաստ էր անոր արիւնը անգամ խմելու: Իսկ երբեմն մտածումները կը գուրգուրային, կը փայլէին և իրենց թեւերուն վրայ կը տարածէին զինք ո՜վ գիտէ ո՛ւր: Այն ատեն միայն անոր աչքերուն մէջ կ'երեւնային արցունքի վճիտ կաթիլներ, որոնք կը գլորուէին անոր ալեզարդ մօրուքէն վար: Ի՞նչ արցունքներ էին անոնք, ուրախութեա՞ն թէ՛ տրտմութեան, վշտի՞ թէ՛ բերկրանքի — յայտնի չէր, միայն թէ՝ այդ ժամանակ անոր սրտէն դուրս կը թռչէր այնպիսի հառաչանք մը, որ խորին կսկիծի արտայայտութիւն կը նշանակէր: Եւ այդ հառաչանքները միայն քիչ շատ կ'ամոքէին ծերունի հայրենասէրին սիրտը...:

Ճիշտ այդ դրութեան մէջ էր ծերունի Վահրամը, երբ իր սենեակին դուռը բացուելով, չէմքին վրայ երեւցաւ իր աղջիկը, որ տասնուվեց գարուններ տեսած գեղանի օրիորդ մըն էր: Ծերունին չփոթեցաւ: Ան ուզեց իր արցունքները, իր վիշտը պահել իր աղջիկէն, բայց ուշ էր:

— Հա՛յր, դուն կ'ուլա՞ս, կանչեց օրիորդը և փաթթուեցաւ հօրը վզին:

— Գոհա՛ր, սիրելի՛ աղջիկս, ինչու եկար վրդովելու հօրդ խաղաղութիւնը, պատասխանեց Վահրամ և համբուրեց աղջկան ձիւնափայլ ճակատը։

— Ա՛խ, հա՛յր, դուն ճիշդ կուլաս, առանց հարցնելու թէ ինչպէս կը բաբախէ սիրտս և ինչպէս կը վրդովի հոգիս երբ ես արցունքներդ կը տեսնամ։ Միթէ դուն Գոհարն չե՞ս ճանչնար, որ կը պահես ինէ վիշտըդ, տրտմութիւնդ։ Ըսէ՛ ինծի հա՛յր, ի՞նչ փոթորիկ կը սպասէ հայրենիքին, ի՞նչ վտանգ կը սպառնայ Հայաստանին, որ քեզ կը ստիպէ լալու և արտասուելու։

— Չէ՛, Գոհարի՛կ, զգայուն սիրտդ չի դիմանար այն հարուածին, որ կը պատրաստուի հայրենիքին։ Ես գիտեմ, որ դուն հօրդ պէս կը սիրես հայրենիքդ, ուստի կը վախնամ քեզ յայտնելու այն գոյժը, որ կը պտըտի մեր Անիի գլխուն չուրջը։

— Ի՞նչ է, հայրիկ, դուն կը սարսափեցնես զիս...։

— Այո՛, աղջի՛կս, սարսափելի է, խի՛ստ սարսափելի։

— Ի՞նչ, միթէ կրկին ապստամբութիւն, կամ որ և է իշխանի մը ստորնութի՞ւնը լսեր ես։

— Ո՛չ, ո՛չ, հօրդ երակներուն մէջ վախկոտի արիւն չը՛ վազեր, որ երկիւղ կրէ որ և է իշխանի մը դաւաճանութենէն, բայց այժմ տակէ՛ ալ սոսկալի բան մը կը սպառնայ մեր գլխին։

— Հա՛, կը հասկնամ։ Կրկին Վեստ Սարգսի խարդախութիւնները քեզ վրդոված ըլլալու են։

— Անին մեր ձեռքէն կ'երթայ աղջի՛կս, թագաւորը, ո՛հ, այն թուլամորթ թագաւորը, իր կամքով Անին կը յանձնէ Յոյներուն իր մահէն յետոյ, այժմ մենք թագաւոր չունինք, գլուխ չունինք։ Անիի գահը թափուր է և այդ գահին համար ո՛վ գիտէ ինչե՛ր կը ծրագրէ մեր խնամակալը՝ իշխան Վեստ Սարգիսը։



— Ի՞նչ պիտի ծրագրէ. միթէ՞ դուն ու մեր իշխանները թոյլ կուտա՞ք որ Վեստ Սարգիսը ոտքի տակ առնէ օրինաւոր ժառանգին իրաւունքը։ Չէ՞ որ Գագիկը կենդանի է։

— Այո՛, կենդանի է, բայց ուր է պահուեր Անմեղ գառը ի՞նչ պիտի ընէ գայլի ճանկերուն մէջ։ Վեստ Սարգիսի երեսէն փախած են պատանի Գագիկը և մեր հայրենասէր իշխանները, իսկ մէկ քանի իշխաններ Վեստ Սարգսի ձեռքը կոյր գործիք են դարձեր։ Հայաստանը կը գտնուի այս ժամանակ խաբեբայ իշխանի մը ձեռքը, որ թեւ առած Յոյներէն, կարծես թէ կը ձգտի գահն ալ ձեռք բերել, նոյն իսկ եթէ քանդուի Հայաստանը։ Ահա թէ ի՛նչ է որ կը սարսափեցնէ զիս...։

— Հա՛յր, միթէ կը քնանա՞ն բոլոր իշխաններն ալ. միթէ՝ չի՞ գտնուիր անոնց մէջ պարտաճանաչը, հայրենիքին վշտին ամոքողը, որ Վեստ Սարգիսին թոյլ կուտան խըրացնելու զայն։

— Չէ՛, դեռ ամէն բան վերջացած չէ։ Դեռ մեռած չէ Վահրամը, որ թոյլ տայ Վեստ Սարգսին գահը յափշտակելու, սակայն ես կը վախնամ որ Վեստ Սարգիսը Յոյներուն օգնութեամբ մեծ վնաս պատճառէ Հայերուն։ Չէ՞ որ ըստ Յովհաննէս Սմբատ թագաւորին կտակին՝ Անին այժմ Յոյներու կը պատկանի։ Միթէ անոնք այս համեղ պատառէն ձեռք կը քաշե՞ն առանց առիթէն օգտուելու։

— Անիծուի՛ն դաւաճանները, անիծուի Վեստ Սարգիսը որ Հայաստանը արեան ասպարէզ պիտի ընէ, գոչեց Գոհար, և իր աչքերուն մէջ արցունքներ երեւցան։

— Մի՛ վրդովիր, Գոհարի՛կ, ես գիտեմ որ դուն կը սիրես հայրենիքդ, որ դուն կեանքդ ալ չես խնայեր Անիի համար, ո՛ւր մնաց որ դուն մտածէիր քու Հարպիկիդ համար։ Չէ՞ որ, եթէ նշանած Հարպիկդ իյնայ

պատերազմի մէջ, ատիկա փառք մըն է քու անունդ համար։

— Ո՛չ թէ ան, այլ եթէ ես ալ իյնամ, Անիի փլատակներուն տակ, մեծ երանութիւն է ինծի համար։ Ես կը սիրեմ այն տղամարդը, որ իր հայրենիքին համար իր կուրծքը դէմ կուտայ պաշտպանելու, և ո՛չ թէ անարգ զինուորի նման փախուստ կուտայ կռուի դաշտէն։ Մարդիկը ես կը ճանչնամ, անիկա վախկոտներէն չէ՛ և վա՜յ այն մարդուն որ անոր սուրին բերանը իյնայ...։

— Այո՛, Գոհարի՛կ, այո՛, իմ յո՛յսս ալ Հաբէլի որդիներուն վրայ է։ Ես գիտեմ, որ բոլորն ալ, չորս եղբայրն ալ, որոնց թիւին մէջ է քու Հարպիկդ ալ, քաջ և հայրենասէր տղաքներ են։ Անոնք փախուստ չեն տար կռուի դաշտէն, եթէ իրենց կեանքն ալ դնելու ըլլան. իսկ Հարպիկը, այդ ազնիւ, հայրենասէրն տղան արժանի փեսացու է քեզի։

— Այո՛, անոնք արժանի են գովասանքիդ հայրի՛կ, և կը տեսնես որ, քու աղջիկդ ալ ետ չպիտի մնայ անոնցմէ, պատասխանեց Գոհարիկ և անոր աչքերը փայլեցան տեսակ մը ոգեւորութեամբ։

Վահրամ յուզուեցաւ։ Գրկեց իր աղջիկը, և համբոյր մը դրոշմեց անոր ճակտին, սակայն Վահրամ իշխանին սիրտը հանգիստ չէր։ Ան կը զգար որ չարագուշակ բան մը կը պտըտէր Անիի գլխուն...։

Զ.

## ՊԱՅՏԻ ՏԵՂ ՍՈՒՐ

Տաղտկալից աշունը սկսեր էր...։

Թռեր էին ծիծեռնակները, դաշտերն ու լեռները գունատուեր, երկինքը գորշ գոյն էր ստացած, որուն



վրայ միշտ կը սողային ամպերը, մռայլեցուցիչ ամպեր...։ Բնութիւնը կը մեռնէր...։ Կը մեռնէր օրէ օր, գարնան կրկին արթննալու, կրկին զուարթանալու յոյսով, մինչդեռ մարդկանց սրտերը կը պատէր տեսակ մը թախիծ, տեսակ մը կսկիծ, որ անջնջելի կերպով կը դրոշմէր հոն խոր ակօս մը...։ Մարդիկ կը զգային որ ձմեռ մըն ալ կը գլորուի յաւիտենականութեան գիրկը, որ անոնք տարի մըն ալ կը մօտենային դէպի անդառնալի կորուստը...։

Աշնանային ցուրտ քամին կը փչէր Անիի դաշտավայրը և կը մաղէր անձրեւի կաթիլներ։ Անի քաղաքին մէջ այդ միջոցին դադրած էր շարժումը, դադրած էին մանուկներու ճիչերը, փողոցներուն աղմուկն ու ժխորը։ Ամէն տեղ լուռ էր ու խաղաղ։ Չորս կողմը կը տիրէր արդէն խաւարը, տեղ տեղ միայն կ'արկարծէին լոյսի թոյլ ցոլմունքներ։

Այդ միջոցին Անիի պարիսպներէն դուրս, առանձնացած փոքրիկ հիւղակի մը մէջ վառ կերպով կ'առկայծէր կանթեղի մը լոյսը։ Գետնափոր էր այդ հիւղակը, որուն առջեւ ձգուած էին պայտելու փայտեր և քանի մը պայտերու գործիքներ։ Այդ հիւղակը, որուն մէջ կը բնակէր դարբին Ղեւոնդ և իր աղջիկը Լուսիկ, կը գտնուէր Անի քաղաքը տանող ճամբուն վրայ, ուր արեւի ծագելէն մինչեւ մութը, դարբին Ղեւոնդը կը պայտէր անցորդ եզներու ու ձիերու ոտքերը, իսկ այնուհետեւ, մինչեւ կէս գիշեր, պայտեր կռած և յետոյ լռինջ մարմնովը քուն կը մտնէր, մինչդեռ աղջիկը կը հոգար տան պիտոյքները։ Քանի մը տարի կար որ մեռած էր դարբին Ղեւոնդի կինը, և տան բոլոր հոգերը ծանրացեր էին Լուսիկի վրայ։ Ինքը կը լուար ճերմակեղէնները, կը կարէր կը կարկտէր հանդերձները, կը կթէր իրենց ունեցած միակ կովը և իւղ ու պանիր կը պատրաստէր։



ԱՆԻԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ԵՒ ՅՈՒՆԱՑ ՋԱՐԴԸ



Հանգիստ ու խաղաղ, կ'անցնէր ծերունի դարբինին կեանքը, և միշտ, գործը վերջացնելէ յետոյ, կը դառնար իր սիրուն աղջկան ու կ'ըսէր․

«Լուսի՛կ ջան, բե՛ր տեսնենք ի՛նչ ես պատրաստեր հօրդ համար»։ Իսկ Լուսիկ, ժպիտ երեսին, վառվռուն աչքերով, շտապով կը փռէր բախտին վրայ կապոյտ սփռոցը, կը շարէր այնտեղ բոքոնն ու լաւաշը ու թանէ տաք ապուրը, և յետոյ երկուքն ալ նստելով կողք կողքի, կ'ուտէին Աստուծոյ տուած կերակուրը և յետոյ ճրագը մարելով քունի հրեշտակը կը տարածէր իր հովանի թեւերը մինչեւ կենսաբեր լոյսի առաջին ցոլքերը։

Սակայն այդ գիշեր այդպէս չէր դարբին Ղեւոնդի հիւղակը։ Դարբին Ղեւոնդի դէմքը մռայլ էր ու խիստ։ Շտապ շտապ երկաթը կրակին մէջ կը կոխէր, կը կարմրցնէր, յետոյ զնդանի վրայ դնելով՝ մուրճով կը ծեծէր զայն, կրկին կը հանէր և դարձեալ կը ծեծէր։ Եւ զարմանալի՜ բան։ Մուրճի ներքեւ երկաթը փոխանակ պայտի ձեւ ստանալու, երկար ու տափակ ձեւ մը կը ստանար, որ ամենեւին պայտի նմանութիւն չունէր։ Այս գիշեր կարծես ինքն ալ չէր հասկնար թէ ինչ կը շինէր։ Դիտելի էր միայն, որ ան խիստ վրդոված, խիստ յուզուած էր և մտմտուքները կը կրծէին անոր սիրտն ու հոգին։

Գործը վերջացնելու սովորական ժամն արդէն անցեր էր, բայց դարբին Ղեւոնդը տեղէն չէր շարժեր. հնոցը աւելի կը կաղեցնէր և կարծես ամէնեւին մըտադրութիւն չունէր գործը ընդհատելու, այն ինչ Լուսիկը ընթրիքը պատրաստեր և հօրը վեր դառնալուն կը սպասէր։ Մէկ քանի անգամ մօտեցաւ հօրը և զարմացաւ անոր օտարոտի դէմքին արտայայտութենէն։ Իր հօր դէմքը առաջուան նման հեզ և բարի չէր, այժմ խրոխտ

և սպառնալից էր։ Ի՞նչ բան արդեօք վրդոված էր իր հօրը, ո՞վ արդեօք բարկացեր էր իրեն — չգիտեր, բայց այս անգամ երբ գիտեց, որ իր հայրը փոխանակ պայտի, ուրիշ բան մը կը շինէ — սարսափեցաւ։

— Հայրի՛կ, սիրելի՛ հայրիկս, կանչեց Լուսիկ սրտատրոփ։

Դարբինը չլսեց աղջկան ձայնը, ուժգնութեամբ մուրճը կը զարնէ սալին և շիկացած երկաթը կը կակուղցնէր։

— Հայրիկ, չես լսեր, ըսաւ Լուսիկ և քաշեց անոր փէշը։

Դարբինը դադրեցուց մուրճի հարուածները, դէմքը դարձուց դէպի իր աղջիկը, և քանի մը վայրկեան լուռ, անմիտ աչքերով Լուսիկին նայեցաւ։ Կարծես թէ այդ վայրկեանին չէր ճանչնար իր աղջիկը, կարծես թէ իր սիրելի աղջիկը չէր իր առջևը կեցողը։

— Հայրի՛կ, ի՞նչ է պատահեր քեզի, սարսափած կանչեց Լուսիկը։

Դարբին Ղևոնդը ցնցուեցաւ, նա կարծես վանեց իրմէ մռայլ մտածումները և դէմքը մէկ վայրկեանի մէջ կրկին սկսաւ իր սովորական արտայայտութիւնը։ Դէմքը այժմ հեզ էր ու բարի և այդ հեզ ու բարի դէմքին վրայ փայլեցաւ, երանութեան ժպիտ մը շողաց։

— Ի՞նչ է, Լուսիկ, իմ աննման աղջիկս, պատասխանեց դարբինը։

— Դուն հիւանդ չե՞ս, հայրի՛կ։

— Օ՛... ո՛չ, աղջիկս ես հիւանդ չեմ, թող Տէրը պահէ զիս հիւանդութենէ։

— Այդ ի՞նչ կը շինես, հայրիկ, դուն զիս կը վախցնես։

— Հը՛մ, ի՞նչ կը շինեմ, միթէ չե՞ս տեսներ, իմ աննման Լուսիկ, թէ ինչ կը շինեմ։ Ի՞նչ կը շինէր հայրդ մինչև հիմա։



— Պայտեր։ Բայց ատոնք պայտեր չեն, հայրի՛կ։

— Այո՛, պայտեր չեն, աղջի՛կս, սուրեր են, սուրե՛ր։ Պայտերը սուրերու փոխուեցան։ Այժմ հայրդ ալ պայտեր չը շինէր չորքոտանիներու ոտքերը պայտելու, այլ սուրեր կը շինէ թշնամիներու սիրտը մխելու, ըսաւ դառն ժպիտով մը՝ դարբին Ղևոնդ, և վերջին կարմըրցած երկաթն ալ տափակցնելով նետեց մէկդի և մուրճը վար դնելով՝ ըսաւ.

— Այսօր բաւական է։ Պէտք է ընթրիք ընել հիմա և հանգստանալ։

— Դուն զիս կը սարսափեցնես, հայրի՛կ, այդ ի՛նչ սուրեր են և ինչո՞ւ համար։

— Ամէն բան կիմանաս, դուստրս, համբերութիւն ունեցի՛ր, միայն կը ցաւիմ որ մեր այսօրուան հիւրը չեկաւ։ Ես կարևոր լուրեր ունէի հաղորդելու անոր։

— Ո՞վ չեկաւ, հայրի՛կ։

— Գօհարիկը։ Միթէ չգիտե՞ս, որ ան միշտ կ'այցելէ։ Կ'երևի թէ այս գիշեր անձրևը արգելք եղաւ գալուն։

Լուսիկ ալ բան մը չ'հարցուց։ Սեղան նստան և սկսան վայելել ընթրիքը. Անձրևը կրկին կը մաղէր և աշնանային քամին իր նուագը կ'ածէր ճիշդ այդ պահուն մէջ. դրսէն ոտնաձայներ լսուեցան և ապա քիչ յետոյ, հետևեալ խօսքերը.

Մի հարցնէք թէ ո՞վ եմ ես
Սիրուն ու չէն Անին եմ ես։

Խենթն է, գոչեցին հայր ու դուստր, և աչքերնին դէպի դուռը դարձուցին։

Յիրաւի քանի մը վայրկեան ետքը, հիւղակին դուռը երևցաւ մեզի ծանօթ Խենթին ամօթահար կերպարանքը իր մեծ փայտը ձեռքը։

— Ողջո՜յն բարեկամներուս, ըսաւ փայտը մէկդի դրաւ և մօտեցաւ անոր։ — Ինչպէս կ'երեւէր, լաւ ժամանակ հասայ և արժանի կը լինիմ Լուսիկի քնքոյշ մատներով պատրաստած անուշ ապուրը ճաշակելու։

— Հրամեցէ՛ք, մեր գլխուն վրայ տեղ ունիս, ըսաւ դարբինը գոհ և ուրախացած, տեղ տալով անոր։

— Խենթը նստեցաւ, փայտէ դգալով մէկ քանի ումպ ապուր լափեց և յետոյ ետ քաշուելով ըսաւ.

— Ուֆ, օրհնէ՜լ ըլլաս, Լուսիկ, սիրտս հովացաւ։

— Քու սիրտը շատ շուտ կը հովանայ, Խենթ, իսկ իմը, օ՜... Քու տուած լուրդ գլխս կ'այրէ կը խորովէ, պատասխանեց Ղեւոնդ։

— Է՜հ. վարպետ, այդ տեսակ փոթորիկներ շատ են եկեր ու գացեր, այդ ալ կանցնի։ Բայց, ափսո՜ս, որ միւսը ձեռքէն փախաւ, և տարաւ իր հետ սեւ Մարդուն թուղթը։ (Խենթին կողմէն այդպէս կը յորջորջուէր Վեստ Սարգիս)։

— Հ՛ա, տարաւ, բայց ո՞վ գիտէ ի՛նչ թուղթ էր։

— Սատանա՜ն անոր հետ, մեր Վահրամ իշխանը մեռած չէ, որ Վեստ Սարգիսը կարողանայ բան մը ընել։ Բայց կը ցաւիմ որ Գոհարին սիրտը կը վրդովուի։

— Այսօր պիտի գար, չեկաւ։ Դուն իրեն յայտնեցի՞ր եղելութիւնը, Խենթ, հարցուց դարբինը։

— Չէ՛, դեռ չեմ յայտնած։ Վաղը, անշուշտ, ես ամէն բան կը յայտնեմ։

— Իսկ ի՛նչ կ'ըսեն իր որդեգիրները։

— Օ՜... անոնք կ'օրհնեն Գոհարի կեանքը։ Թող այդ տեսակ որբորդներու թիւը բիւրապատիկ ըլլայ։ Հարիւրաւոր որբեր և աղքատներ կ'օգտուին իր բարիքներէն։

— Այդ մենք գիտենք, Խենթ, բայց տեսնենք, ի՞նչ կ'ըսէ օրիորդը Վեստ Սարգսի վարմունքին մասին։ Տեսնենք կրկին իր բարկութեամբ ուշադրութիւն չի՞ դարձըներ, թէ՝ կարեւորութիւն տալով կը զգուշանայ։ Չէ՞ որ Վեստ Սարգիսը կը գործէ ուղղակի Վահրամին՝ ի՛ր հօր դէմ։



— Այդ թողունք, վարպետս, Խենթը խիստ յոգնած է, այսօր հարիւր տուն է շրջեր ու բաժներ օրիորդին տուած դրամները։ Քնանալ կ'ուզէ, ըսաւ Խենթը և ելաւ տեղէն։

Լուսիկ սփռոցը ժողվեց, իսկ Խենթը երգ մը մըրմըռալով սկսաւ քալել խրճիթին մէջ, երբ դիտեց հնոցին մօտ լցուած սուրերը։

— Այս ի՞նչ կը շինես, վարպետ, ըսաւ դառնալով Ղեւոնդին։

— Չե՞ս տեսներ. — սո՛ւրեր։

— Իսկ պայտե՞րը։

— Պայտերը ալ ձեռք չեն տար։ Այժմ սուրեր պէտք են մեր Վահրամը պաշտպանելու։

— Հա՜... հա՜... հա՜... Ապրի՛ս, վարպե՛տ, կ'երեւայ թէ փորձուած մարդ ես։ Վաղորոք սուրեր կը պատրաստես թշնամիներուդ կուրծքը մխելու։

Անցաւ կարճ ժամանակ և խորին լռութիւն տիրեց հոն։

Ե.

## ՍԵՒ ՄԱՐԴԸ

Երկու ձիաւորներ Անիի քաղաքէն մեկնելով, ճամբաները բռնեցին դէպի Սուրմառուի բերդը և դանդաղաքայլ առաջ կ'երթային։ Ձիաւորներէն մէկը Հայոց թագաւորութեան խնամակալն էր՝ դաւաղ իշխան Վեստ Սարգիսը, իսկ միւսը իր հաւատարիմ ծառան՝ Եզօ։

Մռայլ էր իշխանին դէմքը, մռայլ էր ծառային դէմքը: Ո՞ւր կ'երթային և ինչո՞ւ երկուքն ալ տխուր էին — յայտնի չէր: Սակայն երկուքին դէմքէն կը հասկցուէր թէ իրենց հոգին կը յուզուէր, վրդովուած էին, անհանգիստ բան մը կը տանջէր երկուքն ալ: Չէր խօսեր տէրը, չէր խօսեր ծառան: Ամէն մէկը, իր մտմտուքին մէջ ընկղմած կ'երթային, մինչև որ հասան մեզի ծանօթ դարբնին Ղևոնդի խրճիթին առջև, և կ'եցուցին ձիերը: Դարբին Ղևոնդ նստած էր իր զնդանի առաջ, և երկաթի կտոր մը դրած սալին — կը մրճէր: Ինքը չէր նկատած թէ ինչպէս երկու ձիաւորներ կեցեր էին իր առջև և իրեն կը նայէին:

— Եղօ՛, վար իջի՛ր, պէտք է ձիուս ոտքը պայտել, եթէ ո՛չ կաղալ կը սկսի:

Եղօն վար թռաւ և բռնելով Վեստ Սարգսի ձիուն սանձը, օգնեց իշխանին իջնելու:

Դարբին Ղևոնդը դեռ ապշած կը նայէր իշխանին, երբ Եղօն գոռաց անոր վրայ:

— Էյ, տխմա՛ր, ի՞նչ կը նայիս ապուշի նման իշխա՛նն է, պէտք է պայտել անոր ձին:

Դարբինը ակամայ գլուխը ծռեց իշխանին և ապա տեղ ցոյց տալով նստելու, ինքը գործի սկսաւ:

«Հը՛մ, լաւ բանի մը համար չէք ճամբորդեր մտածեց Ղևոնդ, ես ձեր ձիերը ա՛յնպէս մը պայտեմ, որ կէս ճամբան մնաք:»

Վերջացուց գործը և ապա դառնալով իշխանին ըսաւ.

— Պատրաստ է, տէ՛ր:

— Լաւ պայտեցի՞ր, վարպե՛տ:

— Հրաշալի՛, տէր, ամբողջ տարի մը բաւական է, ըսաւ Ղևոնդ դառն ժպիտով մը:

— Ապրի՛ս, վարպե՛տ, ըսաւ և հեծնելով ձին, ոսկի



մը նետեց վարպետին: Բայց Ղևոնդ շտապով բարձրացնելով դրամը, դարձաւ իշխանին ըսելով:

— Տէ՛ր, այս ոսկին ես չե՛մ կրնար ընդունիլ:

— Ինչու, վարպե՛տ, ինչու չես կրնար ընդունիլ, զարմացած հարցուց իշխանը ձիուն սանձը քաշելով:

— Այս ոսկին, տէ՛ր, այս ոսկին...:

— Ի՞նչ այդ ոսկին:

— Մեր մեծ իշխանէն դրամ չենք առներ, ըսաւ Ղևոնդ և երեսը դարձուց:

— Լա՛ւ, ըսաւ Վեստ Սարգիս և մտրակեց ձին:

Անոնք անցան գացին, մինչ Ղևոնդ երկար ատեն, դեռ կը նայէր ետևէն և ինքնիրեն կը մրմռար:

— Որովհետև քո ոսկիին մէջ թոյն կայ, իշխա՛ն, թո՛յն, օձի թոյնէն ալ զօրաւոր:

Ղևոնդ կրկին գործի սկսաւ, մինչ իշխանն ու ծառան կը սլանային առաջ: Երբ անոնք բաւական առաջ գացին, երբ անոնք շրջապատուեցան լուռ դաշտերով, Վեստ Սարգիս դանդաղեցուց ձիուն ընթացքը և ծառան իր քով կանչեց:

— Եղօ՛, ըսաւ, մօ՛տ եկուր, մեր ընկերքի մասին խօսինք: Գիտեմ, դուն հաւատարիմ ես ինծի, ուստի ես քեզմէ գաղտնիք չեմ պահեր: Այս բնութեան ծոցին մէջ ազատ ենք և ո՛չ ոք կրնայ լրտեսել մեզ:

— Հրամայէ՛ տէ՛ր, ես պատրաստ եմ լսելու: Եղօն, իշխա՛ն, քո ստրո՛ւկդ է, ու կեանքը պատրաստ է քեզ համար զոհելու:

— Գիտեմ: Բայց լսէ՛ ինծի մանրամասնօրէն, անգա՛մ մըն ալ պատմէ թէ ո՞ւր է պահուըտած պատանի Գագիկը, կամ աւելի լաւ է ըսել, ո՞ւր են պահեր զինքը:

— Անապատի վանքին մէջ է ապաստանած, տէ՛ր: Ես ու Մարկոսը լաւ լրտեսեցինք անոր տեղը: Վանքամեանք ամէն կերպով կ'աշխատէին գաղտնի պահել

և անոր հետքը ծածկել, սակայն անոնք չգիտեն, որ ասեղ իսկ չի պահուիր իմ աչքերէս։

— Ապրի՛ս Եղօ՛, բայց ըսէ՛ ինծի, ի՞նչպէս կ'ապրի անիկա վանքին մէջ. միթէ՞ վանականներու նըման ի՞նք ալ աղօթքի ապաւինած է։

Եղօն ժպտեցաւ։

— Ո՛չ, տէ՛ր, վանականներու մէջ անիկա կ'ապրի, արքայի պէս։ Հագած է արքայական զգեստ և չի նայելով իր 14 տարու հասակին, զէնք ու զրահի մէջ է կորսուած և երբէք չի զատուիր այդ զէնքերէն։

— Ի՞նչպէս։ Մի՞թէ կը յուսայ արքայական գահը բարձրանալ, ըսաւ Վեստ Սարգիսը դառն ժպիտով մը և անոր աչքերուն մէջ երևցան վրէժխնդրութեան մոլի կայծակներ։

— Ինչպէս կը թուի, տէ՛ր, ան այդ միտքն ալ ունի, որովհետեւ գիշեր ցերեկ զինավարժութեամբ ժամանակը կ'անցնէ։

— Կը տեսնենք, Եղօ, կը տեսնենք թէ ինչպէս կը ժառանգէ այդ արքայական գահը։ Միամի՛տ պատանի։

— Այդ պատանին մեղք չունի, իշխան, զինքը կը գրգռեն Վահրամեանք, որպէս զի թագաւորեցնելով զայն, իրենց գաղանի նպատակներուն հասնին։ Անոնք չեն ուզեր քեզի պէս լաւ խնամակալ մը ունենալ, որովհետեւ գիտեն, որ դուն անոնց թերութիւնը երեսներնուն կը զարնես, և չես թող տար որ ազգը կործանուի, կը դադրին ապրելէ իրենց խարդախութեամբ, պատասխանեց Եղօն շողոքորթելով իր տէրը, որուն խօսքերէն միշտ կ'ախորժէր։

— Բայց այդ ծերուկ աղուէսը՝ չի հասնիր իր նպատակին։ Ան կը տեսնէ թէ ինչպէս կը ջախջախուին իր նպատակները, եւ իր փայփայած Գագիկը։ Այն ժամանակ կը տեսնենք որու կ'առաջարկուի արքայական թափուր մնացած գահը։



Եղօն ապուշ ապուշ նայեցաւ իր տիրոջ դէմքին։ Այդ դէմքը զարհուրելի և դաժան էր, որմէ Եղօն անգամ սոսկաց։ Դժոխքը կը ցոլար իշխանին աչքերուն մէջ։

Անոնք լուռ մունջ առաջացան, երբ Վեստ Սարգիսը դառնալով Եղօյին, խուլ գերեզմանական ձայնով ըսաւ։

— Եղօ՛։

— Հրամայէ՛, տէ՛ր։

— Պէտք է ծանրակշիռ գործ մը կատարես, և հարթես իմ ճամբաս։ Պատանի Գագիկը պէտք է վերցնես մէջտեղէն։ Անիկա արգելք է ինծի։

Եղօն հասկցաւ տիրոջ միտքը և ցնցուեցաւ։

— Ի՞նչպէս հարցուց նորէն, տիրոջ երեսը դիտելով։

— Ինչպէս, այդ քու գիտնալու բանն է։ Բայց պատանի Գագիկը այլ եւս գոյութիւն չպիտի ունենայ այս աշխարհի մէջ։ Պիտի մեռնի ան։

— Իշխա՛ն...

— Ոչ մէկ բառ, ընդհատեց Վեստ Սարգիս խրոխտ ձայնով, մը պիտի մեռնի ան։ Իսկ երբ կը կատարես ատիկա, այն ատեն մեծամեծ պատիւներու կ'արժանանաս։ Ըսէ՛ համաձա՞յն ես։

Պահ մը տիրեց լռութիւնը։ Տէր և ծառայ իրարու աչքեր կը դիտէին։ Անոնք կարծես կ'ուզէին թափանցել իրարու հոգիի խորը։

— Պատրա՛ստ եմ կամքդ կատարելու, իշխա՛ն, վերջապէս ըսաւ Եղօն։

Վայրկեան մը, և Վեստ Սարսի դէմքին մռայլը փարատեցաւ։ Անհուն ուրախութեան ժպիտը փայլեցաւ անոր դէմքին վրայ և մօտեցնելով իր ձին Եղօյին, գըրկեց զայն, համբուրեց և պինդ մը սեղմելով ըսաւ.

— Ապրի՛ս, Եղօ՛ դուն արժանի ես իմ վստահութեան։ Մենք մանրամասնութեան մասին յետոյ կը խօսինք։

Երկուքն ալ մտրակեցին ձիերը, և առաջ սլացան:
Երեկոյ էր, երբ հասան Սուրմառուի բերդը, ուր
իշխան ու ծառայ փակուեցան առանձնասենեակին մէջ:

Բ.

## ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ

Խրամ գետը կատղած էր: Պղտոր ալիքներով կը քը-
շէր կը տանէր քար ու փայտ, և կատղած գազանի մը
նման փրփուրը բերանը կը վազէր առաջ...: Այդ Խը-
րամ գետէն քիչ մը վեր, Շամշուլդէ բերդէն ո՛չ հեռու
ժայռի մը գլուխը կը փայլէր Ս. Անապատ Վանքի կա-
թուղիկէն: Այդ վանքին մէջ կը լսուէր սաղմոսերգու-
թեան տխուր մեղեդին: Երեկոյ էր արդէն: Արեւը
դէպի մուտքը կը խոնարհէր արդէն, իսկ աշխարհային
գծուծ գործերէն հեռու փախած կրօնաւորները իրենց
իրիկուան աղօթքը կը մրմնջէին: Քսանէ աւելի կրօնա-
ւորներ ծունկ չոքած սեղանին առջեւ, կ'աղօթէին Աս-
տուծոյ և կը փառաբանէին զայն...:

Սրբոց պատկերներուն առջեւ կը վառուէին կան-
թեղներ և անուշահոտ խնկի ծխով կը խնկարկէին ա-
նոնց: Տեսակ մը աստուածային, վեհանձն. երկիւղած
տպաւորութիւն մը կը թողուր օտարին վրայ այդ վայր-
կեանը, Ս. Անապատի վանքը, իր աղօթող կրօնաւոր-
ներով: Ամեն ինչ, ինչ որ աշխարհային էր, կը մոռցուէր
այդ տեղ, և տեսակ մը դիւթական զօրութեամբ կը լե-
ցնէր մարդուն հոգին:

Այդ կրօնաւորներուն հետ ահա՛ ծունկ չոքած Աստ-
ուածամօր պատկերին առջեւ, լուռ կ'աղօթէր նաեւ տասնը-
չորս ամեայ պատանի մըն ալ, որ կը տարբերէր կրօնա-
ւորներէն իր մատղաշ հասակով և զգեստներով: Այդ



պատանին կրօնաւորներու նման սեւազգեստ չէր, այլ
փայլուն արքայական զգեստին հետ միասին զէնք ու
զրահի մէջ էր կորսուած: Այդ զէնքերէն աղօթելու ժա-
մանակ անգամ չէր բաժնուած ան: Չնայելով իր մա-
տաղ հասակին, բայց, ազդող հայեացքին տակ կարծես
ծածկուած էր խորին վիշտ մը, որ կարծես կը կրծեր ա-
նոր հոգին. Ի՞նչու սիրուն դէմքին վրայ դրոշմուած էր
վշտի անողորմ կնիքը, քանի որ այդ հասակին մէջ աշ-
խարհային հոգերը գոյութիւն չպիտի ունենան և միշտ
պիտի ժպտի, փայլի արեւի պայծառ ճառագայթներուն
պէս: Կամ ինչո՞ւ սեւազգեստներու մէջ կը գտնուի ան,
մի՞թէ կեանքին դառն արկածները, կեանքի առաջին աս-
տիճաններուն մէջ ստիպեր է անոր թողնուլ սիրուն
կեանքը և խստակեաց կրօնաւորներուն հետ միասին
հանդերձեալ աշխարհի մասին մտածել...: Յայտնի չէր:
Միայն կ'երեւար թէ բոլոր կրօնաւորներն ալ երկիւղա-
ծութեամբ և պատկառանքով կը վերաբերուէին դէպի
այդ պատանին:

Աղօթքը վերջացուցին: Կրօնաւորները քաշուեցան
իրենց խուցը, երբ պատանին դուրս ելաւ եկեղեցիէն և
պարիսպներուն վրայ մռայլ դէմքով մը վար նայեցաւ:
— Ոտքերուն տակ, Ս. Անապատի վանքէն քիչ մը հե-
ռու, կը գոռար Խրամը և փրփրալով կ'արշաւէր:

Պատանին գետին կը նայէ՛ր, կը նայէր անոր փըր-
փըրած, կատղած ալիքներուն և անոր մատաղ սիրտը կը
յուզուէր: Կը տեսնէր թէ՝ ինչպէս գետը կատղեր էր
և իր կատաղութեան կը զոհէր ամէն ինչ, թուփ, ծառ
ու քար: Անխնայօրէն կ'ոչնչացնէր իր արգելքները, ճամ-
բայ կը հարթէր և իր ցանկացած ճամբէն կ'երթար...:
Մինչդեռ ինք ի՞նչ կ'ընէր...:

— Ս... դառն է ինծի համար այս կեանքը. ես
ազատ, լայն ասպարէզ կը ցանկամ ուր կարենամ սու-

րին զօրութիւնը փորձել․ մինչդեռ, ես ստիպուած, ինչպէս կալանաւոր մը, օրերս կ'անցնեմ այս սեւազգեստներուն մէջ։ Ինչո՞ւ, ի՞նչ պատճառաւ։ Անօրէն Վեստ Սարգիսի ձեռքէն, որ ձեռքն առնելով թագաւորութեան ղեկը, կ'ուզէ ոչնչացնել Բագրատունեաց տոհմը, և ինքը թագաւորել....։ Չէ, Գագիկը գա՛հի իսկական ժառանգը դեռ կենդանի է․ ան թէեւ փոքր է, բայց առիւծի սիրտ մը կայ անոր մէջ։

Գագիկ, Թուլասիրտ Յովհաննէս Սմբատ թագաւորին եղբօր որդին, լռեց և յուզուած սրտով նորէն նայեցաւ Խրամի պղտոր ջուրերուն։ Այդ ատեն միտքը եկաւ Անին իր գիժ Ախուրեան գետով, իր հազար ու մէկ եկեղեցիներով, պալատներով ու շքեղ շինութիւններով։ Յիշեց իր տունը, յիշեց իր հայրը՝ Աշոտին և իր մայրը, որոնք պալատին շքեղ սենեակներուն մէջ կը գուրգուրային ու կը շոյէին զինք և ապագայ թագաւոր կ'անուանէին...։ Իսկ հիմա ո՞ւր են իր ծնողքը, չկա՞ն։ Անոնք չկան, չքացա՛ն երկրիս երեսէն, Հայաստանի գահը յանձնելով գայլերէն մէկուն, որ իր փառասիրութեան համար պատրաստ է ամէն բան ոտքի տակ առնել, ամէն իրաւունք ոչնչացնել...

Գագիկ, խորունկ մտածմունքի մէջ ընկղմած, դեռ կը մտածէր։ Իր պատանի, բայց իմաստուն խելքով դատողութիւն կ'ընէր, Հայաստանի ապագան կը գուշակէր մինչ մութը հետզհետէ կը տարածուէր չորս կողմը և ամէն ինչ կ'ընկղմէր խոր խաւարի մէջ։ Յանկարծ Գագիկ ցնցուեցաւ և ակամայ իր ուշադրութիւնը դարձուց դէպի թուփ մը, ուր կարծես թէ բան մը խլրտաց և ապա ամէն ինչ անշարժութեան մէջ մնաց։ Գագիկ նորէն նայեցաւ դէպի այդ թուփը, և սոսկաց։ Տեսաւ որ ճիւղերու մէջէն կը փայլէին երկու արիւնալի աչքեր, որոնք ուղղուած էին իրեն և հեռուէն անգամ կ'ու-



զէին զինքը կլլել։ Գագիկ ակամայ ձեռքը դէպի իր սուրին երախակալը տարաւ, յետոյ շփեց իր ճակատը և շոյելով գանգուր մազերը, ինքն իրեն ըսաւ.

— Այս ի՞նչ էր, միթէ երազի մէջ էի․ թէ իրօք արիւնիս ծարաւի մարդիկ կը կը պտըտին չուրջս.... բայց միթէ անոնք չե՞ն գիտեր որ Գագիկ քնացած չէ։

Գագիկ նորէն նայեցաւ այն կողմը․ բայց ա՛լ բան մը չը տեսաւ։ Չորս կողմը, ամեն ինչ խաղաղ էր և լուռ, և բացի Խրամ գետին գռռումէն բան մը չէր լսուեր։

Գագիկ դարձաւ և ուղղուեցաւ դէպի իր բնակարանը։ Մօտեցաւ, երբ, քանի մը քայլ դէպի առաջ, տեսաւ իր հաւատարիմ Լեւոնը՝ Հարպիկ իշխանին երրորդ որդին, որ ձեռքը սուրի վրայ դրած, կը հսկէր իր տիրոջը և ամեն քայլափոխին կը հետեւէր անոր։

— Լեւոնի՛կ, գիտե՞ս ի՛նչ տեսայ, ըսաւ բռնելով անոր ձեռքը։

— Ի՞նչ, տէ՛ր իմ։

— Ինծի թուեցաւ թէ, մեզ կը լրտեսեն այս տեղ, որ գայլերը մեր հօտն առեր են և ուշ կամ կանուխ պիտի մտնեն և ո՛վ գիտէ ինչե՛ր պիտի ընեն։

— Բայց, տէ՛ր, միթէ անոնք չե՞ն գիտեր որ քեզ կը պահպանէ Հարպիկ իշխանի որդին, որ գիշերները մէկ աչքով կը քնանայ, իսկ միւսովը կը հսկէ իր տիրոջը։ Չէ՞ որ Վահրամ իշխանը ինծի՛ է վստահեր քեզ։ Միամիտ եղիր, տէ՛ր, և հանգիստ բնակարան մտի՛ր։ Իսկ եթէ տեսնենք որ անոնք մեր տեղը իմացեր են՝ Հայաստանի մէջ շատ տեղ կը գտնուի, մինչեւ որ անցնի փոթորիկը․

— Այդ այդպէս է Լեւոնի՛կ, սակայն այս գիշեր պէտք է զգոյշ մնալ։ Գագիկի աչքերը սուր են և զինքը չեն խաբեր։ Թո՛ղ թշնամին գայ և մեզ պատրաստ գտնէ։

— Համբերէ՛, տէր, ես այս րոպէիս կը թռչիմ խուզարկելու բոլոր թուփերը և վա՜յ անոր ու իմ սուրիս բերանը կ'իյնայ։

— Ո՛չ, Լեւոնիկ, ես կը հաւատամ որ դուն քաջ ես, սակայն մենք մեր թշնամիին չպէտք զգացնենք թէ մեզի յայտնի է իր ներկայութիւնը։ Հրամայէ՛ վանքին դռները փակել և ինքդ արթուն կեցի՛ր մինչեւ անգամ չ'արժէր վանականներուն խաղաղութիւնը վրդովել և յայտնել մեր կասկածը։

Գագիկ մտաւ իր բնակարանը, և ճրագի լուսաւորութեան տակ երկար ժամանակ կը խօսէր ծերունի վանականին հետ Հայաստանի երերուն դրութեան մասին, մինչեւ որ վանահայրը հեռացաւ իրմէ։

Գագիկ ոչ մէկ խօսք, ոչ մէկ բառ չ'ըսաւ վանահօր իր կասկածի մասին, այն ինչ իր սրտէն չէր հեռանար այն աչքերուն արտայայտութիւնը, որոնք ուղղուած էին իրեն վրայ։

Գագիկ չէր վախնար մահէ, ամենեւին չէ՛ր ալ մըտածեր թէ կրնան զինք սպաննել, թէ թշնամիներ շատ պիտի ունենայ, քանի որ ինքն է միակ ժառանգը թափուր մնացած գահին, սակայն կը զգուէր այն տեսակ մարդիկներէն, որոնք գաղտագողի կը լրտեսէին զինք։ Երկար ատեն կը պտրտէր սենեակին մէջ, մինչեւ որ քունը կամաց կամաց յաղթեց իրեն։ Հանուեցաւ, պառկեցաւ փափուկ անկողնին մէջ և յետոյ յառելով իր մեծ աչքերը դէպի առաստաղը, կրկին ուզեց քունը փախցնել իրմէ, սակայն ֆիզիքական հանգստութիւնը կը պահանջէր։ Մատղաշ մարմինը պէտք ունէր հանգստութեան, և երիտասարդ հոգին խաղաղութիւն կ'ուզէր։

Հետզհետէ Գագիկի աչքերը ծանրացան և քունի հրեշտակը զինք իր գրկին մէջ առաւ։ Քնացաւ։ Հանդարտօրէն կ'ելեւէջէր անոր կուրծքը մինչ, իր մատղաշ



դէմքին վրայ կը շողար անհուն երանութեան ժպիտը։ Ինչ կ'երազէր այդ րոպէին — յայտնի չէր, սակայն կը ժպտէր, ժպիտ մը, որ յատուկ է պատանի հասակին։

Շատոնց արդէն խոր գիշերը տարածուեր և ամեն կողմ սփռուեր էր խորունկ լռութիւն մը։ Գագիկի հաւատարիմ Լեւոնիկն ալ զէնք ու զրահի մէջ կորսուած, կը կրթնէր Գագիկի ննջարանին դռներուն առջեւի քարէ պատուանդանին և արթուն կը հսկէր իր տիրոջը։ Չէր մոռցեր Գագիկի խօսքերը թէ՝ «Լեւոնիկ, պէտք է այս գիշեր արթուն մնալ, մեզ կը լրտեսեն.» Թերեւս ո՞վ գիտէ ինչ կրնար պատահիլ։ Ծերունի Վահրամը Գագիկի պաշտպանութիւնը միայն իրեն վստահեցա՛ւ։ Ան լաւ կը յիշէ թէ՝ ինչպէս Վահրամ իշխանը համբուրեց զինք և ըսաւ «Լեւոնի՛կ, Գագիկը պահպանէ՛ աչքիդ լոյսին պէս, գիշերը չորս աչքով դիտէ՛, ցերեկը երկու և վա՜յ քեզի անոր մազին դպչող ըլլայ»։ Այդ խօսքերը յիշեց Լեւոնիկ և յետոյ երեւակայութիւնը թռաւ, գնաց դէպի իր հայրենի երկիրը, լեռնոտ Պաղին գաւառը, ուր լեռներու ծերպերուն մէջ կը բարձրանան իրենց հայրենի բերդերը, ուր անմատչելի ծերպերուն և ձորերուն մէջ կը վազէր ինքը որսի ետեւէ և նիզակի հարուածով մը գետինը կը գլորէր որսը և յետոյ ուրախ զուարթ կը դառնար ամրոց և հպարտութեամբ ցոյց կուտար հօրը։ Կը յիշէր թէ ի՛նչպէս իր հայրը՝ ծերունի Հաբէլը, ախորժակով կ'ուտէր որսի միսը և միշտ կը գովէր զինք ու կ'ըսէր. «Ապրի՛ս, Լեւոնիկ, դուն ալ քաջ ես ի՛նչպէս միւս եղբայրներդ. բոլորդ ալ արժանի էք իմ որդիներս կոչուելու»։ Վա՜հ, մի՞թէ ես կը քնանամ, յանկարծ ըսաւ Լեւոնիկ և ցցուեցաւ։ Յիրաւի, տեսաւ որ իր աչքերը ծանրացեր են, իր քունը կը տանէր և ինքը չէր կրնար ա՛լ արթուն մնալ։

— Չէ՛, ոչ մէկ ատեն ես ինծի թոյլ չեմ տար քնա-

նալ։ Այդ ի՛նչ յիմարութիւն է, չէ՞ որ ես խօսք եմ տուեր արթուն մնալու, այս ի՛նչ նուաստութիւն է իմ կողմէկ, ըսաւ Լեւոնիկ և դուրս ելլելով սկսաւ աջ ու ձախ նայիլ, ականջ դնել թէ կը լսուէ՞ր արդեօք քայլերու ձայն մը, կամ չկա՞յ արդեօք կասկածելի բան մը։ Բայց Լեւոնիկ կասկածելի բան մը չտեսաւ։ Իր ուշադրութենէն այն վրիպեցաւ միայն որ չնկատեց վանքին պատերուն տակ ձգուած երկու մարդկային մարմին, որոնք արիւնածարաւ աչքերով իրեն կը նայէին։

— Չէ՛, Գագիկ խաբուե՛ր է, կասկածաւոր բան մը չերեւնար ըսաւ Լեւոնիկ, և նորէն ներս մտնելով, Գագիկի ննջարանին առջեւ կեցաւ։

Քիչ յետոյ Լեւոնիկի մտքին մէջ դարձեալ եկաւ իր հօր ամրոցը, հայրենի խնճոյքներն ու ուրախութիւնները։ Ա՜խ, ի՛նչպէս կը ցանկար թռչիլ այն տեղ, ի՛նչպէս կ՚ուզէր գո՛նէ մէկ վայրկեան հոն ըլլալ և քաշել իր եղբօր որդիին՝ չարաճճի Պօղոսի ականջները, որ միշտ կը կենար իր առջեւ և նետը ձեռքը կը կանչէր «Հօրեղբա՛յր, ի՛նչ կը նուիրէիր ինծի, եթէ նետով այս նշանը զարնեմ»։ — Համբո՛յր մը, կը պատասխանէի իրեն...։ Եւ յիրաւի, այդ չարաճճին կը զարնէր նշանը, և իր վարդագոյն այտերը մօտեցնելով կ՚ըսէր. «Դէ՜հ, հօրեղբա՛յր, նշանը զարկի համբուրէ, միայն ինծի համար սուր մը գնէ՛. ե՛ս ալ կ՚ուզեմ մէջքս սուր կրել, ինչպէս պապս և դուն կը կրէք»։ — Եւ Լեւոնիկ փայփայուելով այդ յուշքերով, չէր զգար որ, թէեւ իր աչքերը բաց են, բայց իր միտքը հետզհետէ կը քնանայ, հետզհետէ կը կորսնցնէ իր զգաստութիւնը և կոպերը կակաց կամաց կը ծանրանան։

— Ա՜խ, Եսթե՛րս... Եսթե՛րս... որքան ատեն կայ որ զինքը չեմ տեսեր, խորհեցաւ դարձեալ Լեւոնիկ. նոյնիսկ չը զգաց թէ ի՛նչպէս իր աչքերը փակուեցան և



մէկ րոպէի մէջ ամէն բան թռաւ իր մտքէն։ Ուղեղը գադրեցաւ գործելէ ու խաղաղ անվրդով նինջը պատեց զինքը...։

Լեւոնիկին ականջները չլսեցին անգամ թէ՝ ինչպէս դրսէն լսուեցաւ զգուշաւոր քայլերու ձայներ, թէ ինչպէս իր դուռը բացուեցաւ, և մարդ մը, սուրը հանած իւր գլխուն վերեւ կեցաւ.

Մարդասպանը կայնած էր անոր գլխուն վրայ և սուրը կը ճօճէր, կը մտածեր թէ սպաննե՞ր զինքը թէ ոչ։ Այդ չէր իր նպատակը։ Լեւոնիկին կեանքը պէտք չէր իրեն. աւելի թանկագին կեանք մը պէտք էր իրեն։ Վերջ պիտի դնէր Գագիկ իշխանի կեանքին, որ ստանար Վեստ Սարգիսին սուղ գնով ձեռք բերած ոսկիները։ Եւ մարդասպանը վճռեց նախ զայն սպաննել, յետոյ միւսը։ Սա արգելք էր իր նպատակին։ Եւ մարդասպանը սուրը բարձրացուց և ուզեց մխել Լեւոնիկին կուրծքը, երբ անորոշ խուլ շշուկ մը լսեց դրսէն։ Մարդասպանը կանգ առաւ և դէպի դուռը նայեցաւ ուր դանդաղ, զգուշաւոր քայլերով մէկը կը մօտենար։

Այդ միջոցին Լեւոնիկ աչքերը բացաւ և տեսաւ մարդասպանին մերկ սուրը ձեռքը։ Վայրկեան մը, և Լեւոնիկ վեր թռաւ տեղէն, և երկուքին միջեւ կռիւը սկսաւ.

— Է՜, հէյ, լաւ ժամանակ գտար, Լեւոնիկն սպաննելու, գռաց, անձնատուր եղի՛ր, եթէ ոչ, կտոր կտոր կ՚ընեմ քեզ։

Մարդասպանը սուրի հարուածով վիրաւորեց Լեւոնիկին ուսը։ Լեւոնիկ ցաւէն կսկծաց, բայց աւելի զայրացաւ, երբ տեսաւ որ դուռը բացուելով ուրիշ չարագործ մըն ալ ներս մտաւ և յարձակեցաւ իր վրայ։

— Ա... անիծուածնե՛ր, դուք երկուքնիդ էք թէ դեռ կան ուրիշներ ալ։ Միթէ դուք չէ՞ք գիտեր որ Լեւոնիկին համար տասն ալ քիչ է։

Կռիւը երկար չտեւեց։ Չարագործներէն մէկը շուտով վար ինկաւ, իսկ միւսը զայն տեսնելով, խոյս տուաւ ու շուտով անյայտացաւ։

Այդ միջոցին պատանի Գագիկը ելաւ տեղէն և տեսնելով վիրաւոր չարագործն, գլուխը շարժեց։ Չարագործը կը հեծէր մահուան տագնապի մէջ։

Աղմուկը ինկաւ վանքին մէջ և շուտով ամէն կողմէ ճրագներ վառուեցան։ Անոնք ամէն կողմ փնտռեցին միւս չարագործը բռնելու, սակայն հետքն ալ չգտան։ Ո՞ր տեղէն այդ մարդասպանները ներս էին եկեր և ո՞րտեղէն փախուստ տուաւ, անոնցմէ մէկը, առինկա անյայտ մնաց։ Սակայն երբ նայեցան վիրաւորուածի դէմքին, —սոսկացին։ — Վանքին ծառաներէն մէկն էր, Մարկոս։

— Դաւաճա՛ն, այդ կ'ուզէիր սպաննել. կանչեց վանահայրը բարկութենէն դողացող շրթունքներով։

— Ներէ... վանահա՛յր, ես մեղք չունիմ... Եղօն... խօսքը կիսատ մնաց վիրաւորի բերանին մէջ և շունչը փչեց։

— Կաշառուած էր Եղօէն, բայց թէ ո՞վ է այդ Եղօն, ահա՛ գաղտնիքը, ըսաւ Լեւոնիկ և սառնասրտութեամբ, իր վէրքը բացաւ կապելու...։

Թ.

## ՅՈՒՍԱՀԱՏ ՍԻՐՏԸ

Լուսիկի մատաղ կեանքը կը ծաղկէր և ուրախ թռչնիկի նման կը թռթռար։ Դեռափթիթ վարդի մը պէս օր օրի կը բացուէր ու կը գեղեցկանար, Գարնանային արեւին անդրանիկ ճառագայթները նոր սփռուած էին աշ-



խարհիս վրայ երբ Լուսիկ ոտքի վրայ էր։ Իր կովը նոր և դաշտը արձակած էր, իսկ ինքը բոլորն մտեր էր իր փոքրիկ պարտէզը, ուր նարինջն ու շուշանը, ռեհանն ու սուսամբարը կը բուրէին անուշահոտութեամբ։ Կը դիտէր ամեն մի մարգ. ամէն մէկ ծաղիկէ առանձին կը հոտոտէր և ապա կը ջրէր իր ծաղիկները...։ Լուսիկ կը սիրէր փոքրիկ պարտէզը, որ իր ձեռատունկն էր և ուր ազատ ժամերը կ'անցնէր իր ծաղիկներուն ու վարդերուն հետ խօսակցելով։ Այդ վարդերու թուփերուն վրայ ամէն առտու կը նստէր պլպուլը և իր սիրուն երգը կը երգէր։ Պլպուլը կ'երգէր...։ Անոր ձայնը խիստ անուշ, խիստ քնքոյշ էր, որ կը թրթռացնէր Լուսիկի սրտին ամենանուրբ թելերը և զայն լացնելու չափ կը յուզէր...։ Ո՛հ, պլպուլը սէր կ'երգէր, մատղաշ կեանքի մը սէրը, նոր բացուող վարդի կոկոնին սէրը։ Լուսիկի սիրտն ալ կարօտ էր այդ սիրոյն, կարօտ իր գիժ Ստեփանիկի սիրուն դէմքին, բայց ահա ամիսները կը գլորուէին իրարու ետեւէ, սակայն չկար ու չկար անի...։ Ա՜խ, թռի՛ր, պլպուլ, թռի՛ր, հեռացի՛ր իմ ձեռատունկ վարդերէս. քու երգը մեղրէն ալ քաղցր և թունալից քան օձի թոյնը. Դուն կրակ կը թափես սրտիս մէջ ու կ'այրես զայն, և թոյն կը թափես, կ'սպաննե՛ս զիս։ Մինչդեռ մեղեդինե՛ր ալ կ'երգես, որոնք քաղցր են քան նոյն ինքն երջանկութիւնը...։ Ա՜խ, երգեր, խաբուած կը մոռնամ ամէն ինչ և անոր գիրկը զիս կը կարծեմ. բայց սուտ է ամէն ինչ, դատա՛րկ ցնորք, սնոտի երա՛զ։ Ստեփանիկ զիս խաբեց և ա՛լ չը վերադառնար...։

Այսպէս կը մտածէր Լուսիկ և ամէն օր պլպուլի երգը լսելէ յետոյ կը ջրէր իր պարտէզը, ծաղիկներէն փունջ մը կը կազմէր և իր խրճիթը կը զարդարէր, ապա դիմելով հօրը շարունակ կը հարցնէր։

— Հայրի՛կ, Հարպիկ իշխանէն լուր չունի՞ս, ե՞րբ պիտի գայ Ստեփանիկը։

— Ի՞նչ է, աղջի՛կս, ինչու կը թռամին այտերդ և կը խաւարի աչքերդ, չէ՞ որ գիժ Ստեփանիկը խօսք տուաւ վերադառնալու. ինչու դուն համբերութիւն չունիս։

— Ախ, հայրի՛կ, օրերը կ'անցնին, բայց ո՛չ Հարպիկ իշխանը կ'երեւի, և ո՛չ Ստեփանիկը, իսկ ես կը մաշիմ։

— Համբերութիւնը լաւ բան է, Լուսի՛կ, չէ՞ որ ես ինքս օրհնեցի երկուքիդ նշանադրութիւնը և ինքը Հարպիկ իշխանը խոստացաւ խաչդ բռնել։ Միթէ Հարպիկ իշխանը կը դրժէ՞ իր խօսքը, միթէ կը մոռնա՞յ իր խոստումը։ Չէ՛, ուր որ է, մէջտեղ կ'ելլէ, որովհետեւ սիրտըն ալ կապուած է մեր Գոհարիկին հետ...։ Բայց ի՞նչ կը տեսնեմ, Լուսի՛կ, նայէ՛ չիտակ ճամբան, կարծես թէ փոշիէ ամպեր բարձրացան, խօսքը յանկարծ փոխեց դարբին Ղեւոնդ և ձեռքը ճակտին դնելով՝ ուշադրութեամբ սկսաւ դէպի փոշիի ամպը նայիլ։

— Այ՛ո, հայրիկ, կարծես թէ խումբ մը ձիաւորներ կուգան պատասխանեց Լուսիկ և անոր սիրտը կարծես թէ կանգ առաւ ուրախութենէն։ Հարպիկ՝ իշխանին և իր գիժ Ստեփանիկին կ'սպասէր այդ կողմէն։

— Անպատճառ Հարպիկ իշխանն է. ըսաւ Ղեւոնդ։

— Չեմ կարծեր, հայրի՛կ, Հարպիկ իշխանը պտըտիլ չը սիրեր խումբ ձիաւորներով, ան միայն Ստեփանիկի հետ կը պտըտի, մինչ այս խումբը մեծ է։ Չե՞ս տեսներ, հայրիկ, ինչպէս կը փայլին զէնքերը, արեւի ճառագայթներուն տակ, ով որ նշանաւոր է իշխաններէն մէկը ըլլալու է. ըսաւ յուսահատ ձայնով, Լուսիկը։

— Հա՛, կը հասկնամ, մեր թագաւորութեան խընամակալ Վեստ Սարգիսը պէտք է ըլլայ։ Օ՛, եթէ ան է, մենք չուտով պիտի հեռանամ դռներէն։ Ես չեմ ուզեր անոր երեսը տեսնել։



— Մինչդեռ հայր ու աղջիկ կը խօսէին, ձիաւոր խումբը մօտեցաւ անոնց, և սրարշաւ անցաւ անոնց առջեւէն դէպի Անի քաղաքը։ Հայր և աղջիկ զարմացած, դեռ կը նայէին անոնց ետեւէն։ Այդ խումբը բաղկացած էր մօտ հարիւր ձիաւորներէ քանի մը իշխաններէ, որոնց առջեւէն կ'երթար յոյն իշխան մը։

— Պատգամաւոր Հռոմներէն...։ Այս ի՞նչ բան է, ըսաւ Ղեւոնդը։

— Այո՛. յոյն իշխան էր առաջին ձիաւորը, բայց ան ի՞նչ բան ունի մեր երկրին մէջ։

— Անշուշտ նոր վիշտ մը, նոր տառապանք մը կը բերէ Հայերուն համար, եթէ ոչ Հռոմոց թագաւորը մեր օգուտին համար մեզի մօտ պատգամաւոր չը՛ղրկէր, կ'երեւայ թէ փորցաւ ունի։

— Բայց տեսա՞ր հայրի՛կ, ինչ գոռոզ կերպարանք ունէր. կարծես թէ ինք ըլլար մեր Հայաստանի տէրը, այնքան ինքզինք կը յոխորտար. չէ՞ որ մեր թագաւորներն ալ այդպէս գոռոզ կերպարանք ունին, ինչպէս յոյն իշխանը։

— Է՛հ, աղջի՛կս, հիմա անոնց գոռոզնալու ժամանա՛կն է, քանի որ մենք թագաւոր չունինք, բայց երբ Գագիկ իշխանը, թագաւոր օծուի, այդ ժամանակ անոնք չեն համարձա՛կիր այդպէս գոռոզ դիրք բռնել։

— Իսկ Գագիկը, ո՞ւր է, աղջի՛կս, հազիւ 15 տարեկան, և անպիտան Վեստ Սարգիսի ձեռքէն ծածուկ պահուած։ Ախ, թող իր թեւերը մի քիչ ամրանան, այն ժամանակ ցոյց կուտայ Վեստ Սարգիսին թէ ինքը ի՛նչ տեսակ արծուի ձագ է։

— Լա՛ւ, ինչո՞ւ Վեստ Սարգիսը թշնամութիւն կընէ Գագիկին։

— Ի՞նչու — անոր համար որ գահը ի՛նքը ժառանգէ և ո՛չ թէ Գագիկը։ Հարցուր Խենթին, տես ինչե՛ր կը պատմէ Վեստ Սարգիսի կեանքէն։ Ան իր փառասիրութեան համար ամէն ինչ կը զոհէ և ես կը կարծեմ որ այս յոյն իշխանն ալ ինք է հրաւիրեր, ո՛վ գիտէ ինչ սատանայութիւններ նիւթելու համար։

— Իսկ Հարպիկ իշխանը որո՞ւ կողմն է. մի՛թէ ան կը պաշտպանէ Վեստ Սարգիսը, եթէ հարկը ստիպէ։

— Եթէ հարկը ստիպէ՛...։ Եթէ հարկը ստիպէ, ան Վեստ Սարգիսի արի՛ւնը կը խմէ, ինչպէս և Վահրամը, բայց ի՛նչ կ'ընես որ՝ Վեստ Սարգիսը ներկայիս ուժեղ է և թագաւորութեան բոլոր գանձը իր ձեռքն է։ Այդ է պատճառը, որ Վահրամեանք հեռուէն կը մռմռան, բայց դեռ բան մը չեն կրնար ընել անոր։

— Աստուած վերջը բարի ընէ, հայրիկ. լաւ չէ, մեր իշխանները փոխանակ ձեռք ձեռքի տալու, իրարու դէմ կ'երթան։

— Հը՛մ, ճիշդ, այդ է որ մեր տունը կը քանդէ...։ Եթէ այս անմիաբանութիւնը չըլլար, մեր ազգին նման ուժեղ և զօրաւոր ազգ չէր գտնուէր հիմա։ Բայց ի՛նչ կ'ընես, որ արտաքին թշնամին ճիշդ այդ կէտը բռներ է ու մեր աչքը կը հանէ։ Եթէ, ի՞նչպէս կը համարձակէր կա՛մ յոյնը կամ արաբը՝ մեր աշխարհը աւրել և ոտքի տակ առնել։

— Բայց Վեստ Սարգիսը ի՞նչ կ'օգտուի, հայրի՛կ, իր անմիաբանութենէն։

— Այդ արդէն մեր բանը չէ։ Կ'օգտուի՞ թէ չ'օգտուիր, չգիտեմ, բայց թէ Հայաստանը տակն ու վրայ կ'ըլլայ, այդ լաւ գիտեմ։ Է՛, աղջի՛կս, կը մեծնաս, դեռ շատ բան կ'իմանաս։ Այժմ գնա՛, դուն ապուրը պատրաստէ, ով գիտէ գուցէ ճիշդ հիմա կ'երեւայ Ստեփանիկը և իր գժտութիւնները բանեցնէ ու քնէ չու-



տով ապուր ուզէ։ Չէ՞ որ քու եփած ապուրդ կը սիրէ։

Լուսիկ խոր ա՛խ մը քաշեց ու հեռացաւ, մինչ դարբին Ղեւոնդ. մտազբաղ սկսաւ խրճիթին առջեւը պտըտիլ։ Թէ ի՞նչ կը մտածէր — յայտնէ չէր, կ'երեւար միայն թէ անոր սրտին մէջ ներքին կռիւ մը կար, անյայտ որդ մը բոյն էր դրեր անոր սրտին մէջ և անգթօրէն կը կրծէր անոր սիրտը և կը վրդովէր հոգիին խաղաղութիւնը...։

Ք.

## ՓԱՐԵՑԷ՛Ք ԽԱՉԻՆ, ՎՏԱՆԳԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ

Եւ յանկարծ բօթաբեր գոյժը ցնցեց Հայաստանի մէկ ծայրէն միւսը...։

Յոյները կը պահանջեն Հայաստանը։ Անոնք-տէր են թղթի մը, որ թուլամորթ թագաւորը՝ Յովհաննէս Սմբատ՝ իր կնքով ու ստորագրութեամբ վաւերացնելով, իր մահէն յետոյ Հայաստանը կտակ կ'ընէ Յոյներուն...։ Դիւրին է ըսել թէ կտակ ըրեր է ..., բայց չէ՞ որ ատիկա տուն մը, այգի մը, ամայի երկիր մը չէր որ այդպէս դիւրաւ անցնէր մէկուն ձեռքէն միւսին։ Չէ՞ որ Հայաստանը մեռած չէր և չպիտի մեռնէր Յովհաննէս Թագաւորէն յետոյ...։ Ան կ'ապրէր ազատ, ինքնագլուխ և պիտի ապրէր։

Հայաստանը ստրկական կեանքին վարժ չէր և իր ազատութիւնը այդպէս դիւրին թղթի մը զօրութեամբ չէր տար Յոյներուն։ Եւ չտուաւ ալ։

Յոյն պատգամաւորները կը պահանջէին.

— Ձեր թագաւորին տուած թղթին զօրութեամբն մե՛րն է Անին և իր շրջակայքը. տուէ՛ք մեզի, և այն ժամանակ դուք մեծապէս կը վարձատրուիք և կ'ար-

թեամբ կը լսէր իշխաններուն խորհուրդը։

—Իշխաննե՛ր, այդ թուղթը, որուն զօրութեամբ Յոյները կը պահանջեն Անին և իր շրջակայքը, իմ ներկայութեամբ գրուած է և ես մեղաւորս ո՛չ մէկ կերպով չկրցայ մեր հանգուցեալ թագաւորն համոզել որ՝ ատիկա ազգակործան թուղթ մըն է։ Ան գրեց այդ թուղթը և իր կարճամեայ հանգստութիւնը շատ թանկ գնեց։ Բայց հիմա լաւ պէտք է մտածէք որ՝ Յոյները այլ ևս չեն ձեռք քաշեր այդ պահանջէն. ուստի, եթէ դուք ձեր մէջ ոյժ մը կը զգաք, եթէ ձեր մէջ ըլլայ անքակտելի միաբանութիւն մը՝ Յոյներու դիմադրելու, այդ պարագային համաձայն եմ ձեր վճռին և կ'օրհնեմ ձեր միաբանութիւնը։ Իսկ եթէ ձեր մէջ երկպառակութեան չար որոմը պիտի իյնայ, Հայաստանը պիտի ոտնակոխ ըլլայ, այդ պարագային ինծի կը մնայ լալ և ձեր յանցանքը ձեր վզին փաթթել։

— Դաւաճանը իր արժանաւոր պատիժը կը ստանայ, Վեհափա՛ռ Տէր, և քանի՛ Վահրամ իշխանը կենդանի է, Յոյները Անիի տէրը չեն դառնար։ Մեր գահը թէև թափուր է, բայց անիկա տէր ունի։ Գագիկը՝ անոր օրինաւոր ժառանգն է և պիտի ժառանգէ այդ գահը, ըսաւ Վահրամ և հրամայեց յոյն պատգամաւորից ժողովի հրաւիրել։

Անցաւ քիչ մը ժամանակ և յոյն իշխանը խորհրդարան մտաւ և տեսակ մը գոռոզ արհամարհական նայուածք մը ձգելով շուրջը, հարցուց։

— Ինչո՞ւ համար կը կանչեն զիս հայ իշխանները։

Վահրամ իշխանին դէմքի գոյնը թռաւ. բարկութեան շանթեր անցան անոր դէմքին վրայէն ու բարկութենէն ակռաները կրճտեց։

— Դուք մենէ կը պահանջէք Անին, այնպէս չէ՞։

— Կը պահանջենք, որովհետև մե՛րն է, մի՛թէ կը



յանդգնի՞ք դէմ կենալ մեծազօր կայսեր հրամանին։

— Յոյները Անիին չե՛ն տիրանար. յայտնեցէ՛ք կայսեր որ այդ ցնորքը հանէ իր մտքէն, պատասխանեց Վահրամ։

— Ինչպէ՜ս... դուք անարգ իշխաններդ կը յանդգնի՞ք մեր կայսեր դէմ կենալ, ըսաւ յոյն իշխանը, արհամարհական ժպիտ մը զրկելով վահրամ իշխանին։

— Իշխա՛ն, լեզուիդ չափ գի՛ր. ճանչցիր թէ դուն ո՛ւր կը գտնուիս, պատասխանեց Վահրամ իշխանը մինչև ակռաները կարմրելով.

— Ի՛նչ, ես պիտի վախնա՞մ անարգ Հայերէն...

— Լռէ՛, ապա թէ ոչ, շանսատակ կ'ընեմ քեզ, գոռաց Վահրամ և սուրը պատեանէն հանելով, կ'ուզէր յարձակիլ յոյն իշխանին վրայ, որ կը համարձակէր միշտ անարգ լեզու գործածել Հայերուն դէմ. սակայն այդ միջոցին մէջ ինկաւ Վեստ Սարգիս և զանոնք բաժնեց։ Յոյն իշխանը, որ երկիւղէն պահուըտեր էր Վեստ Սարգսի ետին, հիմա սիրտ առած, իր սուրը մերկացուցած էր և կը գոռար։

Բայց Վեստ Սարգիս դուրս տարաւ զայն և քիչ մը յետոյ ժողովն ալ փակուեցաւ։

Հայաստանի դրութիւնը տագնապալից էր...։ Վըտանգը կը մօտենար։

ԺԶ.

## ԼԵՌՆԵՐՈՒ ԱՒԱԶԱԿԸ

Հայաստանի Չորրորդ Հայք նահանգին մէջ, Տօրոս լեռներէն դէպի հիւսիս, Պաղին կամ Բաղնատուն գաւառը, անմատչելի լեռներուն գագաթը կը բարձրանային մէկ քանի անմատչելի բերդեր, ուր կ'իշխէին Հաբէլ

իշխանը և իր որդիքը՝ Հարպիկ, Դաւիթ, Լեւոն և Կոստանդին։ Շրջակայ թշնամիներէն ո՛չ մէկը չէր համարձակեր խանգարել այդ քաջերու անդորրութիւնը։ Թաթարն ու Յոյնը խոյս տուած էին ատոնց երեսէն, լսելով անոնց արիւնածարաւ գործերը և դեռ համարելով զիրենք, անուններէն անգամ կը դողային։ Վա՛յ էր անոր որ կ՚ըլլար այդ չորս եղբայրներու սուրերուն բերանը, անոր ա՛լ ազատում չկար և սուրի մէ՛կ հարուածը վերջ կը դնէր անոր կեանքին։

Մթին անտառներուն մէջ և լեռներու խոր ձորերուն ու ծերպերուն մէջ կը մղէին մեծ թիւով վայրի գազաններ. որոնք չէին համարձակեր Հաբէլի որդիներու առջեւ իրենց գլուխները դուրս հանել։ Անոնք գիտէին թէ՝ մահաբեր նետը վերջ դնէր իրենց կեանքին։ Թռչունները միայն ազատ կ՚երգէին անտառներու մէջ և իրենց ճռուողիւնով օդը կը թնդացնէին։ Անոնք ազատութիւն կը վայելէին հոն։ Անոնք գիտէին թէ՝ Հաբէլի որդիքը իրենց ձեռք չեն դպցներ և թէ՝ ուրիշներն ալ չէին համարձակեր խանգարելու իրենց հանգստութիւնը։ Եւ յիրաւի, Հաբէլի որդիքը ո՛րքան արիւնածարաւ էին, ա՛յնքան բարի և խղճով։ Անոնք անխնայ կը կոտրէին վայրենի գազանները, բայց ձեռք չէին դպցներ անմեղ թռչուններու։ Այդպէս ալ կը վարուէին մարդկանց հետ։ Հայ շինականները հոգւով չափ կը սիրէին ու կը պաշտէին, իսկ Յոյները ու Թաթարները ատելով կ՚ատէին։ Անոնք ծառաւի էին ատոնց արեանը, որոնք կը դաւաճանէին իրենց ազգին. Եւ այդ է՝ պատճառը, որ զանոնք որքան կը սիրէր գեղջուկը, ա՛յնքան կ՚ատէին Յոյները, Թաթարները և Հայ դաւաճան իշխանները, որոնք անոնց անունը՝ «աւազակներ» հռչակեր էին։

Եւ ահա՛ այն տեղ, լեռներու կողերուն վրայ կը բարձրանար Արղնի ամրոցին հսկայ պարիսպները, որոնց



գլխուն վերեւ կը սաւառնի բարձրաթռիչ արծիւը և իր սրատես աչքերով որս կը փնտռէ։

Հաբէլ իշխանը կանգնած էր աշտարակներէն մէկուն վրայ և գոհ սրտով հեռուն կը դիտէր, մինչ իր երեք որդիքը՝ Հարպիկ, Դաւիթ և Կոստանդին, խորին ակնածութեամբ կանգնած են իրենց հօրմէն քիչ մը հեռու և լուռ, իրենց հօր հրամանին կ՚սպասեն։ Բաւական է փոքրիկ նշան մը, ակնարկ մը, որ երեք որդիներն որդիական ակնածութեամբ զիրենք վար գլօրեն աշտարակի բարձրէն։ Հաբէլ կը նայի գոհունակութեամբ դէպի իր ոտքերուն տակ տարածուած լեռներու ծերպերը, ուր խոխոջալով կը վազեն լեռնային առուակները և սպիտակ ժապաւէնի մը պէս կոլորուին լեռներու չորս կողմը։ Հաբէլ գոհունակութեամբ կը շփէ իր ալեզարդ մօրուքը և յետոյ ակամայ նայուածքը դէպի վեր կը բարձրացնէ ուր դեռ կը պտըտէր արծիւը։ Յանկարծ անոր դէմքը կը կծկուի և այդ խրոխտ դէմքին վրայէն կ՚անցնի ժպիտի նման բան մը, յետոյ դառնալով իր որդիներուն կ՚ըսէ.

— Զաւակնե՛րս, մօտ եկէ՛ք։

Երեք որդիներն ալ ակնթարթի մը մէջ կը վազեն քովը, և ձեռքերը կուրծքերնին խորին ակնածութեամբ կը խոնարհին իրենց հօր առջեւ։

— Վեր նայեցէ՛ք. կը տեսնէ՞ք այն արծիւը, որ մեր գլխուն վերեւ կը պտըտի. անիկա որս կը փնտռէ. Հաբէլի որդիներուն ներկայութեան անիկա կ՚ուզէ յափշտակութիւն ընել, բայց չէ՞ որ անոր այդ իրաւունքը չէ տրուած։

— Այո՛, հայրի՛կ, ան չը համարձակիր, կը պատասխանէ Հարպիկ, մեծ որդին, և կրկին գլուխ կը խոնարհէ։

— Հը՛մ, բայց ան մեզ չի ճանչնար, մեր իրաւունք

ները կ'ուզէ ոտնակոխ ընել և թռցնել մենէ որս մը։

Ան կը պատժուի, հա՛յր, եթէ խրատունք կուտաք, ըսաւ դարձեալ Հարպիկ։

— Այո՛, պէտք է պատժել, պէտք է սորվեցնել թէ ո՛վ կ'ապրի այս աշտարակին մէջ, ըսաւ Հաբել և հեգնական կերպով դիմելով ամենուն, աւելցուց.

— Բայց ո՞վ արդեօք ձենէ մէկ նետի հարուածով վար կը գլորէ զայն իր բարձրութենէն։

— Ես, հայրի՛կ, ըսաւ Հարպիկ, աչքովը չափելով արծիւին հեռաւորութիւնը։

— Ե՛ս ալ, պատասխանեց միջակը։

—Ե՛ս ալ, ետ չմնաց կրտսերը և սիրտը թունդ ելաւ թէ արդեօք կը բաղդաւորեցնէ՞ հայրը, այդ գործը իրեն յանձնելով։

— Ինչպէս կը տեսնեմ ամէնքնի՛դ ալ պատրաստ էք, և եթէ Լեւոնիկս ալ հո՛ս ըլլար, ան ալ ետ չէր մնար, բայց ան լաւ գործի է։ Դէ՛հ, Կոստանդի՛ն սկսէ՛ այդ պատիւը քե՛զ կ'ուտամ, իբրև ամենափոքրին։ Ես կը տեսնեմ, որ աչքերդ անհամբերութենէ կը փայլին, ըսաւ Հաբէլ։

Կոստանդին ալ սպասեցնել չտուաւ։ Վերցուց նետը, դրաւ աղեղի մէջ և վայրկեան մը դիտեց արծուին պտոյտին ձևը։ Հայր և որդիք հետաքրքրութեամբ կը նայէին թէ արդեօք չը վրիպիր նշանը։ Արծիւը բաւական բարձր էր։

Յանկարծ Կոստանդին հաստատուն ձեռքերով քաշեց լարը, նշան դրաւ և արձակեց նետը։ Նետը սլացաւ վեր և քանի մը վայրկենէն հայր և որդի տեսան, որ թռչուններու թագաւորը տատանեցաւ, երերաց և ուժգնութեամբ վար սլացաւ, քանի մը վայրկեան ալ, և ան ինկաւ Հաբելի ոտքերուն տակ....։

Հաբէլ տեսաւ որ արծուի կուրծքին մխուած է,



Կոստանդինի արձակած նետը, և անոր կուրծքէն կը բղխի արիւնը։

— Ապրի՛ս, զաւա՛կս, դուն արժանի ես իմ որդիս կոչուելու, ըսաւ հայրը։

Կոստանդին մօտեցաւ հօրը, ծունկ չոքեց և համբուրեց հօրը ձեռքը, իսկ հայրը անոր ճակատը։

Առեն մը լռութիւն տիրեց։ Հաբէլ կարծես պահ մը մոռցաւ արծիւը, և դէմքին վրայէն մթին ամպ մը անցաւ։ Կերևար թէ, բան մը անհանգիստ կընէր զինք, և տակն ու վրայ կընէր սիրտը։

— Հարպիկ բաւական ժամանակ է որ մենք տեղեկութիւն չունինք Շիրակէ. այդ բանը շատ անհանգիստ կընէ զիս, արդեօք ի՞նչ է պատահեր այնտեղ, ըսաւ Հաբել, խօսքը տղուն ուղղելո՛վ, և սակայն առանց անոր դառնալու։

— Այո, հա՛յր, մէկ քանի ամիս է որ վերադարձեր եմ, և անկից յետոյ դեռ լուր չունինք, թէև Վահրամ իշխանը խօստացաւ շուտ շուտ տեղեկութիւն տալ մեզի։

— Կ'երևայ թէ այնտեղ կարևոր բաներ պատահեր են, և Վահրամ իշխանը միջոց չունի մեզի տեղեկացնելու։ Բայց դուն չե՞ս կարօտցած Գոհարիկդ դարձաւ Հաբել, և չեշտակի նայեցաւ աւագ որդոյն աչքերուն։

Հարպիկի ամօթխածութենէն մինչև ականջները կարմրեցան։

Ա՛... կը տեսնեմ որ սրտիդ լարերէն կը խօսիմ, բայց համբերութիւն ունեցիր և ամէն բան լաւ կերթայ։

— Շտապելու բան չկայ, հայրիկ, դեռ կարևոր գործեր կան։

— Ի՞նչ գործեր, զարմացած հարցուց հայրը։

— Յոյները կրկին հանգիստ չեն մնար, և դեռ

նըր մեր կալուածներուն վրայ յարձակում գործեցին։

— Ի՞նչպէս... յետոյ...։

— Յետոյ, անոնք ստացան իրենց արժանի հատուցումը։

— Հը՛մ... մինչ Յովհաննէս Թագաւորը վախճաններ է՝ ատոնք երես են առած. պէտք է անոնց դաս մը տալ. ինչպէս կ'երեւայ նախկին դասերէն չեն խրատուեր։

— Այո՛, հայրիկ, լուրերուն եթէ նայինք, Յոյները մտադիր են յարձակելու նաեւ մեր բերդերուն և ինչպէս կ'ըսեն, այդ գործին կ'օգնեն նաեւ հայ իշխաններէն մէկը։

— Ո՞վ։

— Թլպաղտոյ բերդի իշխան Թորոսիկը։

— Թորոսի՞կը... և ի՞նչ կ'ուզէ. միթէ կը փափաքի որ մեր բերդերը Յոյներու տանք, և անոնք մեզմէ առնելով իրենն հրամցնեն։

— Ան յիմարցեր է, հայրիկ, կ'ուզէ Վասակներու, Մերուժաններու դասակից ըլլալ։ Անոնց դափնիները Թորոսիկին հանգստութիւն չեն տար։

— Իսկ անոր որդին, Ստեփանիկը, չէ՞ որ մեր քովը պատանդ է։

—Որդին հօր արիւնէն չէ, Ստեփանիկը ամենահայրենասէր երիտասարդներէն մէկն է, և կ'ատէ իր հայրն։

— Կ'ատէ՞...։ Այդպէ՛ս ալ պէտք է, բայց հարկաւոր է զգոյշ ըլլալ։ Ո՞վ գիտէ ինչ կրնայ պատահիլ։

— Ես երաշխաւոր եմ Ստեփանիկի համար, հայր, անիկայ չուզեր մինչեւ իսկ իր հօրը երեսը տեսնել։ Դաւաճան կ'անուանէ իր հայրը։

— Լաւ։ Բայց ահա ով է որ մեր ամրոցը կը բարձրանայ։



Հրամայեց բանալ դռները և ընդունիլ։

Կրկին լռութիւն տիրեց։ Հաբէլի որդիներէն մէկը իսկոյն հեռացաւ, և կարճ ժամանակէ մը մեզ դարձաւ յաղթանդամ մարդու մը ուղեկցութեամբ։ Անծանօթ մարդը դեռ հեռուէն տեսնելով Հաբէլ իշխանը կանչեց.

Ինձ մի հարցնէք, ով եմ ես...

—Խենթն է, ըսաւ Հաբէլը ու ժպտեցաւ։

Խենթը մօտեցաւ Հաբէլ իշխանին, ձեռքերը կուրծքին դրաւ գլուխը կախեց։

— Բարեւ, Խենթ, բարեւ, հը՛, կրկին խե՞նթ ես թէ խելօքցած ես։

— Տեղ կայ խենթ, տեղ կայ խելօք, իսկ տեղ կայ ոչ խելօք և ոչ խենթ... բայց առէք Վահրամ իշխանի նամակը։

Հաբէլ իշխանը կը կարդար նամակը և դէմքը հետզհետէ կը գունաւորուէր։ Բարկութեան ալիքները կ'անցնէին անոր դէմքին վրայէն և աչքերը կատաղութեան շանթեր կ'արձակէին։

Հարպիկ իշխանը կը նայէր հօր դէմքին, և անոր սիրտը ղունծ էր ելեր։ Ան կ'զգար, որ օտարոտի անցքեր պատահեր են Հայաստանի մէջ։ Արդեօք Գոհարիկին ալ բան մը չէ՞ պատահեր։

Հաբէլ իշխանը վերջացուց կարդալը, և դառնալով որդւոյն ըսաւ.

— Հարպի՛կ, որդիս, դուն պէտք է իսկոյն երթաս Անի։ Գործերը խիստ ծանրացեր են, Յոյները կ'ուզեն Հայաստանի տէր դառնալ, իսկ Վեստ Սարգիս իշխանը, Հայոց թագաւորութեան խնամակալը գաղտնի կերպով կ'օգնէ անոնց, յուսալով որ՝ անոնք Հայաստանի թագը կը դնեն անոր գլխին։ Բայց վա՜յ դաւաճաններուն։

— Իսկ դո՛ւ, Դաւիթ, դառնալով միւս որդւոյն,

ամրացուր մեր բերդերը և զօրնդերդ պատրաստ պահէ՛ պէտք եղած դէպքերուն օգնութեան երթալու Վահրամ իշխանին։ Հայաստանի սիրտը Անին է, եթէ Անին խլուի մեզմէ, ամէն բան կը վերջանայ։ Սիրտը դադրելէն ետք մարդս չկրնար գոյութիւն ունենալ։ Լաւ տեղ են բռներ անպիտան Յոյները։

Հաբել իշխանը վեր ելաւ և դառնալով Խենթին, ըսաւ.

— Լաւ լուրեր չես բերած, Խենթ, հետեւէ ինծի պէտք է այդ մասին մանրամասնօրէն խօսիլ։

Անոնք հեռացան աշտարակէն, իսկ քիչ մը ետքը երկու ձիաւոր դուրս գալով Արղնոյ ամրոցէն, ձիերուն գլուխները դարձուցին դէպի Անիի ճամբան սլացան արագ։

Ձիաւորներէն մէկը Հաբելիկ իշխանն էր իսկ միւսը Ստեփանիկը՝ դաւաճան Թորոսիկ իշխանի որդին...։

ԺԶ.

## ԴԱՒԱՃԱՆԸ ԿԸ ՀՐԺՈՒԻ

Վեստ Սարգիս իշխանը, մտազբաղ իր սենեկին մէջ էր նստած։ Կռթնած էր թանկագին օթոցին, և աչքերը կէտի մը յառելով՝ կը մտածէր։ Ծանր էր դաւաճանի դրութիւնը... անոր սեւ սրտին մէջ խիղճը երբեմն երբեմն թոյլ կերպով կը շանթէր, բայց անհետք, առանց նշան թողելու, կը կորչէր, կը չքանար։ Անոր հոգւոյն մէջ բոյն էր դրած սեւ փառամոլութիւնը, որ կը նեղւէր, ոչնչացնէր ամեն լաւ զգացումի նշան։ Բայց դաւաճանին սիրտն ալ մարդու սիրտ է, հոն ալ գոյութիւն ունին արտասուքն և ուրախութիւնը, խիղճն և անխղճութիւնը։ Ան ալ երբեմն կուլայ, երբ կը տեսնէ անմեղ



զոհի մը տանջանքն ու չարչարանքը, և անոր հետ կը տանջուի և կ'ուրախանայ։ Վիշտը անոր սիրտն ալ կը կրծէ և դառն մտածումները անոր արիւնն ալ կը սառեցնեն երակներուն մէջ...։

Վեստ Սարգիսը, այդ րոպէին, իր [կատարելիք, իր դերին վրայ կը մտածէր։ Անոր գլխուն մէջ մտքերը այդ րոպէին իսկ ահարկու կռիւ մը կը մղէին, իսկ իր կամքը կը ծփար այդ մտքերուն մէջ։ Դեռ չարագործութեան առաջին աստիճաններուն վրայ էր կանգնած։ Դեռ միայն քայլ մըն էր առած, փոքրիկ քայլ մը, դէպի դաւաճանութիւնը, դէպի վատութիւնը, և այդ տեղ կանգ առնելով կը տեսնէր երկու ճանապարհ։ Կ'զգար, որ այդ կանգնած տեղէն դեռ յոյս մը կայ ետ դառնալու, դեռ կարելի է միւս ճամբէն երթալ, բայց եթէ քայլ մըն ալ առնէր, այն ատեն ուշ պիտի ըլլար։ Անոր աչքերուն առաջ պարզ կերպով կը պատկերանար երկու ճամբաներ կը տեսնուէր, կը տեսնէր որ մէկ ճամբան կը տանէր դէպի համեստ բայց պատուաւոր կեանքը, բայց, միւս ճամբան դէպի փառքը, թագաւորական գահը։ Բայց... բայց առաջին ճամբուն վրայ փռուած էին երփնէրանգ ծաղիկներ, իսկ երկրորդին վրայ դիակներու կոյտեր, որոնց վրայ կոխկռտելով պիտի հասնէր այն գահին, որ կը փայլէր հեռուէն...։ Ի՞նչ էր լաւը։ Երթալ դէպի ծաղկազարդ ճամբան, և հանգիստ, պատւով վերջ դնել իր մարմնաւոր կեանքին, թէ կոխկռտել արիւնաթաթաւ դիակները, լսել վիրաւորներուն դառն, աղեկտուր հառաչանքները և արիւնոտ զոհերով փայլուն գահին վրայ...։ Ահա թէ ինչ բան կը տանջէր այդ րոպէին Վեստ Սարգիսը և կը չփոթէր անոր սիրտն ու հոգին...։

Եւ երկար ժամանակ բուռն կերպով կ'ընդհատէին այդ մտքերը այնպէս, ինչպէս որ ովկիանոսի ահեղ ա-

լիքները կը ծփան, իրար կը զարնեն, կ'ոչնչանան և կըրկին ժանտ օձի մը նման գլուխները վեր կը բարձրացնեն։

— Ո՛չ, քայլ մը առաջ եմ գացեր և ալ ետ դառնալ անհնարին է։ Յիմարութիւն կ'ըլլայ իմ կողմէս ետ դառնալ։ Հայաստանի գահը ինծի պիտի պատկանի կամ ոչ ոքի։ Ես դիակներէն ինծի համար պատուանդան պիտի չինեմ և հասնիմ այդ գահին։ Եւ իմ անյողդողդ կամքը չպիտի ընկճուի երբէք, եթէ տեսնեմ, որ ամբողջ Հայաստանը մոխրի և աւերակներու կոյտ է դարձեր։ Վեստ Սարգիսը թոյլ չի տար որ խելացնոր պատանին միայն, ժառանգի գահը՝ իսկ ինքը ստորագրէ...։ Ես պիտի երթամ առաջ, պիտի հասնիմ նպատակներուս դանդաղ, բայց հաստատուն քայլերով։ Արտաքին գահին պաշտպան, իսկ ներքինին՝ գահը ժառանգող։ Ահա իմ ծրագիրը, ահա իմ նպատակը։ Եւ վա՜յ անոնց, որոնք իմ ճամբուս վրայ կը կանգնին։ Անոնց փրկութիւն չկայ։ Շուտով կ'անհետանան իմ ճամբէս Գագիկը և Վահրամը, և այն ատեն, երբ կը հասնիմ փափագած նպատակիս, վա՜յ այն իշխաններուն, որոնք կը պաշտպանէին Վահրամն և Գագիկն։

Վեստ Սարգիս, վեր ելաւ և սկսաւ չրջիլ սենեկին մէջ, ան ատեն սենեկին դրան վարագոյրը ետ քաշուեցաւ, և գլուխ մը երեւցաւ, որ հետաքրքրութեամբ Վեստ Սարգիսին կը նայէր, սակայն Վեստ Սարգիս իր մտքերուն հետ ինկած՝ չէր տեսներ զայն.

— Իշխա՛ն, ըսաւ մարդը, և ներս մտաւ։

Վեստ Սարգիս, կանգ առաւ և նայեցաւ այդ մարդուն։ Րոպէի մը մէջ անոր կնճիռները բանձրացան, և ինքզինքին հանդիստ դէմք մը առած։

— Եղօ, բարի ես եկեր, նստէ, տեսնենք ինչ նոր լուրեր բերած ես։

Լրտեսը և իշխանը նստեցան։



Վահրամ իշխանը մեծ պատրաստութեան մէջ է, տէր, կարծես թէ հոտ է առած, որ դուն կուզես գահը ժառանգել։

— Ի՞նչպէս։

— Վահրամ իշխանը քանի մը իշխաններով և Պետրոս կաթուղիկոսին հետ խորհրդակցելով կուզեն Գագիկը Անի բերել և թագաւոր օծել։

— Այդ անմիտ... տղա՞ն։

Անոնք այդպէս կ'ըսեն, որ գահը թափուր չհամարուի. և ոչ ոք աչք ունենայ այդ գահին։

— Իս, ո՞ւր է այժմ Գագիկը։

— Յայտնի չէ։ Մեր սպանութեան փորձը չյաջողելով Ս. Անապատի վանքէն հեռացուցեր են, բայց թէ ո՞ւր յայտնի չէ։ Անոնք այժմ խիստ զգոյշ են և ամէն միջոց ձեռք են առեր գաղտնի պահելու Գագիկ Բագրատունիի տեղը։

— Հը՜մ...։ Այդ երեխան թագաւոր կ'ուզեն օծե՜լ... բայց Վահրամը այդ չկրնար ընել։ Ես կը խանգարեմ անոր, մինչեւ որ յունական զօրքերը վրայ հասնին։ Չէ՞ որ Վահրամը անպատուեց Յունաց պատգամաւորը։ Մի՞թէ կայսրը հանգիստ կը թողու Անին և չի՞ պատժեր Վահրամը։

— Այո՛, իշխան, եթէ Յունաց զօրքերը շուտ հասնին, Վահրամը իր նպատակին չկրնար հասնիլ։ Ան ինչպէս գահի պաշտպան, նախ պիտի Յոյներուն հետ կռուի մղէ, զանոնք հեռացնէ, յետոյ մտածէ Գագիկը թագաւոր օծել։

— Բայց որո՞նք են Վահրամին համամիտներ։

— Շատ իշխաններ, որոնց թիւը մօտ երեսունի կը հասնի։

— Հա՛ կը հասկնամ, բոլորն ալ իր ազգականներն են։

— Չէ՛, իշխան, կան, նաև ոչ ազգականներ, մինչև անգամ հեռաւոր Տօրոսի լեռներէն ալ համախոհներ կան Վահրամին:

— Որո՞նք են:

— Պաղին գաւառի իշխանը՝ Հաբէլ, իր որդիներուն հետ:

— Այդ աւազակնե՞րը:

— Այո՛ որոնք պատրաստ են իրենց կեանքը դնել՝ գահը պաշտպանելու համար:

— Լաւ, անոնց դատաստանը Յոյներու կը թողում. անոնք գիտեն թէ ինչպէս պէտք է պատժել աւազակները, և շուտով անոնց ամրոցները մոխրի կոյտեր կը դառնան:

— Այդպէս ալ պէտք է, մենք մեր ձեռքով ոչինչ չպիտի ընենք: Բայց միևնոյն ժամանակ զգոյշ ըլլանք որ չիմանան թէ քու մատը խառնուած է մէջը: Վահրամ իշխանը շրջապատուած է իր լրտեսներով:

— Որո՞նք են այդ լրտեսները, արհամարհելով հարցուց Վեստ Սարգիս:

— Շատերը: Մինչև անգամ օրիորդներ...:

— Ի՞նչ օրիորդներ:

— Յիշես, իշխան, երբ մենք ձիերով կ'երթայինք Գագիկը միւս աշխարհը ուղարկելու, և ճամբան Անիի դռներէն քիչ մը հեռու, մենք կանգ առինք դարբնոցի մը առաջքը: Կը յիշես՝ մարդ մըն ալ քու ձիդ պայտեց, ծերունի դարբինը և քեզմէ դրամ չուզեց առնել և բացի ատկէ քանի մը քայլ չարած քու ձիու պայտը վար ինկաւ: Ահա անիկա իսկապէս լրտեսարան մըն է, որ կը հսկէ թէ՝ ո՞վ կ'երթայ, ու ո՞վ կուգայ Անի, և իսկոյն կը տեղեկացնէ Վահրամ իշխանին: Այդ ծերունի դարբինը աղջիկ մը ունի, որ գաղտնի յարաբերութեան մէջ է Վահրամի աղջկան գոհարիկի հետ:



— Հասո՞ւն աղջիկ է:

— Հասուն և սիրուն:

— Հը՛մ, ատիկայ յարմար կուգայ յոյն իշխանին նուիրելու: Պէտք է կրակ տալ անոր տունը և օրիորդը մեր բանտերէն մէկը փոխադրել, մինչև որ երևան յոյն իշխանները:

— Բայց պէտք է շտապել, տէ՛ր:

— Այո՛, պէտք է շտապել, և այդ գործը դու պիտի կատարես: Վերցուր հինգ ձիաւոր, և զգուշութեամբ մօտեցէք տունը. նախ օրիորդը կապեցէ՛ք, և ապա կրակ տուէք:

— Իսկ հօ՞րը:

— Հօրը դանակի հարուածով մը սատկեցուցէք: Թող ան իմանայ, որ Վահրամը այնքան անզօր որ իրեն չկրնար օգնել:

Եզօն վեր ելաւ:

— Բայց, Եզօ, զգոյշ կեցիր՝ գործը շինելու տեղ չքանդես: Գագիկը չկարողացաւ սպաննել, գոնէ տեղը իմացիր: Դե՛հ, գնա, յոյս ունիմ որ առանց աղմուկի շուտով օրիորդին մեր ներքին նկուղներէն մէկուն մէջ կը տեղափոխես:

— Վստահ եղիր, տէ՛ր, ըսաւ Եզօն, և շուտով անյայտացաւ այնպէս, ինչպէս որ յայտնուեցաւ:

ԺԳ.

## ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ

Անիի և անոր շրջականները խորունկ մթութիւն մը կը տիրէր:

Ամէն տեղ մարած էին լոյսերը, ամէն տեղ դադրած էր շարժումը, քաղցր քունը պատէր էր ամէնքն, դանոնք տարած էր, երազական այն աշխարհը, ուր

կը տիրապետէր, սարսափներ և անուշ երջանկութիւն...։ Միայն Լուսիկ, քնացած չէր, որ ճրագի աղօտ լուսաւորութեան տակ նստած, ձեռքը դրած էր ծնօտին և իր սեւ մեծ աչքերով կը նայէր դուրսը, դէպի խորին խաւարը, ուր կը տիրէր խորին խաղաղութիւն...։ Բայց խաղաղ չէր անոր սիրտն ու հոգին։ Մատաղ սիրտը կարծես մօտալուտ փոթորիկներ կը գուշակէր և կը խըռովէր անոր հոգին։ Հայրը՝ դարբին Ղեւոնդը շատոնց քնացեր էր, մինչդեռ ինքը չէր կրնար քնանալ։ Երազի նման անոր աչքին առջեւն կ'անցնէին իր մանկական կեանքի ուրախ պատկերները, երբ ան անհոգ թռչնիկի մը պէս կը վազվզէր կանաչապատ դաշտերով և ձորերով, և դաշտերուն ծաղիկներէն փունջեր կազմելով կու տար իր մօրը և կամ պսակներով կը զարդարէր իրենց սիրելի կովին գլուխը...։ անցան այդ օրերը, երջանիկ օրերը ; երազի մը պէս չքացան անոնք, և ինքը հասուննալով ճաշակեց կեանքին համը։ Ա՛խ, այդ համը շատ դառն և վշտալից է, խոր կսկիծներ կը պատճառեն մատաղ կեանքին, և կնկլմեն զինքը մտածմունքի ծովին մէջ... բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, երբ ան փոքր էր, ու չէր գիտեր վշտանալ, ցաւիլ ու տրտմիլ...։ Միթէ վարդը կը բացուի միայն տրտմելու և ցաւելո՞ւ. միթէ կուսական սիրտը՛ հասուննալո՞վ միայն պիտի տրտմի և ցաւի ու խորին վիշտը կեղեքէ անոր հոգին։

— Ո՜հ, ինչո՞ւ ես չեմ կրնար քնանալ. քնանալ կուզեմ, բայց քունը կը փախչի աչքերէս. մոռնալ կ'ուզեմ աշխարհը, վիշտերն, տրտմութիւնները, սակայն անոնք նոր ուժով կը կեղեքեն հոգիս և կը վրդովեն սիրտս... կ'ըսէր Լուսիկ, և անոր սիրուն աչքերէն արտասուքի առատ կաթիլներ կը թափէին։

Լուսիկ կուլար, ո՞վ գիտէ ինչո՞ւ։ Իր խենթ Ստեփանի՞կն էր կարօտցած թէ մայրը կը յիշէր, յայտնի



չէր, միայն այս գիշեր տրտում, խիստ յուզուած կ'երեւար, կ'զգար որ իր սիրտիկը խիստ արագ կը բաբախէր։

— Ո՜հ, Աստուած իմ, ի՞նչ պիտի պատահի ինծի, ըսաւ ինքնիրեն Լուսիկ, և բռնեց իր սիրտը, կարծես թէ փախչելու ըլլար իր նեղ կապանքներէն։

Անգիտակցաբար իր ուշադրութիւնը կէտի մը վրայ դարձուց և սարսռեցաւ։ Կարծես սիրտը կանգ առաւ։

Իրենց դռնէն քանի մը քայլ հեռու ստուերներ նըշմարեց, որո՛նք լուռ կը խորհրդակցէին իրարու հետ։ Եւ Լուսիկ որոշակի լսեց թէ ինչպէս անոնցմէ մէկը կ'ըսէր միւսին։

— Զգոյշ կեցէք, օրիորդին վնաս չհասցունէք, ան պէտք է ողջ համնի մեր իշխանին ձեռքը։

Լուսիկ տեղն ու տեղը մնաց սառած, քանի մը վայրկեան, երկիւղը պաշարեց անոր, և քիչ մնաց խելքը կորսնցնէր, յետոյ ոստումով մը դէպի հօր անկողինը ցատկեց եւ հրելով անոր ըսաւ.

— Հայրի՛կ, հայրի՛կ, վեր ել, վտանգը մօտ է մեզի։

Քնաթաթախ վեր թռաւ դարբին Ղեւոնդ եւ դեռ աշփոթուած կանգնած էր սենեակին մէջ, երբ դուռը աճարճատիւնով ջարդ ու փշուր եղաւ եւ քանի մը մարդ ներս մտան սենեակ։ Ճրագը մարեցաւ, եւ մթութեան մէջ սկսաւ կռիւը։

Բայց անզէն, քնաթաթախ դարբինը ոչինչով չկըրցաւ դիմադրել չորս թէ հինգ մարդու, որոնք սուրի քանի մը հարուածներ տալով վար գլորեցին զայն։ Դարբինը ինկաւ արիւնի մէջ շաղախուելով, եւ սկսաւ փորսող տալով անգիտակցաբար դուրս սողալ, այն աւազակները յարձակած էին Լուսիկի վրայ, եւ կ'ուզէին կապել զայն, որ բոլոր ուժով դեռ կը կռուէր աւազակներուն հետ։ Ան ակռաներով կը խածնէր, կը ճան-

կրտէր անոնց երեսները, եւ աքացի կուտար, բայց ույժը զէնքը յաղթեց։ Զարագործները Լուսիկի բերանը թաշկինակ դրին որ ձայն չհանէ, յետոյ պինդ պարաններով կապելով անոր ձեռքն ու ոտքը դուրս տարին սենեակէն։

Լուսիկ արդէն ուժաթափուած էր։ Անոր վերջին խօսքը Ստեփանիկին անունն էր, որ ակամայ դուրս թըռաւ անոր սրտի խորքերէն. իսկ թէ այնուհետեւ ինչ պատահեցաւ, — ո՛չինչ չիմացաւ։ Ան չտեսաւ մինչեւ անգամ թէ ինչպէս աւրագործները զինք խրճիթէն հեռացնելով, դրին կանաչ խոտի վրայ, իսկ մէկ քանիները ետ դառնալով կրակ տուին իր տունը ու օճախը, ու՛ անցուցեր էր իր մանկութեան քաղցր օրերը։ Յետոյ երբ բոլորակ դաշտին վրայ իրենց տունը կրակէ փունջ մը կազմելով լուսաւորեց շրջականները, այն ատեն միայն Լուսիկը դրին ձիու մը վրայ, եւ չուառով մը հեռացան։

Իսկ երբ բացաւ իր աչքերը, ան տեսաւ որ, ինքը կամարակապ սենեակներէն մէկուն մէջ կը գտնուի, ուր չէին թափանցեր մինչեւ անգամ արեւի ճառագայթները։

ԺԴ.

## ՅՈՒՆԱՑ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ

Եւ յանկարծ Հայաստանի արեւմտեան կողմէն երեւեցան յունական լեգէոնները, եւ ճամբան հանդիպած գիւղերն ու շէնքերը սկսան մոխիրի եւ աւերակներու կոյտեր դարձնել...։

Անի քաղաքը ցնցուեցաւ։ Ան կ'զգար որ այդ լեգէոնները դէպի իրեն կուգան, որ հարուածով մը միտի ջնջէ ոչնչացնէ երկրին երեսէն չէն Անին, եւ այդպիսով պատժէ այն յանդուգն Հայերն, որոնք համար-



ձակած են մեծազօր կայսեր դեսպանին անպատուութեամբ
ետ դարձնելու։ Եւ գոռոզ Յոյները անողորմաբար կը
չարչարէին Հայերը, կ'ոչնչացնէին հանդիպած շէնքն ու
գիւղը եւ կը յառաջանային դէպի Հայաստանի սիրտը,
դէպի գոռոզ Անին, որ կ'արհամարհէր զանոնք։
Յոյները վստահ էին իրենց յաղթութեան վրայ,
վստահ էին, որովհետեւ անոնք գիտէին, որ Հայաստանը տէր չունի, գլուխ չունի, որ թեւերուն տա՛կ ժողովելով կարողանային դիմադրել անոնց։ Ո՞վ կը յանդըգնէր իրենց առջեւ ելլել քանի որ գա՛հը թափուր էր,
իսկ տէրութեան խնամակալը՝ Վեստ Սարգիս՝ իրենց
ձեռքին կոյր գործիք եղած էր։
Եւ դաւաճանը երբոր լսեց Յունաց լեգէոններուն
դէպի Հայաստանի սահմանները մտնելը, սիրտը թունդ
ելաւ եւ փառասիրութեան կրակը բորբոքեցաւ անոր
հոգւոյն մէջ։ Կ'զգար, որ իր փափաքները կը կատարուին, որ իր ծրագիրները հետզհետէ կ'իրականանար, և մօտ
է այն ժամը, երբ արքայական թագը կը դնէ իր գըլխուն եւ կը բազմի Բագրատունեաց գահին վրայ։
խուն եւ կը բազմի Բագրատունեաց գահին վրայ...։
Այն ժամանակ վա՜յ իր հակառակորդներուն աչքին փոշի փչե-
Եւ Վեստ Սարգիս անիցիններուն աչքին փոշի փչելով, յայտնեց անոնց թէ՝ անտեղեակ՝ Յոյներու Հայաստան մտնելէն, հեծաւ իր նժոյգը եւ սլացաւ Անիէն
դուրս։
Եւ երբ դուրս ելաւ Անիի դռներէն, անոր դիմագիծը փոխուեցաւ, ուրախութեան եւ ցնծութեան ալիքներ անցան անոր երեսին վրայէն եւ անուժգին մտրակելով իր ձին, երեսը դարձուց դէպի Հայաստանի արեւմըտեան սահմանները, ուր արդէն կը մխային հայ գիւղերը, եւ սլացաւ յառաջ։
Անոր ոտքերուն տակ կարծես հըլլար, կարծես օդի
Անոր ոտքերուն տակ կարծես չըլլար, կարծես սիրտը կը ճամէջ ըլլար, այնպէս կը սլանար, կարծես սիրտը կը ճա-

թէր անհամբերութենէն, վաղօրօք հասնելու համար Յու-նաց բանակը։

— Թո՛ղ իմ ձիս, իմ անուշիկ նժոյգս, այժմ դու զիս Անիէն դուրս բերիր ինչպէս սոսկ իշխան մը, որ շուտով ներս կը բերես իբրեւ թագաւոր, իբրեւ միահեծան տէր բովանդակ Հայաստանի, կ'ըսէր Վեստ Սարգիս եւ աւելի կ'արագացնէր ձին։

Անցան քանի մը օրեր։ Ցորեկը գիշեր էր դարձած, իսկ գիշերը ցորեկ. սակայն Վեստ Սարգիսի համար հանգըստութիւն չկար։ Դեռ կ'սլանար յառաջ երբ իրիկուն մը հեռու, հորիզոնի մը վրայ կրակէ բոցեր նշմարեց, որոնք երբեմն կը բոցավառէին և երբեմն կը հանգչէին։

Վեստ Սարգիսի դէմքը պատեց անիմանալի մտահոգութիւն մը և քաշեց ձիուն սանձը, առանց աչքը հեռացնելու բոցերէն, կարծես կ'զգար, որ այդ բոցերուն մէջ կը կատարուին մարդկային բարբարոսութիւններէն ամենասոսկալի պատկերներ, կարծես իմացաւ որ կ'այրուին հայկական գիւղեր, ու կրակին մատնելով հայոց կովերն ու ոչխարները, անդ ու անդաստանը, անխնայ կը կոտրուին իր իսկ հայրենակիցներն ու ազգականները...։

Վեստ Սարգիս տխրեցաւ, անոր սրտին մէջէն անցաւ տեսակ մը անբացատրելի յուզմունք, տենդի մը չափ յեղաշրջեց անոր մտքերը, անոր հոգւոյն բոլոր տրամադրութիւնները։

— Այդ ի՞նչ կրակներ են, դարձաւ ան իրեն միշտ անբաժան Եղօյին, որ նոյնպէս հետաքրքրութեամբ կը նայէր կրակներուն։

— Տէ՛ր, այնտեղ Յունաց բանակն է որ տեղաւոր-ուած, ուր մենք կաճապարենք, պատասխանեց Եղօն, բուն պատասխանէն չեղելով։

Վեստ Սարգիս աւելի մռայլեցաւ։ Կ'ուզէի լսել,



որ այդ կրակները ուրիշ բան մը կը դուշակեն և ոչ թէ
հրդեհ, աւերածութիւն, Եղօն այդ մասին բան մը չըսաւ,
թէև գիտէր անոնց նշանակութիւնը։ Միթէ Եղօն ալ կը
սարսափէր իրեն պէս այդ բոցերուն վրայ նայելու, մը-
տածեց Վեստ Սարգիս և կրկին դարձաւ անոր.

— Եղօ՛, ես քեզի կը հարցնեմ թէ այդ ի՞նչ կրակ-
ներ են, որ կը լուսաւորեն խաւար շրջականերն։

— Յունաց բանակի խարոյկներն են, տէ՛ր, որուն
վրայ անոնք կը տաքցնեն իրենց սառած մարմինները,
պատասխանեց Եղօն, դժոխային ժպիտ մը ձգելով։

Վեստ Սարգիս, նայեցաւ անոր և սարսռաց։ Իր
զինակցին դէմքը զարհուրելի էր։

Անոնք լուռ, կրկին առաջ անցան։ Բոցերը հետըզ-
հետէ կը պարզուէին և անոնց մէջ կը նշմարուէր շար-
ժումներ։

— Իշխա՛ն, եթէ քիչ մ'ալ առաջ երթանք, կ'երեւ-
ւայ Յունաց բանակը։ Չե՞ս տեսներ, ահա բլուրին ստո-
րոտէն արդէն կ'երեւան Յունաց տաղաւարները, ըսաւ
Եղօն և մատով ցոյց տուաւ մօտակայ բլրին ստորոտը։

Վեստ Սարգիս չպատասխանեց և կրկին առաջ կ'եր-
թային, երբ իրենց ոտքերուն տակ ստուերներու նման
քաներ նշմարեցին, որոնք ճամբուն աջ ու ձախ չեղուե-
լով պահուըտած էին թուփերու ու մացառներու մէջ։

Անոնցմէ մէկ քանիները մինչեւ անգամ խելագար-
ներու պէս առաջ վազելով, նշմարեցին ձիաւորները և
ուղղակի ձիերուն ոտքերուն տակ իյնալով, կեցան Վեստ
Սարգիսի ձիուն առջեւ։

— Ո՞վ ես դու, ըսաւ իշխանը իր ձիու ոտքերուն
տակ թաւալող հառաչող կինոջը, որ ամուր գրկած էր իր
ծծի երախան։ Յուսահատուած կինը երբ տեսաւ իշ-
խանական զգեստը, և լսեց հայ լեզուն, ուրախութենէն
փաթթուեցաւ ձիու ոտքերուն և հառաչելով ըսաւ.

— Տէ՛ր, ազատեցէ՛ք մեզ, կը չարդեն։

— Ո՞վ է ջարդողը, հարցուց խեղդուած ձայնով մը Վեստ Սարգիս։

— Յոյները, տէր, անոնք կրակ տուին մեր գիւղը և անխնայ կերպով կը ջարդեն մեզ։

— Իշխա՛ն, թողէ՛ք անոնք և մենք առաջ անցնինք, չե՞ս տեսներ, ահա խումբ մը Յունաց զօրքերն դէպի մեզ կուգան, ըսաւ Եղօ ցոյց տալով իրենց մօտեցող զինուորներուն փոքրիկ խումբը։

Վեստ Սարգիս ցնցուեցաւ, թափ տուաւ ձիուն սանձը, և իր ձիուն ոտքերուն տակ կոխկրտելով հառաչող կինը, սլացաւ առաջ։ Ան լսեց թէ ինչպէս կինը սուր, սիրտ կտրտող ձայնով մը կանչեց.

— Անիծե՛ալ ըլլաս, դուն սպաննեցիր իմ ծծկեր... մանուկը։

«Անիծեալ ըլլաս», մրմռում էր ինքն իրեն Վեստ Սարգիս և կը սլանար առաջ, մինչդեռ այդ խօսքերը անջնջելի կերպով դրոշմուած էր անոր հոգւոյն մէջ։

Վեստ Սարգիս և Եղօ քիչ մըն ալ առաջ գացին, երբ Յունաց զինեալ խումբը կեցուց զանոնք։

— Ո՞վ էք դուք և ո՞ւր կ'երթաք, հարցուց խմբապետը, սուրը մերկացնելով և կտրելով իշխանի առաջը։

— Զէնքդ վար առ, մենք թշնամիներ չենք, այլ բարեկամներ, ըսաւ խրոխտ ձայնով մը Վեստ Սարգիս և արիւնը բորբոքեցաւ անոր երակներու մէջ։ Կ'զգար որ բաղդը իր հետ կատակներ կընէր և հասարակ զինուորն անգամ իր դէմ զէնք կը բարձրացնէր։

— Ուրեմն ձեզի կը տանինք մեր բանակը և այնուհետեւ հրամանատարը գիտէ թէ ինչպէս կը վարուի ձեզի հետ, պատասխանեց խմբապետը։

— Ո՞ւր է ձեր հրամանատարին վրանը, ցոյց տուէք ինձ, ըսաւ իշխանը։



— Այս պահուս մենք ձեզի կը տանինք, ըսաւ խմբապետը, և իր խմբովը շրջապատելով իշխանն ու իր զինակիցը, ինչպէս գերի մը, մտան Յունաց բանակը։

Վեստ Սարգիս, երբ աջ ու ձախ նայեցաւ, տեսաւ որ ամբողջ Յունաց բանակը խինդ և ուրախութեան մէջ էր։ Յունաց բանակին մէջ սկսած էր կերուխումը, հայ չինականներու արիւն քրտինքի աւարով...։

ԺԶ.

## ԼԵՌՆԵՐՈՒ ԱՒԱԶԱԿԸ ԿՈՒԳԱՅ

Երկու ձիաւոր մարդ Կարին քաղաքէն նոր դուրս ելան և ձիերուն գլուխները դարձնելով դէպի Շիրակ, դանդաղօրէն առաջ կ'երթային։ Տխուր և մռայլ էր անոնց դէմքը։ Ոչ մէկ ժպիտ, ոչ մէկ ուրախութեան նշան չէր երեւնար անոնց դէմքին վրայ և բնութեան շքեղութիւնն անգամ չէր ազդեր անոնց մռայլուած դէմքին վրայ, ինչպէս Հայաստանի սիրուն բնութիւնը կը ժպտէր ու կը հրճուէր։ Լեռներն ու դաշտերը ծածկուած էին գոյնզգոյն ծաղիկներով և կանաչ թաւշապատ բուսականութիւնը կը շլացնէր մարդուս աչքը։

Ձորերուն մէջէն, և ժայռերուն վրայէն ուրա՛խ կըկընչիւնով կը թռչկոտէին սառնորա՛կ աղբիւրներուն ջուրերը՝ որոնք ցած թռչելով ժայռերուն բարձրութիւններէն բիւրաւոր կաթիլներ կը գոյացնէին և ադամանդներու նման պսպղալով արեւի ճառագայթներուն տակ, ուրախ կարկաչիւնով կը վազէին առաջ, պլպլուլը ձայնը ձգած էր անոնց խոխոնջման հետ, իսկ արտուտը սլանալով վե՛ր, այնտեղէն կը մրցէր անոնց ուրախ երգին, հնչեցնելով իր զիլ ու մետաղեայ մեղեդին...։

Բայց այդ ամենը ճամբորդներուն սրտին ո՛չ մէկ հետք չէր թողեր, ո՛չ մէկ տպաւորութիւն չէր գործեր։ Քար էր կտրուէր կարծես անոնց սրտերը և մռայլութեան հաստ քողով մը պատեր էր անոնց հոգիները։

Անոնք, երկուքն ալ, զէնքի ու զրահի մէջ էին, հուժկու կազմուածքով և լայն ու պինդ թիկունքներով։

Երկար ժամանակ անոնք լուռ առաջ կ'երթային երբ անոնցմէ մէկը ընդհատեց լռութիւնը։

— Ստեփանիկ, կը տեսնե՞ս արդեօք թէ ինչեր կը կատարուին մեր շուրջը։

— Այո՛ իշխան կը տեսնեմ։ Կ'զգամ, որ Հայաստանը նորէն աւերմունքներու ասպարէզ է դարձած պատասխանեց, Ստեփանիկը Հաբելի որդի Հարպիկին։

— Բայց ի՞նչ կ'ուզեն Յոյները մեզմէ, ինչո՞ւ անոնք մեզի հանգիստ չեն թողուր։

— Հը՛մ. ի՛նչ կ'ուզեն... Հայաստանի գահը ոչնչացնել։

— Յետո՞յ, ատկէց ի՞նչ կ'օգտուին։ Չէ՞ որ Հայաստանը Յունաստանի համար պատնէշ մըն է կազմած և բարբարոսներուն ամէն մէկ հարուածին, Հայերն են իրենց սուրերուն վրայ կրթնած։ Հայաստանը չըլլայ, այդ հարուածները իրենք պէտք է կրեն։

— Այդքան հեռու Յոյները չե՞ն մտածեր, իշխան, անոնք փառասէր մարդիկ են և կը փափաքին միայն, որ իրենց տէրութեան սահմանները ձգուի մինչև աշխարհիս վերջը։

Շատ բան կը փափագին, Ստեփանիկ, բայց տուողն ո՞վ է։ Հայաստանը մեռած չէ, որ Յոյները դիւրութեամբ զայն գրաւեն։ Եթէ ծանօթ չեն լեռներու աւազակներուն, կը ծանօթանան և համը կ'առնեն։

— Բայց մինչև ծանօթանալը անոնք կ'աւերեն



Հայաստանը և հետզհետէ Հայաստանի սրտին կը մօտենան։

— Թող մօտենան... բայց խումբ մը կ'երևայ, Ստեփանիկ, ես կը կարծեմ որ անոնք բարեկամներ չեն, այլ թշնամիներ և վա՜յ անոնց եթէ յիրաւի յունական գնդերէն ըլլան, ըսաւ Հայպիկ, և վահանը առաջ քաշելով կռուի պատրաստուեցաւ։

Ստեփանիկը այն կողմը նայեցաւ, և յիրաւի տեսաւ որ մօտ քսան քսանհինգ զինուած մարդ ուղղակի դէպի իրենց վրայ կուգան։

— Լաւ կ'ըսես Հարպիկ իշխան, կ'երևայ թէ ատոնք յունական լէգէոններէն են, պէտք է զարնել զանոնք, բայց...։

— Ի՞նչ բայց, միթէ կը վախնա՞ս անոնց ստուարութենէն։

— Չէ՛, Հարպիկ իշխան, Ստեփանիկը վախկոտներէն չէ, բայց պէտք է իմանալ, որ անոնց ետևէն մեծ գունդ կ'ըլլայ և մեր ույժէն բարձր կ'ըլլայ անոնց դիմադրել։

— Լեռներու աւազակը յետին մասին չի մտածեր, պատրաստուէ՛, անոնք կը մօտենան, ըսաւ, Հարպիկ և սուրը պատեանէն հանելով մխուեցաւ Յունաց խմբի մէջ։

Յունաց խումբը վայրկեան մը սառածի նման կանգ առաւ։ Երազ կը համարէր և չէր կարողանար բացատրել թէ ինչպէս կը պատահի, որ երկու մարդ յանդգնին խումբի մը վրայ յարձակելու. տեսան որ երազ չէր, այլ իրականութիւն, երբոր, նշմարեցին թէ իրենցմէ մէկ քանիները դիաթաւալ ինկան, այն ատեն անոնք սուրերնին քաշած չրջապատեցին մեր քաջերը։

— Անիծեալնե՛ր, որո՞ւ դէմ սուր կը բարձրացնէք, միթէ չէ՞ք ճանչնար լեռներու աւազակները ըսաւ Հար-

պիկ, և իր սուրը մխեց երկու յոյնի սիրտը և յետոյ յարձակեցաւ միւսներուն վրայ։ Նոյն հունձքը կ՚ընէր նաև Ստեփանիկ, և Յոյները մէկը միւսին ետևէն արիւնաթաթաւ վար կը գլորուէին ձիերէն, երբ անոնցմէ մէկը ձիուն երեսը դարձուց փախաւ։ Անոր հետևեցան միւս ողջ մնացածները։

Հարպիկ, քա՛հ քա՛հ մը թողուց անոնց ետևէն։

— Վախկոտ շունե՛ր, կը փախչիք, միթէ՞ այդքան երկու մարդու ոյժ չունիք։

— Հը՛մ, իշխան, լաւ որս էր, մեր համը առին, ամէն մէկուս բաժին վեց վեց ինկաւ։ Ափսո՛ս շատ ափսոս, որ մնացածները փախան, ըսաւ Ստեփանիկ, արիւնոտ սուրը սրբելով ինկած Յոյներուն լաթերուն վրայ, պատեանը դրաւ և անոնք կրկին լուռ սկսան առաջ երթալ, թողելով դիակները գիշակեր ագռաւներուն իբր կերակուր։

Գիշերը վրայ հասաւ, և անոնք ճամբան իջեւան մը հասան, ուր ձիերէն վար իջնելով ընթրիքի նստան։ Այսօր բաւական գործ էին շինած և բաւական երկար ճամբայ կտրեր, Հարպիկ ու Ստեփանիկ շատ պէտք ունէին հանգստութեան։

— Բե՛ր, Ստեփանիկ, տեսնենք ի՞նչ ունիս, պէտք է որ շուտ մը ստամոքսնիս լեցնենք, հանգստանանք, ըսաւ Հարպիկ։

— Իշխան, այս իջեւանը ոչինչ գտայ ուտելու. գառ միայն խառուած են և շուտով կը բերեն։ Անիծուած Յոյները ամէն բան սպառեր են։

— Է՛, հոգ չէ, քիչով բաւականանանք, գինի ու գառ կայ, այսօր այդ ալ բաւական է, ըսաւ Հարպիկ, և քիչ մը ետք, ամբողջ գառը առաջնին դնելով, սկսան անուշ անուշ ուտել, և գաւաթներով գինի խմել։ Քիչ ատենէն անոնց առջև դրուած գառը և գինին, անյայ-



տացաւ։ Երբ վերջացուցին իրենց ընթրիքը, Հարպիկ իշխանը կռթնեցաւ և սկսան երկու բարեկամ խօսակցիլ։ Իջեւանը հետզհետէ կը լեցուէր հիւրերով. որոնց խօսակցութիւնը Յոյներու մասին էր՝ որոնք վերջին օրերը հեղհեղած էին այդ կողմերը։

— Յոյները սաստիկ կատղած են Հայերուն վրայ, կ՚ըսէր գիրուկ մարդ մը, որ արդէն նոր ներս մտեր իջեւանատուն, և սրտմտած դէմքով կը պատմէր իրեն խօսակից ուրիշ Հայու մը։

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահեր հարցուց միւսը։

Անոնց առաջապահները, թուով քսան, քսան հինգ հոգի, որոնք այսօր երբ այս տեղերէն վերադարձեր են եղեր դէպի գլխաւոր բանակը, ճամբուն պատահեր են երկու մարդու, յարձակեր են անոնց վրայ. ջարդեր են տասնըերկու մարդ, իսկ միւսները փախչեր գացեր են, և ահա այդ պատճառով, անոնք կ՚սպառնան բոլոր Հայերը սրէ անցնել։

— Միթէ ճի՞շդ է, որ երկու մարդ կրցեր են այդքան մարդ սպաննել։

— Ես ինքս տեսայ սպաննուածներուն դիակները, բարեկամ, չհաւատալ անկարելի է, ըսաւ հաստը փոր մարդը։

— Եւ որո՞նք են եղած այդ քաջ մարդիկը հարցուց միւսը։

— Անուննին յայտնի չեն, բայց կ՚ըսեն թէ լեռներու աւազակներ են եղեր։

— Հա՛, կը հասկնամ, Հարբել իշխանին որդիքը պէտք է ըլլան, ես լսեր եմ անոնց մասին, ըսաւ, Պանդոկապետը վրայ գալով։

— Բայց գիտէ՞ք, բարեկամ, Յունաց բանակը երբ այս գիշեր կարող է այստեղ երեւան և վա՛յ քեզի եթէ պատրաստութիւն չես ունեցած զանոնք հիւրասիրելու։

— Տէրը մի՛ արասցէ որ անոնք կրկին այս կողմերը դառնեն ի՛նչ ունիմ, որ ի՛նչ պատիւ տամ, ըսաւ պանդօկապետը և վախնալով ետ քաշուեցաւ ։

— Հարպիկն ու Ստեփանիկը լուռ կը լսէին հիւրերուն խօսակցութիւնը և կը խնդային ։ Կ'երեւայ թէ, հիւրերէն և ոչ մէկը կը ճանչնար զիրենք և ոչ ոք ալ չէր հետաքրքրուած իրենցմով ։ Երբ որ այդ խօսակցութիւնները վերջացան, Հարպիկն ու Ստեփանիկը մեկնեցան քարէ թախտի վրայ և իրենց վերնոցը վրանին ձգելով՝ անուշ քուն մտան ։

Քիչ յետոյ, պանդոկին մէջ մեծ իրարանցում մը ինկաւ ։ Գոռում, գոչում, հայհոյանք և ձիերու դոփիւններ խառնուեցան իրարու ։

Երբ Հարպիկն ու Ստեփանիկը աղմուկէն իրենց գլուխները վեր բարձրացուցին անոնց դահլիճը, ուր իրենք անուշ քուն էին մտած, Յոյներով լեցուն գտան ։ Անոնցմէ մէկը բռնած էր պանդոկապետին օձիքէն և շարունակ թափահարելով կը գոռար ։

— Անիծուած հայ, այս պահուս մեզի համար ընթրիք պատրաստէ՛ թէ ոչ գլուխդ կը թռչի ։

Իջեւանատէրը վախէն գլուխը կորսնցուցեր էր դողդոջուն ձայնով մը, կ'ըսէր.

— Ողորմեցէ՛ք, տեարք, ես ամեն բան կը պատրաստեմ ։

— Դէ՛հ, գնա՛, իսկոյն պատրաստէ՛, ըսաւ յոյն իշխանը, և անոր վզին հրելով՝ թողուց ։

Իջեւանատէրը րոպէի մը մէջ անյայտացաւ, մինչդեռ Յոյները գուշերով գինին առաջները քաշելով, սկըսան ագահութեամբ խմել և հայհոյական երգեր երգել ։ Անոնք մինչեւ անգամ չնշմարեցին Հարպիկն և Ստեփանիկը, որոնք կռթնած դեռ կը լսէին և կ'սպասէին թէ ի՛նչ պիտի ըլլայ վերջը ։



Անոնք տեղերնուն շարժելու մտադրութիւն անգամ չունէին, թէեւ կը կասկածէին, որ եթէ իրենք ճանչցուէին որ լեռներու աւազակները իրենք են, այն ատեն անոնց փրկութիւն չկար ։

— Զօյա, քօչէ՛ գինին գլուխդ և խմէ՛, քէֆ ընելու տեղեր են, այստեղ որքան կարելի է պէտք է քէֆ ընել թէ՛ գինին ձրի է և թէ սիրուն օրիորդները. չէ՞ որ մեր հրամանատարը իրաւունք է տուած սրտերնիս ուզածները ի գործ դնել Հայերու վրայ, կ'ըսէր յոյն իշխան մը՝ միւսին ։

— Հա՛, ատոր մասին խօսք չունիմ, մենք աւելի լաւ աւար կունենանք երբ Անի քաղաք հասնինք, բայց թէ մինչեւ այնտեղ հասնիլը՝ ես կեփիմ վրէժխնդրութեան կրակով ։ Այսօրուան անպատուութիւնը, որ հասցուցին ինձ երկու աւազակները ես մոռնալ չեմ կրնար, եթէ անոնք անգամ մ'ալ ձանկս իյնան, ալ ատոնց ազատում չկայ, պատասխանեց միւսը և գինիի ամբողջ գաւաթը մէկ ումպով գլուխը քաշեց ։

Հարպիկ և Ստեփանիկ իրարու երես նայեցան ։ Անոնց աչքերը վառուեցան կատաղութեամբ, և յանկարծ ոտքի կանգնելով սուրերը մերկացուցին ։

— Ո՞վ էր, որ լեռներու աւազակներուն կ'ուզէր կըրկին հանդիպիլ, ես այստեղ եմ, անօրէն Յոյներ, ըսաւ Հարպիկ և սուրը օրօրելով ջախջախեց Յոյնի մը գլուխը ։

Յոյները վախերնուն կարկամեցան. անոնցմէ մէկ քանիները միայն սուր մերկացուցին, սակայն գլուխներնին գինիէն այնքան տաքցուցեր էին, որ՝ պղտոր աչքերով չէին կրնար տեսնել, թէ ի՛նչպէս Հարպիկի և Ստեփանիկի սուրերը իրենց հունձքը կընեն և դանդաղութեամբ դէպի դուռը կ'երթային ։

Յոյները այն ատեն սթափեցան, և երբ տեսան որ

իջեւանատունը չկան լեռներու աւազակները, այլ անոնք այդտեղ ալ մէկ քանիները կոտորելով անյայտացեր էին։

ԺԶ.

## ՎԻՐԱՒՈՐՈՒԱԾԸ

Դարբին Ղեւոնդը քանի մը տեղէն վիրաւորուած, միշտ փորին վրայ կը սողար առաջ, դէպի ո՞ւր, ինքն ալ չէր հասկնար։ Ան չէր գիտեր թէ իրեն ի՞նչ է պատահած կամ ի՞նչ է կատարուած. կ՚զգար միայն, որ աչերը հետզհետէ կը մթնային, գիտակցութիւնը կը խաւարէր և քիչ մը խոր կսկիծը կը ցնցէր իր մարմինը։ Ան ձեռքը կը տանէր դէպի վիրաւորուած տեղերը, և երբ կ՚զգար թացութիւնը, ինքիրեն կը զարմանար թէ ո՞րտեղէն է այդքան ջուր, և ինչո՞ւ իր ձեռքերը թաց են....: Խե՛ղճը չէր հասկնար որ ինքը իր սեփական արեան մէջ կը լողար։

Ան հասած էր իր նազելի աղջկանը Լուսիկի ձեռատունկ պարտէզը ուր, վարդի թուփի տակ, դադար առուէն կծկուեցաւ։ Այս տեղ զգաց, որ այլ եւս չկրնար առաջ երթալ ու ցաւը սոսկալի կերպով կը նեղացնէր զինքը։ Կարծես թէ անզգայ դարբինը ցաւի կսկիծէն սկսաւ հողը ճանկռտել և վարդի ճիւղերը կոտրտել. այդ այն վարդի թուփն էր, որմէ Լուսիկը ամէն առաւօտ անուշահոտ փունջեր կը կազմէր և կը զարդարէր իր սենեակը. իսկ հիմա որ արդէն նոյն թուփի տակ կիսամահ ինկած էր դարբին Ղեւոնդը և անօգնական, անտէր, ամենէն մոռցուած կը մեռնէր, կը կորսուէր անոր



կեանքին թելը...։ Ո՞ւր էր Լուսիկը, ո՞ւր էր իր սիրած փայփայած աղջիկը. մի՛թէ մոռցա՞ւ հայրը...։

— Ո՛ կաթիլ մը ջո՛ւր, ես կը պապակիմ, ըսաւ ան և ցաւէն ցնցուելով, իր խաւարած աչքերը դարձուց դէպի անհուն երկնակամարը, ուր, ջինջ եթերին մէջ, այնպէս կը փայլփլէին աստղերը։

Եւ դարբին Ղեւոնդ կը նայէր երկինքին, կը նայէր իր պաղ, անթարթ, սարսափով լեցուած աչքերով և կը դիտէր աստղերը։ Ան ճիգ կընէր հասկնալու թէ՝ այդ ի՞նչ լոյսեր են, և ինչո՞ւ այդպէս շատ. ո՞վ է վառեր այդքան ճրագներ, ինչո՞ւ, ինչի՞ է պէտք, չէ որ իր խրճիթին մէջ միայն ճրագ մ՚էր որ կը վառէր, հատ մը միայն, որ աղօտ կերպով կը լուսաւորէր իր չուրջը... մինչդեռ այդ ճրագները շատ են, և խիստ լուսաւոր են, որոնց լոյսը կը խաղացնեն իր աչքերը...։ Դարբին Ղեւոնդ ճիգ կընէր իր աչքերը, չտեսնելու ու անոր այդքան բազմաթիւ ճրագները, սակայն բոլորը զուր են. եւ. ան զգար, որ աչքերը չեն փակուիր, մինչ ճրագները աւելի և աւելի պայծառ կը փայլին։

Յանկարծ դարբինի տանջուած դէմքին վրայ ժպիտ մը կերեւայ, ժպիտ մը, որ առժամանակ մոռցուէր է ամէն ինչ և անոր հոգին ցնծայ։ Այնատեն ան միտքը կը բերէ իր լուսիկը և բազմաթիւ ճրագներ վառելուն պատճառը կ՚իմանայ։ «Հը՛մ, կը մտածէր ան, Լուսիկիս հարսանիքն է, այժմ կը հասկնամ թէ՛ ինչու Լուսիկը այսքան ճրագներ է վառեր»։

— Է՛յ, Լուսիկ, սիրելի աղջիկս, չե՞ս տեսներ ձեռքերս մրոտ են, երեսս կեղտոտ, ջուր բեր որ մաքրուիմ, զարդարուիմ և սկսիմ իմ պարը, իմ եալլին... չէ՞ որ իմ միակ ուրախութիւնս դուն ես, իմ աչքիս լոյսը, իմ ազիզ աղջիկս... բայց փեսան ինչու կ՚ուշանայ, ինչո՞ւ չիգար... Է՜, կրկին ան իր խենդութիւնները միտքն է

բերեր. բայց մարեցաւ ճրագները, այս ի՞նչ է, սրտիս վրայ կը ծանրանայ ծանր բեռ մը, աչքերս կը մթանան, աղջի՛կս, Լուսիկ, Լուսիկ, ուր գացիր, ինչո՞ւ ինծի միայնակ թողուցիր. միթէ չե՞ս խղճար ինծի... խղճա՛, կուծքիս ծանր բեռը վերցո՛ւր և վառէ ճրագները...:

Խաւարեցաւ դարբինի միտքը և ամէն մինչ անյայտացաւ անոր աչքերէն: Աչքերը թէեւ բաց էին, բայց բան մը չէին տեսներ անոնք. կորսնցուցեր էին իրենց տեսողութեան կարողութիւնը: Մինչեւ անգամ չլսեց ձիերուն դոփիւնները, որոնք կը լսուէին Անիի կողմերէն: Դարբին Ղեւոնդ չզգաց մինչեւ անգամ թէ՝ ինչպէս խումբ մը ձիաւորներ կանգ առին ճիշտ իր գլխուն տակ և զգուշութեամբ վեր առին զինքը:

Այդ խումբին մէջ կար դեռահաս օրիորդ մըն ալ, որ անգամ մը իրեն հետ խօսակցեր էր, շատ անգամ զինքը մխիթարեր էր: Գոհարիկն էր այդ օրիորդը, Վահրամին աղջիկը, որ Անիէն դիտելով հրդեհին ցոլքերը շտապած էր օգնութեան հասնիլ: Արտասուալից աչքերով Գոհարիկը ծունկ էր չոքեր դարբինի առջեւ և իր ձեռքերով լուալով անոր վէրքերը, կ'աշխատէր դադրեցնել արիւնի հոսումը: Դարբինը չէր տեսներ և զգար: Ո՜, եթէ ան կը տեսնէր թէ ո՛վ իր քով կը գտնուէր, խորին ակնածանքով ոտքի կ'ելլէր ու կ'ըսէր.

— Բարի՛ ես եկեր իշխանուհի, տունը քուկդ է, հրամայէ ինչ որ կ'ուզես: Սակայն հիմա լուռ էին անոր շուրթունքները, անշարժ անոր դէմքի մկանունքները: Մեռելային գունատութիւնը պատած էր արդէն անոր չարչարուած դէմքին վրայ:

— Հայրի՛կ, հայրի՛կ, ձայն տո՛ւր, իշխանուհիդ կը կանչէ, կ'ըսէ. Գոհարիկ և աչքերէն կը հոսեցնէր արցունքի առատ աղբիւրներ:

— Ջո՛ւր, կաթիլ մը ջուր, կանչեց յանկարծ դար-



բինը և ցաւէն սկսաւ կրկին հողը ճանկռտել:

Գոհարիկ ջուր տուաւ անոր և յոյսը կենդանացաւ անոր մէջ: Զգաց, որ պէտք է փրկուի դարբինը, որուն վէրքերը թէեւ ծանր, բայց մահացու չէին: Դարբին Ղեւոնդը միայն արիւնքամ եղած էր:

Վէրքերը կապելէ յետոյ Գոհարիկ հրամայեց զգուշութեամբ տեղափոխել զայն մօտակայ հովուի խրճիթը, յետոյ, դիմելով իրեն հետ եկող մարդոց, հարցուց.

— Զգտա՞ք օրիորդը:

— Ո՛չ, իշխանուհի՛, հետքն ալ չկայ:

— Լուսիկս գտէ՛ք, եթէ ո՛չ ես կը խենդանամ, ըսաւ Գոհարիկ սրտակտուր ձայնով մը:

— Իշխանուհի՛, մենք ամէն տեղ փնտռեցինք, ոչ մէկ տեղ չգտանք զինքը, ո՛չ մեռած և ո՛չ կենդանի:

— Մոխրի և փլատակներու տակ տեսէ՛ք, գուցէ կ'այրի...

— Մենք ամբողջ տունը տակն ու վրայ ըրինք, ո՛չ մէկ տեղ չ'երեւար:

— Ա՜խ, ուրեմն չարագործները ուզելով սպաննել հայրը, յափշտակած են աղջիկը, ըսաւ խելակորոյս Գոհարիկը և նայուածքը պտըտցնելով, աղեգալար ձայնով մը գոչեց.

— Լուսի՛կ, Լուսի՛կ, ո՞ւր ես, ձայն տո՛ւր; քոյրիկդ է որ քեզ կը կանչէ: Բայց Լուսիկ չկար: Գոհարիկի հարցումին միայն գերանները պատասխանեցին իրենց ճարճատիւնով:

— Մէկ քանի հոգի հետեւեցէ՛ք չարագործներուն, գուցէ եւ դարձնէք Լուսիկը, հրամայեց Գոհարիկ, յուսահատութենէն գալարուելով իր ձեռքերը:

Ձիաւորները թռան զանազան կողմեր, Գոհարիկը թողլով վիրաւորուածին քով: Այդ ատեն, հորիզոնը իր գլուխը հանեց մաշած և տժգոյն լուսինը, իր մեղմ լոյսով լուսաւորեց սգապատ տեսարանը...:

ԺԸ.

# ՍՐՏԱՃՄԼԻԿ ՊԱՏԿԵՐ

Ստեփանիկի սիրտը թունդ ելաւ, երբ մօտեցաւ Անիի աւերակ վերջին բլուրին։ Երիտասարդական արիւնը սկսաւ բորբոքիլ անոր երակներուն մէջ և աչքերը լեցուեցան անհամբերութեան կրակով։ Կը զգար որ այդ բլուրը անցնելէ յետոյ պիտի երեւայ դարբին Ղեւոնդի խրճիթը և իր նազելիին ձեռատունկ անդաստանը։ Սակայն նոյն ոգեւորութիւնը չէր տիրեր իր ընկերակցի դէմքին վրայ։ Հարպիկ մռայլ էր ու տխուր։ Իր սիրտը չէր թնդար, չէր տրոփեր Ստեփանիկի սրտին նման, թէ ինքն ալ պիտի տեսնէ՞ր իր սիրելի Գոհարիկը։ Հարպիկ, ընդհակառակը, ցուրտ էր և սառն, իր դէմքին վրայ կ'անցնէին տեսակ մը ցնցումներ, որոնք կարծես վրէժխնդրութեան և կատաղութեան ցոլմունքներ ըլլային։ Այդ միջոցին, չէր մտածեր, Գոհարիկի մասին, չէր փափաքեր անոր լուսաշող դէմքը տեսնել, խօսիլ անոր հետ, այլ, ա՛յդ իսկ բոպէին, անոր գլխուն մէջ բոլորովին հակառակ մտածումներ կ'անցնէին, որոնք կը ստիպէին իր դէմքը այլայլելու։ Այդ միջոցին Հարպիկի գլխուն մէջ արեան ու կոտորածի տեսարաններ կ'անցնէին, ուր ինքը, վրէժխնդրութեան ծարաւի, կը նետուէր թշնամիներու մէջ և կը կոտրէր զանոնք։ Կը կոտրէ անխնայ, առանց յոգնելու կը կոտրէ, իսկ թշնամիները մէկը միւսին ետեւէն սունկի պէս նորէն կը բուսնին և ոտքի տակ կառնեն իրենց հայրենիքը։

— Ա՜խ, ի՞նչ կուզեն անոնք խեղճ Հայաստանէն, ի՞նչու հանգիստ չեն ձգեր զայն։ Մի՞թէ Աստուծոյ առջեւ Հայը, ի՞նչ տեսակ յանցանք մըն է գործեր, որ դատապարտուած է յաւիտեան տանջուիլ, յաւիտեան ոտնակոխ ըլլալ...։ Ո՛հ, Աստուա՛ծ, ի՛նչու, ըսէ՛, ի՞նչու Հայերը ջարդեն և անոնց գիւղն ու քաղաքը ծուխի և մոխիրի կոյտեր կը դարձնեն։ Մի՛թէ բաւական չէ՞ր Պարսիկներու, Արաբներու, Թաթարներու և հազար մէկ ազգերու արշաւանքները, որ հիմակ Յո՛յնն ալ ոտքի տակ կ'առնէ։ Ի՞նչ կ'ուզէ մենէ. մեր հայրենի՞քը, մեր պապերուն արիւն քրտինքով պահած ու մեզ հասցուցած ազատութիւնը...։ Հը՛մ, քա՛ւ լիցի, ատիկա երբէք չստանար Յոյնը, եթէ ամբողջ իր լեգէոնները Հայաստան ղրկէ։ Հայաստանի մէջ դեռ կ'ապրին մարդիկ, որոնք իրենց հայրենիքին համար կը կռուին մինչեւ արեան վերջին կաթիլը և վա՜յ Յոյներուն, որոնք լեռներու աւազակին սուրի բերանը կ'իյնան, ըսաւ Հարպիկ, ոտքերով խթեց ձիուն կողերը, և սուրը պատեանէն հանեց։ Ձին մէկ թռիչք ըրաւ և առաւ սլացաւ։ Ստեփանիկ, որ նոյնպէս մտածումներու մէջ էր ընկղմուած, երբ տեսաւ Հարպիկի սուր քաշելը, ինքն ալ քաշեց սուրը և սլացաւ Հարպիկի ետեւէն։ Կարծեց թէ վտանգ կը սպառնար իրենց։



Բայց այդ ատեն իրենց առջեւ բացուեր էր տափարակը, Անիի հրաշալի տափարակը, որուն մէջ, նազելի հարսի մը նման, նստած էր Անին իր հազար ու մէկ եկեղեցիներով, իր աշտարակներով, [illegible]յուրաններով ու թանձր ու ամուր պարիսպներով։

Երկու երիտասարդներու սրտերը թունդ ելան և ձիերը կեցնելով, գլխարկները վեր առին երեսնին խաչակնքեցին և պահ մը սկսան մրմնջել լուռ աղօթք մը։

Անիի հրաշալի տեսարանը ցնցեց երկուքին ալ սրտերը։

Իրօք բան մը կար ցնցուելու։ Անին այդ ժամանակ հրաշալի էր։ Արեւի վերջին ծիրանի կարմիր ճառագայթ-

ները ինկած էին անոր վրայ և աննման տեսք մը տըւէր էին։ Եւ երկու երիտասարդներուն կը թուէր թէ՛ կը գտնուէին դիւթական աշխարհին մէջ, ուր աներեւոյթ զօրութիւնը անոնց առջեւ դրած էր հրաշալի, աննման քաղաք մը, որուն աշտարակները, անթիւ եկեղեցիներու գմբէթները, պալատներն ու դիտարանները շրջապատած էին բոցերով և իրենց աչքին առջեւ կը փայլատակէին։

Եւ ձիաւորները կը մտածէին. «Մի՞թէ իրականութի՞ւն է, մի՞թէ ցնորք չէ՞... Մի՞թէ, Տէ՛ր, կը գտնուի այսքան փարթամ, չքնաղ և հրաշալի քաղաք մը, ինչպիսին է Անին... և ո՞վ արդեօք կը ժառանգէ զայն, որո՞ւն ձեռակերտն է ատիկա, հողեղէնի ձեռքերո՞վ շինուած է թէ՛ երկնային գո՛ւնդն է որ այդ աշտարակներուն ու եկեղեցիներուն գմբէթները բարձրացուցած է...

Բայց ցնորք չէր անոնց առջեւ անոնք Անիի, Բագրատունեաց թագաւորութեան աթոռանիստ քաղաքին առջեւը կանգնած էին։

— Եւ այս քաղաքը կ՚ուզեն Յոյները իրենց ձեռքը ձգե՜լ, մրմռաց Հարպի՛կ իշխան, խրճիթը, խրճիթը չ՚երեւար, մի թէ աչքերս կը խաբեն, թէ ես չեմ տեսներ, ըսաւ Ստեփանիկ աչքերը յարելով։

— Ի՞նչ խրճիթ, հարցուց Հարպիկ մեքենաբար։

— Դարբին Ղեւոնդի խրճիթը չկայ, իմ Լուսիկս...

— Օ՜... իրաւ որ, այն տեղ մոխրի կոյտ մը միայն կը տեսնեմ. արդեօք ի՞նչ է պատահեր։

Մօտեցան և կանգ առին դարբին Ղեւոնդի խրճիթին առջեւ։

Այնտեղ, ուր առաջ դարբինը սալին առջեւ նստած կը ծեծեր երկաթը — քարուքանդ եղած էր, իսկ այն խրճիթը, պարտէզը, ուր Լուսիկ ուրախ թռչնիկի մը նման կ՚ոստոստէր — հիմա աւերակի կոյտ մը կը ներկայացնէին։



— Ինչ կը տեսնեմ, մի՞թէ ասո՞ր կը սպասէի, ըսաւ յուսակտուր ձայնով Ստեփանիկ և աչքերուն մէջ յուսահատութեան արցունքներ երեւցան։

— Մի՛ յուսահատիր, Ստեփանի՛կ, մենք ամէն բան կ՚իմանանք և կը գտնենք Լուսիկը։ Բան մը իմացած, պէտք չէ յուսահատիլ, պատասխանեց Հարպիկ և անոնք ձիերուն երեսը դարձնելով դէպի Անի սլացան։

Քիչ յետոյ ներս մտան Անիի դռներէն և քաղաքը մտան։

## ԺԸ.

## ԴԻԱՃԱՆԸ Կ՚ԱՌԱՋՆՈՐԴԷ

Վեստ Սարգիս Եղօյի հետ Յունաց բանակը մտնելով, մեծ շուքով ընդունուեցաւ Յունաց հրամանատարէն։ Այդ միջոցին կէր ու խումի հետ էր ան, երբ յայտնեցին թէ Հայոց իշխան Վեստ Սարգիսը կը փափագի ներկայանալ իրեն։ Հրամանատարը վեր թռաւ ուրախութենէն վեր թռաւ ճոխ սեղանէն և դէպի վրանի մուտքը դիմեց, ուր Վեստ Սարգիսը տեսնելով, երկնցած ու ներս հրաւիրեց զինքը։ Գինիի շոգիներով լեցուն էր հրամանատարին գլուխը և իր ներքին ցնծութիւնը չկրցաւ պահել Վեստ Սարգիսը տեսնելով։ Գիտէր որ այդ հայ իշխանը դիւրութիւններ պիտի տար Հայաստանի մէջ աւելի աւերումներ, աւելի կոտորածներ ընելու։ Կը ճանչնար Վեստ Սարգիսի տենչանքը, ուստի ամէն կերպ կ՚աշխատէր շոյել անոր այդ ինքնասիրութիւնը։

— Բարո՛վ, հազա՜ր բարով ես եկեր իշխա՛ն, մենք քեզ վաղուց կը սպասէինք, հրամանատարը կեղծ ժպիտով մը նստեցնելով իրեն մօտ։

— Հա՛, ես գիտեմ որ ուշացայ. բայց վնաս չունի,

մեղքերնիս կը քաւենք, պատասխանեց Վեստ Սարգիս։

— Հոգ չէ, իշխա՛ն, լաւ ժամանակ հասար, հիմա մենք քէֆ կ'ընենք, իսկ վաղը մեր ընելիքի մասին կը մտածենք։ Է՛յ, երգիչնե՛ր, երգեցէ՛ք ուրախ երգեր, իսկ դուք հնչեցուցէ՛ք ձեր փողերը և զարկէ՛ք թըմբուկները, թող ամէնքը իմանան, որ մեր մեծազօր կայսրը պատուել գիտէ այն հայ իշխանը, որ հնազանդ է իրեն, ըսաւ հրամանատարը և ձեռքով նշան ըրաւ։

Այդ միջոցին փողերը հնչեցին, տաւիղները ածել և երգիչները երգել սկսան, որպէս զի ուրախացնեն նոր հիւր եկող հայ իշխանը։

Սկսուեցաւ քէֆը։ Յունաց իսկական զեղխ քէֆը։ Գինիի գոլորշիները արդէն կ'ազդէին սեղանակիցներուն, կ'ազդէին նաև Վեստ Սարգիսի ուղեղին։ Ան կ'զգար որ իր գլուխը հետզհետէ կը տաքնայ, իր միտքը կը պղտորի, իսկ իր գիտակցութիւնը կ'ստորնանար։ Ան պղտոր աչքերով կը նայէր և բաժակ բաժակի ետևէ կը դատարկէր, երբ նկատեց, յանկարծ, որ խումբ մը կիսամերկ աղջիկներ ներս մտան և սկսան պարել։ Վեստ Սարգիսը քիչ մնաց խելքը թռցնէր, ան կը կարծէր, թէ ինք այդ րոպէին երկրի վրայ չ'ապրիր, այլ երկինքի մէջ ուր անմարմին հոգիները շրջան կազմած կը պարեն այնպիսի եղանակով մը, այնպիսի նազ ու կոտըրուածքով, որ ամենապաղարիւն մարդկանց սրտերն ալ կը հալեցնէին։

— Ի՞նչպէս, կը հա՛ւնիս հիւրերուս, հարցուց յոյն հրամանատարը, երբ նկատեց Վեստ Սարգիսի աչքերուն մէջ առանցին ոգևորութեան փայլ մը։

— Հրաշա՛լի է, իշխա՛ն, հրաշա՛լի, պատասխանեց Վեստ Սարգիսը, աչքը չհեռացնելով հուրիներէն։

— Այս յունական պար է. այս պարը շատ կը սիրեն մեր իշխանները և Յունաց մայրաքաղաքին մէջ ա-



ռանց այս պարին ոչ մէկ զուարճութիւն չը կրնար ըլլալ։

— Հրաշալի՛ է, աննմա՛ն է, իշթա՛ն, կրկնեց նորէն Վեստ Սարգիս խելքը կորսնցուցածի նման։

Եւ մինչդեռ իշխանները այդպէս քէֆ կ'ընէին, նոյն քէֆը կ'ընէին զինուորներն ալ։ Որոնք ալ հետևելով իրենց հրամանատարի օրինակին, ցերեկով կը կողոպտէին, կը թալլէին Հայոց գիւղերն ու քաղաքները, գիշերով կը յանձնուէին զեղխ ու անառակ կեանքի։ Եւ Յունաց բանակը իր ցոփ կեանքով նման չէր ամենևին օրինակելի բանակի մը, ուր կը տիրապետէ զինուորական կարգ ու կանոն։ այլ աւելի նման էր բանակի մը, որ կը մըտածէր միա՛յն խրախճանալ և միայն ուրախանալ։

Այդ դէպքէն յետոյ Յունաց բանակը հանուելով իր տեղէն, առաջ շարժեցաւ դէպի Հայաստանի ներսը, նըպատակ ունենալով հանիլ Անի քաղաք։ Այդ բանակին կ'առաջնորդէր Վեստ Սարգիս և ամէն քայլափոխին ցոյց կ'ուտար անոնց ճամբան, կը յայտնէր թէ ո՞վ կը հակառակի, և ո՛վ համամիտ է իրեն։

Եւ անոնք կ'առաջանային քանդելով, աւերելով և կոտորելով, մինչ Վեստ Սարգիսի սիրտը թունդ կ'ելլէր քանի մօտենային Անիին։ Մոխիրի և աւերակներու կոյտեր կը ձգէր իր ետևը և կշտապէր Անի, որպէս զի դափնեայ պսակներու արժանանայ...։

Ճիշտ այդ ժամանակն էր, երբ լուր բերին Յունաց հրամանատարին թէ՝ առաջապահ խումբը, վերադառնալու միջոցին, ջարդ է կրեր երկու աւազակներէ։

Գոռոզ Յոյնը վրդովեցաւ և բարկութեամբ լեցուեցան անոր մանր, բայց խորամանկ աչքերը, յետոյ դառնալով Վեստ Սարգիսին ըսաւ.

— Իշխա՛ն, որոնք են այդ յանդուգն մարդիկ, որ կը համարձակին յարձակիլ իմ առաջապահ խմբիս վրայ, միթէ՞ անոնք չեն գիտեր թէ ինչպէս կը պատժեմ զիրենք։

Ատրկա լեռներու աւազակն է անշուշտ, իշխա՛ն, որ անհանգիստ կ'ընէ շրջակայքը։ Պէտք է պատժել այդ յանդուգները։

— Ո՞վ է այդ լեռներու աւազակը։

— Պաղին գաւառի իշխան Հաբելի որդիքը, տէ՛ր, անոնք վաղուց է որ հանգիստ չեն մնար իրենց տեղը։

— Աւազա՛կ, և յարձակում գործէ բանակի վրայ, այդ ի՞նչ խաղ է, Վեստ Սարգի՛ս, որ կ'ընէ, միթէ կը կարծէ՞ ատով մեզ ետ դարձնե՛լ... հա՛... հա՛... հա՛... հեգնօրէն ժպտեցաւ հրամանատարը։

— Եւ անոնցմով ահա՛ շրջապատուած Վահրամ իշխանը, որ կը ցանկայ Հայաստանի գահը հաստատուն պահել և ընդդիմանալ կայսեր, ըսաւ Վեստ Սարգիս։

— Լաւ, եթէ այդպէս է, մենք առաջ ատոր կողմնակից աւազակներու երկիրները մոխիր կը դարձնենք և յետոյ իրեն հետ կը խօսինք։

— Այդպէս ալ պէտք է, տէ՛ր, իմացէք, որ առաջին աւազակը և Վահրամի կողմնակիցը Հաբել իշխանն է, պէտք է նուաճել անոր երկիրը։

— Մենք մօտ ենք Պաղին գաւառին, ուրեմն պէտք է շտապել, ոչնչացնել անոր երկիրը քանի՛ դեռ պատրաստութիւն չէ տեսեր։

— Այո՛, պէտք է շտապել, բայց միեւնոյն ժամանակ պէտք է զգոյշ մնալ։ Հաբել խորամանկ աղուէս է և մեր հոտը վաղուց է առեր ու դարանի մտեր։

— Է՛հ, ան ալ խօսք է, իշխա՛ն, դարանի մտեր... չեմ հասկնար ի՛նչ նշանակութիւն ունի խումբ մը աւազակներու դարան մտնելը։ Եւ դու կը տեսնես թէ ի՛նչպէս այդ աւազակները քիչ ատենէն ոտքերս կը լզեն և թողութիւն կը խնդրեն, բայց եղածը խօսելով, հիմա ժամանակը չէ այդ մանր բաներով զբաղելու, այլ պէտք է Անի շտապել, ըսաւ մեծամիտ Յոյնը ինքզինք գովելով, և հրամայեց բանակին շարժիլ։



Դեռ Յունաց բանակը առաջին իջեւանը նոր էր հասեր, երբ Վեստ Սարգիս և յոյն հրամանատարը, հեռուն ճամբուն վրայ, փոշիի ամպ մը նկատեցին։ Կ'երեւայ թէ խումբ մը դէպի իրենց բանակը կը սլանար. բայց թէ որոնք էին անոնք թշնամի թէ բարեկամ — այն անյայտ էր։

— Թմբուկը զա՛րկ և հրամայէ պատրաստ ըլլալ դիմադրելու, ըսաւ յոյն հրամանատարը և զէնքի կանչեց զինուորները, բայց անոնց զարմանքը մեծ եղաւ, երբ իրենց առջեւ փոքրիկ խումբ մը նշմարեցին, որոնց առաջնորդը դեռ հեռուէն կը կանչէր. —

— Է՛յ, կայսեր քաջ զինուորները, վար դրէ՛ք ձեր զէնքերը, մենք ձեր թշնամիները չե՛նք, այլ բարեկամները։

Յունաց բանակը միամտօրէն ներս ընդունեց այդ փոքրիկ խումբը, որուն առաջնորդը շուտով ներկայացաւ յոյն հրամանատարին։

— Ո՞վ էք դուք և ի՞նչ կ'ուզէք ըսաւ գոռոզութեամբ յոյն հրամանատարը, առանց նայելու իր առջեւ կանգնած իշխանին։

— Տէ՛ր մենք մեծազօր կայսեր հլու հպատակներն ենք և եկեր ենք յայտնելու մեր հպատակութեան զգացումները իր քաջ հրամանատարին։

Յոյն հրամանատարին դէմքը ցնցուեցաւ ուրախութենէն։

— Ի՞նչ է անունդ, իշխա՛ն, ըսաւ աւելի քաղցր ձայնով։

— Թլպաղտոյ բերդի իշխան Թորոսիկ, քու ծառան, պատասխանեց հայ իշխանը գլուխը խոնարհելով։

— Բարի է ուրեմն, դուն կը վարձատրուիս մեր կայսրէն։

— Ես միշտ իր սարուկն եմ, տէ՛ր, հիմակ ալ պատրաստ եմ գործով ցոյց տալու։

— Ապրի՛ս, Թորոսիկ իշխա՛ն, բայց ըսէ՛ ի՞նչ կ'ընէ այդ աւազակը՝ Պաղինի տէրը։

— Տէ՛ր, ան իր գնդերը պատրաստեր է և զարանի մտեր. նա չի ճանչնար կայսեր իրաւունքը։

— Մենք շուտով կը հասկցնենք անոր թէ որու հետ գործ ունի, իշխա՛ն, հոգ մի ընէք, շուտով անոր գլուխը շուներու պիտի տամ, ըսաւ յոյն հրամանատարը։

— Այո՛, պէտք է, պէտք է անոնց գլուխները շուներու տալ, բայց ատով սիրտս չի՛ զովանար։ Եթէ ձեռքըս իյնայ այդ ծեր աղուէսը, այն ժամանակ ես անոր արիւնը կը խմեմ։

Յոյն հրամանատարը կը ցնծար ներքուստ ուրախութենէն։

— Ի՞նչու, միթէ ան քեզի այդքան ցաւցուցե՞ր է, հարցուց Վեստ Սարգիս, որ մինչեւ այդ ժամանակ լուռ մտիկ կ'ընէր անոր խօսակցութիւնը։

— Այո՛, իշխա՛ն ան խլած է մինչեւ անգամ տղաս և ինծի դէմ զինած է։ Որդին հօր դէմ զինե՛լ... մի՛թէ այդ տանելի՞ է, մի՛թէ այդ դառն հարուածը կարո՞ղ է մոռնալ Թորոսիկ իշխանը...։

— Համբերութի՛ւն, իշխա՛ն, ամէն բան լաւ կ'երթայ և մենք շուտով Պաղինը մոխիր կը դարձնենք, ըսաւ, յոյն հրամանատարը և հրամայեց մեծարանքները ընել Թորոսիկ իշխանին։

Վեստ Սարգիսն ալ կը ցնծար իր սրտին մէջ թէ՝ իրեն դաշնակից մը գտաւ և մէկ դաւաճանը երկուքի փոխուեցաւ...։

Թշուա՛ռ Հայաստա՛ն...։



ԺԹ.

## ԽԵՆԹԸ ԿՈՒԼԱՅ

Խենթը իր սահմանած պարտաւորութիւնը կատարելով, Հաբելի մօտէն կը վերադառնար դէպի Անի։ Այժմ ան բոլորովին փոխուեր էր և ամէնեւին խենթի նմանութիւն չունէր։ Ան նստած էր կարմիր ձիու վրայ և զէնք ու զրահի մէջ կորսուած, արագութեամբ առաջ կը քշէր ձին։ Դէմքը այդ միջոցին խիստ մտախոհ էր և տխուր, կ'երեւար թէ ծանր, սրտմաշ մտածումները կ'եղեքէին հոգին և կ'ալեկոծէր սիրտը։ Հայաստանի վերջին դէպքերը խիստ վրդովեր էին իր սիրտը և կը զգար թէ Յովհաննէս Թագաւորի մահուանէն յետոյ, Հայաստանի գլխուն չարագուշակ բան մը կը պտըտէր, որ կը սարսռեցնէր իր մարմինը։ Այդ բանը կը զգար թէ՛ ինքը և թէ՛ իր տէրը՝ Վահրամ իշխանը։

Այ՛ո, ան լաւ կը յիշէ այն օրը, երբ Վահրամ իշխանը մօտենալով իրեն շեշտակի նայեցաւ իր վշտալից ու թախծալից աչքերով, և դառնագին սրտով ըսաւ.

— Ներսէ՛ս, իմ Ներսէ՛ս, կը սիրե՞ս զիս։

Ես զարմացայ և իր դէմքը դիտեցի, կարծես ճիշդ այս րոպէին մէջ ըլլար։ Իմ տիրոջս դէմքը մռայլ էր և գունատ, իսկ աչքերը արտասուալից։ Ես յուզուեցայ, ինկայ Վահրամ իշխանին ոտքերը և ըսի.

— Ի՞նչ կը հրամայես, տէ՛ր, քեզ որ չսիրեմ ո՞վ պիտի սիրեմ, տանդ մէ՛ջ ես ծնած եմ և սնած։

Ան կրկին հարցուց.

— Ներսէ՛ս, իմ Ներսէ՛ս, կը սիրե՞ս զիս։

Ես կրկին իր երեսը նայեցայ, տեսայ որ կատակ չ'ընէր, լրջօրէն կը հարցնէ, այնպէս ինչպէս Յիսուս կը հարցնէր իր աշակերտին. «Սիմո՛ն Յովնանու, սիրե՞ս

զի՛ս»։ Աստուա՛ծ իմ, մտածեցի ես, մի՞թէ իմ տէրս անհաւատարմութեան բան մը տեսեր է իմ մէջս, որ կ՚ուզէ փորձել զիս, սակայն մի՞թէ չգիտէր, որ ես իր դրան հաւատարիմ ծառան եմ և պատրաստ եմ արեան վերջին կաթիլս թափել իրեն համար։

Ան դարձեալ կրկնեց։

— Ներսէ՛ս, իմ Ներսէ՛ս, կը սիրե՞ս զիս։

Ես վրդոված ինկայ իր ոտքերը, և արտասուքովս թալով իր ոտքերը, ըսի.

— Տէ՛ր, մի՞թէ չգիտե՞ս որ ես քու հաւատարիմ ծառան եմ

— Ուրեմն եթէ այդպէս է, ոտքի ե՛լ և լսէ՛ ինծի, ըսաւ և ինքը նստեցնելով աւելցուց.

— Այսուհետև քու անունդ ալ Ներսէս չպիտի ըլլայ այլ Խենթ, կը հասկնաս։ Ներսէսը մեռաւ և Խենթը ծնաւ։

Ես սոսկացի. քրտինքի խոշոր կաթիլները դուրս ցոլացին ճակտէս և սարսափով իր դէմքը դիտեցի. «Ինչ կ՚ըսէ իշխանը, մի՞թէ ան խելքը կորսնցուց։»

— Մի՛ զարմանար, Ներսէ՛ս այսուհետև քեզ Խենթ կ՚անուանենք և դո՛ւն ալ Ներսէս չես կոչուեր։ Եթէ սիրէս տէ՛րդ, եթէ կը սիրէ՛ս հայրենիքդ — այդպէս պիտի անուանուիս։

Ես հասկցայ իր միտքը և առանց երկար մտածելու պատասխանեցի.

— Համաձայն եմ, իշխա՛ն, հրամանիդ, ինչ պիտի ընեմ։

— Լսէ ինծի, քեզի յայտնի է, որ ծառաներէն մէկը մեռեր է։ Ես կը հրատարակեմ թէ Ներսէսն է մեռեր և նա այլ ևս չկայ աշխարհիս երեսը, իսկ դուն փոխելով քու հանդերձներդ, դէմքիդ արտայայտութիւնը, խենթութիւններ պիտի ընես Անիի փողոցներուն մէջ և



յետոյ, գաղտնի կերպով, ամէն ինչ տեղեկացնես ինծի։ Հակիրճ, դուն Խենթ անուան տակ իմ լրտեսս պիտի ըլլաս. Հայաստանի գլխուն փոթորիկ մը կը պտըտի և Հայոց խնամակալը Վեստ Սարգիս կը ձգտի Հայաստանի գահը յափշտակել և դուն գլխաւորապէս պիտի լրտեսես իր ամէն մէկ քայլը թէ ինչ կ՚ընէ, ո՞վ կուգայ իր մօտ, ո՞վ կ՚երթայ։

Ես խոստացայ Վահրամ իշխանին և այն օրէն ի վեր Անիի փողոցներուն մէջ Խենթ հռչակուեցայ։ Ամենքը զիս խենթ կը ճանչնան ամենքը, բացի դարբին Ղևոնդէն և Լուսիկէն, որոնք կը ճանչնան թէ ո՛վ եմ ես և ինչո՛ւ խենթ։ Բայց մինչև ե՞րբ պիտի շարունակուի այս տաղտկալի դրութիւնը, մինչև ե՞րբ իմ իշխանս, ծերունի Վահրամը պիտի տանջուի դառն մտածումներով։ Օրէ օր դրութիւնը կը ծանրանայ, այժմ Յոյներն գլուխ բարձրացուցած են։ Տէ՛ր, դուն փրկէ՛ մեր Անին, մեր Գագիկ Բագրատունին, որ դեռ մատաղ հասակին մէջ փոթորիկներու կը հանդիպի։

Եւ Խենթը երեսը խաչակնքելով, մտրակեց ձիուն կողերը և մեկնեցաւ։ Ամբողջ շաբաթ մըն էր որ կը ճամբորդէր և յոգնութիւնը խիստ նկատելի էր իր վրայ և կը շտապեցնէր իր ձին, որ շուտով հասնի դարբինի խրճիթը և Լուսիկի պատրաստած թան ապուրը խմէ, սակայն ո՛րքան զարմացաւ, երբ այդ խրճիթը քարուքանդ գտաւ։ Ի՞նչ էր պատահեր արդեօք անոնց, ո՞ւր էր դարբին Ղևոնդ, իր աղջիկը Լուսիկ։

Եւ Խենթը կանգնած այդ խրճիթին առջև, ապուշ աչքերով կը նայէր քարուքանդ խրճիթին և իր աչքերուն չէր հաւատար։

Խենթը կը զգար, որ իրեն վրայ բան մը կը կատարուի, որ իր սիրտը կը բաբախէ արագ արագ, որ իր աչքերը կը մթնին և գլուխը կ՚սկսի պտըտիլ։

Լուսի՛կ, աղջի՛կս, ո՞ւր ես, կանչեց Խենթը այնպիսի աղիողորմ ձայնով մը, որ քարերն ալ կ'արտասուէին։

— Լուսիկ, Լուսիկ, ձայն տուր, Խենթն է, մի՛ թէ ապուրը չես պատրաստեր, կանչեց դարձեալ Խենթը եւ զգաց որ կսկիծէն իսկապէս կը խենթենայ։

Կանգ առաւ Խենթը, շատ կանգ առաւ եւ յանկարծ վար իջնելով ձիէն, խելագարի նման ամայի պատերը գրկեց եւ արտասուքները սկսան հեղհեղալ անոր ցամքած աչքերէն։

Խենթը կուլար...։

Եւ իրօք լալու նիւթ ունէր։ Այն երկով չէր սիրէր իր Լուսիկը, որ այդպիսի գոյժ մը չ'ցնցէր իր ուղեղը։ Իր ընտանիքը կորսնցնելէն յետոյ իր հոգիի բոլոր զօրութեամբը կը սիրէր Լուսիկը, իր եղբօր աղջիկը։

Դարբին Ղեւոնդը Խենթին հարազատ եղբայր էր։

Իսկ հիմա, ո՛չ Ղեւոնդը կար եւ ո՛չ իր եղբօր աղջիկը։

Աշխարհիս երեսը միայն անոնց քով կը բանար իր սիրտը, կը յայտնէր վիշտն եւ ուրախութիւնները...։ Իսկ այժմ ո՞ւր են անոնք։

Յանկարծ Խենթը ցնցուեցաւ իր խենթութիւնը միտքը ինկաւ եւ գոռաց։

Է՜յ, է՜յ, ինծի մի՛ հարցըներ ո՞վ եմ ես . . .
Վա՜յ ինծի, վա՜յ ինծի . . .

Կը գտնեմ քեզ Լուսի՛կ, եթէ մեռած չես, կը գտնեմ, եւ վա՜յ անոր որ քու սիրուն պարտէզը ոտնակոխ ըրաւ ըսաւ Խենթը, եւ նորէն ձի նստելով՝ Անի մտաւ։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ՎԵՐՋԱՑԱՒ

# ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

## Բ. ՄԱՍ

### Ա.

### ԴԱՒԱՃԱՆԻՆ ՈՐԴԻՆ

Յոյն պատգամաւորին ժողովէն վռնտուելէն վերջ Վահրամ Պահլաւունին հանգստութիւն չունէր։ Ան կը զգար որ Հայաստանի գլխուն կը կուտակուին սպառնացող ամպեր և թէ՝ ամպերը առանց սոսկալի հետք ձգելու չեն անցնիր Հայաստանէն։ Բայց թէ ի՞նչ պիտի ըլլայ Հայաստանի ապագան, ի՞նչպէս պիտի վերջանան այս ամէնը։— Ահա ասոնք կը սարսափեցնէին ծերունի Վահրամը և կը խոցէին անոր հայրենասէր սիրտը։—

— Ո՛հ, մի՞թէ Հայաստանը իր ազատութիւնը պիտի կորսնցնէ՞, չարանենգ մարդիկ պիտի հասնի՞ն իրենց նպատակներուն և պիտի ջախջախե՞ն Հայաստանի գահը, մի՞թէ ես իմ աչքովս պիտի տեսնեմ Բագրատունեաց գահին անկումը... բայց մի՞թէ սիրտս կը դիմանայ այդ հարուածին կ'ըսէր ծերունին և խորունկ կսկծէն կը ցնցուէր մարմինը։

Ո՛չ, ես իմ ծերունի կուրծքս պատնէշ կը շինեմ և կը պաշտպանեմ հայրենիքս. այն ժամանակ թող թշնամիները կոխկռտեն դիակս և այնպէս մեր ազատութիւնը խլեն։ Թող գոնէ մեր յաջորդները անէծքով չը յիշեն անունս թէ՝ Վահրամ Պահլաւունին ձեռքերը ծալ-

լած չէր նստած, երբ Թշնամիները ուզեցին խլել հայրենիքին ազատութիւնը։

Վահրամ Պահլաւունին այդպէս մտածմունքի մէջ էր ընկղմուած երբ ներս եկաւ անոր սպասաւորներէն մէկը և յայտնեց Հարպիկ իշխանին գալուստը։ Վահրամին կնճիռները ցրուեցան. և հրամայեց ներս ընդունիլ Հարպիկ իշխանը։ Երբ ներս եկաւ իշխանը, Վահրամ անոր յաղթանդամ կազմուածքին նայեցաւ և տեսակ մը գոհունակութեան ժպիտ անցաւ անոր դէմքին վրայ, կարծես մտքէն ըսաւ «Հայաստանը չի մեռնի՛ր, ո՛չ, չի՛ մեռնիր, քանի՛ այսպէս զաւակներ ունենայ». յետոյ դառնալով Հարպիկին ըսաւ.

— Բարի եկեր էք, Հարպիկ իշխան, դուն քաջի մը պէս սլացար.

— Այո՛, իշխան, պէտք էր շտապել. ձեր նամակը ստանալուս պէս, անկարելի էր րոպէ մը ուշանալ, թէ և անիծուած յոյները ճանապարհին քիչ մը զբաղեցուցին, պատասխանեց Հարպիկը, առանց համարձակելու նստիլ։

— Նստէ, իշխան, և պատմէ թէ ի՞նչպէս յոյները քեզի զբաղեցուցին։ Յոյս ունիմ, որ անոնք խնճոյքի չէին հրաւիրած ձեզ։

— Օ՛... ոչ, լեռներու աւազակը խնճոյքի չէին հրաւիրած, այդ կողմէն անհոգ եղիք, անոնց մէկ խումբին փոքրիկ դաս մը տուի և ծանօթացուցի լեռներու աւազակին հետ։ Անոնք լսած էին Թերևս անունս ալ. բայց ինծի հետ անձամբ ծանօթ չէին, ըսաւ Հարպիկը և պատմեց առաջապահ խումբին ջարդը։

— Ապրիս, Հարպիկ, այդպէս ալ պէտք էր, բայց թողունք այդ, դուն լաւ ժամանակ հասար, շուտով իշխանները կը ժողովուին և մենք մեր ընելիքին մասին կը խորհինք, ըսաւ Վահրամ և յետոյ երկար ժամանակ իրարու հետ խօսելով Հայաստանի ներկայ տագնապալից



դրութեան մասին, միջոցներ կը փնտռէին առաջքը առնելու երբ մէկը միւսին ետևէն ժողովուեցան երեսուն իշխանի մօտ և խորհուրդի նստան։ Բոլոր իշխաններն ալ Վահրամին լաւ ծանօթ և ազգականներ էին։ Այդ ժողովին ներկայացաւ նոյնպէս Ստեփանիկը, որ առանց համարձակութեան առաջ երթալու, դահլիճին մէկ անկիւնը կանգ առած և ձեռքը իր սուրին դաստակին դըրած լուռ կը լսէր ժողովականները։

— Ո՞վ է այդ պատանին, դարձաւ յանկարծ Վահրամը երբ աչքը դէպի անոր դարձուց։

Իշխանները բոլորն ալ Ստեփանիկին նայեցան, որ ամօթէն կաս կարմիր կտրած ոչինչ չէր պատասխաներ։

— Տէր, ան ինծի հետ եկած է և Թլպաղտոյ ամրոցի Թորոսիկ իշխանին որդին է, ըսաւ Հարպիկ իշխանը։

— Ո՞ր Թորոսիկի, այն որ յոյներուն հետ յարաբերութիւն ունի և իր ազգը ծախել կ'ուզէ, հարցուց իշխաններէն մէկը ոտքի ելլելով։

— Ներեցէք, իշխաններ, դուք իրաւունք ունիք զարմանալու որ ես, դաւաճան Թորոսիկ իշխանի որդին, ձեր ժողովին ներկայ կ'ըլլամ, բայց մեղքը իմս չէ. այլ Հարպիկ իշխանինը, որ ինծի այս ժողովին ներկայացուց։ Ես գիտէի, որ ներկայութիւնս ձեր սիրտերը պիտի վրդովէ, պատճառ՝ գայլը գառան հետ չընկերանար, այդպէս դաւաճանը հայրենիքի պաշտպաններուն հետ կարող չէ մնալ. անոնք զիրար պիտի ոչնչացնեն, անոնց հայեացքները բոլորը տարբեր են իրարմէ։ Սակայն խօսք կը խնդրեմ ձեզմէ, տեարք, և կը հարցընեմ թէ ի՞նչ մեղք ունի զաւակը, երբ հայրը դաւաճան է. ստոր է և խաբեբայ, արդեօք ես մեղաւո՞ր եմ որ հայրս դաւաճան է։ Միայն ես ձեզի կը յայտնեմ, որ հօրս ամօթալի արատը ես պիտի քաւեմ, ես պիտի

ջնջեմ մեր տոհմին այն սեւ բիծը, որ դրաւ հայրս և պիտի ջնջեմ սուրը ձեռքիս, մինչեւ արիւնիս վերջին կաթիլը պաշտպանելով հայրենիքս։ Իսկ եթէ դէմ առ դէմ գտնուինք հօրս հետ, այն ժամանակ, կ'երդնում այս սուրիս վրայ և իմ երիտասարդ պատուիս վրայ որ այս սուրը իսկ պիտի մխեմ հօրս կուրծքը և դուրս թափեմ անոր աղիքները, այն ժամանակ թող ըսեն թէ Թլպաղտոյ բերդի իշխան Թորոսիկը դաւաճան էր, բայց անոր որդին Ստեփանիկը ջնջեց այդ արատը, որովհետեւ դուրս թափեց իր հօր այն անարգ սիրտը, որուն մէջ ամբարած էին դաւաճանութեան անարգ նիւթերը։ Կրկին կ'երդնում սուրիս վրայ, կ'երդնում Անիի 1001 եկեղեցիներուն վրայ, որ այդ այդպէս պիտի ըլլայ, ըսաւ Ստեփանիկը և ձայնը դողդողաց, բարկութենէն աչքերէն կայծակներ դուրս թռան և դէմքը բոցավառուեցաւ։

Իշխանները լուռ կը լսէին զայն և երբ վերջացուց դուրս թափելով սրտին կրակը, իր մաղձը դէպի իր հայրը, այն ժամանակ Վահրամ իշխանը դառնալով անոր ըսաւ.

— Ապրի՛ս, Ստեփանիկ իշխան, հայրենիքին առջեւ ծնողք և որդի չը կայ և ան որ ծնողքը կամ որդին վեր կը դասէ քան հայրենիքը— ան դաւաճան է. յետոյ դառնալով իշխաններուն շարունակեց.

— Իշխաններ, ձեզի յայտնի է Հայաստանի տագնապալից դրութիւնը, ձեզի արդէն յայտնի պիտի ըլլայ որ մեր այստեղ հաւաքուելուն պատճառը հայրենիքի պաշտպանութիւնն է։

Բագրատունեաց գահը պարապ է, իսկ խնամակալը անյայտացած։ Ան հեռացած է ո՛վ գիտէ ինչ նպատակներով, բայց ձեզի արդէն յայտնի է, որ Վեստ Սարգիսը ծուռ աչքով կը նայէր ամէն բանի և այդ գահը ինք



կ'ուզէ յափշտակել։ Մենք չը պիտի թոյլ տանք անոր այդ անիրաւութիւնը ընելու և գահը օրինական ժառանգին պիտի հասցնենք, իսկ այդ օրինական ժառանգը պատանի Բագրատունի Գագիկն է։

— Կեցցէ, Գագիկ թագաւորը, գոռացին մէկ քանիներ։

— Բայց սպասեցէք, իշխաններ, ընդհատեց մէկը, նախ քան գահը պաշտպանելը մենք պիտի հեռացնենք մեր երկրի սահմաններէն վտանգը, յոյները արդէն արշաւած են Հայաստանի արեւմտեան սահմանները։

— Այո, այդ այդպէս է, այդ հոգը մենք կը յանձնենք Հարպիկ իշխանին։ Ան մեր մէկ քանի գունդերով կը պաշտպանէ յոյներուն դէմ, մինչեւ որ մենք Գագիկը Անի կը բերենք և օծել կուտանք թագաւոր։

— Այդ շատ դժուար խնդիր է, Վահրամ իշխան, Գագիկը դեռ պատանի է, իսկ Վեստ Սարգիսը անոր հակառակորդը եւ բացի ատկէ ձեռքն է տէրութեան թէ՛ գանձը և թէ՛ բերդերէն շատերը եւ ես կը վախնամ թէ մի գուցէ իշխաններէն շատերը անոր կողմը բռնեն։

— Եւ այդ շատ հաւանական է. որ այդպէս կ'ըլլայ, իշխան, բայց մեր ջանքն ալ այն պիտի ըլլայ որ գահը թափուր չը թողունք, որ Վեստ Սարգիսը աչքը հեռացնէ այդ գահէն։ Չէ՞ որ իր ձգտումն ալ ճիշդ այն է, որ Գագիկին արգելք ըլլայ թագաւոր օծուելու եւ նոյն իսկ ստոր փորձ մը ըրաւ անոր կեանքին դէմ, բայց անյաջող։ Տէրը փրկեց Գագիկը եւ Ան ալ կ'օգնէ անոր ժառանգելու իր գահը, աւելցուց Վահրամը։

— Լաւ, թող այդպէս ըլլայ, մենք նախ աշխատինք հեռացնել յոյները եւ յարմար ժամանակ Գագիկը Անի բերել տանք թագաւոր օծելու, որպէս զի փշրուին Վեստ Սարգիսին յոյսերը, համաձայնեցան իշխանները եւ ցրուեցան, որոշելով որ ամէն մէկը իր գունդերը

պատրաստէ եւ մինչեւ վերջին շունչը կռուի յոյներուն դէմ եւ ոչ մէկ ատեն Անին չը յանձնեն անոնց։

Այդ որոշումը որոշուելէն մէկ քանի օր յետոյ Հարպիկը եւ Ստեփանիկը գունդի մը գլուխ անցած արդէն պատրաստ էին Անիէն դուրս գալու եւ դէպի Հայաստանի արեւմտեան սահմաններն արշաւելու։

## ԼՈՒՍԻԿԸ ԲԱՆՏԻՆ ՄԷՋ

Խենդը Անի մտնելէն յետոյ, արդէն տեսնուած էր դարբին Ղեւոնդին հետ, որը թէեւ վիրաւոր, բայց ազատ ամէն վտանգէ։ Խենթը դեռ անկողինն էր և տեղեկութիւն մ՚իսկ չը կրցաւ առնել թէ՝ որոնք էին յարձակողներն եւ թէ ի՞նչ եղաւ Լուսիկը։ Խենթին համար պարզ էր, որ Լուսիկը յափշտակուած էր, բայց թէ ո՞վ յափշտակած էր եւ ի՞նչու— այդ անոր համար դեռ մութն էր։

Մտազբաղ կ՚անցնէր Անիի փողոցներէն երբ անոր հանդիպեցաւ Ստեփանիկը եւ թեւէն քաշելով ըսաւ.

— Խենթ, Լուսիկս գտիր, ո՞ւր է ան.

— Հը՛մ, Ստեփանիկ իշխան, դուն ես, ըսաւ խենթը և կարեկցաբար անոր դէմքը դիտեց։

— Ես եմ, Խենթ, բայց ես կը խենդենամ եթէ Լուսիկս չը գտնես։ Ա՜խ, ես այդ օրին չէի սպասեր։

— Գնա՛, ըսաւ Խենթը հրամայողաբար։

— Ո՞ւր երթամ, Խենթ։

— Գնա՛, կրկնեց Խենթը։

— Իսկ Լուսի՞կս։

— Գնա՛։

— Հա, ես կը հասկնամ քեզ, Խենթ, և վրադ



վստահութիւն ունիմ, ես կ՚երթամ, որովհետեւ հայրենիքս զիս կը կանչէ։

— Գնա և վստահ եղիր Խենթին վրայ, ան կը գտնէ Լուսիկը, ըսաւ Խենթը և իր երկար փայտը շարժելով առաջացաւ նայելու Ստեփանիկին, որը դեռ սառած անոր ետեւէն կը նայէր։

— Իրաւ խենթ է, ո՞վ կ՚ըսէ թէ սա դիտմամբ խենթ կը ձեւանայ. բայց վստահ եմ որ կը գտնէ Լուսիկս, ըսաւ Ստեփանիկը և շուտով անյայտացաւ։ Քիչ յետոյ գունդի մը գլուխը անցած Հարպիկի հետ միասին դուրս ելաւ Անիէն, այնինչ Խենթը իւր փայտը օրօրելով և իւր վայրերն ըսելով կ՚անցնէր Անիի մէկ փողոցէն միւսը, և ամեն տեղ կանգ առնելով աջ ու ձախ կը նայէր կը լսէր մարդերու խօսակցութիւնը և կրկին առաջ կ՚երթար։ Նայողը եթէ լաւ ուշադրութիւն դարձնէր — կը տեսնէր, որ Խենթին աչքերէն երբեմն արտասուքներ կը գլորուէին հաւաքուելով մօրուքին մէջ՝ կը պահուըտէին այնտեղ։

— Չէ, չկայ Լուսիկը, Անիի մէջ ոչ մէկ տեղ չի երեւնար, ո՛վ գիտէ ան ո՞րտեղ կը հեծեծէ և իր Խենթը կը կանչէ, բայց չէ, ես կրկին պէտք է սեւ մարդուն պաչէն բռնեմ, սիրտս կը գուշակէ որ անոր գործն է եւ թէ Լուսիկը ահա այս պատերուն մէջն է։ Ո՛հ, եթէ հնար ունենայի քարուքանդ ընել այս պատերը, այն ժամանակ Լուսիկս կը գտնէի, ըսաւ ան և կատաղութեան հայեացք ձգեց դէպի Վեստ Սարգսի պալատը։

Ան առաջ գնաց եւ մտաւ Վեստ Սարգիսի պալատը։

— Էյ, հէյ, գիտէ՞ք ով եմ ես գոռաց ան օրօրուելով։

— Օ՜օ, Խենթ, այս ո՞ւր էիր, ըսին ծառաները եւ

շրջապատեցին Խենթը։ Անոնք կարծես տրամադիր էին շատ ուրախանալ այդ օր։

— Աստուծոյ մօտ, ըսաւ Խենթը։

— Աստուծոյ մօ՞տ, յետոյ ի՞նչ տեսար.

— Մեռելնե՜ր, մեռելնե՜ր...

— Հա՜, հա՜, հա՜, խնդացին ծառաները։

— Յետոյ մեռելներու մօտ ի՞նչ կը շինէիր։

— Վա՜յ, ես ալ մեռած էի, ըսաւ Խենթը եւ սկըսաւ պարել, զանազան ծամածռութիւններ ընել, որ խելագարեցնելու չափ ծիծաղ պատճառեց ծառաներուն։ Յետոյ ան սկսաւ վազել գաւիթին զանազան կողմը եւ փախելով ամէն մէկ դուռ կանչեց։

— Այստեղ ո՞վ կ'ապրի։

— Ես, Խենթ, ինչ կ'ուզես։

— Իսկ այնտե՞ղ.

— Իշխանը։

— Իսկ գետնի՞ն տակ, մութ բանտին մէջ։

— Սիրուն աղջիկ մը ըսաւ, յանկարծ ծառաներէն մէկը։

Խենդին գոյնը նետեց. ան զգաց, որ աչքերը կը մթնէին, սրունքները կը դողդողային։

— Է՜յ, յիմարներ, իմ ինչուս պէտք աղջիկ, ինծի գինի տուէք, գինի, ըսաւ եւ պատին տակ ծալլապատիկ անշարժ նստաւ։ Ծառաները քիչ քիչ հեռացան քովէն երբ տեսան որ Խենթին երեսը չը ծիծաղիր, այլ գլուխը պատին յենած կ'ուզէր քնանալ։

Անցաւ քիչ մը ժամանակ. Խենթը տեղէն չէր շարժեր, անշարժ էր արձանի մը պէս լուռ ու անձայն։ Աչքերը բաց, անթարթ. իսկ դիրքը անփոփոխ։ Տեսնողը կ'ըսէր, թէ խենթին մէջ, այդ միջոցին, հոգի, շունչ չկար։ Յիրաւի այդ միջոցին անոր հոգին անոր սիրտը այդտեղ չէր, կարծես իր մարմինէն բաժնուելով



թռած գացած էր ով գիտէ ուր, դէպի որ աշխարհը, ով գիտէ որուն մօտ...։ Այո՛, Խենթը այդ միջոցին թմրած էր, քարացած, բայց եթէ սրատես աչքեր ըլլային և կարողանային թափանցել մինչեւ անոր սրտին խորը, կը տեսնէին, որ անոր սրտին ամենամութ խորշերը, հոգին կաշկանդուած կը տանջուէր ու կը հեծէր...։ Սոսկալի էր անոր տանջանքը։ Դիւրին է ըսել հոգւոյ տանջանք. բայց ատիկա մարմնական տանջանք մը չէ, երբ մենք ցաւ ու կսկիծ կ'զգանք ախ ու վախ կը քաշենք կ'արտասուենք և կը թեթեւցնենք մեր ցաւերը։ Իսկ հոգեկան տանջանքին ցաւն ու կսկիծը այդպէս չէ, ան արցունք չունի, որ գոռա՛, աղաղակէ, այլ ան լուռ. անձայն կը կրծէ մեր սիրտը, կը չամփրէ սրտին ամենաքընքոյշ տեղերը, կը ցամքեցնէ արցունքները աչքերուն մէջ և գեհենի պէս կը վառէ հոգւոյն մէջ...։ Եւ Խենթն ալ ճիշտ այդ վայրկեանին կը տանջուէր հոգեպէս։ Դա՛ռն մտքերը վիթխարի գազաններու նման իրարու հետ կը կռուէին, իրարու արիւն կը ծծէին և սոսկալի մռնչիւնով կը խորտակուէին, կոչնչանային. անոնք նոր մտքեր կը բանային Ովկեանի ալիքներէն ալ բարձր, իրարու հետ գրկուած կը փրփրային և կը խորտակուէին։ Եւ խենթին գլխուն մէջ այդ րոպէին կը լսուէին որոտումի ձայներ, և գազաններու կատաղի մռնչիւններ, թնդիւններ և սուլոցներ ու ահեղ դժոխային ձայներ...։ Այդ ժամանակ մարդուս մարմինը կարծես կտոր կտոր ըլլար ասեղներով ծակծկուէր, ալ երկար ժամանակ չէր զգար այն աքացիները, որ շարունակ կը հասցնէին իր մօտ կանգնած մարդու մը։

— Է՜յ, Խենթ, չե՞ս զգար, վեր ելիր այստեղ մնալ չըլլար, կ'ըսէր այդ մարդը շարունակ աքացի տալով անոր...։ Բայց Խենթը չէր զգար, չէր իմանար։

— Մեռա՞ր, ի՞նչ է, ըսաւ մարդը նորէն և թեւէն

այնպիսի ուժգնութեամբ մը քաշեց, որ Խենթը շփոթած ոտքի կանգնեցաւ և ապուշի նման այդ մարդուն նայեցաւ, որ զէնքերու մէջ կորսուած կանգնած էր մօտը։

— Հէ՜յ կորսուէ այստեղէն, հոս խենթերու տեղ չէ, թէ որ իշխանը քեզի այստեղ տեսնէ ինծի ալ արեւի երես չի ցուցնէր։

— Ինչո՞ւ, ի՞նչ է պատահած ըսաւ Խենթը լուրջ կերպով մը խենթութեան դերէն ելլելով։

— Ինչո՞ւ...։ Բայց մի՞թէ ես պարտաւոր եմ հաշիւ տալու։

— Ի՞նչ կայ որ ես ալ իմանամ։

— Գնա, ըսաւ մարդը հրամայողաբար։

Խենթը զգաց, որ աւելի առաջ երթալ կարելի չէ։ Ան փայտը օրօրեց, քանի մը խենթական ոստիւններ ըրաւ կ'ուզէր ետ դառնալ· երբ սուր ճիչ մը լսեց, Խենթը սարսափահար տեղն ու տեղը գամուեցաւ։

Խենթը քանի մը վայրկեան քարացած մնաց· իր կսկիծը կրկին ցնցեց իր ուղեղը և սառեցուց անոր արիւնը։ Այդ ձայնը, այդ ճիչը ծանօթ էր Խենթին, ատիկա կարծես Լուսիկի ձայնը ըլլար որ տեսնելով Խենթը սոսկալի ճիչ մը արձակած էր։ Բայց թէ ո՞ւր էր Լուսիկը և ո՛րտեղէն լսուեցաւ անոր ճիչը այդ չկրցաւ իմանալ Խենթը և դեռ քարացածի նման կեցած էր, երբ պահապան զինուորը հրեց զինք և ծառաներուն դառնալով ըսաւ.

— Է՜յ, տարէք Խենթը այստեղէն թէ չէ նիզակիս համը կ'առնէ։

Ծառաները մօտը վազեցին և կարծես ամէնը մէկ շալկելով դուրս տարին այդ տեղէն։



## Գ.

# ՅՈՅՆԵՐՈՒՆ ՋԱՐԴԸ

Յունաց բանակը հետզհետէ մը մօտենար Անիի, իր ետեւէն թողելով աւերակ և մոխիրի կոյտեր։ Այդ բանակին հետ կուգար նաև Վեստ Սարգիսը, խորհուրդներ տալով, հայերուն թոյլ կողմերը ցոյց տալով· որպէս զի աւելի դիւրին տիրեն Հայաստանին, դիւրին ձեռք ձգեն Անի քաղաքը։ Ան տալով խորհուրդները· խոստումները, որ եթէ Վահրամեանք Անիի դռները փակեն, ինքը գաղտնի կ'աջակցի յոյներուն, յետոյ, որպէս զի սև գործը ո՛չոք տեսնէ, որպէս զի իր անամօթ դաւաճանութիւնը հայերը չիմանան, թողուց բանակը և հեռացաւ։

Յունաց հրամանատարը մեծ պատուով ճամբեց զայն, սակայն երբ անյայտացաւ Վեստ Սարգիսը, հեգնական ժպիտ մը ձգելով անոր ետեւէն ըսաւ.

— Հայու խելք, իր ազգը մատնելով կ'ուզէ իշխանութիւնը ձեռք ձգել, բայց չը հասկնար մատնիչը որ իրեն համար ալ հոր կը փորէ։

Եւ յունաց բանակը կանգ առնելով կանաչապատ դաշտավայր մը սկսաւ իր հանգստութեան վրայ մտածել, որպէս զի միւս օրը մեծ հանդիսով մուտք գործէ Շիրակի դաշտավայրը, ուր կը գտնուէր հռչակաւոր Անին։

Շուտով մութը կոխեց և աջ ու ձախ սկսաւ խարոյկներ վառուիլ, որոնք հետզհետէ աւելի կը բազմանար և տեսակ մը կենդանութիւն կուտար ամայի դաշ-

թավայրին: Իշխաններն սկսան իրենց քէֆը, իսկ զինուորներէն ոմանք կերակուր կը պատրաստէին, իսկ ոմանք ալ խարոյկներու մօտ կը տաքնային և քաղցր խօսակցութեան բռնուած մինչեւ որ իրենց ընթրիքը կը պատրաստուէր: Թէեւ եղանակը գարուն էր, բայց Հայաստանի ցուրտ քամին գիշերները անպակաս էր այն կողմերը: Երկինքը պարզ էր և անամպ և այդ անհուն մութ կապոյտին մէջ կը լողային անթիւ աստղեր և աղամանդներու նման կը փայլփլէին: Լուսին չկար, վերջին օրերն էր և աստղերը կ'երեւային երկնամակարին վրայ իրենց բոլոր պերճութեամբը, իրենց բոլոր չքնաղութեամբը, Հայաստանի զով և ցուրտ քամին ալ գիտէ որ տեղէն գալով, սուլելով կ'անցնէր և յունաց բանակին մէջէն անցնելով հեռու հեռու կը ցրուէր անոնց խարոյկները:

Ընթրիքը վերջացաւ: Զինուորներէն շատերը իրենց յոգնութենէն նեղուած քաշուեցան վրանները, փաթթուեցան իրենց լայնածաւալ վերարկուներուն մէջ և շուտով լռեցան անոնց երկար խորթալը, դեռ մէկ քանիներ կը շարունակէին իրենց խօսակցութիւնը: Պահապանները միայն արթուն կը հսկէին բանակին շուրջը և իրենց չափաւոր քայլուածքը երբեմն երբեմն ալ կենալով կը խմբուէին երկու կամ երեքը միասին և կը սկսէին իրարու հետ խօսակցիլ որպէս զի մօտեցող քունը կարողանային իրենցմէ փախցնել:

Ահա բանակին մէկ կողմը երկու պահապան կանգ են առած և կը խօսակցին:

— Ցուրտ է, ցուրտ, կ'ըսէր անոնցմէ մէկը, որուն պեխերը նոր ծլած էին արեւակէզ դէմքին վրայ:

— Հա, ճիշդ է, կը փչէ հիւսիսային ցուրտ քամին, այն ինչ եթէ քամին կենայ տաք կ'ըլլայ:

— Բայց քամին դադրելու ամենեւին միտք չունի, իսկ ես կը սառիմ:



— Պէտք է դիմանալ մինչեւ լոյս, մեզի բնաւ հրաման չկայ շարժելու:

— Սուս մեր հրամանատարը կը շրջի: Ան աչքէ կ'անցնէ բանակը, պէտք է ամէն պահապան իր տեղը կանգնի, ըսաւ երիտասարդ յոյնը և նիզակը ձեռն առնելով, սկսաւ նշանակուած տեղը հերթ ընել:

Քիչ յետոյ, իրաւի, յոյն հրամանատարը քանի մը իշխաններով շրջապատուած բանակը կը դիտէր և պահապանները աչքէ կ'անցնէր: Ան մօտեցաւ երիտասարդ յոյն պահապանին ալ որ զինուորական պատիւը ըրաւ անոր և հրամանատարը տեսաւ, որ ամէն բան կարգին է, պահապանները լուրջ կը հսկեն բանակը, միամիտ իր վրանը մտաւ: Բանակին մէջ հետզհետէ տիրեց խոր լռութիւն մը եւ խարոյկներն ալ կամաց կամաց սկսան հանգչիլ, փճանալ եւ բանակը կ'ընկղմէր խաւարի մէջ:

Շարժումը դադրեցաւ, եւ մեռելութիւնը տիրեց ամէն տեղ: Աստղերուն թոյլ լուսաւորութեան տակ կ'երեւար միայն պահապաններուն սեւ ուրուագծերը, որոնք ինչպէս գիշերային վհուկներ դանդաղ, բայց չափաւոր քայլերով կը շրջէին մէկ տեղէն միւսը: Երիտասարդ յոյն պահապանը, որ նոյնպէս կը շրջէր, յանկարծ կանգ առաւ և խոշոր աչքերը լայն մը բանելով իր առջեւ նայեցաւ: Բայց առջեւը բան մը չկար— մութ էր և խաւար: Ան ցերեկուընէ կը յիշէր, որ իրմէ քիչ մը հեռուն փոքրիկ որ կը տարածուէր որուն մէջէն կը վազէր փոքրիկ առուակ մը իսկ հիմա որ այնքան մութ էր այդ առուակը, այդ ձորն ալ չերեւար թէեւ պարզ կը լսուէր առուակին խոխոջալու ձայնը:

— Ո՞հ, ինչ գէշ բան է գիշերը պահապան ըլլալ անծանօթ տեղ, օտար երկիր որ նոյնպէս չես գիտեր ինչ կայ կամ ինչ չկայ:

Հիմա ես ինչ ընեմ, երբ այստեղէն յանկարծ ան-

ծանօթ գունդ մը երեւայ և մեր բանակին վրայ յարձակի. ատոնք առաջ զիս կը սպաննեն, մատաղ կեանքս կը խաւարեցնեն առանց հնար ունենալու ընկերներուս ձայն տալու, բայց ես ինչ յանձանք ունիմ, միթէ՞ մեղք չեմ, կ՚ըսէր պահապանը ինքնիրեն և միեւնոյն ժամանակ կը զգար որ քունը ամէն կերպով կը յաղթէր զինք: — Է՜, գոնէ շուտ լուսնար, ես իմ հերթէն ազատէի, վաղը անուշ մը քնանայի: Բայց այս ինչ բան է, ըսաւ և աչքերը սկսաւ նորէն տրորել: Անոր աչքին երեւաց, որ սեւ կէտ մը երբեմն կը բարձրանար ձորին մէջէն, երբեմն կ՚անյայտանար:

Զարմանք, հիմակ ոչինչ չկայ, մի՞թէ ես կը խաբուիմ... այս կողմերը գազաններ ալ շատ կ՚ըլլան. ի՞նչ պիտի ըլլամ եթէ խումբ մը գայլեր յանկարծ վրաս թափուին... Ո՛, սարսափելի է գայլերու ատամներուն տակ. անպիտանները մէկ վայրկենի մէջ ինծի կը կլլեն ոսկորներս անգամ չեն թողուր. բայց քունս սաստիկ ծանրացաւ, ինչ կ՚ըլլայ եթէ այս կանաչ խոտին վրայ պառկիմ և քիչ, շատ քիչ քնանամ գոնէ քանի մը բոպէ, ո՞վ կը տեսնէ ինծի, կամ ի՞նչ վտանգ կարող է սպառնալ բանակին— ոչինչ: Ես կը հաւատամ բան մը չըլլար. հայերը չեն համարձակիր մեր բանակին վրայ քալել, ըսաւ զինուորը և կիսաթեք ինկաւ գետնին վըրայ, գլուխը դնելով ձեռքերուն վրայ:

— Այս անպիտան քունն ալ հոգես հանեց. ես կը դողամ ամբողջ մարմնովս, ո՜ւֆ, ըսաւ դարձեալ պահապանը, գլորուեցաւ վերարկուին մէջ և անոր աչքերը ծածկուեցան, անուշ նիրհը պատեց զինք, ան չնկատեց ալ թէ ի՞նչպէս ձորին մէջէն քանի մը գլուխներ երեւաց, մարդ մը աջ ու ձախ նայելէն յետոյ, փորի վրայ առաջ եկաւ դէպի պահապան զինուորը: Այդ մարդը



մերկ սուրը ձեռքը՝ պատրաստ իր հակառակորդին կուրծքը մխելու:

Փորի վրայ քիչ մ՚ալ առաջացաւ, և կանգ առաւ, կարծես շունչը ետ բերելու և դիտելու թէ արդեօք մէկը չի՞ տեսներ զինք. երբ համոզուեցաւ որ ամէն ինչ շուրջը խաղաղ է, պահապանները բոլորն ալ քնացած են, ան կրկին առաջ սողաց և վայրենի աչքերով դէպի քնացած պահապանը նայեցաւ յետոյ անոր ծռեցաւ և սուրը պատրաստեց մէկ ոստումով դէպի իր զոհը նետւիլ բայց ճիշդ այդ միջոցին պահապան զինուորը շարժեցաւ և աչքերը լայն մը բացաւ: Ան իրմէ քանի մը քայլ տեղ երկու փայլուն աչքեր տեսաւ, որոնք ուղղուած էին իրեն. կարծես թէ զինք պիտի կլլէին: «Ի՞նչ է այդ, մի՞թէ աչքերս կը խաբեն զիս մտածեց զինուորը և վայրկեան մը փակելով աչքերը — նորէն բացաւ և սարսափեցաւ: Ան տեսաւ իր առջեւ չոքած մարդ մը, որ ձեռքի սուրը ակնթարթի մը մէջ փայլեցաւ, յետոյ զգաց սուր ցաւ մը որմէ հասկցաւ որ սուրը մխուեցաւ կոկորդին մէջ:

Երիտասարդ պահապան զինուորը մահուան քանի մը ցնցումներ ըրաւ և մնաց անշարժ, նորէն նոյն մարդը կրկին փորի վրայ ետ ետ գնաց եւ կորսուեցաւ մըթութեան մէջ...

Անցաւ շատ կարճ ժամանակ, այն կողմէն ուրկէ երեւցաւ փորի վրայ սողացող մարդը, հիմակ խումբ խումբ մարդիկ երեւցան, որոնք քիչ մը կանգ առնե-
լով զգուշութեամբ դէպի բանակը քալեցին:

— Ստեփանիկ, գունդդ աջ կողմէն տար, իսկ ես կ՚աշխատիմ անոնց փախուստը արգիլել, ըսաւ մարդ
մը, որ ձեռքին մէջ ահագին սուր մը կը ճօճէր:

— Լաւ, Հարպիկ իշխան, հոգ մի ըներ դուն. Յոյները լաւ դաս մը կ՚առնեն, անոնց պահապանները

Բոլորն ալ ջարդուած են եւ մեր ճամբան հարթուած. մինչեւ որ անոնք արթննան, մենք անոնց գլուխները կը կտրենք, ըսաւ Ստեփանիկ եւ իր գունդը դէպի աջ կողմը տարաւ:

Սկսաւ կոտորածը, անձայն, առանց աղմուկի, երբ յանկարծ, կէս գիշերին, յունաց բանակէն բարձրացաւ վայնասունի, ճչի եւ գոռումի ձայներ: Քնացած զինուորները ոտքի կանգնեցան. ոմանք զէնք առին, ոմանք ալ ուզեցին փախչիլ, բայց հայ կտրիճներու սուրը ամէն տեղը կը հասնէր անոնց եւ իր հունձքը կը քաղէր:

Կոտորածը դեռ կը շարունակուէր, երբ բացուեցաւ արշալոյսը եւ լուսաւորեց պատերազմին դաշտը: Սոսկալի էր այդ դաշտը: Խումբ մը կտրիճ հայերէ յունաց բանակին մեծ մասը փճացած էր, իսկ մնացածները լեղապատառ փախած էին այն տեղէն, որը ձիով, որը ոտքով:

Այդ ատենն էր, որ Հարպիկ իշխանը իր արիւնալի սուրը ձեռքին մէջ, մէկը կը փնտռէր, եւ գտաւ այն: Հարպիկ իշխանը տեսաւ որ յոյն հրամանատարը յոյն գունդին առջեւն ինկած քաջութեամբ կը կռուէր եւ կ'ուզէր ճամբայ բանալ Ստեփանիկի կտրիճներուն մէջէն:

— Անիծեալ յոյն, մի՞թէ չես ճանչնար լեռներու աւազակը, գոռաց անիկա եւ ինկաւ կռուողներուն մէջ:

Յոյն հրամանատարը նայեցաւ անոր եւ սոսկաց: Ան ուզեց ետ դարձնել իր ձիուն գլուխը եւ փախչիլ, բայց ուշ էր: Հարպիկի սուրը կէս ըրաւ անոր գլուխը եւ ան արիւնաթաթաւ վար ինկաւ:

Յոյները երբ նկատեցին իրենց հրամանատարին մեռնիլը, աճապարեցին փախչիլ կռուի դաշտէն: Եւ Հարպիկ



իշխանը արգելք չեղաւ անոնց, ան տեսաւ որ յունաց այդ բանակը բոլորովին ջախջախուեցաւ եւ այլեւս բան մ'ալ չէին կրնար ընել:

Այդ ջարդը լաւ դաս մ'էր յոյներուն, թող յունաց կայսրը նոր բանակ մը կազմէ եւ Հայաստան ղրկէ, ըսաւ Հարպիկ իշխանը իր արիւնոտ սուրը սրբելով...:

Գ.

## ԴԱՒԱՃԱՆԻՆ ԱՐՑՈՒՆՔԸ

Յունաց բանակին ջարդուելուն լուրը Անի հասաւ եւ ցնծութեամբ լեցուց հայերուն սիրտը: Ամբոխը սկսաւ ջերմեռանդ աղօթքներ ընել Ամենաբարձեալին որ հովանի կեցաւ Հայաստանին եւ չձգեց յոյներուն ձեռքը, միւս կողմէն իշխաններն ալ ցնծութեամբ եւ ուրախութեամբ տօնեցին հայոց գունդին այդ մեծ յաղթութիւնը: Այդ ժամանակն էր, որ Վեստ Սարգիսն ալ Անի մըտաւ եւ երբ տեսաւ անեցիներուն ուրախութիւնները, եւ երբ լսեց անոնց զուարթ յաղթական երգերուն ձայները, — տխրեցաւ եւ խռովեցաւ հոգին:

«Ի՞նչ է արդեօք պատահեր, կը մտածէր ան, ինչո՞ւ Անեցիք այդպէս ուրախ են եւ յաղթական երգեր կ'երգեն, մի՞թէ ատոնց յայտնի չէ, որ յունաց բանակին քաջ լէգէոնները ուր որ են կերեւան եւ մոխրի ու կրակի կոյտեր կը դարձնեն Անին...:

Խելացնորնե՛ր, ի՞նչ կ'ուրախանաք, ի՞նչ կ'երգէ, չէ՞ որ Վեստ Սարգիսը կ'սպասէր որ Անեցիք մռայլ եւ յուսահատ տեսնէր...: Այս ի՞նչ է պատահած, կը մտածէր Վեստ Սարգիսը եւ մռայլուած առաջ կերթար դէպի իր պալատը:

Վեստ Սարգիս դեռ չգիտէր յունաց բանակին ջարդը։

— Եղօ՛, ի՞նչ պատահեցաւ Անեցիներուն, ինչու անոնք ուրախ են, դարձաւ Վեստ Սարգիս մռայլ դէմքով մը ըսաւ իր անբաժան Եղօյին։ Եղօն, բան մը չը պատասխանեց։ Ան ալ մռայլ էր, ան ալ յուսահատ կ'կերեւար, որ իր գործը կը դժուարանար շիտակ պատասխան մը տալու. չէ՞ որ ատով կը վշտացնէր իր տէրը։

— Եղօ՛, մի՞թէ իրաւ է, որ անեցիք ուրախ են թէ միայն ինձ այդպէս կ'երեւայ, հարցուց ան դարձեալ։

— Այո՛, տէր, չէք սխալած, պատասխանեց Եղօն։

— Բայց ինչու, ի՞նչ է պատահած։

— Ցաւալի բան մը տէ՛ր։

— Ի՞նչ... մի՞թէ Գագիկը...։

— Ո՛չ, տէր, ո՛չ, Գագիկը չի համարձակուիր Անի մտնել, ընդհատեց Եղօն գոռոզաբար։

Վեստ Սարգիս քիչ մը հանդարտացաւ։

— Ուրեմն ի՞նչ է պատահած խնդրեմ, ինչ է, ինչո՞ւ անոնք կ'ուրախանան, երբ քանի մը օրէն յետոյ պիտի ջարդուին յունաց բանակէն։ Մի՞թէ անոնք չեն հասկնար ատիկա։

— Հը՛մ, ալ անցաւ, ըսաւ Եղօն, հեգնական ժպիտ մ'արձակելով։

— Ի՞նչպէս թէ անցաւ։

— Այնպէս անցաւ, յունաց բանակին հետքն անգամ չէ մնացած, մինչդեռ մենք խոտոր ճամբաներով ժամանակ կը վատնէինք և կ'սպասէինք յունաց բանակին որ Անի հասնէին, անեցիք չեն քնացեր. Հարպիկ իշխանը Վահրամեանց գունդերուն գլուխը անցած մեծ ջարդ մ'է տուեր, անոնց ճիշտ այնտեղ, ուր մենք զանոնք թողուցինք։

— Բայց մի՞թէ այդ ճիշդ է, Եղօ, մի՞թէ անհա-



յունաց բանակը աւազակէ մը ջարդուեցաւ։

— Կատարելապէս ճշմարիտ։ Ես այդ ամէնը ստուգեցի Անիի դուռներուն հասնելուն պէս։

— Եւ այդ յաղթութեան վրա՞յ է որ կ'ուրախանան Անեցիք, հարցուց Վեստ Սարգիսը գունատ դէմքով։

— Ճիշդ ատոր վրայ։

— Լաւ, այդ առաջինը ջարդուեցաւ, բայց ուրիշ տասը բանակներ կուգան, Վեստ Սարգիսը չէ քնացած, պատասխանեց ան սրտի կսկիծէն գունատ դէմքով մը եւ ձին առաջ քշեց։ Երբ ան հասաւ Ս. Լուսաւորչայ մայր եկեղեցիին մօտ, ուր խմբուած էին իշխաններ, հոգեւորականներ և ժողովուրդ, վայրկեանի մը մէջ դէմքին մռայլը անյայտացաւ և այնպիսի գոհունակութեան և ուրախութեան արտայայտում մ'ստացաւ, որ ժողովուրդը նայելով անոր դէմքին, փսփսաց իրարու մէջ։

— Ահա խնամակալը եկաւ, տեսէք որքան ուրախ է ան։

— Կեղծ է անոր ժպիտը, ըսաւ, հոն կեցողներէն մէկը։

— Ո՛չ, կեղծ չի կրնար ըլլալ, նայեցէք, ըսաւ անոր խօսակիցը և մատով ցոյց տուաւ դէպի Վեստ Սարգիսը։

Ամէնքը դէպի Հայաստանի գահին խնամակալը նայեցան։ Վեստ Սարգիսը ձիէն վար էր իջած և համբուրելով եկեղեցիին դուները, ուրախութեան առատ արցունք կը թափէր և բարձր, լսելի ձայնով կ'ըսէր։

— Ո՜հ, Ամենակալ Տէ՛ր, դո՛ւն ազատեցիր որբ հայերը և անոր թափուր գահը պահպանեցիր։ Տէր, ընդունէ իմ գոհունակութեանս անարժան աղօթքը և հաստատ պահէ Բագրատունեաց գահը մինչև յաւիտեան։

Յետոյ դառնալով իշխաններուն, հոգեւորականութեան, կը սեղմէր անոնց ձեռքերը եւ Յուդայի համբոյրներ կուտար։

Միացուցէք իմ անկեղծ ուրախութիւնս ալ ձեր ուրախութեան հետ։ Վեստ Սարգիսը հոգւով ուրախ է հայերուն քաջութեան եւ յաղթութեան համար։ Թող խորտակուին յոյները, եւ թող փճանան մեր թշնամիները, կ'ըսէր ան եւ աչքերէն ուրախութեան արցունքներ կը թափէր։

— Կը տեսնես, բարեկամ, ինչպէս կ'ուրախանայ, ըսաւ դարձեալ ժողովուրդին մէջէն առաջին բարձրահասակ մարդը։

— Կը տեսնեմ, կը տեսնեմ, Վեստ Սարգիսը ուրախութենէն կուլայ պատասխանեց խօսակիցը։

— Բայց չէ՞ որ կ'ըսէին թէ Վեստ Սարգիսը դաւաճան է։

— Այո՛ կ'ըսեն։

— Բայց մի՞թէ դաւաճանը այդպէս կ'ուրախանայ յունաց ջարդուելով կամ մի՞թէ ան այդպիսի խօսքեր կ'ըսէ...։ Դուն լսեցի՞ր թէ ի՞նչ ըսաւ ան։

— Լսեցի, բարեկամս։

— Ուրեմն ան դաւաճան չէ, ինչպէս որ կ'ըսէին։

— Չեմ գիտեր, պատասխանեց խօսակիցը, գուցէ դաւաճան չէ ան եւ մենք զուր տեղը կը մեղադրենք։

— Չէ, ես կը հաւատամ, որ մեր թագաւորութեան խնամակալը բարի մարդ մ'է, շատ բարի եւ թէ ան դաւաճան չէ, ըսաւ առաջին խօսակիցը։

— Ո՞վ գիտէ, բարեկամ, մեր խելքը խորերը չը թափանցէր, ո՞վ գիտէ ի՞նչ կայ անոր սրտին մէջ պահուած, իսկ ան մեզի այդպէս ցոյց կուտայ ըսաւ երկրորդ մարդը եւ շուտով խառնուեցաւ ամբոխին մէջ։

Այդ ժամանակ իշխաններն արդէն ցրուած էին եւ



Վեստ Սարգիսն ալ հեռացեր է դէպի իր պալատը։

Բայց ամբոխը դեռ խումբ խումբ կանգնած կը խօսակցէր, երբ յանկարծ փողոցին ծայրէն մարդ մը երեւաց, որ բոլորին ուշադրութիւնը գրաւեց։

— Խենթը, խենթը կուգայ կոր, կանչեցին քանի մը ձայներ։

Իրաւցնէ խենթն էր, որ երեւցաւ փողոցին ծայրէն իր անբաժան երկար փայտը ձեռքին մէջ։ Մօտեցաւ ամբոխին եւ իր աչքերը վայրկենաբար աջ ու ձախ պտըտցուց։ Ամբոխը տեղ բացաւ եւ շրջապատեց խենթը։ Ամբոխը տրամադիր էր այդ օրը ուրախանալ եւ խենթը մօտիկ ընել։

— Հէ՜յ, հէ՜յ, ճամբայ բացէք, ինծի, ճամբայ տուէք, կանչեց ան եւ բարձրանալով քարի մը վրայ, նայեցաւ շուրջը եւ յետոյ խիստ սրտակտոր ձայնով մը ըսաւ.

Ինծի մի՛ հարցնէք ով եմ ես.
Վա՜յ ինձ, վա՜յ ինձ...
Սիրուն ու շէն Անին եմ ես.
Վա՜յ ինձ, վա՜յ ինձ...

— Խենթ, ինչո՞ւ վայ կը կանչես չէ՞ որ այսօր ուրախանալու օր է։ Չե՞ս տեսներ ամէնքը ուրախ են որովհետեւ յոյները ջարդուեցան հայերէն, ըսաւ ամբոխէն ձեր մարդ մը։

— Սուտ է այդ բոլորը, ամէնքը ուրախ չեն, պատասխանեց խենթը։

— Ամէնքը ուրախ են, խենթ, թէ իշխան թէ ռամիկ. միայն դուն ես որ կրկին վայ կը կանչես պատասխանեց նոյն մարդը։

— Ես պիտի կանչեմ վայ, մինչեւ որ կայ եւ կ'ապրի անիկա։

— Ո՞վ, Խենթ, ո՞վ կայ և կ'ապրի, հետաքրքրութեամբ հարցուցին զանազան կողմերէ։

— Ան, ան, ով կուլայ և կ'ուրախանայ, ով կը ժպտի և կը տրտմի, ով կ'աղօթէ և կ'անիծէ։

— Ի՞նչ կ'ըսես Խենթ, մենք ոչինչ չենք հասկնար, ըսաւ, ո՞վ է այդ մարդը, որ ուրախութեան ժամանակ կը տրտմի. իսկ տրտմութեան ժամանակ կ'ուրախանայ, պատասխանեց նոյն ծերունին և հետաքրքրութեամբ Խենթին նայեցաւ։

— Վա՜հ, մի՞թէ դուք աչքեր չունիք, որ տեսնէք, ականջ չունիք որ լսէք։ Օձը թոյն կը պատրաստէ և իր քաղցր խօսքերով ձեզի կը քնացնէ։

— Ո՞վ է այդ մարդը, Խենթ, մի՞թէ Վեստ Սարգիսն է, որ այսօր լիասիրտ կուլար և գոհունակութեան մաղթանքներ կ'ուղղէր հայոց յաղթութեան համար։

Խենթին աչքերէն ուրախութեան կայծակներ թըռան։ Ան հասած էր իր նպատակին և ամբոխը արդէն հասկցած էր։

Սուտ է, ան դաւաճան չէ, լսուեցաւ յանկարծ ամբոխին մէջէն ձայն մը։ Ամէնքը այդ կողմը նայեցան և տեսան բարձրահասակ մարդ մը, որ իր փոքրիկ աչքերը դէպի Խենթն էր դարձուցած և ուշադրութեամբ մտիկ ըրած էր։

— Դուն ի՞նչ գիտես որ սուտ է կ'ըսես, պատասխանեց ծերունին անոր։

— Սուտ է, որովհետև դաւաճան մը երբ եկեղեցին դուռը համբուրէ, իսկոյն գետինը կը պատռուի և հողին տակ կ'անյայտանայ։

— Տղայ ես, բարեկամ, Աստուած իր դատաստանը այդպէս շուտ չի տեսներ, Ան դեռ ժամանակ կուտայ ապաշխարելու, պատասխանեց մէկը։

— Բայց ես չեմ հաւատար որ Վեստ Սարգիսը գէշ մարդ մը ըլլայ։



— Այո՛. ես չեմ հաւատար, ոչինչ չեմ տեսած, բայց շատ բան լսեր եմ։ Կ'ըսեն որ ան մինչև անգամ կ'ուզէ թագաւոր ըլլալ և այդ պատճառաւ ուզեր է Գագիկ Բագրատունին սպաննել տալ։

— Ո՛չ, այդ անկարելի է։ Ով կը համարձակուի անոր մէկ մազին դպչիլ։ Մենք կը խորտակենք Վեստ Սարգիսի պալատը և զինքն ալ կտոր կտոր կ'ընենք։

Ամբոխին մէջ վիճաբանութիւնը հետզհետէ տաք կերպարանք կ'առանար։ Խենթը կայծը ձգած էր ու կըռթընած իր փայտին անձայն կը տեսնէր թէ ինչպէս այդ կայծը հետզհետէ կը բորբոքէր ու կաճէր։

— Բարեկամներ, պարապ խօսք չուզեր, ըսաւ նոյն ծերունին, մենք աւելի լաւ կ'ընենք, որ շուտով Գագիկը թագաւոր օծել տանք։

— Բայց ան դեռ փոքր է։

— Ի՞նչ կ'ըլլայ փոքր ըլլալով, կօգտէ որ ան քաջ է և խելացի է։

— Որո՞ն դիմենք, տղաք։

— Վահրամ իշխանին, մեր անգլին Վահրամ իշխանէն խնդրենք, որ մեզի և մեր խնդիրքը ոտքի տակ չի ձգեր, ան կը սիրէ։

— Կեցցէ Գագիկ թագաւորը, ապրի Վահրամ իշխանը, գոռաց ամբոխը և անոր ձայնին արձագանք տըւին Անիի շքեղ պալատներն ու շինութիւնները։

— Երթանք, երթանք դէպի Վահրամ իշխանը, կանչեց ամբոխէն ձայն մը, պէտք չէ ուշացնել, երկաթը տաք տաք կը ծեծեն։

— Երթանք, երթանք, պոռաց ամբոխը և շարժեցաւ դէպի իշխան Վահրամ Պահլաւունիի պալատը, ճամբան շարունակ գոռալով։

— Կեցցէ Գագիկ թագաւորը, ապրի Վահրամ իշխանը։

Խենթն էր որ ամբոխը կ'առաջնորդէր։

Ե.

# ՍԵՒ ՄԱՐԴԸ

Վեստ Սարգիսը արդէն լսած էր ամբոխին պոռալու ձայնը և սիրտը կը կսկծար։ Ամէն անգամ երբ ամբոխը «կեցցէ Գագիկ, ապրի Վահրամ» խօսքերը կ՚ըսէր, իր մարմինն ալ փուշ փուշ կ՚ըլլար և արիւնը կը սառէր երակներուն մէջ։ Բայց ան լուռ կը նայէր ամբոխին և վրէժխնդրութեամբ կը փայլէր իր մռայլ դէմքը։ Կը նայէր ամբոխին, կը նայէր, և իր փռունգքները սեղմելով կ՚սպառնար ինքնիրեն։

— Ո՛վ, ցնորամիտ ամբոխ, ուժեղ առիւծը, մռուցար, և քեզի համար Թագաւոր կը հռչակես լակոտ մը, որ կը սողար ծեր աղուէսի մը ոտքերուն տակ, բայց կուգայ ժամանակ մը, երբ դուն նոյն կեցցէները ինծի, ինծի՛ համար կը հնչեցնես և կը սողաս ոտքերուս տակ ինչպէս Թոյլ, անզօր մրջիւն մը։

Բայց լաւ միտքդ պահէ, որ այն ժամանակ քեզի փրկութիւն չկայ և Վեստ Սարգիսը, Հայաստանի օծեալ Թագաւորը անիծեալ անեցիներուն ոսկորներուն վրայ միայն պիտի Թագաւորէ, այն ժամանակ միայն հոգիս կը հանգստանայ և կը մոռնայ այն վէրքերը, որ հիմակ կը հասցնէք սրտիս։ Երբ տեսնեմ որ այդ ամբոխը սողալով դէպի ինծի կուգայ ոտքերուս կիյնայ, այն ժամանակ ոտքերուս տակ կոխկրտելով միայն կառնեմ վրէժխնդրութեանս ծարաւը...։ Օ՛, կուգայ այդ ժամը, երբ ես այդ գարշելի ամբոխին արիւնաթաթաւ դիակները կը կոխկրտեմ, և իմ Թագաւորութեանս գահը անոնց ոսկորներով կը կանգնեմ։ Վնաս չկայ, յոյներուն մէկ փոքր բանակը ջարդուեցաւ, բայց Յունաս-



տանը չկործանեցաւ։ Այնտեղ շատ լէգէոններ կան և այդ լէգէոնները գունդ գունդ Հայաստանի վրայ կ՚արշաւեն, իսկ եթէ ատոնք ալ չօգտեն, Թաթարաց գնդերը կը գրգռեմ իմ խորամանկութեանս ուժով և խաբէութեանս բոլոր հնարքներով, մինչև որ ինձ յաջողուի Հայաստանի գահը բարձրանալ կամ կործանել զայն։ Երկու ճամբայ միայն ընտրած եմ — կամ պիտի կործանուի Հայաստանը և ամայի անապատ դառնայ և կամ ես պիտի ժառանգեմ այդ գահը, իսկ նպատակիս հասնելու համար չեմ խնայեր ոչ մէկ միջոց, ո՛չ հարազատիս արցունքը, ո՛չ հայրենիքիս սէրը և ո՛չ Աստուած։ Թոյն եւ մահ պիտի սփռեմ Հայաստանի մէկ ծայրէն միւսը եւ աւերակներու ու մոխիրի կոյտեր պիտի դարձնեմ չէն քաղաքներն ու գիւղերը...։ Ահա թէ ինչ է կը ցանկայ Վեստ Սարգիսը։

Եւ Վեստ Սարգիս սկսաւ պղտոր հայեացքով նայիլ ամբոխին, որ ծովու ալիքի նման կ՚ալեկոծէր եւ կըյառաջանար դէպի Վահրամ Պահլաւունիի շքեղ պալատը։

Ան տեսաւ մինչեւ անգամ թէ ինչպէս դուրս եկաւ ամբոխին առջեւ ծերունի Վահամը եւ ինչեր ըսաւ ամբոխին. իսկ ամբոխը ինչպէս միայն կրկին հնչեցուց իր ուրախութեան ձայնը եւ շուտով ցրուեցաւ Անիի փողոցներուն մէջ։

— Ի՞նչ ըսաւ ծերունի աղուէսը, կ՚երեւայ անոնց խոստացաւ թէ շուտով Հայաստանի թափուր գահին վրայ կը բարձրանայ մանուկ Գագի՛կը... հա... հա... հա... խենթ Վահրամ, մի՞թէ չգիտես, որ Հայաստանի գահը հիմա պարապ չէ, այլ կը գտնուի «սեւ մարդուն» երկաթէ ճիրաններուն մէջ, որուն ձեռքէն ոչ ոք, ո՛չ Գագիկ, ո՛չ Վահրամ եւ ոչ Աստուած չեն կարող խլել...

Վեստ Սարգիսի խօսքերը ընդհատուեցան, եւ նա

յեցաւ եւ տեսաւ իր սիրելը Եղօն, որ քրտնած, շունչը հազիւ ետ բերելով ըսաւ։

— Իշխան, գործերնիս հետզհետէ դէպի՛ դէշ կը յառաջանայ։

— Ի՞նչ կայ, Եղօ, ի՞նչ է, պատահած հարցուց Վեստ Սարգիսը, իբր թէ ոչինչ տեղեկութիւն չ'ունէր։

— Տէ՛ր, ամբոխը Գագիկին կեցցէ կը պոռայ և դիմելով Վահրամ իշխանին կը խնդրէ շուտով Գագիկին Անի բերել և բազմեցնել թագաւորութեան գահին վրայ։

— Յետո՞յ, ինչ պատասխանեց Վահրամ իշխանը։

— Ան խոստացաւ շատ շուտով այդ բանը գլուխ բերել, առարկելով թէ ինքն ալ նոյն կարծիքէն է, որովհետեւ Հայաստանը կը տանջուի «Սեւ Մարդուն» երկաթէ ճիրաններուն մէջ։

— Ինչպէս, ան համարձակեցա՞ւ յայտնի կերպով դէմս խօսել։

— Այո՛, տէր, Սեւ Մարդ ըսելով քեզ կ'ակնարկէր և ամբոխն ալ կարծես համամիտ էր անոր։ Կայծ մը, փոքրիկ կայծ մը պէտք էր որ ամբոխը բորբոքուէր ձեզ դէմ։ Այդ ժամանակ միայն իր տրտունջը յայտնելով բաւականացաւ և ցրուեցաւ, բայց վախ կայ, որ միւս անգամ այդպէս թեթեւ չ'անցնի։

— Այդ ամբոխը չի համարձակիր շշունչ մը հանել իսկ եթէ յանդգնի, — ես կը խեղդեմ իմ ճիրաններուս մէջ։ Բայց այդ ձգենք, Եղօ, ըսէ ինծի, ո՞ւր են պահած Գագիկը։ Պէտք է մինչեւ Յոյներուն Անի մտնելը զայն ալ զրկենք իր պապերուն մօտ։ Սուրը չյաջողեցաւ, հիմակ կարելի է թոյն գործածել։

— Ատ այժմ ինձ անյա՛յտ է, տէր, ու սատանան միայն գիտէ թէ ո՛ւր են պահած, ըսաւ Եղօն։

— Լաւ, մենք շուտով կը գտնենք։ Լուսիկին բեր-



ղէն ամէն ինչ կարելի է իմանալ, հետեւէ ինծի, ըսաւ Եղոյին, և անոր հետ միասին գացին իր պալատին ներքին մասերէն մէկը, ուր հոն, խոնաւ, մութ պատերու մէջ փակուած էր Լուսիկը։

Ան պառկած էր յարդին վրայ լուռ, անձայն, որ կարծես կենդանութեան նշոյլ չունենար վրան։

Եղօն ջահով լուսաւորեց անոր գունատ, մեռելային դէմքը։

— Ան կարծես քնացած է, ըսաւ Եղօն մօտեցնելով ջահը Լուսիկին տժգոյն դէմքին։

— Եթէ պառկած է, պէտք է արթնցնել, ըսաւ խրոխտ ձայնով մը Վեստ Սարգիս։

— Է՛յ, օրիորդ, վեր ելիր, իշխանը քեզի հետ կ'ուզէ խօսիլ, ըսաւ Եղօն, հրելով օրիորդը։

Լուսիկ սարսափահար վեր թռաւ իր յարդէ անկողնէն և վայրկենաբար չուրջը նայեցաւ։ Խե՛ղճը, երկար ժամանակ անքուն մնալէն յետոյ նոր քնացած էր, նոր փակած էր յոգնած արտասուալից աչքերը և ընկղմած երազներու մէջ։ Սոսկալի էին այդ երազները երբ արթնցուց զինք Եղօն։

— Ա՜հ, հա՛յր, մի՞թէ դուն ես, բայց ինչու քու վրայէդ կը կաթկթէ արիւնը, այդ ի՞նչ է, ես կը սարսափիմ ըսաւ Լուսիկ սարսափահար Վեստ Սարգիսի դէմքը դիտելով։

— Ինքզինքիդ եկուր, օրիորդ, հայրդ չէ դիմացդ այլ իշխան Վեստ Սարգիսը։ Հայրդ շատոնց ոգիներու աշխարհն է գացած։ Զառանցանքներով մ'ապրիր այլ լսէ թէ ինչ կը հարցնեմ քեզի և շիտակ պատասխանէ։

Լուսիկ նայեցաւ իր խօսակցին, նայեցաւ և յիշեց դառն իրողութիւնը։ Զգաց որ ինքը բանտարկուած է, անօգնական, անտէր իր բանտին մէջ, ուր զինք կը

տանջէինդահիճները։ Բայց ինքզինքը բնաւ չը կորսնցուց, հեռու վանեց թուլութեան հոգին, խրոխտ կերպարանք մ'առնելով հարցուց.

— Ի՞նչ կը պահանջէ ինձմէ Հայաստանի գահին խընամակալը։ Վեստ Սարգիսի դէմքը աւելի խոժոռեցաւ։ Ան զգաց, որ օրիորդը զինք կը հեգնէր և կը ծիծաղէր խնամակալ բառին վրայ։

— Այս վայրկեանիս կիմանար թէ Հայաստանի գահին խնամակալը քեզմէ ի՛նչ կուզէ իմանալ։ Ըսէ՛ խենթ աղջիկ, թէ դուն և հայրդ ի՞նչ յարաբերութեան մէջ էիք իրարու հետ և ի՞նչ կը նիւթէիք ինծի դէմ։

— Միայն այդքա՞ն, իշխան, ալ ուրիշ բան չե՞ս պահանջեր, ըսաւ Լուսիկ, և այնպիսի արհամարհական հայեացք մը ձգեց Վեստ Սարգիսի վրայ, որ վերջինիս համբերութիւնը կը հատնէր։

— Բացի ատկէ, չարունակեց Վեստ Սարգիսը, դուն ինձ պիտի յայտնես թէ ո՞ւր է պահուըտած Գագիկ Բագրատունին, Հայաստանի գահին ժառանգորդը։ Եթէ դուն այդ երկու հարցումիս ուղիղ պատասխան մը տաս, այն ժամանակ դուն այս խոնաւ բանտէն կ'ազատուիս և առժամանակ ապահով տեղ մը փոխադրուելէ յետոյ ազատութիւնդ կ'ստանաս։

— Իշխան, զուր տեղ նեղութիւն կը կրես այդ բանին համար, ինձ այցելելով զուր կ'աշխատիս քու և հոգիդ ներշնչել իմ մէջս և աղտոտել իմ մաքուր հոգիս։ Ինծի ազատութիւն կը խոստանաս, որ ես հայրենիքիս ազատութիւնը քու ձեռքդ մատնեմ, որ ես գաղտնիքները քեզի յայտնեմ և օրինական թագաւորին բաղդը քու անգութ ճիրաններուդ մէջ ձգե՛մ, սակայն իմացիր, իմ հոգիս սեւ չէ, ինչպէս քուկդ։ Ես կը տանջուիմ, կը չարչարուիմ, բայց հայրենիքս չեմ մատներ, չեմ դաւաճաներ, ինչպէս դուն։



— Լսէ՛, անզգամ աղջիկ, թէ չէ քեզի կը սորվեցընեմ թէ որու հետ գործ ունիս։

— Ես գիտեմ այդ, իշխա՛ն։

— Ի՞նչ գիտես։

— Որ ստոր դաւաճանի մը հետ գործ ունիմ, որ զուրկ է գութէ և խղճէ...

— Ես լեզուդ կը կտրեմ, ըսաւ Վեստ Սարգիսը գունատուած և սուրը պատեանէն հանեց։ Այդ ժամանակ Եղօն մէջ մտաւ։

— Իշխան, ինծի բաշխէ անոր կեանքը և թոյլ տուր ինծի խոստովանեցնել։ Ես գիտեմ ատոր լեզուն։

Վեստ Սարգիս սուրը պատեանը դրաւ և դուրս ելաւ Եղօյին հետ։ Լուսիկ մինակ մնաց։

## Ջ.

## ՔԱՄԻԻ ՀԱՌԱՉԱՆՔ

Մինչ այս, մինչ այն վրայ, հասաւ Հայաստանի ցուրտ և սարսռալից ձմեռը։

Դաշտերն ու ձորերը ամայացան և շարժողութիւնը դադրեցաւ։ Փչեցին ցուրտ քամիները և ամայի դաշտերըն ու ձորերը սկսան իրենց վայրենի պարը պարել և տաղտկալի մեղեդին երգել։

Անին և իր շրջակայքն ալ հագան վերարկուն, և ծածկուեցան թանձր ձիւնով։ Կարծես թէ մեռած էր բընութիւնը, կարծես թէ Անիի վրայ միայն ցուրտ քամին կ'իշխէր և ձմրան մեռելութիւնը, որ անարգել կը բաղխէր հարուստին ու աղքատին, ռամկին և իշխանին դուռը, և յետոյ խելագարի մը նման, դուրս թռչելով կը կորսուէր, կը հեռանար Անիէն և կ'անյայտանար.

ով գիտէ ո՛ւր, ով գիտէ որ լերան կամ ձորին ծոցը....։ Ի՞նչու, ի՞նչ կը տեսնէր այն դուռներու ետեւէն, այդպէս յուզուած, այդպէս կ'ալեկոծէր։ Մի՞թէ չէր տեսնէր այն տեսարանները, ուր կեանքը կ'եռար և ուր մայրը իր զաւկին օրօր կ'ըսէր, ծերունի մեծ հայրն ալ իր նախնեաց քաջագործութիւնը կը պատմէր իր չուրջը ժողովուած կարմրերես հարսներուն, սիրուն աղջիկներուն և լայնաթիկունք պատանիներուն, որոնց դէմքերը կը փայլէին նոյնքան ոգեւորութենէ և կը ցանկային որ անվերջածայր չարունակուի մեծ հօր պատմածները, ու կը սիրէին միշտ լսել նախնեաց քաջագործութիւնները և որոնց հետ իրենք ալ ուրախանան....։ Եւ քամին միշտ կը փչէր, ականջ կը դնէր և չուտ չուտ կը հեռանար։ Դարձեալ կուգար, դարձեալ կը հեռանար։ Ան կը տեսնէր ամեն բան, կիմանար ամէն գաղտնիք, կը լսէր ամէն խօսակցութիւն, չչուկ, ծիծաղ ու խնդութիւն, հառաչանք և հեծկլտանք, և յետոյ ինքն ալ ճիչ մը արձակելով կ'անյայտանար....։

Եւ քամին՝ այդ ազատ դաշտերու ազատ որդին կը զարմանար թէ, ինչպէս տեղ մը կուլան և ուրիշ տեղ մ'ալ կ'ուրախանան ու մտածումներու մէջ ինչո՞ւ կը գալարին. իսկ ուրիշ տեղ մ'ալ ախ ու վիշտ կ'ընեն։ Եւ ի՞նչու անեցիներուն մեծ մասին դէմքերէն չ'երեւար ժպիտի ոչ մէկ նշան. այլ յուսահատութեան տեսակ մը վհատութիւն պատած է անոնց սիրտը։ Ի՞նչու, ի՞նչ պատահած էր, մի՞թէ ձմռան ներկայութենէն կը սոսկան։ Բայց մի՞թէ անոնք չեն գիտեր, որ չուտով կ'անցնի այս տաղտկալի ձմեռը և կը բացուի սիրուն ու զուարթ գարունը... բայց չէ, զանոնք վհատեցնող և տխրեցնող ուրիշ բան մը կայ։ Կարծես սեւ թաթ մը կը ճնշէր բոլոր անեցիներու սրտերը և յուսահատութեան մէջ կը ձգէր զանոնք, կարծես կ'զգային թէ բան մը կը պատրաստուէր



խեղճ Անիի գլխուն։ «Արդար չէ, Տէր, քու սուրբ դատաստանդ»։ Արդար չէ, կարծես քամին կը մրմնջար ամէն անգամ և հառաչելով կ'անյայտանար դէպի վեր...։

Բայց Անեցիները քամիին հառաչանքէն աւելի յուսաբեկուած, աւելի սաստիկ կ'զգային սեւ մարդուն ահռելի չնչառութիւնը, կը դողային իսկ այդ Սեւ Մարդը չատ զօրաւոր, չատ ուժով էր և ոչ մէկը չէր համարձակէր իր դէմը կենալ, հակառակիլ։

Ատիկա Հայոց թագաւորութեան գահին խնամակալ Վեստ Սարգիսն էր։

Եւ Վեստ Սարգիս դեռ չէր քնացած։

Խենթի մը պէս գիշեր ցերեկ կը մտածէր թէ՝ ի՞նչպէս այդ գահին տիրանայ և ինքը ըլլայ հայոց թագաւոր, որ արդէն կ'երեւակայէր բազմած Բագրատունեաց գահին վրայ և փայլուն թագը իր դաւաճան գլուխը զարդարած։

Սնոտի՛ երազ։

Փառասիրութեան տենչանքը կուրցուցեր էր զինքը, աչքին բան մը չէր երեւար իր սրտին մէջ ազնիւ զգացում մը բնաւ չի չարժիր։ Ան կուզէ մոխիր և աւերակ դարձնել չէն Հայաստանը, մա՛հ եւ սուր սփռել չորս դին եւ լացի ու կոծի մէջէն անցնելով միայն կը ցանկար գա՛ը բազմիլ։

Ահա այս էր Սեւ Մարդ կոչուող դաւաճան Վեստ Սարգիսին փափագը, ամբողջ սրտին ցանկութիւնը իր ամբողջ էութիւնը, եւ ցանկութեան հասնելու համար ամէն ստորնութիւն յանձն կառնէր և իր հայրենիքը կը դաւաճանէր։

— Ի՞նչու։

— Մի միայն փառքի, սնոտի եւ անձուկ փառքին համար։

— Իսկ իր անունը, պատիւը...։

— Դաւաճանը աթոռ վրայ չէր մտածեր, կ'օգտէր միայն իր նպատակներուն հասնիլ:

Մինակ յարմար միջոցը կը նկատէր Հայաստանը ջարդուած, թալլուած, ոչնչացած, մոխիր և աւերակ տեսնել և Գագիկ՝ օրինական ժառանգը մէջտեղէն վերցնել, իր հակառակորդները թոյնով ոչնչացնել:

Յունաց առաջին բանակին կոտորածէն ի վեր ա՛լ բնաւ հանգիստ չ'ունէր Վեստ Սարգիս, իբրեւ խնամակալ ամբողջ բերդերը ամրացուց բոլոր գանձը ձեռքին մէջ առաւ եւ ազաւնիի տեսքովն եւ իր ներսինէն օձի կերպարանքով խաբեց բոլոր իշխանները եւ զանոնք Գագիկ Բագրատունիին եւ Վահրամ իշխանին դէմ գրգռեց: Իշխաններէն շատերը Վեստ Սարգիսի շռայլած ոսկիներէն կուրցած, ոմանք ալ վախնալով անոր ուժէն, միաձայն որոշեցին կամ տապալել գահը, եւ կամ Վեստ Սարգիսը բազմեցնել այդ գահին վրայ: Այսպէս օրէ օր Վեստ Սարգիս կը զօրանար եւ իր հակառակ կուսակցութիւնը Վահրամեանք, որոնք գահին իրական իրաւունքները կը պաշտպանէին, հետզհետէ թուլցած եւ մինակ կ'զգային ինքզինքնին: Վահրամեանք տեսնելով այս բոլորը եւ կ'զգային Վեստ Սարգիսի լարած մեքենայութիւնները, ուստի կը պատրաստուէին ոգի ի բռին կռուիլ եւ գահը դաւաճաններուն ձեռքը չը ձգել:

Ամբոխը միայն դեռ ձայն չէր հաներ, ան կը տեսնէր ամէն բան, բայց լուռ կը կենար: Այս լռութիւնը կը նմանէր խաղաղ ծովու մը որ ահեղ փոթորիկի մը կը պատրաստուի, բայց ե՞րբ պիտի յուզուի, ե՞րբ պիտի փրփրի, ատիկա Աստուած միայն գիտէ...:

Վեստ Սարգիս կը տեսնէր այդ բոլորը, բայց կը հեգնէր, թէեւ Հայաստանի ոյժն ու գահը իր ձեռքն էր, բայց ան վստահ չէր այդ ուժին վրայ՝ ինք կ'զգար որ օտարին ոյժին ալ պէտք ունէր, եւ ատոր համար



գիշեր ցերեկ Յունաց կայսեր գրգռելով որ նորէն իր ուժեղ բանակով արշաւէ Հայաստան եւ կը խոստանար ինքն ալ աջակցիլ Յունաց բանակին Անին գրաւելու:

Յունաց մէջ ոգեւորութիւն մը կը տիրէր, բանակնին կը զօրացնէին եւ կը պատրաստուէին վերջին հարուած մ'ալ տալ խեղճ Հայաստանին: Իսկ անդին Վեստ Սարգիս անհամբեր կ'սպասէր Յունական լեգէոններուն գալստեան իր աջակցութիւնը նուիրելու անոնց:

Ե.

## ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Ձմեռն ալ անցաւ հալեցան ձիւները եւ եկաւ գեղածիծաղ գարունը, դաշտերը գոյնզգոյն ծաղիկներով զարդարուեցան: Արտոյտը իր գեղեցիկ երգը սկսաւ հընչեցնել. պլպուլը իր մեղեդիները երգել, իսկ ոչխարները ու գառնուկներն ալ մայունը ձգել: Ուրախ էր բնութիւնը, բայց ուրախ չէր Հայաստանը:

Վեստ Սարգիսի դրդումով Յունաց բանակը արդէն Հայաստանի արեւմտեան սահմանները անցած էին, եւ քանի կը մօտենային Անիին, ճամբուն վրայ գտնուած քաղաքներն ու գիւղերը հուրի եւ սուրի կը մատնէին, ամէն ինչ ոչնչացնելով:

Միւս կողմէն Թաթարներն ալ արեւելեան կողմէն, իրենց սուրերն ու նիզակները կը սրէին, անոնք ալ անտէր պատառ մը գտած էին եւ յարմար ժամանակ կը սպասէին յարձակիլ Հայաստանի վրայ. իսկ յոյներու դրդմամբ Ալուանից Դաւիթ Անհող թագաւորն ալ Հայաստանի հիւսիսային մասը արշաւած էր:

Հայաստան տագնապի մէջ էր, բայց միւս կողմէ Վահրամ իշխանը չ'էր քնացած: Ան արթուն կը հսկէր

և երբ մէկ կողմէն վտանգը տեսնէր, անմիջապէս զունդեր կազմելով կը յարձակէր այն կողմէն թշնամիներուն վրայ։

Երբ Յոյները առաջին անգամ ջարդուեցան, Վահրամ իշխանը գիտէր արդէն թէ՛ ատո՛վ չը վերջանար. ատիկա առաջին քայլն էր, որ յետոյ աւելի սոսկալի պիտի ըլլար. ատոր համար պատրաստութիւնները առաջուընէ կը տեսնէր։ Եւ իրօք չէր սխալած, տեսաւ որ Յունաց բանակը այս անգամ աւելի ուժով էր, որոնք արդէն իսկ Դերջան, Մանանաղ, և Պաղին գաւառները մտածէին և կը պատրաստուէին Բասեան գաւառըանցնիլ և այնտեղէն Շիրակ։

Հարպիկ իշխանն ու Ստեփանիկ ձմեռը Անի անցուցին, իսկ գարնան երբ իմացան թէ՛ Յունաց բանակը արդէն իսկ Պաղին հասած է և իր հօրենական ամրոցները պաշարած, կ'սպառնայ ոչնչացնել, անոնք Վահրամ իշխանէն հրաման ստացան փոքրիկ գնդի մը գլուխը անցած, սլանալ դէպի Պաղին. ուր թշնամին արդէն սկսած էր աւերումի։

Ճիշդ այն ատեն երբ Հարպիկն ու Ստեփանիկ Անիէն ելան, Հարպիկին հայրը Հաբել իշխան՝ իր բերդին աշտարակներէն մէկուն գլուխը բարձրացած հօրիզոնը կը դիտէր, իր քովը այս անգամ միայն երկու զաւակները կեցած էին. Դաւիթը՝ որուն դեռ նոր պեխերը բուսած էին և Կոստանդինը, որուն աչքերը վրէժխնդրութեամբ կը փայլատակէր. Հաբել այս անգամ խիստ տխուր եւ մտախոհ էր, իր չորս զաւկէն միայն երկուքը մնացած էին մօտը, իսկ միւս երկուքին մասին դեռ տեղեկութիւն մը չ'ունէր. ո՞ւր էին եւ ի՞նչ կ'ընէին արդեօք։ Երկար ժամանակ դիտեց հօրիզոնը դէպի այն ճամբան ուրտեղէն Հարպիկ պիտի երեւար, բայց Ան չկար ու չկար։ Ճամբան մէկը չ'էր երեւար։



— Դաւի՛թ, եղբայրդ ուշացա՛ւ, լուր մ'ալ չը ղրկեց որ իմանայինք թէ հայոց գործերը ի՞նչ վիճակի մէջ են, ըսաւ Հաբել իշխան իր զաւկին։

— Այս սոսկալի ձմռան կարելի չէ՛ լուր մը ղրկել, հա՛յր, բայց Հարպիկը ուր որ է մէջտեղ կ'ելլէ, ճամբաները բացուած են։

— Այո՛, ես կը հաւատամ որ մէջտեղ կ'ելլէ ուր որ է, թշնամիի ձեռք չ'ընկնիր, բայց ինձ անհանգիստ ընողը Վեստ Սարգիսն է, արդեօք ի՞նչ եղաւ իր դաւաճանութիւնը։ Թլպաղտոյ բերդին Թորոսիկ իշխանն ալ իրեն հետ միացած է որպէս զի երկուքը միասին աշխատելով մեր բերդերը ոչնչացնեն։

— Այո՛, հայր, դեռ քանի մ'օր առաջ Թորոսիկը իր գնդով Թլպաղտոյ բերդէն դուրս ելաւ։

— Արդեօք ո՞ւր գնաց։

— Կ'ըսեն թէ՛ Յունաց բանակին հետ միանալու, անոնք նորէն մէջտեղ ելեր և ամէն կողմ կ'աւերեն։

— Վա՜յ, անիծեալ դաւաճա՛ն, ըսաւ դառնութեամբ Հաբել, և լռութենէ մը վերջ շարունակեց։

— Դաւիթ, բերդերը ամրացնել տուր, և մերինները կարգի դիր. Թորոսիկ իշխանը ամենէն առաջ մեր վրայ կը յարձակի. իսկ մենք չը պիտի կրնանք անոնց դիմադրել, որովհետեւ պէտք եղածին չափ մարդ չ'ունինք։ Ա՜խ, եթէ ղրկած գունդս Հարպիկի հետ միասին ետ դառնային, այն ժամանակ բնաւ վախ չ'ունէինք, եթէ կ'ուզէր թող Յունաց բանակն ալ միասին բերէր։

— Բայց հա՛յր նայեցէք, հօրիզոնին վրայ փոշիի ամպեր կ'երեւան, ըսաւ Դաւիթ, մատով դէպի հօրիզոնը ցոյց տալով, և իրաւ ալ փոշիի ամպեր և փայլուն կէտեր կ'երեւային։

— Ահա կ'ուգան զաւակս, վերջապէս Հաբել գործ պիտի ունենայ անոնց հետ, ըսաւ հեգնօրէն Հաբել և

շեշտակի դէպի այն կէտը նայեցաւ, որ փոշիին մէջէն ձիաւոր զօրքեր կ'ելլար, և որոնց զէնքերը արեւին ճառագայթին տակ կը շողային։

— Արդեօք Հարպի՞կն է որ կ'ուգայ, ըսաւ Կոստանդին էն փոքր զաւակը, երկիւղածութեամբ հօրը մօտենալով։

— Ո՛չ զաւակս, Յունաց բանակն է որ մեր վրայ կուգայ կռուելու։ Մենք պէտք է կռուինք, թէ՛ դաւաճանին և թէ՛ Յունաց զօրքերուն դէմ։

— Գուշակութիւնս կատարուեցաւ, Թորոսիկ առաջին հարուածը մեզի կուղղէ, ըսաւ Հաբել և յետոյ միջակ զաւկին դառնալով։

— Զաւա՛կս, զէնքերս և զրահս ինծի տուր, և հրամայէ փողը հնչեցնել, թող իմանան որ Հաբելին երակներուն մէջ վախկոտի արիւն չը հոսիր, մինչեւ իսկ եթէ հսկայ գունդ մ'ալ գայ իր դէմ։

— Հայրի՛կ, զիս ալ տար կռուելու, ե՛ս ալ կը փափաքիմ թշնամիի քանի մը գլուխ թռցնել։

Հաբել մօտեցաւ։

— Ո՛չ, զաւա՛կս, դուն դեռ անփորձ ես և տղայ։

— Հայրի՛կ, արդեօք ես չե՞մ, որ արծիւը օդին մէջէն վար գլորեցի։

— Այո՛, ես գիտեմ որ քաջ ես, քեզի խրատունք կուտամ աշտարակէն կռուիլ, իսկ ինծի հետ միասին թող չեմ տար, ըսաւ և շուտով հեռացաւ։ Իսկ Կոստանդին դժգոհ սրտով իր հօր ետեւէն կը նայէր աշտարակէն, կը տեսնէր Յունաց բանակը որ հետզհետէ կը մօտենար իրենց բերդին։

Այն ժամանակ լսուեցաւ փողերուն ձայնը թէ՛ բերդին ներսէն և թէ՛ դրսէն, Կոստանդինի մարմինը սարսռաց, առանց իր հօր անսալու տուն գնաց, հագաւ զրահը, կապեց զէնքերը։



Յունաց զօրքը քիչ վերջ շրջապատած էր արդէն Հաբելի ամրոցը և իր բանակին մէջէն ասպատակներ սփռած էր շրջակայ բոլոր գիւղերը։

Գիշերը շուտ հասաւ, Հաբել տեսաւ որ շրջակայքը կը լուսաւորուէր կրակէ փունջերով, և սիրտը սկսաւ կսկծալ տեսնելով թէ ի՛նչպէս իր շէն շէն գիւղերը կ'աւերէին։ Իսկ այն կողմը, ուր Թորոսիկ իշխանին Թլպաղտոյ ամրոցը կը գտնուէր, մութի մէջ էր և հանգիստ կ'երեւար, յայտնի էր թէ՛ Յոյները Թորոսիկ իշխանին միջոցաւ կ'առաջնորդուէին և անոր համար անոր գիւղերը չէին կրակի տար։

— Օ՛, սուտ, վատ դաւաճան, դուն հայ գիւղերը կը ոչնչացնէս, միմիայն սիրտս վիրաւորելու համար, բայց գիտցիր որ արժանաւոր հատուցումը շատ շուտով պիտի ստանաս, ըսաւ Հաբել և բարկութենէն ակռաները կճռտացին։

Քիչ քիչ անոր շուրջը զինուած մարդիկ կը հաւաքուէին, կ'երեւար որ Հաբել իշխան մտադիր էր գիշերային յարձակում մը գործելու, օգտուելով Յունաց յոգնութենէն, որոնք չպիտի կրնային դիմադրել յոգնած վիճակի մէջ, մինչեւ որ չը հանգստանային։

Երբ մութը կոխեց և ամէն կողմ լռութիւնը պատեց, Հաբել իշխանը քանի մը լրտեսներ ղրկեց, Յունաց բանակը աչքէ անցնելու։ Իսկ ինք անհամբերութենէն աշտարակին վրայ սկսաւ պտըտիլ։

Բաւական երկար մը ժամանակ անցաւ, երբ լրտեսները հեռուէն երեւցին և մօտեցան Հաբել իշխանին։

— Է՛, տեսնենք ի՛նչպէս գտաք, հարցուց։

— Տէ՛ր, կ'երեւայ որ յոյները չեն քնացած, Թորոսիկ իշխանը լաւ դաս մը տուած կերեւայ որ, ամէն գաղտնի անցք բռնուած է յոյներէն, և յունաց էն ու-

ժով պահապաններով։ Կարծես բան մը կը մտածեն մեզի համար, ըսին լրտեսները և գլուխնին խոնարհեցուցին։

— Ատկէ վնաս չ'ըլլար, թէեւ մենք ծուղակի մէջ բռնուած ենք, բայց Թորոսիկ իշխանը լաւ թող հասկընայ, որ Հաբել իշխան յաղթուած չէ՛, և թէ՝ երկար ժամանակ թէ, իր դէմ և թէ Յունաց դէմ կը դիմադրէ։

— Բայց, Տէ՛ր, մեր ամրոցին հիւսիսային անցքը բոլորովին ազատ է պահապաններէն, թէեւ այն կողմի ճամբաները խիստ վտանգաւոր են և գիշերով անցնիլը անկարելի է։

— Ի՞նչ, միթէ իմ քաջերս կը վախնա՞ն դէպի անդունդը գահավիժել, հարցուց Հաբել իշխանը և դէմքը փայլեցաւ ուրախութենէն։ Ա՛հ, փոքրիկ կէտ մը գտած էր, որ տեղէն կարող պիտի ըլլար գիշերային յարձակումով մը Յունաց բանակին վրայ յարձակիլ։

— Ո՛չ, Տէ՛ր, միթէ չէ՞ք գիտեր որ Հաբելին քաջերը մարդ չեն, այդ մէկ մէկ դեւեր, մինչեւ իսկ անոնք գիշերով ժայռերուն վրայէն մագլցելով կ'անցնին և կը հասնին թշնամիին։

— Լաւ, ուրեմն մենք ճիշդ այդ ճամբով կ'երթանք և փոքրիկ պտոյտ մը կ'ընենք Յունաց բանակին մէջ, ըսաւ Հաբել իշխանը, և նշան ըրաւ իր զինուած խումբին հետեւիլ իրեն, որուն թիւը մօտ 50ի կը հասնէր։

Խումբը անձայն հետեւեցաւ իշխանին և երբ մօտեցաւ այն պարիսպին, որուն տակ կը տարածուէր ահռելի անդունդը։ Հաբել այդ նեղ ճամբէն փորի վրայ սողալով առաջ անցաւ ու կատուի դիւրաշարժութեամբ մագլցելով մէկ ժայռէն միւսը, անցաւ ու մացառներու և թուփերու մէջէն կանգ առաւ բերդին պարիսպին տակ, ուր հետզհետէ հաւաքուեցան յետամնաց զօրքերն ալ։ Երբ բոլորն ալ իջան, Հաբել աչքէ անցուց իր հե-



տեւորդները և ապրիք տղաքս ըսելով՝ նշան ըրաւ առաջ անցնելու։

Յունաց բանակին մէջ խոր լռութիւն մը կը տիրէր, իսկ պահապանները անվրդով կը պտըտէին աջ ու ձախ։ Անոնք այնչափ վստահ էին իրենց ուժին վրայ որ, երբեք մտքերնուն չէին անցներ թէ Հաբելը խենդութիւն մը կընէ և իրենց վրայ կը յարձակի, բայց Հաբել խելացի էր, առանց աղմուկի խիզախօրէն սլացաւ թշնամիին վրայ և այնպիսի իրարանցում մը ձգեց բանակին մէջ որ, իրենց սոսկումէն չէին գիտեր թէ ի՞նչ ընել պէտք էր։ Յոյները կարծեցին թէ՝ մեծ բանակ մ'է որ կը յարձակի իրենց վրայ, առանց գիտնալու որ այս յարձակումը քանի մը տասնեակ քաջերու կողմէ տեղի կ'ունենար, մինչ այս մինչ այն, յոյները քնացած տեղերնուն ոտքի ելաւ, ուզեցին դիմադրել թշնամիին, բայց զարմանքի հանդիպեցան երբ նկատեցին թէ՝ իրենց մէջ թշնամի չկար, անյայտացե՞ր էր, ինչպէս որ անյայտ կերպով եկած էր։

Առաւօտը եղաւ, յոյները իրենց փողը հնչեցնելով, գունդերը կազմ ու պատրաստ վիճակի մէջ կը պատրաստուէին մօտենալ Հաբելի բերդին, որպէս զի ակընթարթի մէջ խորտակեն զանոնք և պատժեն իր տէրը։ Սակայն Հաբել և իր քաջերը կազմ ու պատրաստ կեցած էին աշտարակներուն վրայ և կը հեգնէին թշնամին ժպտելով։ Անոնք լաւ գիտէին թէ իրենց բերդը անառիկ է, և թէ թշնամին՝ իր զէնքերով չը պիտի կրնար բան մը ընել։ Բայց Յոյները յանկարծ յարձակեցան ուղղակի բերդին պատերուն վրայ սանդուղներ դնելով արագօրէն դէպի վեր կը բարձրանային, սակայն Հաբելին զօրքերը պարապ կեցած չէին, վեր բարձացող յոյնին գլխուն կ'իջեցնէին խոշոր քարի կտորներ և նետի հարուածներ, որոնք տեղն ու տեղը կ'սպաննէին թշնամին և վար կը գլորէին զանոնք։

Հայերը քաջութեամբ կը կռուէին, յոյները իրարու ետեւէ կ'սպաննուէին և ցած կը գլորուէին։

Յոյները երբ տեսան որ ալ ճար չկար և չը պիտի կրնային բերդը գրաւել այն ատեն նահանջեցին, որպէսզի յետոյ կարենան նոր ուժերով յարձակիլ բերդին վրայ, ու այդ փորձերը քանի մը անգամ ըրին, բայց անփորձ, օգուտ մը չունեցաւ, բացի իրենց ատամները կճռտացնելէ։

Երբ որ մութը կոխեց Թորոսիկ բերդին գաղտնի անցքը գրաւեց։ Յոյներն ալ յարձակեցան բերդին ճակտին վրայ. քաջ Հաբելը դեռ լուր չունէր թէ Թորոսիկ տեղեակ է գաղտնիքին։ Քաջութեամբ դիմադրեց յոյներուն, բայց քանի կը յաղթուէին յոյները այնչափ կը շատնար իրենց կռուողներուն թիւը։ Հաբել տեսաւ որ կռիւը տաք կերպարանք մը ստացաւ, թէ յոյները քանի ջարդուէին, յամառօրէն կ'սկսէին յարձակումը։

— Ի՞նչ պիտի ըլլայ այս կռուոյն վերջը, կը մտածէր Հաբել իշխան տեսնելով իր քաջերը, որոնք դեւերու պէս կը կռուէին, բայց քանի տեւէր կռիւը, նոյնքան կը թուլնային անոնք։

— Քա՛ջ եղէք, ընկերնե՛ր, մի՛ վհատիք, կը գոչէր և մէկ աշտարակէն միւսը կը թռչէր Հաբել։

Յանկարծ սոսկումով տեսաւ որ բերդը ներսէ՛ն ալ պաշարուած է թշնամիներով և որոնք իրենց սուրերը բացած իր քաջերուն վրայ կը սլանան։

— Է՜հ, է... մրմռաց Հաբել սրտին կսկիծէն, աչքերէն կատաղութեան կայծեր թռան, երբ տեսաւ ալ բան մնացած չէր ձեռքը, որպէս զի նոր ուժով մը դիմադրէ թշնամիին, հասկցաւ որ իր վախճանը մօտ է. վճռեց կենդանի չիյնալ թշնամիին ձեռքը։

— Պարիսպները թողուցէ՛ք և շուրջս հաւաքուեցէք քաջե՛րս, պոռաց Հաբել և սուրը մերկացնելով ինկաւ



թշնամիին վրայ որ արդէն նոյն պահուն, բերդին դռները շառաչելով բացին ներս խուժեցին. խումբ մը քաջ հայեր դէմ առ դէմ եկան Յոյներուն հետ, Հաբել իրեններով գազանի մը պէս կը կռուէր։ Յոյները արդէն քանի մը տեղէ բերդը կրակի տուած էին։ Երբ ամէն կողմէն բոցերով լուսաւորուեցաւ բերդը, այդ պահուն Հաբել նկատեց որ Թորոսիկ իշխանն ալ Յոյներուն մէջ է, կատաղութեամբ դէպի հոն ուղղուեցաւ և գոռաց.

— Թորոսի՛կ իշխան, թէեւ դուն դաւաճանութեամբ նպատակիդ հասար, բայց գիտցի՛ր որ պիտի մեռնիս։

Թորոսիկ նայեցաւ իր հակառակորդին և սարսափէն ետ ետ գնաց քանի մը քայլ. այդ միջոցին Հաբել տեսաւ որ ամէն կողմէն պաշարուած էր թշնամիներով, սուրի հարուածներ տեղացին իր վրայ. վերջին անգամ մ'ալ ինք սուրը ճօճելով յոյնի մը գլուխը թռցուց և ինկաւ։

Հաբել իշխան քաջի մը պէս հոգին փչեց...։

Թորոսիկ իշխանը տեսաւ և դէմքէն դիւական ժպիտ մը փայլեցաւ։ Ան իր մօտը վազեց և քաջի դիակին վրայ ոտքը դնելով մխեց իր սուրը անոր կուրծքը և դառնագին վրէժխնդրութեամբ մը ըսաւ.

— Սատկէ՛, աւազակ, հիմակ ես կրնամ հանգիստ ապրիլ։

Թորոսին իշխանին բերանը խօսքը սառած մնաց երբ ան աջ ու ձախ նայելով տեսաւ, որ յունաց և իր զօրքերը սարսափահար կը փախչին, բերդին մնացած քանի մը քաջերը կը հալածէին զիրենք։

Ի՞նչ պատահեցաւ, միթէ մերայինք կը վախնան այդ խումբ մը մարդիկներէն, բայց մի՞թէ անոնց իշխանին դիակը չէ՞ որ ոտքերուս տա՛կ է. ու Թորոսիկ իշխանը կասկածելով նորէն նայեցաւ իր ոտքերուն տակ փռուած դիակին և անոր կասկածը բոլորովին փարատեցաւ։

— Չէ՛, Հաբելի գլուխն է, մրմռաց ան և յետոյ դառնալով դէպի իր զինուորներէն մէկը հարցուց.

— Էյ, ի՞նչ խնձի նման կը փախչիք, ի՞նչ պատահեցաւ։

— Տէր, նայեցէ՛ք թշնամին մեզ կը մօտենայ փախէք այս տեղէն...։

— Ո՞վ է այդ նոր թշնամին...։

—Հարպլիկը, Հաբելի որդին, լեռներու առաջակը...։

Թորոսիկ իշխանը նայեցաւ այն կողմը և վախէն մընած սառած։

Ան տեսաւ թէ ինչպէս գունդ մը ջարդելով յոյները և իր զօրքերը կը մօտենար դէպի իրեն։

— Զարկէ՛ք, մի վախնաք, ահա Հաբելի գլուխը այս տեղ է, Հարպլիկն ալ կիյնայ, ըսաւ Թորոսիկ խըրախուսելով իւրայիններէն և կատաղութեամբ յարձակեցաւ նոր թշնամիներուն վրայ։

Բայց Թորոսիկը սարսափեցաւ, երբ տեսաւ որ իր մարդիկը հետզհետէ կը ջարդուէին և որ ինքը արդէն շրջապատուած է թշնամիներէն։ Կատղած առիւծի մը պէս սուրը քաշեց և ջախջախեց իրեն մօտեցող զինուորին գլուխը։ Զինուորը ինկաւ և արեան հեղեղով սրսկեց Թորոսիկի ոտքերը։ Հարազատի արիւնը կարծես կը բողոքէր Թորոսիկի անիրաւութեան դէմ, սակայն, երբ նորէն բարձրացուց սուրը, ձեռքը չ'իջաւ, այլ սոսկալի զօրութիւնը պատեց դէմքը և սարսռալից դողը ցնցեց իր մարմինը

Իր առջեւ նոյնպէս սուրը բարձրացուցած կանգնած էր իր հարազատ որդին Ստեփանիկը։

— Որդիս, ի՞նչ կ'ընես, մռնչեց Թորոսիկ։

— Դաւաճան պատրաստուէ մեռնելու, պոռաց Ստեփանիկ սուրը օրօրելով։

Որդին հօր դէ՞մ։



— Դաւաճանը չի կրնար հայր կոչուիլ, պատրաստուէ մեռնելու, կրկնեց Ստեփանիկ և հօր ու զաւկի սուրերը զարնուեցան իրար և կայծակներ հանեցին։

Անոնք կը կռուէին քանի մը վայրկեան բուռն, ահաւոր կռուով, մինչեւ որ երիտասարդ ոյժը գերա՛ըշռեց և Ստեփանիկի սուրը մխուեցաւ դաւաճանին կուրծքը։

Թորոսիկ իշխանը գետին գլորուեցաւ, և մարող աչքերով հազիւ լսելի ձայնով շշնջաց։

— Այդ ի՞նչ ըրիր որդիս, դուն սպաննեցիր հօրդ...

— Արժանի էիր, ըսաւ Ստեփանիկը և կոխկռտելով հօր դիակը, առաջ անցաւ...։

## Ը.

## ԱՆԻԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Մինչդեռ Հարպլիկ յունաց զօրքերը Պաղինի շրջակայքէն կը քշէր, Վահրամեանք ալ մեծ ջարդ մը տուին յունաց գլխաւոր բանակին և հեռու քշեցին Հայաստանի սահմաններէն։

Սակայն յոյները չը վհատեցան այդ անյաջողութենէն. կրկին մտան հայկական սահմանները. բայց կրկին ջարդուեցան։ Վերջապէս մեծ բանակ մ'ալ կազմելով, մօտաւորապէս 100,000 մարդէ բաղկացած, չորրորդ անգամ ըլլալով Հայաստան մտան և իրենց ճամբուն եղածը մոխիր և աւերակի կոյտեր դարձնելով, պաշարեցին Անի քաղաքը։

Անեցիք ցնցուեցան։ Խուլ դղրդիւմ մը ինկաւ ամբոխին մէջ, որ քանի գնաց սաստկացաւ, անոնք թագաւորութեան խնամակալը կը փնտռէին, իսկ անիկա

Անի չէր այն ժամանակ, երբ քաղաքը վտանգի մէջ էր, երբ անդին սահմանուած էր կործանելու այդ ահեղ բանակէն։

Ո՞ւր էր Սեւ Մարդը, ինչո՞ւ հեռացած էր, յայտնի չէր ատիկա ամբոխին, բայց ամբոխը լաւ կ'զգար Սեւ Մարդուն ըրած վստահութիւնը և լուռ կը սրտմտէր։

Անիի բարձր աշտարակներուն վրայ, երկու կարգի պարիսպներուն վրայ հայ պահապանները կը շրջէին և կը դիտէին անձայն։

Յունաց բանակը, կը տեսնէին անոնց բազմութիւնը, կը լսէին անոնց այհուչները և սպառնալիքները. ինչ կրնային ընել ափ մը հայ յունական լեգէոններուն դէմ։

Ահա, Անիի փողոցներէն ծերուկ մը կ'անցնի կուրծքին ծրար մը սեղմած, տխուր և մտազբաղ առաջ կերթայ, դէմքին վրայ դրոշմուած է ֆիզիքական տանջանքի խոշոր դրոշմը։ Անցաւ քանի մը ծուռ փողոցներ և մտեցաւ Անիի մայր եկեղեցիին և կանգ առաւ այնտեղ, ուր կանգնած էին խումբ մը մարդիկ։ Անոնցմէ մէկը ճանչնալով եկողը դարձաւ ու ըսաւ։

— Այդ ի՞նչ է գրկինդ, վարպետ Ղեւոնդ։

Եկողը, որ մեզի ծանօթ դարբին Ղեւոնդն էր, ապուշի նման իրեն դիմողին նայեցաւ։

— Ի՞նչու այդպէս կը նայիս ինծի վարպետ, միթէ ինծի չես ճանչնար, հարցուց խօսակիցը և զարմացած նայեցաւ.

— Ո՛վ ժողովուրդ, ո՛վ բարեկամներ, խղճացէք ինձ, աղջի՛կս գտէք, ըսաւ դարբինը և արցունքը հոսեցաւ աչքերէն։ Ամբոխը լուռ էր և մտախոյզ։ Ան կը հասկնար ծերունի հօր վիշտը։ Ան կ'զգար անոր կսկիծը և ինքն ալ կը յուզուէր։

— Լուսիկս, Լուսիկս գտէք. մի՞թէ դուք խիղճ չունի՞ք, միթէ դուք գութ չունի՞ք։ Սիրտս կ'այրի, լերդս ու թոքս դուրս կը թափին.



— Աստուած մխիթարէ քեզ, վարպետ Ղեւոնդ, Լուսիկդ կենդանի է և շուտով կը գտնուի, ըսաւ ամբոխէն մարդ մը մխիթարելով զայն. անո՛նք արդէն գիտէին ծերունի Ղեւոնդին վիշտը։

— Չէ՛, չէ՛. ան կը տանջուի, ան կը մեռնի։ Նոր բացուող վարդի մը պէս կը թառամի, կը մեռնի. ա՜խ, այս ինչ վիշտ է, Տէր, այս ինչ տանջանք է...., Ես կ'այրիմ և կը տանջուիմ, իսկ ան չկայ ու չկայ...։

— Աստուած փարատէ վիշտդ, ծերուկ, ըսաւ դարձեալ նոյն մարդը և փեշովը աչքին արտասուքը սրբեց։

Այդ միջոցին երեւաց Խենթը և իր փայտը օրօրելով առաջ եկաւ ուր հաւաքուած էր ամբոխը։ Ամբոխը անոր համար ճամբայ բացաւ և դարբին Ղեւոնդն ու Խենթը շրջապատեց։ Խենթը նայեցաւ վարպետ Ղեւոնդին, նայեցաւ ու յանկարծ դեղնեցաւ, ան իր եղբայրը այդ դրութեան մէջ չէր տեսած։ Մի՞թէ կսկիծը խանգարած էր ուղեղը։

— Վարպետ Ղեւոնդ, ի՞նչ կ'ընես, այդ ի՞նչ է գրկիդ մէջ։

— Սուրե՛ր, սուրե՛ր, իմ շինած սուրերս են. իմ ձեռքովս կերտուած սուրեր, որ թշնամիներուն կուրծքը մխենք, ահա առէք, ըսաւ ու վար ձգեց իր բեռը, որ յիրաւի իր շինած սուրերն էին։

— Ի՛նչ կ'ընես, վարպետ.

— Ի՞նչ ընեմ, մի՞թէ չգիտես, ահա ես կը պարտիմ, Լուսիկիս հարսնիքն է, դուք ալ պարեցէք, ըսաւ դարբինը և սկսաւ խելագարի ցնցիւններ ընել։

Ամբոխը սառած, ապշած կանգնած էր անոր շուրջը։ Ան այդ բոպէին մոռցած էր իր վիշտը, իր հոգը և միայն կը տանջուէր վարպետ Ղեւոնդին վշտովը։

Վա՜յ ինձ, վարպետ, վա՜յ իմ աչքերուն, մի՛, մի՛ այդպէս ըսեր, ես կը գտնեմ Լուսիկդ, անպատճառ կը գտնեմ, կանչեց Խենթը գլուխը օրօրելով։

— Ո՛չ, ո՛չ, զայն տանջեց սպաննեց, Վեստ Սարգիսը. ան ալ չ՚ազատուիր սեւ ձե՛ռքէն, ան ալ չի փրկուիր...։

— Ո՞վ, ո՞վ է սպաննած Լուսիկը, լսուեցան ամբոխին մէջէն քանի մը ձայներ։

— Վեստ Սարգիսը, խնամակալը, պատասխանեցին միւսները։

— Այո՛, խնամակալը... պէտք է որ այդ այդպէս ըլլայ։ Ինքն է որ անեցիները թողուցած է այս նեղ դրութեան մէջ և ինքը մէջտեղ չ՚կայ, ըսաւ ձայն մը։

— Տէ՛ր չունինք, տիրական չունինք, բարեկամ, ըսաւ ուրիշ մը։

— Ինչպէս չունինք, ինչո՞ւ մոռնանք Վահրամ իշխանը...։

— Այո՛, ապրի՛ Վահրամ իշխանը, նորէն իրեն պիտի դիմենք, պիտի խնդրենք որ մեզի անտէր, անտիրական չը թողնու։

— Իրաւ մինչեւ ե՞րբ պիտի այդպէս պաշարուած մնանք։ Երթանք մեր Վահրամին ոտքերը իյնանք ըսին, որ մեր կեանքը իր ոտքերուն տակն է, թող մեզի առաջնորդէ դէպի պատերազմը և մենք ցոյց կուտանք յոյներուն թէ՝ հայուն մէջ չէ մեռած քաջութեան հոգին։

Այսպէս շատ հարց ու պատասխաններ եղան ամբոխին մէջ, շատ երկար վիճաբանութիւններ տեղի ունեցան, բայց ոչ մէկ վճռի վրայ կանգ չառին, ոչ մէկ բան չ՚ձեռնարկեցին, երբ յանկարծ Խենթը, որ մինչեւ այդ ժամանակ լուռ էր, պոռաց։

— Բարեկամնե՛ր, ինչու դե՛ռ կ՚սպասէք։ Չէ՞ք տեսնէր, որ մեր խնամակալը մեզի անտէր է թողուցած,



հեռացած է ճիշտ այն ժամանակ, երբ թշնամին մեզի շրջապատած է։ Ալ ինչու կ՚սպասենք, մեր Վահրամը այստեղ է, ան չը թողնէր մեզ անտէր, անտիրական։ Ան մեզի համար կեանքն ալ չի խնայէր, բայց ի՞նչ կարող է ընել մինակը, պէտք է ույժ տանք իրեն. ույժ, իսկ այդ ույժը մենք ենք։

— Խենթը լաւ կ՚ըսէ, Խենթը, երթանք Վահրամ իշխանին մօտ, նա մեզ կը փրկէ, նա մեզ կ՚ազատէ, գոչեցին քանի մը ձայներ։

— Երթա՛նք, աղաղակեց ամբոխը և սկսաւ շարժիլ, ալեկոծուիլ։

Խենթը առաջ ինկաւ և առաջնորդեց ամբոխը դէպի Վահրամ իշխանին պալատը. այն ինչ վարպետ Ղեւոնդը դեռ կը շարունակէր իր վայրենի պարը և տխուր ձայնով Լուսիկը կը կանչէր։

Թ.

## ԵՂՕՆ ԵՒ ԼՈՒՍԻԿԸ

Մինչդեռ Անին պաշարած էին Յունաց զօրքերը, այդ միջոցին Սուրմառու բերդաքաղաքին մէջ, մթին ու խոնաւ բանտի մը մէջ կը տանջուէր Լուսիկ, ուր, իբրեւ պատանդ, տեղափոխուած էր Վեստ Սարգիսի հրամանով։ Լուսիկ օր օրի վրայ կը մաշէր և գերեզմանին կը մօտենար։ Մինչդեռ դուրսը պայծառ էր, և բնութիւնը իր հրաշալիքները կը թափէր։ Այնտեղ, ազատ օդին մէջ կը ճռուողէին թռչունները, կը շարժէր կեանքը, իսկ Լուսիկ՝ շրջապատուած խոնաւ պատերով, զըրկուած էր նաեւ Աստուծոյ պարգեւած արեւի լոյսէն։ Ա՜խ, որչա՛փ չար են մարդիկ, որչա՛փ անգութ են ա-

նանք, որ կը զրկէն զինք Աստուծոյ տուած բարիքները վայելելու։

Եւ Լուսիկ մօքերու ծունկ ինկած, տխուր ու տըրտում կը նայէր դէպի իր նեղ բանտին միակ փոքրիկ լուսանցքը և խոր ախ կը քաշէր։ Կը յիշէ թէ իր սիրուն պարտէզը, այն երջանիկ ժամերը, երբ ինքը վարդի թուփերէն կը քաղէր նոր բացուող անուշահոտ վարդեր և կը լսէր պլպուլի երգերը, որը սէր կ'երգէր և իր կուսական սիրտը կը թրթռացնէր։

Ա՜խ, ո՞ւր ես պլպուլ, ո՞ւր ես պլպուլ, ե՛կ, ու թառիր դէպի Լուսիկի բանտին պատուհանը և այնտեղէն կրկին հնչեցուր երգդ, անոյշ դայլայլիկդ։ Լուսիկ, հիմակ կարօտ է երգիդ, ան կարօտ է լսելու սիրոյ երգերը, որ վերարտադրէ իր սրտին մէջ, իր սիրուն Ստեփանիկը, իր ծերունի հայրը։

Բայց ամէն ինչ լուռ է, և յուսահատ։

Չէր լսուէր պլպուլին ձայնը, անոր անուշ երգը, այն ինչ Լուսիկին սիրտը ու հոգին կը մաշէր։ Աղբիւրի նման արտասուքները դուրս կը թափէին անոր աչքերէն և կը թրջէին թաց ու խոնաւ գետինը։

— Ստեփանիկ, հասի՛ր ինձ, օգնէ՛, մի՞թէ ինձ մոռցար. կ'ըսէր Լուսիկ և խոր հառաչանք կ'արձակէր։

— Ձայն տուր, Ստեփանիկ, որ լսեմ անուշ ձայնդ և յետոյ մեռնիմ, հառաչեց Լուսիկը և կարծես սիրտը կտոր կտոր եղաւ։

Ան չընկատեց մինչեւ անգամ թէ՝ ինչպէս իր բանտին դուռը կամաց մը բացուեցաւ և ներս մտաւ Եղօն, որուն աչքերը վայրենի կատաղութեամբ՝ լեցուեցան, երբ լսեց անոր վերջին խօսքերը։

— Ստեփանի՛կ, հասիր ինձ, դարձեալ կրկնեց խեղճ աղջիկը ու հեկեկանքը խեղդեց զինք։

Յանկարծ տեսակ մը սարսուռ անցաւ Լուսիկի ամ-



բողջ մարմնով և ան սարսափահար ցնցուեցաւ. ականջին խուլ քրքիջ մը դպաւ, որ կարծես գեհենէն դուրս կուգար. ի՞նչ էր այդ, երազ էր թէ՞ իրողութիւն։ Մի՞թէ գեհենի դեւերն անգամ կը ծաղրէին Լուսիկը և սարսռեցնէին զինք։ Բայց ոչ։ Լուսիկը ետ նայեցաւ, և քարացածի նման արձանացաւ։ Ան տեսաւ իր առջեւ կեցած Եղօն, որ դիւական քրքիջ մ'արձակելով, իր վայրենի աչքերը յառած էր անոր վրայ։

— Հա՛, հա՛, հա՛, խենթ աղջիկ, այդ որի՞ն անունը կուտաս, մի՞թէ չգիտես, որ Ստեփանիկին ա՛լ չես պատկանիր, ըսաւ Եղօն, մօտենալով Լուսիկին։

Լուսիկը ոչինչ չպատասխանեց։ Ան դեռ ապուշի նման կը նայէր անոր։

— Լսէ՛ խենթ աղջի՛կ, շարունակեց Եղօն, ես կ'ուզեմ քանի մը առաջարկութիւններ ընել, եթէ կը համաձայնիս, դուն փրկուա՛ծ ես։

— Հեռացի՛ր ինձմէ, ըսաւ Լուսիկ խուլ ձայնով մը և կրկին սառեցաւ։ Չէր կրնար հանդուրժել անոր ներկայութիւնը։

— Չէ՛, Լուսիկ, լսէ՛ ինծի, եթէ կ'ուզես ազատուիլ այս նեղ և խոնաւ բանտէն։ Չէ՞ որ հոս քու տեղդ չէ՞։

Լուսիկ լուռ կը նայէր Եղօյին։

— Անին արդէն պաշարուած է յունաց զօրքերով, ուր կը գտնուի նաեւ Ստեփանիկդ։ Քանի մը օր կամ քանի մը շաբաթ չ'անցնիր և Անին մոխրի կոյտ պիտի դառնայ և այդ մոխիրին մէջ պիտի թաղուի Ստեփանիկը հետեւապէս...։

— Լռէ՛, անամօթ ստախօս, գոռաց Լուսիկ, ընդհատելով Եղօյի խօսքերը։ Եղօն չլսեց զայն և կրկին շարունակեց.

— Հետեւապէս դուն պիտի մոռնաս զայն և պատ-

կանխս անոր, ով որ քու կեանքն է ազատած և ազատութեանդ մասին կը մտածէ։ Առաջուց յայտնեմ քեզի, որ դուն նշանակուած ես որպէս ընծայ յունաց հրամանատարին, սակայն քեզի սիրող մարդը այդ բանը պիտի խանգարէ և ազատութիւն պիտի տայ քեզի, Ըսէ՛ համաձա՞յն ես լսել անոր խորհուրդները, ըսաւ Եղօն և աչքերը փայլեցան ոգևորութեան կրակով մը։

— Եւ ո՞վ է այդ մարդը, որ իմ ազատութեան մասին կը մտածէ, ըսաւ սառն կերպով մը Լուսիկ։

— Ո՞վ է. մի՛թէ չգիտես, որ կը հարցնես։ Այդ մարդը որ կը ցանկայ քեզ ազատել... կը ճանչնա՛ս զինք։

— Ո՞վ է վերջապէս, ըսէ՛ անունը, ըսաւ Լուսիկ և սիրտը բռնեց։ Ան այդ խօսքերէն գէշ բան մը կը գուշակէր։

— Ե՛ս եմ, Լուսիկ։ Ե՛ս կը ցանկամ ազատել քեզ, պատասխանեց Եղօն։

— Դո՞ւն։

— Այո, ես։ Ես կը սիրեմ քեզ, Լուսիկ, դուն լաւ աղջիկ մ'ես...։

— Ո՜հ Աստուած իմ, խնայէ ինձ, ըսաւ Լուսիկ, և արցունքները կրկին դուրս հոսեցան անոր աչքերէն։

— Զիս մտիկ ըրէ՛, և մենք երջանիկ կըլլանք, շարունակեց Եղօն և ուզեց բռնել Լուսիկի ձեռքը, սակայն Լուսիկ ձեռքով հրեց իրեն մօտեցող Եղօյին և խենթի մը պէս կանչեց։

— Կ'որսուէ՛, կորսուէ՛ ինձմէ։

— Բայց լսէ՛ ինծի, Լուսիկ, գիտցիր որ ես քեզ կը սիրեմ, իսկ այդ սէրս ատելութեան մի փոխէր։ Վա՛յ քեզի, եթէ ատելութեան փոխուի սէրս, ըսաւ Եղօն կանգ առնելով Լուսիկէն քանի մը քայլ հեռու։

— Հեռացի՛ր, կամ սպաննէ՛ զիս։ Ախ, ո՞ւր է մահը. ինչու չը գար որ զիս հրէշէն ազատէ։



Ահա՛, կը կրկնեմ խենթ աղջիկ, լաւ մտածէ՛ ընելիքդ, թէ չէ սարսափելի պիտի ըլլայ վախճանդ։ Յիշէ՛ որ ե՛ս ազատեցի քեզ իշխանին վրէժխնդրութենէն։ Եթէ ես չըլլայի, հիմակ դուն կոյր և համր կըլլայիր։

— Դժոխքի զաւակ, սպաննէ զիս, եթէ կը ցանկաս, բայց բնաւ չի կրկնես առաջարկութիւնդ։

— Լաւ, տեսնենք, ըսաւ Եղօն և դէպի դուռը երթալով կրկին կեցաւ։

— Լուսիկ, վերջին անգամ մ'ալ կը դիմեմ քեզ, խնայէ մատաղ կեանքդի։

— Մա՛հ, մա՛հ կը ցանկամ, ըսաւ Լուսիկ և ձեռքերով ծածկեց դէմքը։

— Լաւ, միայն գիտցի՛ր, որ դուն չը պիտի ստանաս ցանկացած մահդ, այլ կապրիս, սակայն այդ կեանքը պիտի ըլլայ տեսակ մը սոսկալի տանջանք։ Եղօն գիտէ իր հակառակորդին համար տանջանքներ ստեղծել, ըսաւ Եղօն և դուրս ելաւ բանտէն։

Լուսիկ մինակ մնաց և ծունկ չոքելով՝ ձեռքերը ձարձրացուց դէպի Բարձրեալը։

Լուսիկ կ'աղօթէր. աղօթքը միայն կը թեթևցնէր անոր սիրտին վիշտը, հոգիին այլայլութիւնը...։

Թ.

## ԿՌԻՒԸ

Հայաստանը վտանգի մէջ էր։

Յոյները ամուր օղակով շղթայած էին Անին և բաթանները պարիսպներուն մօտ, շարած էին, որպէս զի խորտակեն անոր հաստ պատերը և յետոյ ներս խուժելով աւերեն և կոտորած սփռեն Անիի մէջ։ Եւ Յոյները

վստահ իրենց յաղթութեան վրայ, սպառնալիքներով կ'ակնարկէին անեցիներուն և կը ծաղրէին ու կը ծիծաղէին այն բուռ մը հայերուն վրայ, որոնք կը յանդգնէին պաշտպանելու իրենց քաղաքը: Բայց Հայ պահապանները լուռ էին և մտայոյզ: Անոնք յոյներու սպառնալիքներուն չէին պատասխաներ, անոնց սրտին մէջ կը բորբոքէր այնպիսի կատաղութեան բոց մը, որ կրակ կուտար անոնց սիրտն ու հոգին: Եւ անոնցմէ ամէն մէկը կը մտածէր իր մտքով «կռուիլ, մեռնիլ և ապա քաղաքը յանձնել յոյներուն. Թող անոնք մեր դիակները կոխկռտելով միայն անցնին»: Եւ այդ մտքերով տոգորուած անոնք հրամանի կ'ըսպասէին, որ ամէն մէկը ընդունի նահատակութեան պսակը և իր հայրենիքին սիրոյն համար իր կեանքը զոհէ: Եւ այդ հրամանը չուշացաւ: Հեռուէն արդէն երեւաց ծերունի Վահրամ իշխանը շրջապատուած հայրենիքին հաւատարիմ իշխաններով և զէնք ու զրահի մէջ կորսուած: Ծերունի Վահրամը մռայլ էր և գունատ: Ան չկարողանալով անեցիներուն խնդիրքը մերժել, անցաւ զօրքին գլուխը և ստիպուեցաւ զանոնք դէպի պատերազմ առաջնորդել: Ծա՛նր պատասխանատուութիւն... Եւ ծերունի Վահրամը կ'զգար այդ պատասխանատուութեան ծանրութիւնը իր վրայ և կը դողար: Կը հասկնար որ այդ կռիւը պիտի ճակատագրական ըլլայ Անիի համար և ատկէ միայն կախուած պիտի ըլլայ անոր ազատութիւնը. իսկ ինքը բուռ մը քաջերով ի՞նչպէս համարձակուի վճռական պատերազմը տալ: Իր 30,000 զինուորներով, ի՞նչպես դիմադրել Յունաց 100,000 զինուորներուն:

Բայց դառնութեան բաժակը լեցուած էր և հայրենիքը վտանգի մէջ էր:

Երկար պէտք չէր մտածել: Կամ փրկութիւն և



կամ մահ: Եւ ծերունի Վահրամը կ'երթար մեռնելու իր հայրենիքին փրկութեան համար: Եւ Վահրամ իշխանը գնաց, տեսաւ բոլոր պահակները, բոլոր աշտարակները. հրամաններ տուաւ և կարգադրութիւններ ըրաւ: Ուրկէ որ կ'անցնէր, հոգի և սիրտ կը ներշնչէր անոնց մէջ և անոնք կ'ոգեւորէին ծերունի Վահրամին վեհ պատկերը դիտելով:

—Իշխան, պարիսպներուն մօտ բաբաններ կը բարձրացնեն և կ'սպառնան պատերը քանդել, ըսաւ իշխաններէն մէկը դառնալով Վահրամին:

Վահրամը նայեցաւ այն կողմը և յիրաւի նկատեց, որ Յոյները մեծ գործի մէջ են և կ'աշխատին ահագին բաբաններ կանգնեցնել, որուն ոյժին չպիտի դիմանար Անիի պարիսպը:

—Մենք կ'այրենք անոնց բաբանները, պատասխանեց Վահրամ իշխանը:

—Բայց ի՞նչպէս, իշխան, ո՞վ կը համարձակի մօտենալ Յունաց բանակը և այրել այդ բաբանը: Չէ՞ք տեսներ թէ անոնք առաջքը հակերով բամբակ են դիզած. որպէս զի մեր ձգած քարերը բնաւ վնաս չի տան անոնց բաբաններուն:

—Մենք կ'այրենք անոնց բաբանները, կրկնեց Վահրամ իշխանը վճռական ձայնով, որուն դէմ բառ մը չը կրցաւ պատասխանել իր հետ խօսող իշխանը:

—Բայց մինչեւ այրելը դեռ մի վճռական կռիւ պիտի տանք, շարունակեց Վահրամը աչքը յունաց բանակէն չհեռացնելով:

—Ե՞րբ, իշխան, ե՞րբ այդ ճակատագրական կռիւը տեղի պիտի ունենայ, մենք անհամբեր կ'սպասենք այդ ժամուն, ըսաւ խօսակիցը:

—Ճիշտ այս գիշեր իսկ, երբ կէս գիշեր ըլլայ: Ես իսկոյն կը հրամայեմ, որ այդ միջոցին բոլորը պատ-

բաստ ըլլան յարձակում գործելու յունաց բանակին վրայ, ըսաւ Վահրամը և իջաւ աշտարակէն։

Գիշերը վրայ հասաւ, յոյներու բանակին խարոյկները վառուեցան և այնտեղէն լսուեցան անոնց ուրախութեան աղաղակները։ Իսկ անեցիք լուռ, անձայն պատրաստուած էին գունդ գունդ դուրս ելլել Անիէն։ Անոնք միայն վերջին հրամանին կ'սպասէին։ Բայց դեռ Վահրամ իշխանը չէր երեւար, դեռ իրենց հրամանատարը չկար։ Ո՞ւր էր արդեօք և ինչի՞ կ'սպասէր յայտնի չէր ո՛չ մէկուն, միայն եթէ սրատես աչքեր ըլլային, եթէ ուշադրութիւն դարձնող մը ըլլար, կը տեսնէր, որ ծերունի Վահրամ այդ միջոցին Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բեմին առջև ծունկ չոքած էր և բազկատարած կ'աղօթէր առ Ամենաբարձրեալը։ Ան մարմնացած արձանի մը պէս լուռ էր և անշարժ։ Բայց այդ լռութեան և անշարժութեան մէջ անոր վեհ հոգին կը տանջուէր, կ'այրէր իր միակ յոյսը Բարձրեալին վրայ դրած կ'աղօթէր և կ'ըսէր.

Տէ՛ր անցո՛ յինէն բաժակս այս. Տէ՛ր, պատասխանատուութիւնը ծանր է թէ Քու և թէ ազգին առջեւ։ Դուն հոգի և սիրտ ներշնչէ բուռ մը քաջերուս և հալածէ թշնամիներս...

Եւ այդ աղօթքը կը թեթեւցնէր 86 տարեկան ծերունի Վահրամին սիրտը եւ անոր փառահեղ դէմքը՝ լուսաւորուած կանթեղի թոյլ լոյսով, հետզհետէ կը բորբոքուէր Աստուածային կրակով։

Յանկարծ, ան կարծես թեթեւցած, երիտասարդի մը նման վեր թռաւ տեղէն, համբուրեց Ս. Խաչելութիւնը և յետոյ աննկատելի կերպով դուրս ելաւ եկեղեցիէն։ Ուղղուեցաւ դէպի բանակը, որ կազմ ու պատրաստ շատոնց կ'սպասէր զինք։



Ճիշտ ա՛յդ միջոցին մարդ մը կարծես գետնէն բուսաւ անոր առջեւ և խոնարհելով ըսաւ.

— Իշխան, ես հոս եմ։

— Խենթ, շատոնց քեզ կ'սպասէի. բայց կարծեցի թէ՝ յոյները արդէն կաշիդ քերթած են. ըսաւ իշխանը ուրախացած։

— Ո՛չ, իշխան, անոնք կ'ուզէին զիս ոչնչացնել, սակայն ես առանց իրենցմէ տեսնուելու, ամէն բան լաւ մը տեսայ։

— Ի՞նչ կայ. Խենթ, ըսէ, կարո՞ղ ենք մեր բուռ մը քաջերով դիմադրել անոնց ահեղ բանակին, հարցուց իշխանը մտազբաղ։

— Տէր, եթէ անոնք գինով չըլլային ինքնավստահութեամբ դժուար էր, բայց անոնք գինով են սնոտի ուրախութիւնով։ Անին իր հարուստ աւարով իրենցը կը կարծեն, ուստի անհոգ նստած են, պատասխանեց Խենթը։

Ծերունի Վահրամի մռայլը պարզուեցաւ։ Այդ տեղեկութիւնները իր ծրագրին խիստ յարմար կուգային։

— Իսկ ե՞րբ է յարմար ժամանակը վրանին յարձակելու։

— Ճի՛շտ հիմա, եթէ կը փափագիք. հիմա անոնք քաղցր երազներու մէջ ընկղմած են։

— Լաւ, ապրի՛ս, Խենթ, խենթութիւններդ պարապ չեն անցնիր, ըսաւ Վահրամ իշխանը և հեռանալով անկէ, հրաման տուաւ բանակին, բանալ Անիի դռները և արշաւել դուրս։

Հայոց զօրքը, որ բաղկացած էր 30,000 հոգիէ, առաջ անցաւ ծերունի Վահրամի առաջնորդութեամբ և քիչ յետոյ սկսաւ սոսկալի կռիւը։ Կռիւ մահու և կեանքի։ Կռիւ հայրենիքի ազատութեան։

Յոյները վստահ իրենց թիւին վրայ (100,000) նոյնպէս յարձակեցան հայերուն վրայ և երկուստեք սկսաւ

կոտորածը։ Բայց հայերը կը կռուէին յուսահատ. անոնք գիտէին որ իրենց ետեւը ալ ճամբայ չկայ, պիտի յաղթեն յոյները կամ պիտի մեռնին, հակառակ պարագային պիտի տեսնէին Անիի աւերակները և իրենց զաւակներուն ու կանանց ճիչն ու վայնասունը։ Այդ աչքի առջև ունենալով՝ հայերը ոգեւորուած նաեւ ծերունի Վահրամ իշխանի խրախուսանքներէն, այնպէս յարձակում մը տուին յունաց բանակին վրայ, որ յոյները ժամանակ մը մնացին սառած, կարկամած։ Անոնք հայերէ և այն ալ բուռ մը հայերէ այդպիսի քաջութիւն չէին սպասեր։ Հայերը անխնայ կը ջարդէին, երբ յանկարծ յունաց շարքերը խանգարուելով զօրքը սկսաւ տատանիլ, շարժիլ և նկատելով իրեններուն սոսկալի կոտորածը, սարսափահար սկսաւ ետ նահանջել և դէպի փախուստ աճապարել։

— Օրհնեա՛լ է Աստուած, յաղթութիւնը մերն է գոռաց ծերունի Վահրամը։

— Կեցցէ՛ Վահրամ, կեցցէ՛ Գագիկ, յաղթութի՛ւն, կը կանչէին ոգեւորուած հայերը և կը հալածէին փախըստականները։ Արիւնը արդէն կը հոսէր աղբիւրի պէս և Անիի տափարակին վրայ միայն յոյներէն արդէն ինկած էին մօտ 20,000 հոգի, երբ հայերը դադրեցուցին հալածանքը և սկսան գոհաբանական մաղթանքներ ընել Ամենաբարձեալին, իրենց փայլուն յաղթութեան համար։

Յունաց գոռոզ և անեղ բանակը այլ եւս չկար Անիի պարիսպներուն տակ և հայոց յաղթութիւնը կատարեալ էր։



## ԺԱ.

# ԴԻԱԿՆԵՐՈՒ ՄԷՋԷՆ

Անիի պայծառ առաւօտը լուսցաւ և լուսաւորեց դիակներու դաշտը։ Սոսկալի էր այդ դաշտը։ Անթիւ և անհամար դիակներ և մարդկային վիրաւոր մարմիններ փռուած էին այդ տեղ, ուր անողորմ մահը կարծես դիւթական զօրութեամբ, մէկ վայրկեանի մէջ կարճեցուցած էր անոնց կեանքը։ Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, — յայտնի չէր, միայն տեղ տեղ փռուած, իսկ քանի մը տեղ ալ լճացած արեան մէջ կը լողային մարդկային մարմինները և բերանները ընկղմած արեան մէջ կարծես կը խմէին այդ արիւնը...։ Սոսկալի էր տեսնել ինկածներու դէմքին արտայայտութիւնը և սառած աչքերու մէջ դեռ մնացած զարհուրանքի տպաւորութիւնը։ Այդ աչքերը, այդ արտայայտութիւնը սոսկալի և զարհուրելի էին և փուշ փուշ կ'ընէր տեսնողին մարմինը։

Բայց անշարժ չէին բոլոր ինկածները։ Անոնց մէջ շատերը կը շարժէին, մէկտեղէն միւսը կը քաշկռտուէին, մէկ դիակէն միւսը և իրենց ձեռքերով կը ճանկռտէին հողը սրտակտուր հառաչանքներ արձակելով։ Անոնք մահամերձ վիրաւորեալներն էին, որոնք չկրնալով պատերազմի դաշտէն հեռանալ, մնացած էին դիակներու կոյտերուն մէջ և զարհուրելի տանջանքներ կրելով կ'սպասէին իրենց վերջին րոպէներուն. իսկ այդ վերջին րոպէները կարծես յաւիտենականութիւն ըլլային, անոնք կարծես դիտմամբ կ'ուշանային աւելի տանջելու, աւելի չարչարելու համար Թշուառները...։ Եւ այդ վիրաւորները չդիմանալով սոսկալի տանջանքներուն, վերջին ճիգ մ'ալ թափէին և քանի մը քայլ ալ առաջ

կը քշուէին, կը թաթխուէին արեան ճապաղիքի մէջ, և յետոյ սոսկալի հառաչանքներ արձակելէ վերջ քանի մը ցնցումներ ընելով կը մնային անշարժ...։

Անիի երփներանգ ծաղիկներով ծածկուած դաշտը այդ միջոցին արեան դաշտի փոխուած էր, դիակներու կոյտերով զարդարուած, իսկ պլպուլին և սոխակին երգին փոխարէն կը լսուէր մեռնողներու մահամերձ հառաչանքները և ագռաւներու երամներուն կանչիւնները, որոնք խմբովին կը պտըտէին դիակներու կոյտերուն վերեւ։ Արեգակն էր միայն, որ կրկին հանգիստ, կրկին պայծառ կը փայլէր այդ ագապատ տեսարանին վրայ։

Ծիշդ այդ միջոցին էր, որ Անիէն դուրս ելաւ մարդ մը և դիմեց դէպի պատերազմին դաշտը։ Ան լուռ կ'երթար, անձայն և խորունկ մտածմունքի մէջ ընկղմած։ Անոր աչքերը ինկած էին խորունկ ակնակապիճներու մէջ, այտին ոսկորները դուրս ցցուած, գլխուն ճերմակ մազերը գզգզուած։ Կը նմանէր կմախքի մը, և եթէ անոր փայլուն աչքերը չըլլային, տեսնողը զինք ողջ մէկը չէր կարծեր, այլ ոսկորներէ կազմուած զանգուած մը, որ պատած էր մորթով։ Բայց անոր աչքերը վայրենի կերպով կը փայլէին և աջ ու ձախ կը նայէին։ Կ'երեւար որ անոր հոգին այդ րոպէին կը տանջուէր, խիստ կը տանջուէր, իսկ սիրտը կը մաշուէր։

Ահա հասաւ պատերազմին դաշտը, ուր փռուած էին դիակները, և ոտքը դրաւ իր ոտքին տակ փռուած դիակի մը կուրծքին և լուռ, սարսափահար դիտեց անոր դէմքը։ Այդ դէմքը սառած էր ու ցուրտ, այնպէս մը սառած ինչպէս այն ծերունի մարդուն դէմքը, որ կը նայէր այդ դիակին և ոչ մէկ տպաւորութիւն չէր թողուր անոր հոգիին մէջ, կարծես իր ոտքին տակ տարածուած չըլլար մարդկային դիակ մը, որ պահ մ'առաջ իրեն նման կը շարժէր, կը խօսէր, կը ծիծաղէր.



իսկ հիմակ անշունչ առարկայի մը պէս ինկած է դաշտին մէջ։ Սա ի՞նչ բաղդի խաղալիք է, բնութեան սա ի՞նչ ծաղր է, որ երէկ ան դեռ կենդանի էր, իսկ այսօր մեռած...

Բայց ծերունին ապուշ ապուշ դեռ կը նայէր դիակին և ցուցամատն ալ դէպի իր ճակատը տանելով, կարծես տեսակ մը բան կ'ուզէր մտաբերել բայց չէր կրնար։ Կարծես ան ճիգ կը թափէր ազատուելու զինք պաշարող միտքերէն և գտնելու զինք տանջող միտքը բայց չէր յաջողեր։

Յանկարծ ծերունին ժպտեցաւ ցուցնելով իր դեղնած ու սեւցած ակռաները։ Այդ ժպիտը խիստ տարօրինակ էր ու ահարեկ։

— Հը՛մ... հը՛մ... լաւ է, այդպէս ալ պէտք էր, և ես պէտք է կոխկրտեմ այս դիակները ու այնպէս անցնիմ, ըսաւ ծերուկը և ոտքը դնելով միւս դիակի կուրծքին վրայ, անցաւ առաջ։

Հետզհետէ դիակները կը շատնային և ծերունին կոխկռտելով մէկ մէկ դիակ առաջ կ'երթար ինքնիրեն տակ ըսելով.

— Ասոնք մերիններէն չեն, պէտք է ասոնք ոտքի առնել, պէտք է կոխկրտել։

Յանկարծ ծերունին կայնեցաւ և դէպի ագռաւներու երամը նայեցաւ, որ իջաւ կոյտի մը վրայ և սկըսաւ իր նախաճաշը։

Ծերուկը նախ չհասկցաւ թէ ի՞նչ կը կատարուէր այնտեղ, յետոյ յանկարծ, գլուխը ինկաւ, աչքերը դուրս ցցուեցաւ ակնակապիճներէն, բարկացած քար մը վերցուց և նետեց ագռաւներուն վրայ գոռալով.

—Է՛յ, կարելի չէ՛ սպասեցէք, պէտք է զատել։ Միթէ չէք գիտեր որ այստեղ Հայ ալ կայ, Յոյն ալ։

Ցոյնը եկած էր մեզ ջարդելու՝ բայց մենք զանոնք ջարդեցինք։ Հա՜, հա՜, հա, ճիչ մը արձակեց ծերուկը երբ ագռաւներուն թռչիլը տեսաւ, յետոյ սկսաւ դիակները կոխկռտելով պա՛, պարել ու կանչել։

—Ամէնքդ ուրախացէք, Լուսիկիս հարսնիքն է սա... Երգեցէ՛ք, պարեցէ՛ք, չէ՞ք լսեր... կ'ըսէր ան և հետզհետէ իր խելագար ոստումները կ'արագցնէր։

Թշուառ ծերուկը Լուսիկի հայրն էր, դարբին Ղեւոնդը, որ պատերազմի դաշտն էր իջած և կը կոխկռտէր դիակները։

Ճիշդ այդ պահուն հեռուէն երեւցան երկու ձիաւոր, որոնք արագօրէն դէպի դարբին Ղեւոնդը կուգային։ Դարբին Ղեւոնդ դեռ իր պարը կը պարէր երբ նկատեց այդ ձիաւորները և թափանցող հայեացք մը ձգելով անոնց վրայ, սառածի նման կեցաւ և սկսաւ սարսափահար ցնցուիլ։ Կարծես այդ ձիաւորներուն մէջ կը տեսնէր զարհուրելի բան մը, որ կը սառեցնէր իր արիւնը և կ'ստիպէր դողալ։

Անթարթ, ապուշ կրնթած աչքերով կը նայէր խելագար Ղեւոնդը ձիաւորներուն ու կը դողար. երբ ձիաւորները արագ արագ մօտեցած էին իրեն։ Քանի մը քայլ ետք այդ ձիաւորները մօտեցան անոր և առջեւէն կը սուրային, երբ դարբին Ղեւոնդը սոսկալի մռնչիւն մ'արձակեց ու կանչեց.

—Ա՜...

Ձիաւորները լսեցին այդ մռնչիւնը և մխուածի պէս գամուեցան։ Նայեցան դարբին Ղեւոնդին և զարհուրեցան։ Դողը ցնցեց երկուքին մարմինն ալ և քրտինքի խոշոր կաթիլներ դուրս ցոլացին իրենց ճակտէն։

Անցաւ քանի մը զարհուրելի վայրկեաններ և յանկարծ ձիաւորները ժողոըւելով ուզեցին սլանալ, բայց



այդ միջոցին խելագար Ղեւոնդը ոստիւն մ'ըրաւ և բռնելով առաջինին ձիու սանձը՝ կանչեց։

—Ողջոյն քեզ, արեան Թագաւոր։

Ըսաւ դարբինը և խելագարի քրքիջ մ'արձակեց, որ ցնցեց ձիաւորին մարմինը։ Ձիաւորը աշխատեցաւ խոյս տալ անկէ, բայց դարբինը ամուր բռնած էր սանձը և քարէ արձանի մը պէս կեցած էր առաջքը։

Այդ ժամանակ երկրորդ ձիաւորը առաջ անցաւ և ըսաւ.

—Իշխան, միթէ չե՞ք ճանչնար, սա դարբին Ղեւոնդն է, որ թէ ինչպէս կենդանի մնացած է չեմ գիտեր։ Պէտք է սպաննել զայն։

—Այո՛, պէտք է սպաննել, կրկնեց իշխանը և սուրը պատեանէն հանեց։

—Ողջոյն քեզ, դիակներու Թագաւոր, կանչեց դարձեալ խուլ ձայնով դարբին Ղեւոնդը և սառած աչքերով նայեցաւ ձիաւորի աչքերուն, որ նոյն ինքը Վեստ Սարգիսն էր։

—Մեռի՛ր, անամօթ, ըսաւ Վեստ Սարգիս և սուրը ուղղակի դարբին Ղեւոնդին կուրծքը մխեց, իմացի՛ր, որ արեան Թագաւորը արի՛ւն կը սիրէ։

Դարբին Ղեւոնդի աչքերէն կարծես փայլակներ թռան։ Ան չնկատեց մինչեւ անգամ թէ ի՛նչպէս սուրը մխուեցաւ իր կուրծքը և թէ ի՛նչպէս իր սեփական արիւնը սկսաւ սուրին վրայէն վազել։ Այդ ժամանակ չէր զգար իսկ ո՛չ ցաւ, ո՛չ կսկիծ. չնկատեց մինչեւ անգամ թէ ի՛նչպէս ինքը ձգեց ձիուն սանձը և գետին գլորուելով գերեզմանական ձայնով մը գոռաց։

—Անիծեալ ըլլաս, արեան Թագաւոր...

Բայց ձիաւորները չլսեցին անոր վերջին խօսքերը և սրարշաւ դէպի Անի գացին։

Վեստ Սարգիսը կրկին կ'երթար իր ուրախութիւնները միացնելու, ուրախութեան անեցիներու հետ անոնց տարած մեծ յաղթութեան համար։

Բայց անեցիք ալ չէին խաբուեր...։

ԺԶ.

## ԳԱԳԻԿ Բ. ԹԱԳԱՒՈՐ

Պատանի Գագիկ իր կեանքին դէմ եղած անյաջող փորձէն ի վեր հանգստութիւն չունէր բնաւ։ Գիշեր ցերեկ կ'ուզէր զէնքը ձեռքն առնել և յայտնի կերպով, դէմ առ դէմ կանգնիլ իր թշնամիներուն առջեւ, սակայն ծերունի Վահրամը չէր թոյլատրեր այդ։ Ան վաղահաս կը նկատէր պատանի Գագիկին կեանքը փոթորիկներու մէջ ձգելէ, առանց գիտնալու թէ ինչ սիրտ, ինչ հոգի կայ պահուած այդ մատաղ հասակին մէջ։ Բայց պատանի Գագիկը օրէ օր կը մեծնար և կը զարգանար։ Անոր երակներուն մէջ կ'եռար երիտասարդական արիւնը և սրտին մէջ կը բորբոքէր պատանեկան անհամբերութիւնը։ Գագիկ կրակ ու մոխիր կ'ուզէր որ ցոյց տայ աշխարհին թէ ինքը վախկոտներէն չէ, թէ իր երակներուն մէջ կը հոսի իր պապերուն անվախ արիւնը...։

Եւ այդ օրը շուտով հասաւ։

Երկու երկար տարիներ անցած էին այն օրէն երբ ան թողած Անապատի վանքը ուր իր կեանքին դէմ մահափորձ եղած էր և այդ ժամանակէն անիկա Վեստ Սարգիսի երեսին փախուստ տալով, կը գտնուէր Վայոց Ձորի հիրհեր ամրոցին մէջ։ Այդ տեղ էր ան երբ լուրեր կ'ըստանար Յունաց դէպի Անի արշաւելու մասին և սիրտը կտոր կտոր կ'ըլլար։



Յոյները վերջին ջարդ մ'ալ կրած էին Անիի պարիսպներուն տակ, երբ պայծառ օր մը, Գագիկ իր հայրենիքին մասին մտածելով, լուռ հեռուն կը դիտէր երբ խումբ մը զինեալ մարդիկ արագ քայլերով դէպի իր բերդը կը յառաջանային։ Ո՞րոնք էին անոնք, թշնամի թէ՞ բարեկամ.— Ան դեռ չէր գիտեր և կասկածանքով հեռուն կը նայէր, երբ այդ խումբը մօտեցաւ և պատանի Գագիկին սիրտը թունդ ելաւ, խումբին մէջ նկատելով ծերունի Վահրամին և քանի մը ուրիշ իշխաններ, անոնց գալուստը կը մտածէր պատանին, դեռ 17 տարեկան Գագիկը եւ տարակուսանքով անոնց նայեցաւ։

Բայց խումբը արդէն մօտեցած էր բերդին եւ շուտով ներս կը մտնէին անոնք։

— Լեւոնիկ, նայէ՛, Վահրամ իշխանը ինք անձամբ մեզ մօտ կ'ուգայ, արդեօք ի՞նչ կը նշանակէ այդ. կ'երեւայ որ կարեւոր բան մը պատահած է Անիի գըլխուն, ըսաւ Գագիկը դառնալով մօտը կեցած Լեւոնիկին։

— Այո՛, տէր, անշուշտ կարեւոր բան մը կայ։ Իշխաններուն մէջ կը տեսնեմ նոյնպէս եղբայրս Հարգիկը և Ստեփանիկը, պատասխանեց Լեւոնիկ անթարթ աչքերով նայելով խումբին

— Գնա՛ Լեւոնիկ, հրամայէ ամրոցին դռները բանալ և ընդունիլ մեր իշխանները ինչպէս որ պէտք է։

— Լեւոնիկ խոնարհեցաւ ու հեռացաւ։ Քիչ վերջ խումբը ամրոց մտաւ։ Գագիկ ներս մտաւ բերդի հիւրասենեակը, այնտեղ սրտատրոփ կ'ըսպասէր հայրենասէր իշխաններուն։ Երբ անոնք ներս մտան, բոլորն ալ ծունկ չոքեցին պատանի Գագիկին առջեւ և կանչեցին.

— Ողջոյն քեզ, հայոց թագաւոր։

Գագիկի աչքերը փայլատակեցին և տեսակ մը շա-

ռազունում անցաւ անոր դէմքին վրայ, որ աւելի գեղեցկացուց արդէն իսկ գեղեցիկ դէմքը և տեսակ մը վեհ արտայայտութիւն տուաւ անոր երեսին։

Գագիկ քանի մը վայրկեան լուռ կեցաւ շփոթած յուզմունքէն, յետոյ մօտենալով Վահրամ իշխանին ոտքի կանգնեցուց, համբուրեց անոր ձեռքը և իշխաններուն դառնալով ըսաւ.

— Ոտքի կանգնեցէք, դո՛ւք, ո՛վ իշխաններս, և պատմեցէք իմ սիրած հայրենիքիս դրութիւնը։ Ի՞նչ դրութեան մէջ է արդեօք Անին։

— Թագաւոր, Անին բացէ առ բացէ ձեզ կ'ըսպասէ։ Բագրատունեաց Թափուր գահը ձեզ կ'ըսպասէ որպէս զի նենգ մարդիկ այլեւս աչք չունենան այդ գահին վրայ, որ ըստ օրինի ձեզ կը պատկանի։ Ահա այս սուրերը ձեր ոտքին տակ կը դնենք և կ'երդնունք հաւատարիմ մնալ ձեզ և մեր կեանքը զոհել ձեզ և հայրենիքին փրկութեան համար, ըսաւ Վահրամը և սուրը մերկացնելով խոնարհեցուց Գագիկի ոտքերուն տակ։ Նոյնն ըրին միւս իշխաններն ալ, յետոյ միաբերան գոչեցին.

— Կ'երդնունք։

— Ես կը հաւատամ ձեզի և կ'ընդունիմ ձեր առաջարկութիւնը։ Թող Աստուած ինծի ոյժ ու կարողութիւն տայ տանելու այդ ծանր լուծը որպէս զի ամօթապարտ չմնամ թէ Աստուծոյ և թէ հայրենիքիս առջեւ։

— Եւ թո՛ղ Աստուած պահէ ձեր կեանքը, թագաւոր, Հայաստանը այս վայրկեանիս խիստ երերուն դրութեան մը մէջ է և կարելի է կործանուի մեր պապերուն աւանդ ձգած գահը։

Յոյնը և ներքին թշնամին կ'աշխատին քարուքանդ ընել այդ գահը և աւերել Անին։ Յոյնը այնքան սարսափելի չէ. որքան ներքին թշնամին, որ անտեսանելի ցեցի մը պէս կ'աշխատի գահին հիմերը փլցունել։ Ազգը, Յովհաննէս Սմբատ թագաւորի մահէն յետոյ անգլուխ մնացած և յուսահատ կը տատանէր։



Հիմա ա՛ն ալ չուզեր Բագրատունեաց գահը թափուր տեսնել, և կը խնդրէ ձեզմէ որ բազմիք այդ գահին վրայ։ Ժողովուրդին հետ միաբանած, մենք, իշխաններս, Պետրոս կաթուղիկոսի հետ միաբանած, համոզուեցանք, որ ժողովուրդին պահանջքը արդարացի և անյետաձգելի է։ Ուստի Անիի 1001 եկեղեցիները ձեզի կ'ըսպասեն որ տեսնեն ձեր զարդարուած ճակատը թագաւորական թագով և ուսերնիդ ձգուած արքայական ծիրանին։ Ա՛յդ է ահա ժողովուրդին և մեր խնդրանքը, ըսաւ Վահրամ իշխան։

Թող ըլլայ ազգին կամքը, պատասխանեց Գագիկ։

Այդ դէպքէն յետոյ քանի մը շաբաթ ալ անցաւ և Գագիկ իր շքախմբով Անի մտաւ և Անիի Ս. Լուսաւորիչ Եկեղեցին հանդիսաւոր կերպով թագաւոր օծուեցաւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսէն Գագիկ Բ. կոչուելով։ (1042 թուին)։ Ժողովուրդը կը ցնծար ուրախութենէն, բայց չէր ցնծար Վեստ Սարգիսի սիրտը։ Ան զգաց, որ յաղթութիւնը տարին Վահրամեանք, որ իր ձեռքէն կը փախչի իսպառ ցանկացած գահը և իր սրտին մէջ սկսաւ աւելի թոյներ պատրաստել և յանկարծ, օր մը թագաւորական բոլոր գանձերը յափշտակելով, մտաւ Անիի Միջնաբերդը և փակուեցաւ այնտեղ, սպասելով թէ ահա ուր որ է Գագիկ կը յարձակի իր վրայ և այդ ժամանակ կ'սկսի իշխաններուն մէջ ներքին խռովութիւնը։ Վեստ Սարգիսը սխալած էր իր հաշիւներուն մէջ։

Այդ գործողութենէն քանի մը օր ետք, երբ Վեստ Սարգիսը մտածմունքի մէջ ընկղմած կ'երթար ու կու-

դար Անիի Միջնաբերդի սենեակներէն մէկուն մէջ, յանկարծ դրան վարագոյրները ետ քաշուեցան և այնտեղ երեւցաւ պատանի Գագիկը։

Վեստ Սարգիսը երբ զայն տեսաւ, սարսափեցաւ, դողած, և սարսուռէն ցնցուեցաւ ամբողջ մարմինը։ Պատանի Գագիկը, Հայոց Թագաւորը մինակ էր իր առջև կեցած, առանց ուղեկցի, առանց զօրքի։ Այդ ի՞նչ կը նշանակէր։ Չէ՞ որ ինքը րոպէ առ րոպէ կ'սպասէր որ ահա Գագիկը ուր որ է ի՛ գնդով պիտի յարձակէր միջնաբերդին վրայ և կը սկսի իր դէմ պատերազմը։ Միթէ այս երազ էր, մի՞թէ սոսկ ցնորք էր...։

—Ողջոյն Հայոց իշխանին, ըսաւ Գագիկը և այնպիսի հայեացք մը ձգեց Վեստ Սարգիսին վրայ, որ վերջինիս աչքերը մթնցան և գլուխը սկսաւ դառնալ։ Կը զգար որ ինք կը յաղթուի պատանիին վեհ հայեացքէն, որ իր անյողդողդ կամքը կ'ընկճուի Գագիկ Բ. Հայոց Թագաւորէն։ Մի քանի րոպէ Վեստ Սարգիսը չէր կարողանար աչքերը վեր բարձրացնել և լուռ, յանցաւորի մը պէս կանգնած էր Գագիկին առջև։

Անոր դէմքը երբեմն կը գունատուէր և երբեմն կը կարմրէր։ Յանկարծ ինքզինքը ժողվեց և նայեցաւ Գագիկին...

Աստուած իմ, ի՛նչ հրաշալի դէմք, ինչ վեհ նայուածք ունէր Հայոց Թագաւորը, որուն առջև ընկճուեցաւ Վեստ Սարգիսը և յանկարծ իյնալով Գագիկի ոտքերուն տակ ըսաւ.

—Թագաւոր, ներէ ինծի, ես մեղաւոր չեմ, ես իմ ամբողջ էութեամբս նուիրուած եմ թէ քեզի և թէ հայրենիքիս։

Գագիկը վայրկեան մ'ալ նայեցաւ իր ոտքերուն տակ թաւալող իշխանին, որ արտասուալից աչքերով թողու-



թիւն կը խնդրէր իրմէ և յետոյ վեր բարձրացնելով Վեստ Սարգիսը ըսաւ.

—Վերելիր, իշխան, ես կը ներեմ քեզ և կը հաւատամ, որ դուն քու թագաւորիդ և քու հայրենիքիդ չես դաւաճաներ։

—Թող երկնքի բարկութիւնը գլխուս թափուի եթէ դաւաճանեմ քեզի և հայրենիքիս, ըսաւ Վեստ Սարգիսը և տէրութեան գանձերը յանձնեց Գագիկին, իսկ ինքը հեռանալով Անիէն գնաց իր սեփական Սուրմառուի բերդաքաղաքը։

ԺԶ.

## ԽԵՆԹԸ ԼՈՒՍԻԿԸ Կ'ԱԶԱՏԷ

Անիի պարիսպներուն տակ հայերուն փառաւոր յաղթութենէն յետոյ, Խենթը իր երկար փայտը ձեռքն առած մայրոյզ կ'անցնէր Անիի փողոցներէն, երբ մէկը իր թեւէն քաշեց։ Խենթը ետ նայեցաւ և ապուշի պէս նայեցաւ.

—Հէյ, ի՞նչ իսկական խենթի մը պէս կը նայիս, մի՞թէ ինծի չես ճանչնար, ըսաւ այդ մարդը։

—Ա՜խ, ներէ՛, ես չկրցայ ճանչնար քեզ, որովհետև մտազբաղ էի, բայց, ըսէ, ի՞նչ կ'ուզես ինձմէ։ Ի՞նչ հրաման կ'ընէ Գոհարիկը։

—Դուն իսկոյն պէտք է տեսնես Գոհարիկը։ Ան կարեւոր լուրեր ունի քեզի հաղորդելիք, միայն ի նկատի ունեցիր, որ ամէն զգուշութիւն պիտի ձեռք առնես, որ քեզ այնտեղ ոչ ոք չնկատէ։

—Լաւ, դուն գնա՛, ըսաւ Խենթը։

Երբ խօսակիցը հեռացաւ, Խենթը իր շուրջը նայեցաւ

և փողոցին ամայութիւնը նկատելով, արագ քայլերով առաջ անցաւ դէպի Վահրամի պալատը։ Այդ տեղ ան կանգ առաւ և զարմացած դէպի Վահրամ իշխանի պալատին դուռը նայեցաւ, ուր մէկիկ մէկիկ իշխանները ներս կը մտնէին։ Կ'երևար որ Վահրամ իշխանը այդ երեկոյ խորհուրդ ունէր, բայց արդեօք ի՞նչ խորհուրդ և ի՞նչու համար, այդ յայտնի չէր Խենթին և բնաւ փափագ չունէր իմանալու։

—Իշխանս կրկին խորհուրդ ունի, ո՞վ գիտէ, արդեօք ի՞նչ չարութիւններ ըրած է. Վեստ Սարգիսը սակայն այդ իշխանին գործն է, իսկ իմ գործս է միայն Լուսիկս գտնել, որ չկայ ու չկայ։ Ա՜խ, եթէ ես իմանայի անոր տեղը, եթէ ես գտնէի թէ այն ինչ տեղ է պահուած, այն ժամանակ շատ դիւրին էր զայն ազատելը, սակայն անիրաւ Վեստ Սարգիսը շատ շուտ իմացաւ, որ ես անոր տեղը գտած եմ և իր պալատին ներքնատունէն հեռացուց ով գիտէ դէպի ո՞ւր... Բայց անցնինք առաջ, տեսնենք ինչ կ'ուզէ ըսել Գոհարիկը, ըսաւ Խենթը և պտտելով Վահրամի պալատին գլխաւոր մուտքին ետևէն, գաղտնի դռնով մը ներս մտաւ պալատ, որուն սենեակներէն մէկուն մէջ գլուխը ձեռքերուն դրած, մտայոյզ նստած էր Գոհարիկ։

Երբ Խենթը տեսաւ Գոհարիկ ուրախացած դէպի ան վազեց։

—Ներսէ՛ս, իմ Ներսէ՛ս, վերջապէս եկար դուն։

—Ես միշտ պատրաստ եմ կեանքս զոհելու քեզի համար, իշխանուհիս, հրամայէ ինձ, ինչ որ կ'ուզես։

—Ես գիտեմ, Ներսէս, թէ ինչ դժուարութիւններ յանձնառած ես, բայց մեր կորուստը դեռ չգտնուեցաւ։

—Ա՜խ իշխանուհի, գիշեր ցերեկ Լուսիկի վրայ կը մտածեմ, բայց անոր հետքն անգամ չեմ գտներ... Օ՛, եթէ իմանայի թէ ան ո՞ւր է...



—Ինձ յայտնի է՝ սիրելի Ներսէս և ճիշտ ատոր համար է որ շուտով կանչեցի քեզի։ Դուն պիտի աշխատիս շուտով ազատել զայն։

Արդեօք այդ ճի՞շդ է որ դուն գիտես անոր տեղը և մի՞թէ ան կենդանի է, ըսաւ Խենթը եւ աչքերուն մէջ ուրախութեան կայծակներ թռան։

—Այո՛, ողջ է ան բայց կը մաշուի խոնաւ եւ ցուրտ բանտին մէջ։ Դուն պիտի հանիս շուտով եւ ամէն հնար ի գործ պիտի դնես ազատելու։

—Ո՞ւր է ան, ըսէ իշխանուհի, ես իսկոյն կը թռչիմ այնտեղ։ Ա՜խ, եթէ խեղճ հայրը կենդանի ըլլար եւ գոնէ անգամ մը տեսնէր իր Լուսիկը։

—Ո՞րուն հայրը, հարցուց Գոհարիկ սարսափահար։

—Լուսիկին հայրը, իշխանուհի, դարբին Ղեւոնդը ա՛լ չկայ։

—Ի՞նչպէս թէ չկայ, ինչ վտանգ պատահեցաւ որ։

—Քեզ արդէն յայտնի էր, որ ան վշտէն չկարողանալով դիմանալ խենդեցած էր։ Այնուհետեւ ան միշտ Լուսիկ կանչելով կը թափառէր փողոցները և երբ տեղի ունեցաւ Ցունաց ջարդը, զինք Անիէն դուրս, դիակներու մէջ, սպաննուած գտանք, բայց թէ ո՞վ էր զայն սպաննած, յայտնի չէ, ըսաւ Խենթը արտասուքը սրբելով։

—Խե՜ղճ ծերուկ, պատասխանեց Գոհարիկը յուզուած։

—Բայց թողունք այդ, օրիորդ, ցաւերով ոչինչ չըլլար, յայտնէ թէ ո՞ւր կը գտնուի Լուսիկը։

—Լուսիկը կը գտնուի Սուրմառուի բերդին Վեստ Սարգիսի բանտերէն մէկուն մէջ։

—Ինչպէս, հիմակ զինք Սուրմառո՞ւ տարած են, իբրեւ ապահով տեղ—ա՛... բայց աժան չի նստիր ատիկա Վեստ Սարգիսին։

—Բայց լսէ՛, Ներսէս, քեզի յայտնի է, որ հիմակ Վեստ Սարգիսը Անի է, որպէս զի երկար չչարչարուի Լուսիկն ազատելու համար, ես ատոր ճարն ալ մտածած եմ։

—Ի՞նչպէս, իշխանուհի հարցուց Խենթը եւ ապուշ օրիորդին նայեցաւ։ Այդ բոլորը Խենթը երազ կը կարծէր։

Բնաւ չէր հաւատար, որ Լուսիկը կենդանի է. եթէ կենդանի է այդպէս դիւրութեամբ կարելի չէր զինք ազատել սեւ մարդուն իշխանութենէն ինչպէս օրիորդը կ'ըսէր։ Զէ՞ որ Սեւ Մարդը երկաթէ ճիրաններ ունի...

—Դուն պիտի երթաս Սուրմառու, եւ ներկայանաս այնտեղի իշխանին, իբր թէ Վեստ Սարգիսին գրկած մարդոցմէ մէկն ես։

—Բայց անոնք ինծի չեն հաւատար։

—Կը հաւատան։ Ահա կը տեսնե՞ս այս նամակը, լաւ նայէ՛, աս կնքուած է Վեստ Սարգիսի կնքով եւ երբ կը ներկայացնես, անոնք քեզ կը հաւատան եւ ներս կը թողուն ու բացի ատկէ պահանջներդ ալ կը կատարեն. Իսկ այս նամակին մէջ գրուած է, որ Լուսիկը անմիջապէս քեզի յանձնեն։

—Իսկ ո՞րտեղէն ձեռք ձգեցիր Սեւ Մարդուն կնիքը, հետաքրքրուեցաւ Խենթը, որ ուրախութենէն քիչ էր մնացած խելքը թռցնէր։

—Այս կնիքը կեղծ է, բայց այնքան նման, որ իսկականէն չի տարբերիր։

—Տուր ինծի, դուն կատարեալ հրեշտակ մ'ես եւ թող Տէրը պահպանէ քեզ, ըսաւ Խենթը եւ առնելով նամակը ծոցը դրաւ։

— Բայց զգոյշ, շատ զգոյշ պիտի ըլլաս Ներսէս, և թենդութեան նշան անգամ չ'պիտի ցոյց տաս։ Դուն



ամէն բանէ պիտի խուսափիս, որ քեզ չ'մատնես, թէ չէ դուն ալ Լուսիկն ալ կորսուած էք յաւիտեան։

— Այդ իմ գործս է, իշխանուհի, ըսաւ Խենթը և ոտքի ելաւ։

— Զմոռնաս որ Լուսիկը ազատելուդ պէս սենեակս բերես և ան այստեղ կը մնայ մինչեւ Ստեփանիկին գալը։

— Այո, Խենթը կը խոստանայ ատիկա, և կը տեսնէ իր եղբօր աղջկան հարսանիք, ըսաւ Խենթը և գլուխը խոնարհելով դուրս ելաւ սենեակէն։

—Աստուծով այդպէս ըլլայ, ըսաւ Գոհարիկ և աչքերը լեցուեցան արցունքով։

Խեղճ Գոհարիկ, սիրան ալ կը տրոփէր, հոգին ալ, սպասելով Հարպիկին, սակայն չարաբաստիկ հանգամանքները կը հեռացնէին սրտերը և արգելք կ'ըլլային անոնց միացման...։

Բայց Խենթը, Գոհարիկի սենեակէն դուրս ելլելով արագ քայլերով առաջ գնաց և մութը նոր սկսած էր, երբ ան իր հագուստն ու կերպարանքը փոխելով ձիու մը վրայ նստած առաջ կ'երթար դէպի Սուրմառուի բերդաքաղաքը։ Ան անհամբերութեամբ կը մտրակէր ձին և աւելի ու աւելի արագցնելով խեղճ կենդանին թէեւ կը սուրար, որքան ույժ որ ունէր առաջ երթալու. Իսկ Խենթը բաւական հեռացաւ Անիէն, յանկարծ ձիուն ընթացքը դանդաղեցուց և սկսաւ իր ընելիքին վրայ մտածել։ Ամէն բանի, ամէն միջոցի ճարն ունէր, հնարք գիտէր, միայն բան մը իրեն երկիւղ կ'ազդէր եւ կը սարսափեցնէր եւ ատիկա Լուսիկը տեսնելու րոպէն էր, երբ Լուսիկը զինք ճանչնալուն պէս ճիչ մ'արձակէ եւ փաթթուի իր վզին, այն ժամանակ ամէն բան կը պարզուի եւ անշուշտ կասկածի տակ կ'իյնայ թէ ինքը եւ թէ իր բերած նամակը...։ Ի՞նչպէս ընէ, ի՞նչպէս հասկցէ Լու-

սիկին, որ զգոյշ մնայ, ձայն հանելէ, երբ զինքը տեսնէ...։ Ահա այդ բաները կը վրդովեցնէին Խենթը եւ կը յուզէին իր միտքը։

— Է՜հ, ինչ կ'ուզէ թող ըլլայ, Տէրը ինձ օգնական կ'ըլլայ, ըսաւ Խենթը եւ առաջ գնաց եւ երբ քանի մը օրէն յետոյ մտաւ Սուրմառուի բերդաքաղաքը, սիրտը թունդ ելաւ բայց ինքզինք զսպեց եւ ներկայանալով բերդաքաղաքի իշխանին, նամակը յանձնեց անոր։

Սուրմառուի բերդաքաղաքը կը պատկանէր Վեստ Սարգիսին, ուր նեղ ժամանակները ապաստան կը գըտնէր ան։ Այստեղ ան իրեն պէս ժանտ, անպիտան մարդ մը տեղակալ ըրած էր, այնպէս որ երբ Խենթը նամակը յանձնեց, խոր, թափանցող հայեացք մը ձգեց Խենթին վրայ եւ յետոյ առաւ նամակը։

Խենթը իր դէմքին եւ ոչ մէկ ջիղը շարժեց, այ անհոգ կերպով կը դիտէր Սուրմառուի բերդին իշխանը։ Երբ իշխանը կարդաց նամակը, դարձաւ դէպի Խենթը և ըսաւ.

— Դուն ե՞րբ կուզես վերադառնալ։

— Վաղը, լոյսը բացուելուն պէս, պատասխանեց Խենթը։

— Լաւ, ես կը յանձնեմ քեզի Լուսիկը, բայց կը զարմանամ թէ ինչո՞ւ իշխանն Եղօյի փոխարէն քեզի ղրկած է։

— Եղօն Ցունաց հրամանատարին մօտ ղրկեց, խիստ կարեւոր գործի մը համար, ըսաւ Խենթը առանց կարմըրելու։

— Հա՛ կ'երեւայ շատ կարեւոր գործ մ'է եղած, թէ չէ անիկա կուգար Լուսիկը առնելու։ Գիտե՞ս Եղօն Լուսիկի սէրէն խենթեցած է եւ գիշեր ցերեկ քուն չունի. ու մինչեւ հիմա Լուսիկին բան մը պատահած կըլլար եթէ Եղօն չը գտնուէր։



— Վեստ Սարգիսն ալ Լուսիկը Եղօյին համար Անի բերդը կուտայ որպէս զի վերադարձին անմիջապէս պըսակէ հետը. Թէ չէ Եղօն յանձնառու չէր ըլլար Ցունաց հրամանատարին մօտ երթալ։

— Հա՛, կ'երեւայ այդպէս բան մ'է եղած։ Բայց հիմա դուն հանգստացիր, ըսաւ իշխանը եւ Խենթը ներս տարաւ։

Խենթը կերաւ, խմեց, կշտացաւ, բայց գործը դեռ չէր վերջացած ամբողջ գիշեր մ'ունէր մինչեւ Լուսիկը տեսնելը եւ այդ գիշերը պարապը չը պիտի անցնէր, պէտք էր իմաց տալ Լուսիկին, որ ան զգոյշ ըլլայ զինք տեսնելու ժամանակ։ Խենթը շուտով իմացաւ անոր տեղը եւ կէս գիշերին զգոյշ մօտեցաւ անոր պատուհանին։

Լուսիկը անոր ձայնը լսելուն պէս սարսռեցաւ, դողդղաց. ան չէր հաւատար թէ Խենթն է, բայց Խենթը ամէն բան ըսաւ, յայտնելով իր գալուն պատճառը, հանգիստ սրտով իր սենեակը քաշուեցաւ եւ սպասեց լուսնալուն։

Դեռ արեւի ճառագայթները նոր էին տարածուած երկրին վրայ, երբ ոտքի կանգնեցաւ եւ սկսաւ պատրաստութիւններ տեսնել ճանապարհորդելու. այդ ժամանակ երեւաց Սուրառուի բերդին իշխանը եւ առաջնորդեց Խենթը դէպի Լուսիկին խուցը, երբ խուցին դուռը բացուեցաւ, Խենթը իր սիրտը բռնեց, որ կարծես հարիւրաւոր տեղէն խոցուեցաւ իր առջեւ կարծես Լուսիկը չ'ըլլար կանգնած, այլ անոր ուրուականը։

— Օրիորդ, մեծ իշխանին հրամանովը քեզ Անի պէտք է տանիմ, համաձա՞յն ես ինծի հետ գալու, ըսաւ Խենթը դողդոջուն ձայնով մը։

Իշխանը Խենթին երեսը նայեցաւ, սրտին մէջ կասկած մը մտաւ, նկատելով Խենթին ձայնի դողդողալը,

բայց այդ միջոցին խօսեցաւ Լուսիկը եւ կարծես փարատեց իշխանին կասկածը:

— Տարէք ինձ ուր որ կուզէք, եթէ այդ Վեստ Սարգիս իշխանն է հրամայած, պատասխանեց Լուսիկը, առանց Խենթին նայելու:

— Այո՛, մեծ իշխանը քու վիճակդ պիտի բարւոքէ եւ այնուհետեւ դուն լաւ կ'ապրիս:

— Շնորհակալ եմ, ես այսուհետեւ կը հետեւիմ իր խօսքին եւ անոր խորհուրդին համաձայն կը պահեմ ինքզինքս, պատասխանեց Լուսիկ:

Այնու հետեւ անոնք դուրս ելան այդ խումբէն եւ երբ պատրաստ էին ձի նստելու եւ ճամբայ ելլելու Սուրմառուի բերդին իշխանը դիմեց Խենթին եւ սուր հայեացք մը ձգելով վրան հարցուց:

— Դուն առաջուց կը ճանչնայիր Լուսիկը:

— Ո՛չ, իշխան, ես առաջին անգամն է որ կը տեսնեմ այս աղջիկը:

Ինչպէս կ'երեւար իշխանին կասկածը դեռ չէր փարատած եւ վայ երկուքին ալ, եթէ կամ Լուսիկը կամ Խենթը անզգոյշ խօսք կամ քայլ մը առնէին:

Բայց Խենթը շուտով մնաք բարով ըսաւ Սուրմառուի բերդին իշխանին և Լուսիկին հետ առաջ անցաւ. երբ բաւական հեռացան, Խենթը գրկեց իր եղբօր աղջիկը եւ երկար ժամանակ տեւեց այդպէս: Երկուքին աչքերը արցունքներով լեցուած էին: Եւ այդ արցունքները միայն կ'ամոքէին երկուքին վիշտը:

Այնուհետեւ Խենթը Լուսիկը ապահով Անի տարաւ եւ յանձնեց Գոհարիկի պաշտպանութեան:



ԺԳ.

# ՉԱՐ ՀՈԳԻՆ

Դաւաճանին յոյսերը փշրուեցան, նպատակը խորտակուեցաւ: Դառնացած սրտով կը պտըտէր Սուրմառուի բերդաքաղաքին մէջ, իր պալատին մէջ սոսկալի կերպով կը մաշուէր սիրտը: Վեստ Սարգիսի գոռոզ սիրտը չէր հաշտուեր այն պարտութեան, որ կրեց ինքը: Ինչպէս կարող էր տանիլ այդ սոր պարտութիւնը: Չէ՞ որ արդէն ինքզինք պսակուած թագաւոր կը համարէր, իսկ Գագիկը, իր ձեռքին մէջ լոր թէ խաղալիք մը, մրջիւն մը, որ իր մատներուն մէջ կարող էր ճզմել, ջարդել:

— Ո՜... դառն է դրութիւնս, գոչեց Վեստ Սարգիսը և երեսը ծածկեց ձեռքերով, դառն է, բայց այդ դառնութեան վերջ մը պիտի դրուի, սահման մը պիտի դրուի կամ պիտի փճանայ, կորսուի, ջնջուի աշխարհիս երեսէն Վեստ Սարգիս՝ կամ այդ վերջը պիտի քաղցրանայ Վեստ Սարգիսի համար: Բայց ինչպէս թողում, որ իմ երկաթէ կամքս խորտակուի, ու իմ նպատակներս օդը ցնդին... ո՜ որչափ անքուն գիշերներ եմ անցուցած այդ նպատակներուս համար, որչա՞փ տանջանքներ կրեցի եւ... այդ ամէնը պարապ, բոլորովին պարապ պիտի անցնին...: Բայց չէ՞ որ քանի միտքս բերեմ այդ անհանգիստ գիշերները, քանի յիշեմ կրած տանջանքներս, մարմինս կը սարսռայ եւ մազերս կը ցցուին:

Թողո՞ւմ ցնորքներս... կենա՞մ արիւն լեցուն ճամբուն վրայ... յետո՞յ... ինչ կը դառնամ ես — անպէտ արարած մը, չնչին մարդ մը, որ ամէնքը պիտի արհամարհեն, որմէ ամէնքը պիտի երես դարձնեն և թըքնեն վրաս...: Չէ՞ որ այդ ժամանակ իմ թշուառ գո-

հերս լեզուներ բարձրացնեն և յանդուգն կերպով ծաղրեն այն մարդուն, որուն ձեռքէն նոյն ինքն Յովհաննէս-Սմբատ թագաւորն ալ կը դողար... ո՛չ, ո՛չ, այդ դրութեան մէջ ես չեմ կրնար ապրիլ, ահա սա վերջ կը դնէ կեանքիս և...

Եւ Վեստ Սարգիս մոլեգնաբար վեր թռաւ տեղէն սուրը պատեանէն հանելով ուզեց մխել իր կուրծքը, բայց այդ միջոցին անոր ձեռքը կանգ առաւ և աչքերը փայլատակեցին այնպիսի զարհուրելի կրակով մը, որ տեսնողը քար կը կտրէր։

Վեստ Սարգիս սուրը իջեցուց, կրկին նստեցաւ փափուկ գահաւորակին վրայ և պոռաց։

— Չէ, յիմարութիւն է ըրածս՝ այս սուրով և թոյնով դեռ շատերը պէտք է երանելիներու աշխարհը ղրկել և ես դեռ պիտի երթամ դարձեալ իմ ընտրած ճամբայովս։

«Զղջալ» խօսքը գոյութիւն չունի Վեստ Սարգիսի համար. անոր սիրտը անյողդողդ է, ուստի, դուն, ո՛վ չար հոգի, զօրութիւն տուր ինծի, թափէ երակներուս մէջ դժոխքին սոսկացուցիչ կրակը, մի թողուր զիս յուսահատելու, այլ բազմացուր քու սեւ հոգիդ զօրերը, միայն թէ արժանացուր ինծի նպատակներուս իրագործման։ Ե՛կուր չար հոգի, Վեստ Սարգիսը դաշինք կը կապէ քեզի հետ, կը ծախէ իր հոգին, միայն թէ գահը իրեն պէտք է տաս։

Այդպէս ըսաւ Վեստ Սարգիսը և վեր թռաւ տեղէն կարծես թէ չար հոգին բուռն ուժով ցնցեց զինք և անոր ոյժ մը ստանալով, դաժան ու սեւ մտքերը մէկը միւսին ետեւէն պաշարեցին իր հոգին և Վեստ Սարգիսը, այդ դիւական մտքերը իր ուղեղին մէջ ամրապնդելով կը ժպտէր, ցուցնելով իր սեւցած ատամները. այդ միջոցին խինդն ու ուրախութիւնը պատած էր Վեստ



Սարգիսը, և անոր դէմքին վրայ այլ ևս չէր երեւար բոպէ մ՚առաջ եղած յուսահատութիւնը, երբ սուրը ձեռքին մէջ պատրաստուած էր անձնասպանութիւն գործել։

— Դէպի գործ, դէպի գործ, պոռաց Վեստ Սարգիսը և ուրախացած սեղան նստաւ եւ սկսաւ զանազան թուղթեր գրել։

Երբ վերջացուց իր գրութիւնները յոգնած ինկաւ գահաւորակին վրայ եւ քանի մը բոպէ այդ դրութեան մէջ մնալէ յետոյ վեր թռաւ տեղէ, մօտենալով լուսամուտներէն մէկուն վեր բարձրացուց ծանր վարագոյրը և դուրս նայեցաւ։

Մութը արդէն անցած էր և արշալոյսի կենսատու լոյսը տարածուած, սկսած էր սիրուն Հայաստանի պայծառ առաւօտներէն մէկը, երբ հեռուն արեւելեան հորիզոնին երկնակամարը ծածկուած էր ծիրանեգոյն շերտերով, ուր արեւին ճառագայթները գնդակներու պէս լոյսի փունջեր կ՚արձակէին և քանի մը կոյտ ամպերու հետ կը խաղային, այդ ամպերը երբեմն կը կարմրէին, երբեմն ծիրանի կը հագնէին, իսկ երբեմն ալ կրակի պէս կը տաքնային։ Հրաշալի էր երկինքը, հրաշալի էր բնութիւնը, կանաչապատ լեռներն ու ձորերը, Այդ միջոցին էր որ բարձրաթռիչ արծիւը օդին մէջ կը սաւառնէր թռչունը տանիքին վրայ կը ճռուողէր, ծիծեռնակը իր երգը կը երգէր, իսկ սոխակը վարդի թուփին վրայ նստած իր դայլայլիկը կը հնչեցնէր...

Բայց բնութեան այդ հրաշալիքը ազդեցութիւն մը չունեցաւ Վեստ Սարգիսի մռայլ հոգիին վրայ։ Անոր դէմքը ամպոտ էր և գունատ։ Ան կարծես բնութեան գեղեցկութեան վրայ զայրացած իջեցուց վարագոյրը և սկսաւ պտտիլ սենեակին մէկ ծայրէն միւսը։ Երկար պտտեցաւ առանց դադար առնելու, երբ յանկարծ կանգ

տուաւ և կանչեց իր ծառաները, երկու ծառայ անոր հրամանը լսելնուն պէս ներս եկան և քարացածի պէս կեցան դռան մօտ։

—Հոս կանչեցէք Եզօն, հրամայեց Վեստ Սարգիսը։

Ծառաները անյայտացան. և քիչ ժամանակէն վերջ ներս մտաւ Եզօն եւ լուռ կանգնեցաւ դռան մօտ։ Եզօյին դէմքը նոյնպէս մռայլ էր եւ գունատ։ Կարծես ինքն ալ իր ախրոջ նման քանի մը անքուն գիշերներ լուսացուցած էր։

—Եզօ, ի՞նչ ես եղած, դուն գունատ ես եւ տըժգոյն։

—Բան մը չկայ, տէր, պատասխանեց Եզօն։

—Բայց դուն տխուր կ'երեւաս եւ յուսահատ։

—Այդ կ'անցնի, տէր, Լուսիկը կորսնցնելէս վերջ ես ճիշդ է որ կը տանջուիմ։

—Շուտով դուն կ'ստանաս Լուսիկդ, Եզօ, մի՛ վհատիր։

—Ի՛նչպէս, տէր, պատասխանեց Եզօն եւ իր աչքերէն ուրախութեան կայծակներ թռան։

—Դուն դեռ չես հասկնար թէ ինչպէս, սակայն վստա՛հ եղեր եմ վրաս։ Երկար ժամանակ չանցնիր եւ Հայաստանի գահին վրայ Գագիկին տեղը տէրդ պիտի բազմած տեսնաս. լսէ, ինչ որ կ'ըսեմ։ Եզօ, շատ լաւ գիտես, որ ես միայն քաղաքականութիւն ունիմ, ահա այս նամակները վստահելի ձեռքով պիտի յանձնես մէկը յունաց հրամանատարին որ ան ալ յանձնէ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄՈՆՈՄԱԽՈՍ կայսեր, իսկ միւսը Դուինի Ապուսուար ամիրապետին։ Երկու նամակներն ալ շատ կարեւոր են եւ հետեւանքն ալ խիստ ծանր պիտի ըլլայ Գագիկի եւ Վահրամեաններուն համար. թող Հայաստանը մնայ երկու սուրի մէջ եւ այն ժամանակ տեսնենք Գագիկը ինչ պիտի ընէ, իսկ եթէ այդ դրութենէն ալ ազատուի Գա-



գիկ, այն ժամանակ ուրիշ միջոցներ կը գտնենք Գագիկը պատժելու։

—Տէր, ո՞րն է ամէնէն կարեւոր նամակը, Յունացը թէ ամիրապետինը. դուք գիտէք որ աստոնցմէ մէկը արեւմուտք կը գտնուի, իսկ միւսը արեւելք։

—Նախ յունացը, ան աւելի՛ կարեւոր է։

Եզօն խոնարհեցաւ և հեռացաւ, իսկ դաւաճանը ուժասպառ անկողին մտաւ եւ քնացաւ հրամայելով որ մէկը չընդունին։ Ան ըստ երեկոյթին կը վախնար լոյսէն. գիշերը իր չար խորհրդին վրայ կը մտածէր, իսկ ցերեկը կ'ուզէր իր յոգնած մարմնին հանգստութիւն տալ. սակայն հեռու էր իրմէ այդ ցանկալի հանգստութիւնը...

ԺԶ.

## ԾՈՒՂԱԿԻ ՄԷՋ

Մինչդեռ օձը ծուղակներ կը լարէր Գագիկ թագաւորին եւ Անիի դէմ, այդ միջոցին անեցիք միամիտ նըստած կը հրճուէին իրենց պատանի թագաւորին վրայ եւ անոր անունով միայն երդում կ'ընէին անոնք. կը տեսնէին որ իրենց թագաւորը թէեւ պատանի է, բայց քաջ, խելօք եւ համարձակ. անոնք կը զգային որ այդ պատանի թագաւորին ձեռքին տակ կարող են ազատ շունչ քաշել, որովհետեւ Գագիկ Բ.ի երակներէն կը հոսէր իր քաջ նախահայրերու արիւնը եւ ան չէր թոյլ տար ո՛չ Յոյներուն եւ ո՛չ ուրիշ թշնամիներուն յարձակիլ Հայաստանի վրայ եւ աւերել զայն։ Բայց ժողովուրդը շատ միամիտ էր։ Մոռցերնուն եղած էր Վեստ Սարգիսը, անոր երկաթեայ ճիրանները. ան արդէն մոռցած էր թէ Յոյներուն յարձակումը եւ թէ Վեստ Սարգսի կրած նե-

ղութիւնները։ Այդպէս էր նաեւ ժողովուրդը. վտանգն անցնելուն պէս ան անձնատուր կ՚ըլլար անհոգութեան եւ կ՚զբաղէր իր առօրեայ հոգերով, առանց ապագային մասին մտածելու, առանց իր գլխուն գալիք չարիքին մասին հոգալու. սակայն այդպէս չէին մտածեր ծերունի Վահրամը եւ իր միաբան իշխանները։ Անոնք կը տեսնէին Վեստ Սարգիսի չարանենգ դիտաւորութիւնները եւ կը գուշակէին ազգին գլխուն հասնելիք վտանգը, սակայն բնաւ լսող չկար։ Պատանի Գագիկը որքան քաջ, որքան համարձակ և խելօք էր, այնքան ալ անփորձ, իսկ այդ անփորձութեան հետ ինքնավստահ. ամէն անգամ երբ ծերունի Վահրամը կը զգուշացնէր Վեստ Սարգիսէն, պատանի Գագիկը ուսերը կը թօթուէր և ինքնավստահութեամբ կ՚ըսէր «ոչ, Վեստ Սարգիսէն չես չե՛մ վախնար»։

Բայց Վահրամ իշխանը դեռ չէր յուսահատած, դեռ յոյս ունէր, որ այսպէս թէ այնպէս ազդեցութիւն կ՚ունենայ Գագիկին վրայ և այդպէսով կը խորտակէ Վեստ Սարգիսի բոլոր որոգայթները. սակայն մինչեւ այդ, յունական զօրքերը, դրդուած Վեստ Սարգիսէն կրկին մօտեցան Անիին, իսկ միւս կողմէն ալ Դուինի Ապուլսուար էմիրն իր գունդերը առաջ քշեց Անիի վրայ և այդպէսով Գագիկ Թագաւորը մնաց երկու սուրի մէջ. ինչ պիտի ընէր իր բուռ մը քաջերով երկու ահեղ բանակի շուարած մնացած էր, բայց շուտով այդ սոսկալի դրութենէն ալ ազատեցաւ։

Գագիկ աճապարեց Դուինի Ապուլսուար էմիրին ընծաներ ղրկել և հաշտութիւն խնդրել։ Ապուլսուարը զիջաւ Գագիկի խնդրանքին և իր գունդերը կրկին ետ քաշեց. այդ ժամանակ Գագիկը իր բոլոր ոյժը յարձակեցաւ յունաց գունդերուն վրայ, որոնք Ասիդ և Նիկոս զօրապետներու հրամանատարութեամբ արդէն պա-



շարած էին Անին։ Այնպիսի ջարդ մը տուաւ յունաց բանակին, որ անոնք սարսափահար փախան, Անիի պարիսպներուն տակէն և երկու տարի շարունակ դադրեցան Անիի մասին մտածելէ։

Այնուհետեւ Գագիկը երբ հաստատապէս իմացաւ որ այդ բոլոր խլրտումները Վեստ Սարգիսի ծուղակներն են, որ կրկին չի դադրիր իր դէմ գործելէ բորբոքուեցաւ, բռնկեցաւ ու քանի մը մարդով անսպասելի կերպով ներս մտաւ Սուրմառուի բերդաքաղաքը՝ Վեստ Սարգիսի մօտ եւ գոռաց.

— Իշխան, մինչեւ ե՞րբ դուն պիտի այդ վատ եւ զազրելի ճանապարհէն երթաս։

Վեստ Սարգիսը կրկին նեղն ինկաւ. ան զգաց որ յաղթուած է եւ կարող չէ դիմադրել, հակառակիլ անոր, ուստի աւելի լաւ համարեց դիմել խորամանկութեան եւ ներում խնդրել պատանի Թագաւորէն. ուստի և Գագիկ Թագաւորին խօսքերէն յետոյ ծունկ չոգեց անոր առջեւ և արտասուաթօր աչքերով ըսաւ.

— Թագաւոր, ես արդար եմ...։

— Ո՛չ, այլ եւս ես ինծի չես կրնար խաբե՛լ պատասխանեց Գագիկը։

— Ների՛ր ինձ, տէր ըսաւ Վեստ Սարգիսը այնպիսի խղճալի ձայնով մը, որ ներկայ եղողներուն մարմնով տեսակ մը սարսուռ անցաւ։

Գագիկը նայեցաւ անոր, նայեցաւ իր ոտքերուն տակ սողացող իշխանին և խղճահարեցաւ անոր. սրտին մէջ անցաւ խիղճը իր բոլոր եղեռններով և արդէն կը պատրաստուէր ներել, երբ իր և Վեստ Սարգիսի հայեացքներն իրարու հանդիպեցան։

Գագիկը սարսռեցաւ։ Վեստ Սարգիսի աչքերուն մէջ այնպիսի կրակ մը կար, որ պատանիին մարմինը ցնցեց և հոգիին մէջ գտնուած խիղճը մէկ րոպէի մէջ

ցնդեցաւ խպառ։ Այդ վայրկեանին Վեստ Սարգսի աչքերուն մէջ կը փայլէր ատելութեան այնպիսի կրակ մը, որ կարծես գեհենին մէջէն դուրս նետուած ըլլար։

Եւ իրօք այդպէս էր։ Վեստ Սարգիսը արտաքինէն խղճալի, ողորմելի արարած մը կը ցուցնէր, որ իրմէ հզօրին ոտքերն ինկած, աղերսագին թողութիւն կը հայցէր, իսկ ներքուստ, անոր հոգիին մէջ, ատելութեան այնպիսի կրակ մը կը բորբոքէր, որ եթէ կարող ըլլար, կը խմէր պատանի Գագիկին արիւնը...։

— Ներէ՛ ինձ, թագաւոր, ես մեղաւոր չեմ, կանչեց ան դարձեալ և աչքերէն կրկին հեղեղացին արտասուքի առատ աղբիւրներ. ի՛նչ արտասուքներ էին անոնք, թողութեան թէ՞ կատաղի վրէժխնդրութեան, մէկը չհասկցաւ. միայն թէ Գագիկը այս անգամ չխաբուեցաւ և հրամայեց բռնել Վեստ Սարգիսն և տանիլ Անի բանտարկել. յետոյ անոր ձեռքէն առնելով բոլոր բերդերը դարձաւ Անի։

Բայց Վեստ Սարգիսը երկար չը մնաց բանտարկուած Անիի մէջ, ան կրկին սկսաւ իր ճարպիկ լեզուն բանեցընել, հասկցաւ որ զինու զօրութեամբ Գագիկը չպիտի կրնար ընկճել, ուստի հարկ էր ուրիշ ճար գտնել. այդ ճարն ալ գտաւ, որ սոսկալի ազդեցութիւն ունեցաւ թէ Գագիկի և թէ Հայաստանի վիճակին վրայ։

Վեստ Սարգիսը նախ մտածեց բանտարկութենէն ազատիլ, որ շուտով յաջողեցաւ։ Գագիկ ընկճուեցաւ անոր ճարտար լեզուէն և բանտարկութենէն ազատեց զայն. նոյնպէս չը բաւականանալով, Վեստ Սարգիսը մեծ պատիւներու ալ արժանացուց։

Վեստ Սարգիս հրճուեցաւ. նոր հասկցաւ իր ոյժը, այն ոյժը, որ կը կայանար ոչ թէ զէնքի, այլ ի՛ր լեզուին մէջ։ Կարճ միջոցի մը մէջ Գագիկը իր ձեռքին մէջ գործիք ըրաւ, ցոյց տուաւ որ ինքը բարեկամ է թագաւորին այդպէսով Գագիկին խորհրդականը դարձաւ։



Գագիկը իր անփորձութեամբ ինկաւ անոր ճիրաններուն մէջ և անզգալի կերպով բռնուեցաւ անոր պատրաստած թակարդին մէջ։

Գառը գազանի ճիրաններուն մէջ ինկաւ և այդ գազանը կամաց կամաց կը ծծէր իր զո՛հին արիւնը։

Ի՞նչ պիտի ըլլար վերջը...։

## ԺԶ.

## ԴԱՒԱՃԱՆԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Պատանի Գագիկ մտայոյզ էր. փոթորկալից միտքը սեւ ցեցի պէս կը կրծէր իր սիրտը և կը պղտորէր իր անարատ արիւնը, բայց ան դեռ չէր ճանչնար կեանքը, ան չէր գիտէր որ կեանքը լեցուն է դառնութիւններով, որ մարդիկ խմորուած են քսութեամբ և խաբէութեամբ։ Բնաւ տեղեկութիւն չունէր որ, կան մարդիկ, որոնց շրթունքները կ'օրհնեն, իսկ սրտերը կ'անիծեն, արտաքինով կը ժպտին, ներքուստ կը տխրին, երեսանց կը համակրին, իսկ տակէն դարաններ կը լարեն... բնաւ չեն կասկածիր. անոնք թէ, որոնք իր ոտքերուն տակ ինկած կը փառաբանեն, երկար կեանք կը մաղթեն, տակէն դարաններ կը լարեն իր դէմ...։ Չէ՛ Գագիկ Բագրատունին այդ համոզումը չունէր իր իշխաններուն վրայ. ան գիտէր թէ ամէնքն ալ սխալութիւն ունին, բայց զուրկ չեն խղճէ որ տրուած է ամէն մարդու։

Բայց Գագիկը այս անգամ շատ մտազբաղ էր, շատ մտայոյզ, ո՛րքան կը փափագէր վանել իրմէ դառն մտքերը, այնքան անոնք աւելի կը պաշարէին զինք և կը տրտմեցնէին. բայց ինչո՞ւ, ի՛նչու կը յուզուէր իր հոգին, ի՛նչու իր սիրտը կ'ուզէր լալ, քանի որ պէտք էր որ ան ժպտէր ուրախանար։ Մի՞թէ Հայաստանի գա՛հը

բարձրացաւ որ մատաղ կեանքը խամրի և տանջանքով վե՛րջ դնէ իր դեռափթիթ կեանքին, պատրաստ է զոհել այդ կեանքը հայրենիքին սիրոյն, եթէ միայն իմանար, որ իր այդ զոհողութեամբ կը փրկուի հայրենիքը. սակայն իր սիրտը, իր հոգին այդ վայրկեանին չէր գուշակեր բարիք: Անոր սիրտը այդ վայրկեանին կ'զգար բան մը որ կը նմանէր չարագուշակ, սոսկալի բանի մը, անիկա կարծես կ'զգար իր նախնեաց գահը, որուն վրայ բազմած էր ինքը, պիտի ոչնչանայ, պիտի անհետանայ, կորսուի, ջնջուի աշխարհիս երեսէն և ինքը չը պիտի կարենայ անոր առաջքն առնել... վա՜յ իրեն, վա՜յ Գագիկին...: Եւ Գագիկ կը սոսկար, կը զարհուրէր և չէր գիտէր ի՛նչպէս մէջեն ելլել այդ ծանր դրութեան:

Այդ մտատանջութեան մէջն էր, երբ յայտնեցին Վեստ Սարգիս իշխանը եկած է. Գագիգ հրամայեց ընդունիլ: Երբ Վեստ Սարգիսը ներս մտաւ, ուղղակի Գագիգի աչքերուն նայեցաւ և երբ անոր տժգոյն, մեռելային դէմքը տեսաւ՝ անոր աչքերուն մէջ դիւական հուր մը անցաւ, բայց Գագիկը չը նկատեց այդ հուրը, հրամայեց որ նստի:

— Դուն մռայլ ես, Թագաւո՛ր, Թող Աստուած պահպանէ քեզ, ի՛նչ է պատահած արդեօք:

— Այո՛, իշխան, յունաց կայսրը զիս Պոլիս հրաւիրած է և այդ հրաւէրը ինձ շատ կը յուզէ և ես չեմ գիտեր որ ընդունի՞մ թէ՛ ոչ:

Վեստ Սարգիս քիչ մը լուռ կեցաւ, բան մը չպատասխանեց. արդէն շատոնց գիտէր թէ ի՛նչ էր որ անոր հոգին կը վրդովէր, կը չփոթեցնէր զինք, ուստի չուզեց անմիջապէս պատասխանել:

— Դուն լուռ ես, իշխան, և բան մը չե՞ս ուզեր պատասխանել. միթէ կարելի չէ՞ այդ հրաւէրը մերժել, դարձեալ հարցուց Գագիկ:



— Ինչո՞ւ մերժել այդ հրաւէրը, տէր, վերջապէս պատասխանեց Վեստ Սարգիսը:

— Ինչո՞ւ... ինչու, ես ալ չեմ գիտեր թէ՝ ինչու մերժեմ, քանի որ Յունաց կայսեր հրաւէրը խիստ սիրալիր հրաւէր է, որմէ ես երկիւղ չունիմ, բայց իշխան, կը խոստովանիմ քեզի այս տեղ, սրտիս մէջ, գիտես թէ սրդ մը մտած է, ինծի հակառակը կը պնդէ, կը վախնամ, կը վախնամ որ...:

— Որ, ի՞նչ, ընդհատեց Վեստ Սարգիսը սոսկալի նայուածք մը ձգելով Գագիկի վրայ: Գագիկը սարսըռաց, բայց պատասխանեց.

— Եթէ ես ծուղակի մէջ իյնամ, իշխան, ըսաւ յուսահատ կերպով մը:

Վեստ Սարգիսի դէմքէն դառն, հեգնական ժպիտ մը անցաւ:

Կը ծիծաղէր իր Թագաւորին զգացմունքին վրայ:

— Ի՞նչ, դուն կը ծիծաղիս իմ զգացումիս վրայ, դուն կը հեգնե՞ս զիս, ըսաւ Գագիկ յուսակտուր:

— Բաւ լիցի, Թագաւոր, ես ի՛նչու հեգնեմ ձեր զգացումը, բայց իմացէք որ, այդ զգացումները սնոտի, դատարկ բաներ են և դուն չ'պիտի ուշադրութիւն դարձնես անոնց:

— Բայց ի՞նչպէս, ի՞նչպէս վարուիմ:

— Ինչպէս վայ.ուիս...: Բայց դուն կը սիրես հայրենիքդ, յանկարծ հարցուց Վեստ Սարգիս և չեչտակի նայեցաւ Գագիկին: Գագիկ դողաց. չէր դիմանար Վեստ Սարգիսի հայեացքին. որ մինչեւ ոսկորները կը ցնցէր:

— Այդ ի՞նչ հարցում է, իշխան, միթէ չէ՞ք գիտեր որ կեանքս անգամ չեմ խնայեր հայրենիքիս սիրոյն:

Ես ալ այդպէս կը կարծեմ, որ կը սիրես հայրենիքդ և ահա այդ հայրենիքին սիրոյն համար դուն պէտք ընդունիս հրաւէրը և երթաս Պոլիս: Մի՞թէ չէ՛ք գի

տեր տէր, որեւէ չընդունիք կայսեր հրաւէրը, յոյները ինք՝ զինքնին արհամարուած կ'զգան եւ այն ժամանակ բան մը չեն խնայեր կործանելու մեր հայրենիքը, իսկ մենք ի՞նչ ոյժ ունինք անոնց ահեղ զօրութեան դիմադրելու։

Չէ, Թագաւոր, ձեր Պոլիս երթալով բնաւ վտանգ մը չի պատահիր, ոչ ձեզ եւ ոչ գահին, իսկ ձեր չ'երթալով մեծամեծ փոթորիկներու տեղի կուտաք։

— Բայց, իշխան, ծերունի Վահրամը դէմ է երթալուս։

— Ծերունի Վահրամը... հը՛մ, բայց ան ծերութեան հետ խելքն ալ է կորսնցուցած տէր, ան հեռուն չի կրնար տեսնել։ Դուք, տէր, պէտք չէ լսէք անոնք, հակառակ պարագային թող մեղքը իյնայ անոնց վզին։

— Բայց, իշխան, որո՞ւն յանձնեմ գահս, Անիի բանալիները...։

— Մի՞թէ ինձ չէք վստահիր, Թագաւոր, մի՞թէ չէք գիտեր որ, Վեստ Սարգիսը իր վերջին կաթիլը կը զոհէ իր Թագաւորին համար։ Դուք հանգիստ գացէք եւ վերադարձին ձեր գահը կը ստանաք անխախտ, իսկ բանալիները յանձնեցէք մեր վեհափառին, Պետրոս կաթողիկոսին։

— Բայց սի՛րտս, հոգի՛ս, իշխան...։

— Պարապ բաներ, անտեղի զգացումներ թագաւո՛ր։

— Ուրեմն խորհուրդ կուտաք որ երթամ, հարցուց Գագիկ։

— Այո՛, անպատճառ պէտք է երթաք։

— Կ'երդնո՞ւս որ մինչեւ վերադարձս անխախտ պիտի պահես գահս։

— Կ'երդնում տէր Թագաւոր, սրով, կ'երդնում Աստուծով, որ այդ գահին ոչ ոք չի պիտի համարձակի մօտենալ։

— Ես համաձայն եմ, ըսաւ խուլ ձայնով մը Գագիկ։



եւ անոր սիրտը կարծես փղձկեցաւ. մինչդեռ Վեստ Սարգիսի աչքերուն մէջ ուրախութեան կայծակներ երեւցան։

— Ես համաձայն եմ, կրկնեց Գագիկ, միայն յայտնէ կաթողիկոսին եւ իշխաններուն որ երդում ընեն ինծի Ս. Տաճարին մէջ, Քրիստոսի արիւնով կնքեն այդ երդումը, որ դուք ինձ հաւատարիմ պիտի մնաք եւ մինչեւ ձեր վերջին կաթիլը կը թափէք որ ինծի չէք դաւաճաներ։ Այնուհետեւ միայն ես կը յանձնեմ ձեզ Անիի բանալիները եւ գահս։ Այժմ գնա՛ յայտնէ իշխաններուն իմ վճիռս եւ թող հանդիսաւոր երդումի պատրաստուին, ըսաւ Գագիկ եւ երեսը դարձուց։ Իր աչքերը արդէն լեցուած էին արցունքով։

— Ամէն բան կը պատրաստուի ձեր հրամանին համաձայն, ըսաւ Վեստ Սարգիսը եւ դուրս ելաւ։

Վեստ Սարգիսի սիրտը կը ցնծար եւ հոգին կը հրճուէր։

Տարած էր յաղթանակը։

## ԺԷ.

## ԵՐԴՈՒՄ

— Թագաւորը կուգայ, Թագաւո՛րը, շշնջաց ամբոխը եւ աչքը դէպի պալատը դարձուց։

Զօրքը, որ շարուած էր պալատէն դէպի մայր եկեղեցին տանող ճամբուն երկու կողմն ալ, նոյնպէս ուրախացաւ եւ հայեացքը դէպի պալատին կողմը դարձուց։

Արդարեւ պալատի դրան մէջ երեւաց Գագիկ Բ. հայոց Թագաւորը, ծիրանի քող մը ձգուած էր ուսերուն, շրջապատուած մեծ ու փոքր իշխաններով։

Գագիկ երեւալուն պէս, թմբուկը զարկին եւ զօրքը

պատիւի նշան ըրաւ իջեցնելով նիզակները, իսկ ամբոխը, որ լեցուած էր ճամբուն երկու կողմն ալ, պոռաց:

— Կեցցէ՛ Գագիկ, ապրի՛ մեր Թագաւորը...

Գագիկ առաջ անցաւ իր աջ ու ձախ կողմն ունենալով Վահրամ և Վեստ Սարգիս իշխանները:

Ան տխուր էր ու մռայլ: Իր տժգոյն, բայց արքայական վեհ դէմքին վրայ կը ձգէր խոր կսկիծ մը: Ի՞նչ էր պատահած, ինչու Գագիկ այդպէս տխուր, այդպէս վհատ էր: Այդ ամենքը գիտէին, ամեն մարդ կ'ըզգար:

Գագիկը մայր եկեղեցի կ'իջնար աղօթելու վերջին անգամ մը ուր իր իշխանները հաւատարմութեան երդում պիտի ընէին և միւս օրը ինքը պիտի մեկնէր դէպի Կ. Պոլիս:

— Ողջոյն հայոց Թագաւորին, ապրի Գագիկ, գոռաց ամբոխը, և խոնարհութիւն ըրաւ:

Գագիկ մտազբաղ, ժողովուրդին նայեցաւ, սիրտը յուզուեցաւ կսկիծէն: Ինչե՜ր արդեօք չանցան մտքէն այդ բոպէին:

Մայր եկեղեցին մէջ սկսած էր պատարագը և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը զգեստաւորուած էր: Երբ Թագաւորը ներս մտաւ, ան առաջ անցաւ ընդունելու զայն: Գագիկ խաչը համբուրեց և կանգնեցաւ արքայական գահոյքին տակ և ամբողջ պատարագի ընթացքին լուռ կ'աղօթէր:

Ամբողջ եկեղեցին լեցուն էր մեծ ու փոքր իշխաններով և իշխանուհիներով, իսկ դուրսը խռնուած էր ժողովուրդը և զօրքը:

Խորհրդաւոր լռութիւն մը կը տիրէր եկեղեցին մէջ ու բացի երգեցողութեան մեղմ ու քաղցր ձայնէն ոչ մէկ շշուկ չէր խանգարեր լռութիւնը: Բաղցրանուագ ալելուն կը հնչէր Անիի մայր եկեղեցին մէջ և խունկի ու կնդրուկի անուշաբոյր հոտը կը տարածուէր:



Ամենքը մարմնացած արձանի մը պէս լուռ էին և անշարժ:

Մէկ կողմը կեցած էին կաթողիկոսը, Վեստ Սարգիսը և իր համախոհ իշխանները, իսկ ձախակողմը, արքայական գահին առջեւ գլխիկոր նստած էր ծերունի Վահրամ իշխանը նոյնպէս իր կուսակից իշխաններով: Կարծես եկեղեցիին մէջ իսկ, սուրբ պատարագի ժամանակ, երբ աշխարհային ամեն գձուց գործ պիտի մոռցուէր, հայ իշխանները երկու բանակի էին բաժնուած և իրարու վրայ լռելայն մալի նայուածքներ կ'ուղղէին:

Բայց ահա պատարագը կ'աւարտի: Պատարագիչ Խաչիկ եպիսկոպոսը բարձրաձայն կը բացագանչէ. «կեցո՛ տէ՛ր, զժողովուրդս քո և օրհնեա...» և վարագոյրը կը ծածկէ սրբութեան սեղանը, որ անխիղճ տիրանենգները որ անօրէն դաւաճանները չտեսնեն ճշմարտութեան համար զոհուած Աստուծոյ գառնուկը: Անոնց զոհը ուրիշ դառ մըն է որ անմռունչ կանգնած էր պարանոցը մերկացնելով կորզին առջեւ:

Բայց ահա վեհափառը կը բարձրանայ բեմ և վարագոյրին առջեւ դրուած գահին մօտ կենալով կըսկսի իր պերճաբան քարոզը: Ան նզովք և անէծք կը թափէ հայրենիքի դաւաճանին գլխուն և կը պատմէ Թուլասիրտ Յովհաննէս-Սմբատ արքային տուած թուղթին մասին, Յունաց արշաւանքները Անիի վրայ և յետոյ կը գովէ ներկայ յունաց կայսեր բարեպաշտութիւնը, որ չցանկանալով օգտուիլ այդ կտակէն, վեհանձնաբար Գագիկ Թագաւորը իր մօտ կը հրաւիրէ մեծամեծ պատիւներ ընելու և խաղաղութեան դաշինք կնքելու: Սակայն մեր Թագաւորը կը երկմտի այդ հրաւէրն ընդունելու, որ կը կազմէ մեր աշխարհին միակ փրկութիւնը:

— Մեր թագաւորը կը մտածէ որ, իր երթալովը կը կորսնցնէ ամէն բան, նոյնիսկ հայրենիքը: Այն ձեռքը, որ կտակեց և Անին Յոյներուն տուաւ, այն հոգեւորականը, մանաւանդ Կիրակոսը, որ կաթուղիկոսի տան հիւրընկալն էր, որ ծախեց Անին իր շրջակայքով և տուաւ յոյներուն, անոր տեսակները շատ աւելի վատ գործերու ընդունակ են, աւելցուց ծերունի Վահրամը հնչեցնելով իր ուժեղ ձայնը:

— Կը լսէ՞ք, իշխաններ, որ մեր քահանայապետը դաւաճան կ'անուանէ այս զառամեալ ծերուկը, շըշնջաց Վեստ Սարգիս:

— Դաւաճանը ա՛ն է ով որ մեր սրբազնասուրբ հոգեւոր տէրը կ'ամբաստանէ, լսուեցան ձայներ այն դասէն ուր կանգնած էր Վեստ Սարգիսը:

Գագիկի գեղեցիկ դէմքին վրայէն անցաւ տեսակ մը շառագունում, զգաց որ շուտով իշխաններուն մէջ ներքին պառակտում մը պիտի լինայ, ուստի ձեռքի շարժումով մը լռեցնելով իշխանները ըսաւ:

— Թող իմանան իշխաններս, որ անոնց երջանկութիւնն է միայն իմ բաղձանքը: Ամենքին յայտնի է, որ ես վախցող չեմ: Յունաց լեգէոնները ջարդուեցան ինձմէ և խայտառակութեամբ յետ փախան: Ես միայն կը կասկածիմ որ եթէ երթամ Կ. Պոլիս, կայսեր մօտ, մայրաքաղաքս պաշտպանող չըլլար:

Կաթուղիկոսը կրկին խօսեցաւ.

— Մի՛ կասկածիր, տէր արքայ, երկինքին մէջ թող Հայր Աստուած վկայ ըլլայ, իսկ երկրիս վրայ ահա կենդանարար քրիստոսը, որ այժմ կը պատարագէ այս սուրբ սեղանին վրայ, որ ձեզ ո և է մէկը դաւաճանող չկայ: Ես կը հրամայեմ պատարագիչ եպիսկոպոսին թող իր գրիչը թաթխէ գինուոյ գաւնուկին անխառն արեան Ս. բաժակին մէջ և գրէ սաստիկ երդման գիր մը,



որ, ես գլուխը հոգեւորականութեան և Վեստ Սարգիսը ու միւս նախարարները իբրեւ ներկայացուցիչ քաղաքի բոլոր դասակարգին, կ'երդնունք այս սուրբ անմահ պատարագով, մեր Փրկչին խաչով, անոր Աւետարանով, որ ինչպէս մեր Տէր Յիսուս Քրիստոս բարձրացաւ խաչափայտին վրայ և անարգ մահով մեռաւ և թաղուեցաւ մեզ փրկելու համար, այնպէս ալ մենք քրիստոսանման պէտք է նահատակուինք Անի քաղաքը պաշտպանելու և փրկելու թշնամիներու ձեռքէն և մեր արիւնը թափելով յանձնել անոր, իր օրինաւոր տիրոջը: Եւ այդ թուղթը ես կը պահեմ իմ մօտ:

— Տէր Արքայ, կ'աղաչենք, հաճեցէք ընդունիլ մեր Սրբազնագոյն հոգեւոր տիրոջ խորհուրդը, որ պատրաստ է Քրիստոսի պէս բարձրանալ Գողգոթայ, հայ մայրաքաղաքին փրկութեան համար, աղաղակեցին Վեստ Սարգիսեանք:

— Կեղծիք են այդ բոլորը, Տէր Արքայ, և ծուղակ մ'է, կ'աղաչեմ որ չը լսէք զանոնք, կանչեց դարձեալ Պահլաւունին:

— Թող լռէ անաստուած խաւարարը, գոռացին քանի մը ձայներ:

Բայց այն ժամանակ առաջ կուգայ թագաւորը, կը լռեցնէ ամէնքը և յուսահատ ձայնով մը կ'ըսէ:

— Բաւական է: Առաջ եկուր Լուսաւորչի աթոռին վրայ նստող Աստուածապաշտ Հայրապետ: Ահա միայն երդումիդ հաւատալով, քեզի կուտամ քաղաքիս բանալիները և քեզի կը յանձնեմ իմ գահիս պաշտպանութիւնը...: Գրեցէ՛ք երդման թուղթը, ըսաւ Գագիկ և արցունքով լեցուն աչքերով ծնկաչոք Փրկչի խաչելութեան առաջ բազկատարած ձեռքերով օգնութիւն կը խնդրէր Բարձրեալէն:

Իջաւ պատարագիչ եպիսկոպոսը Ս. Բաժակը ձեռքին մէջ: Գրուեցաւ երդման թուղթը Քրիստոսի արիւնով և ամէն մէկ իշխան Խաչի և Աւետարանի վրայ երդում ըրին հաւատարիմ մնալու, ստորագրեցին իրենց անունները երդման թուղթին վրայ գիրը թաթխելով Ս. Բաժակի արեան մէջ:

Գագիկը դուրս ելաւ եկեղեցիէն: Ժողովուրդը կըրկին ցնծագին կը գոչար:

— Ապրի՛ թագաւորը, կեցցէ՛ Գագիկ արքայն:

Սակայն Գագիկ յուզուած էր ու մռայլ: Ան ալ ժողովրդին չէր նայեր, կարծես կը վախնար անկէ:

ԺԶ.

## ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐ ԱՔՍՈՐԱՆՔԻ ՄԷՋ

Միամիտ որսը ինկաւ թակարդի մէջ:

Գագիկ Կ. Պոլիս հասնելուն քանի մը օր միայն շքեղ ընդունելութիւն գտաւ կայսեր կողմէ և յետոյ երբ առաջարկուեցաւ Անին յանձնելու, Գագիկ մերժեց, այն ժամանակ աքսորուեցաւ Մարմարայ ծովի կղզիներէն մէկը:

Գագիկ աքսորի մէջ է:

Հեռու իր հայրենիքէն, հեռու իր սիրելի նախարարներէն: Իր գլխին օտար երկինք կը փայլի, իսկ շուրջը ծովի անեղ ալիքները կը վխտան, որոնք կատաղաբար կը ծեծէին Գագիկի յուսահատութեան վրայ և կը հեգնէին զինք:

Գագիկ մտամոլոր կը շրջի աւազոտ ափերուն վրայ ու յուզուած հեռուն կը դիտէ: Կը նայի հեռուն, դէպի հորիզոնը ուր անորոշ վիճակի մը մէջ, փոքր Ասիայի ժայռոտ ափերը կ'երեւան ու իր սիրտը կը մաշուի, հո-



գին կը խռովի և ամբողջ մարմինը կը ցնցուի: Յուսահատութեան սոսկալի բոցերով կը լեցուէին իր աչքերը և կարծես թէ կուզէր թռչիլ, անցնիլ իրեն արգելք եղող ալիքներու մէջէն և վայրկեանի մը մէջ ըլլար այնտեղ, ուր իր սիրտը կը ձգտի, բայց զգալով իր թուլութիւնը բնութեան տարերքին դէմ, յուսահատութեամբ կը թալարէ իր մատները և հառաչելով կը կանչէ:

— Ո՜հ, հայրենեաց սուրբ շիրիմներ, մանկութեանս օրրան հայրենիք, իմ սիրուն Անի, ո՞ւր էք դուք, ձեր թագաւորը կը տանջուի այստեղ, ձեր կարօտը կը քաշէր ձեր ջուրին, հողին կարօտը ...: Ախ, ինչո՞ւ ես թեւեր չունիմ ձեզ մօտ թռչելու, իմ կարօտս առնելու և ապա շունչս փչելու...

Բայց չէ՛, սպասեցէ՛ք, պիտի չմեռնի Գագիկ, պիտի շունչը չփչէ ձեր թագաւորը մինչեւ որ իր վրէժը չառնէ դաւաճաններէն: Ձեր թագաւորը ծուղակի մէջ ինկաւ. ճիշտ խաբուեցաւ, ինչպէս միամիտ գառը, բայց ալ չի խաբուիր:

Ո՜, ստոր իշխաններ, ատելի Հայրապետ և դուն Մեհրուժանի և Վասակի օրինաւոր ժառանգ Վեստ Սարգիս, քու թունալից լեզւով դաւաճանեցիր թագաւորիդ, դաւաճանեցիր հայրենիքիդ և թող անիծեալ ըլլաս յաւիտեան:

Թող ոսկորներդ հանգիստ չգտնան գերեզմանին մէջ և այն սուրբ հողը. որ դուն դաւաճանեցիր, թող դուրս նետէ ոսկորներդ և իր գիրկը չընդունի ինչպէս անարժան դաւեկի ժահրալից ոսկորներ... Ո՜հ, Աստուած, կատարէ այս իմ խնդիրքս», ըսաւ Գագիկ և ծունկ չոքեց: Իր երեսը կը վառէր, աչքերը կը փայլատակէին, հոգին կը յուզէր: Յանկարծ վեր թռաւ տեղէն, քանի մը քայլ առաջ գնաց և կանչեց:

— Ժողովուեցէ՛ք, նախարարներս, հաւատարիմ իշ-

խաններս և քաջ զինուորներս, հայրենիքը վտանգի մէջ է և ձեզ կը սպասէ։ Հասէք, օգնեցէք, թէ չէ ստրկութեան շղթաները ամուր մը կը կապեն զայն, և դուք կը տրտմաք դառնօրով անոր ծանր լուծին տակ...։ Է՜յ, ո՞վ կայ այդտեղ, տուէք սուրս, հնչեցուցէք պատերազմական փողերը և շարժեցէք առաջ... ձեր թագաւորն է որ ձեզ կ'առաջնորդէ. կորնչին թշնամիները. ըսաւ Գագիկ և պատերազմի դաշտը կարծելով, կ'ուզէր առաջ երթալ, բայց տեսնելով որ իր սուրը մէջքէն չէ կախուած, յուսահատական ճիչ մը արձակեց և կանչեց։

— Լեւոնի՛կ, Լեւոնի՛կ։

Լեւոնիկ, որ միշտ անբաժան էր Գագիկէն, հեռեւած էր իր թագաւորին աքսորանքին մէջ և այն ժամանակ, երբ Գագիկը «Լեւոնիկ» կը կանչէր, ան խրճիթին առջեւ նստած, գլուխը ձեռքերուն մէջ դրած խոր մտածմունքի մէջ էր ընկղմած։ Շատ անգամ տեսած էր թագաւորին մտազբաղ վիճակը, բայց երբ լսեց իր անունը, երբ իմացաւ որ թագաւորը զինք կը կանչէ, ակնթարթի մը մէջ վեր թռաւ և քանի մը քայլ առնելով հասաւ թագաւորին։

— Ի՞նչ է, Տէր, ես այստեղ եմ։

— Ո՞ւր է սուրըս, սուրը՜ս...։

Լեւոնիկը պահ մը ոչինչ պատասխանեց, բայց իր սիրտը այնպէս կսկծաց, որ անոր աչքերուն մէջ երկու զոյգ արցունքներ երեւցին և ինկան այտերին վրայ։

— Սո՛ւրըս, Լեւոնիկ, կանչեց Գագիկ կրկին, այնպիսի հառաչանքով, որ կարծես սրտին խորերէն էր որ դուրս կուգար։

— Չկայ թագաւոր...։

— Ինչպէս... թագաւորը առանց սուրի... բայց ո՞ւր են նախարարներս, իշխաններս, իմ քաջ զինուորներս...։



— Չ'կան, Տէր...։

— Իսկ ո՞ւր ենք մենք։ Այս ի՞նչ ջուրեր են, որ մեզ շրջապատած են, այս ի՞նչ երկինք է, որ մեզի կը ծածկէ օդը. ջուրը, հողը, ո՞ւրտեղ ենք։ Լեւոնիկ, ըսէ, ո՞ւր ենք...։

— Աքսորի մէջ, Տէր իմ, աքսորի մէջ։

— Հայոց թագաւորը աքսորանքի մէջ... հա՜... հա՜... հա՜... տեսակ մը քրքիջ արձակեց Գագիկ, որ նման էր այն տեսակ յուսահատական քրքիջի, երբ մարդ գիտակցական աշխարհը ձգելով քայլ մը կ'առնէ դէպի զառանցական աշխարհը։ Վիշտը սոսկալի կերպով կը կրծէր Գագիկին սիրտը և այդ վշտին անսովոր հառաչանքներն էին, որ դուրս կը թռչէին Գագիկի սրտէն։ Լեւոնիկը վրայ հասաւ և գրկեց իր թագաւորը։ Ան այս անգամ վախցաւ Գագիկին դէմքին արտայայտութենէն։ Գագիկը կարող էր խելքը թռցնել, բայց զուր էր Լեւոնիկի վախը։ Գագիկը Լեւոնիկի գրկին մէջ միայն խուլ հառաչանքներ կ'արձակէր և այդ հառաչանքները կամաց կամաց կը թեթեւցնէին սրտին կսկիծը, հոգւոյն խորին վրդովումը։

ԺԹ.

## ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Մինչդեռ Գագիկ Մարմարայի իշխանաց ամայի կղզին, հայրենիքը յիշելով սրտէս հառաչանքներ կ'արձակէր, այդ միջոցին հայոց կաթողիկոսը և Վեստ Սարգիսը պարապ չէին նստած։

Գիշեր էր, կաթողիկոսին մօտ ժողովուած էին Վեստ Սարգիս, իր համախոհ իշխաններով և քանի մը վատ Կիրակոս քահանայի նման հոգեւորականներով։ Ժողո-

վէն կը նախագահէր արքայնատուրբ Հայրապետը, որ նստած էր գահին վրայ և խոնարհուած էր մտածութեան մէջ: Յանկարծ սթափելով, բարձրացաւ նստած տեղէն և հանելով ծոցէն Քրիստոսի արիւնով գրած երդման գիրը և հանդիսաւոր կերպով մը ըսաւ.

— Վսեմաշուք տեարք, ահա մեր երդման թուղթը, բայց հարկաւոր չէ, որ մենք մեր երդումը դրժենք: Այդ մահացու մեղք է, հոգւոյն սրբոյ հայհոյութիւն: Մենք ուխտած ենք, պէտք է մեր ուխտը սրբութեամբ կատարենք. պէտք է մեռնինք եկեղեցւոյն և ազգին շահերուն համար, պէտք է նահատակուինք և այնպէս քաղաքը յանձնենք իր օրինաւոր տիրոջը: Ամենքնիդ գիտէք, որ Գագիկը թագաւոր չէ և ոչ ալ բոլոր ազգին հաճութեամբ է գահը բարձրացած, այլ ծածուկ, միայն Պահլաւունիներու ընտրութեամբ, ուստի և թագաւորանիստ Անի քաղաքի օրինաւոր տէրը անիկա չէ:

— Այո, շատ ճիշտ է վեհափառ տէր, ըսաւ Վեստ Սարգիս:

— Արդէն բոլոր ազգը միաձայն հաւանութեամբ քեզի էր վստահած արքունի գանձը, տէր իշխան, որ քեզ թագաւորեցնէին եթէ Պահլաւունիները խարամանկութեամբ մէջտեղ չը հանէին այդ կաթնակերը, տեսակ մը հաճոյական ձեւերով ըսին իր մէկ քանի համախոհները:

— Այսպէս թէ այնպէս՝ վերջապէս մենք մեր երդումը պիտի կատարենք: Կտակը մահէ վերջ կրնայ գործադրուիլ: Լուսահոգի Յովհաննէս թագաւորը Անին իր հրջակայով կտակած էր իբր ժառանգութիւն Յունաց կայսրը, որ հիմա օրինաւոր տէրը կը համարուի: Բացի այդ մեր ընդհանուր ազգին շահը կը պահանջէ որ Անին յանձնենք օրինապահեալ կայսրին, որով թէ մենք պարտական չենք Միոյ Աստուծոյ ահեղ ատենին առջեւ մեր երդումը կատարելով, և թէ կը փրկենք խաղաղութեամբ



արքայից արքային հզօր հովանաւորութեան ներքեւ:

Հետեւաբար մեզի պէտք է միայն այդ բանին համար մտածել, նոր երդման թուղթ մը գրել և Անւոյ բանալիներուն հետ միասին ղրկել Յունաց կայսեր:

Առաջարկութիւնն ընդունուեցաւ: Գրուեցաւ նոր երդման թուղթը և ղրկուեցաւ հռոմայ կայսեր Անւոյ բանալիներուն հետ միասին: Անգո՛ւթ և անիրա՛ւ մարդիկ, անոնք չմտածեցին, որ ատով հիմնովին քայքայեցին Հայաստանի պետութեան հիմերը և խլեցին այն անկախութիւնը որ դարերէ ի վեր կը պահէին: Ի՞նչ փոյթ անոնց թէ Հայաստանի ինքնուրոյնութիւնը պիտի խախտուէր, կամ մեր նախնեաց արիւնով պահպանած երկիրը պիտի ուրիշները վայելեն: Բաւական է, որ տիրանենգ իշխանները մեծ պատիւներու արժանանային: Հայոց կաթողիկոսը կուրցած փայլուն ոսկիներէ, արժանաւոր վարձատրութիւն մը կ'ակնկալէին. իսկ դաւաճան Վեստ Սարգիսը Հայաստանի գահը կ'երազէր...:

Յունաց կայսրը երբ իշխաններուն երդման թուղթը և Անիի բանալիները տեսաւ, ուրախացաւ, հրճուեցաւ ու կանչելով իրեն մօտ Թշուառ Գագիկը, ցոյց տուաւ անոր Անիի քառասուն բանալիները ու հեգնօրէն ըսաւ.

— Տե՛ս Գագի՛կ, Հայոց թագաւոր, ահա քու իշխանները Անին ինծի կուտան, իսկ դուն ի՞նչ կ'ըսես:

Գագիկի գոյնը նետեց, դէմքը դեղնեցաւ և կայծակներ թռան իր աչքերէն. սիրտը յուզուեցաւ, խորին ցաւէն կսկծաց ու դառնացած պոռաց:

— Դատ արասցէ Աստուած ընդ իս, եւ ընդ դաւաճանողն իմ:

— Վերջացած է, Գագիկ, Անին այլեւս քե՛զ չի պատկանիր: Ջո՛ւր մի՛ մտածեր այդ քաղաքին վրայ: Եւ ես իբրեւ ողորմած կայսր քեզի կուտամ Կապադովկիոյ

Պիզու քաղաքը։ Ապրէ հոն հանգիստ և այլ եւս մի մըտածեր Անիի վրայ։

— Բայց մի՞թէ լրաւմբ կառնես այդ քաղաքը, մի՞թէ ատիկա արդարութիւն է, կայսր։

— Վերջացած է, համաձայն է, դուն ալ, քանի որ իշխաններդ և նոյն ինքն կաթողիկոսը համաձայնած են։

— Ո՛չ, և ո՛չ, Բագրատունի Գագիկը, երբէք չի տար իր համաձայնութիւնը, իսկ եթէ իմ իշխաններս ինծի դաւաճանեցին, թող իմ և յաջորդներուս արիւնը անոնց վիզն ըլլայ, ըսաւ Գագիկ և յուսահատ դուրս ելաւ յունաց կայսեր պալատէն։ Դուրս ելաւ և այնուհետեւ չտեսաւ իր սիրած հայրենիքը։ Իր իշխաններէն դաւաճանուած, յունաց զօրութենէն ընկճուած, ստիպուեցաւ երթալ (1045 թ.) Պիզու քաղաքը. իսկ Պարակաման ներքինին և յունաց զօրավարը Հայաստան ղըրկուեցան բանակով, Անիին տէր դառնալու։

Պարակաման ներքինիին դէպի Անի արշաւելու լուրը Անի հասնելով, արդէն դղրդեցուցած էր անեցիներուն սիրտը։ Անոնք կ'զգային, որ Անիի գլխուն բան մը կը կուտակուի, խիստ սպառնալից ամպեր, որոնց հետեւանքը շատ ծանր պիտի լինէր իրենց համար։ Թագաւորը չկար. ան կը տգար հեռուն աքսորի մէջ, իսկ իրենք մնացած են մոլորուած։ Բայց մեռած չէր ծերունի Վահրամը։ Անոր սիրան ալ թունդ ելաւ երբ լսեց յունաց բանակին մօտենալը և աչքերը վրէժխնդրութեան բոցով լեցուած, պատրաստուեցաւ դիմադրել, և իր կեանքը զոհել Անիի պարիսպներուն տակ։

Խոր, շատ խոր կսկծաց ծերունի Վահրամին սիրտը երբ իմացաւ Գագիկի աքսորուիլը։ Շատոնց գիտէր այդ, շատոնց կ'զգուշացնէր Գագիկը պատրաստուած դարաններէ բայց ալ չլսեց զինք, այլ ոտրանենդ Վեստ Սարգիսի խօսքով ելաւ գնաց Կ. Պոլիս այլեւս չվերադառնալու պայմանաւ։



Եւ ալ չի վերադառնար, այդ կ'զգար Վահրամ իշխան, անոր չվերադառնալով կը կործանուէր Հայաստանը, կը կործանուէր սիրուն ու չքնաղ Անին...։

— Ա՜հ, Տէր, մի՛ թողուր որ Հայաստանը կործանուի, մի՛ դառնացնէ՛ր ծերութեանս վերջին օրերը, որպէս զի ես գոնէ չտեսնեմ Անիի կործանումը...։ Հայաստանը օրհասի մէջ է, Տէր, փրկէ զայն, խորտակէ թշնամիները և դաւաճանները... ըսաւ Վահրամ և իր աչքերուն մէջ արտասուքներ երեւցան, դառնապէս լացաւ։ Լացաւ խորին կսկիծով, յիշելով, որ Հայաստանը կը կործանուի իր իսկ զաւակներուն ձեռքով, որ Անին կ'ոչնչանայ նոյն իսկ հայ իշխաններու ձեռքով։

— Ա՜... եթէ դաւաճան հայ իշխանները չ'ըլլային, եթէ մատնիչները մերիններէն չ'ըլլային, Անին չէր կործանուէր։ Մեր թշնամիները նոյն իսկ մեր մէջէն են, ահա սոսկալի բանը... Վահրամի խօսքը կիսատ մնաց, Դրսէն լսուեցաւ խառնիճաղանճ ձայներ։ Վահրամ քաշեց վարագոյրը և դուրս նայեցաւ։ Դուրսը՝ մայր եկեղեցիին շուրջ խռնուած էր ամբոխը, որ քանի կ'երթար այնքան աւելի ու աւելի կ'ստուարանար։ Վահրամը հասկցաւ քաղաքացւոց այդ խռնումը։ Զգաց, որ քաղաքացիք ալ կ'զգային իրենց անել դրութիւնը և Անիին մօտեցող վտանգը։ Ճիշտ այդ միջոցին էր, որ իր սենեակին վարագոյրները ետ քաշուեցան և այնտեղ երեւցաւ Խենթը։

Վահրամ ետ նայեցաւ։

— Իշխան, ըսաւ Խենթը, յունաց բանակը երեւցաւ։

— Այդ կ'ըսպասէինք արդէն, Խենթ և անոնք շուտով չեն կրնար տիրել Անիին։ Դռները գոց են իսկ

զօրքերը կազմ ու պատրաստ։ Բայց դուն ինծի ան ըսէ, այս ի՞նչ իրարանցում է քաղաքացիներուն մէջ, մի՞թէ արդէն յուսահատած են անոնք։

— Ո՛չ, իշխան, քաղաքացիք ալ զգալով մօտեցող վտանգը, զէնքը ձեռքերնին առած կը պատրաստուին մեռնելու Անիի պարիսպներուն տակ։ Անոնք կը խնդրեն որ դուք առաջնորդէք զանոնք դէպի կռիւ։

— Ապրի՛ն քաղաքացիք, այդպէս ալ պէտք էր։ Ես կը կարգադրեմ ինչ որ պէտք է, մեր զօրքերը քաղաքացւոց հետ միասին լաւ դաս մը կուտան Յոյներուն։

«Կեցցէ՛ Գագիկ, կեցցէ Վահրամ, լսուեցաւ յանկարծ քաղաքացւոց գոռ ձայնը և դղրդեցուց Վահրամ իշխանին պալատի կամարները։

— Կը լսե՞ք, իշխան, քաղաքացիք «կեցցէ» կը կանչեն և ձեզ կը հրաւիրեն առաջնորդելու։

— Լաւ, Խենթ, միայն դուն ինծի այն ըսէ թէ ի՞նչ կընեն Վեստ Սարգսեանք, արդեօք ուրա՞խ են յունաց բանակին մօտենալովը։

— Խիստ ուրախ, տէր, արտաքուստ բան մը չեն ըսեր, իսկ ներքուստ ուրախ են և կարծես դիւրաւ ընդունիլ կը պատրաստուին զանոնք։

— Ինչպէս կը համարձակին.

— Այո, իշխան, ես նկատեցի որ խումբ մը կը պղտորէ քաղաքացւոց միտքը և կը տրամադրէ զիրենք Անին առանց կռուի յանձնել Յոյներուն։

— Այդ չի յաջողիր. ես նոյնիսկ վաղը ջարդ մը կուտամ յոյներուն և կը փախցնեմ Անիի պարիսպներէն շատ հեռու։

— Պէտք է շտապել, Տէր, թէ ոչ Վեստ Սարգիսեանք խիստ զօրացած են։ Յունական ոսկիները շլացուցած են շատ մը իշխաններու աչքերը.



Վահրամ լռեց։ Դառն կսկիծը կրկին կրծեց իր սիրտը։ Ան կը հասկնար որ Խենթը ուղիղ կ'ըսէ, որ Հայաստանը կը զոհուի նոյնիսկ այդ դաւաճան իշխաններէն։

— Կանչէ այս երեկոյ բոլոր մեր իշխանները, ըսաւ Վահրամ փոքր ինչ լռելէ յետոյ, այս երեկոյ մենք խորհուրդ կունենանք, իսկ դուն կրկին մտիր քաղաքացիներուն մէջ և պատրաստէ զանոնք իրենց հայրենիքը պաշտպանելու։ Դուն ժողովուրդին մարդն ես, ժողովուրդի ցաւին սպեղանի կարող ես գտնել. միայն ժողովուրդի ձայնը և այդ գործն է, գնա՛, Տէրը թող քեզ հետ ըլլայ...

— Խենթը իր գործը գիտէ, տէր, ըսաւ Խենթը և խոնարհելով, հեռացաւ։

— Ապրի՛ս, Ներսէ՛ս, ըսաւ Վահրամը անոր ետեւէն։

Մինչ Վահրամ իր զօրքերը կը պատրաստէր և քաղաքացիներէն գունդեր կը կազմէր, յունաց բանակը արդէն պաշարած էր Անին և կըսպասէր քարուքանդ ընել քաղաքը եթէ յօժարակամ չը յանձնուէին։ Բայց Յունաց սպառնալիքը բնաւ օգուտ մը չունեցաւ։ Քաղաքացիք և Վահրամեանք իրենց հայրենիքը պաշտպանելու սիրով վառուած, յանկարծակի բանալով Անիի դռները ուժգին յարձակում մը ըրին յունաց բանակին վրայ և ջարդու փշուր ընելով զանոնք նորէն փախցուցին Անիի պարիսպներէն։ Յաղթութիւնը կատարեալ էր և Պարակաման յոյն զօրավարը գլխիկոր կ'ուզէր ետ դառնալ դէպի Յունաստան, երբ յանկարծ տեսաւ որ, քաղաքացիք իրարանցումի մէջ են ինկած. Պարակաման ետ նայեցաւ և նորէն յոյս առաւ։ Ան շատոնց կ'սպասէր այդ նշանին։

Մինչդեռ քաղաքացիք ու Վահրամեանք անձնազոհութեամբ կը կռուէին յունաց բանակին դէմ, այդ միջոցին Վեստ Սարգիսեանք քնացած չէին: Կռուի ամենատաք միջոցին խումբ մը քաղաքացիք սկսան գոռալ թէ կռիւը պէտք է դադարեցնել, որովհետեւ Գագիկ հրաժարած է թագաւորութենէն և թէ ան բնաւ չը պիտի վերադառնայ այլեւս:

Քաղաքացիք չփոթուած կանգ առին: Կռիւը դադրեցաւ: Իսկ Պարակամանը եւ կանչեցին Անիին տէր դառնալու:

Այդպէսով մատնութիւնը իր դերը կատարեց և յաղթեց տարաբախտ Հայաստանը, որ այդ ժամանակէն վերջ Յունաց գաւառ մը դարձաւ:

Անի լեցուեցաւ Յունական զօրքերը իսկ անեցիներու և Վահրամեաններու սիրտը լեցուեցաւ խորին թախիծով: Զգացին, որ Անիի հետ միասին մեռաւ ամբողջ Հայաստանը, մեռա՛ւ մատնութեամբ, դաւաճանութեամբ և այն ալ որո՞ւ ձեռքով — հարազատ որդոց ձեռքով: Սոսկալի՜ յիշատակ...

## Ի.

## ԹՈՅՆ ԵՒ ՍՈՒՐ

Ամէն բան վերջացած էր:

Անին այլեւս Հայերուն չէր պատկաներ:

Յովհաննէս—Սմբատ թագաւորին կտակը կատարուած էր: Թուլցած էին Վահրամեանք և կը հրճուէր Վեստ Սարգիս իր այդ յաղթութեան վրայ: Վերջապէս կարող պիտի ըլլար ժառանգել այդ գահը: Հոգ չէ թէ միեւնոյն ժամանակ Յունաց ստրուկը կ'ըլլար:



Անին գրաւուելէն վերջ, Վեստ Սարգիսը և Պարակաման զօրավարը գիշեր մը խիստ մտերմական խօսակցութեան մը մէջ էին:

— Իշխան, կ'ըսէր Պարակաման Զօրավարը, իղձերդ արդէն կատարուած են և դուն պիտի ստանաս կայսրէն քեզ խոստացած Հայաստանի գահը, միայն թէ դեռ թշնամիներ շատ ունիս, պէտք է ոչնչացնել այդ թշնամիները:

— Այո՛, տէր, թշնամիներ շատ ունիմ, խիստ շատ, պատասխանեց Վեստ Սարգիս:

— Եւ այդ թշնամիներդ հայ իշխաններն են, ըսաւ Պարակաման և խորամանկ նայուածք մը նետեց Վեստ Սարգիսի դէմքին, կարծես թէ անոր հոգիին գաղտնիքը իմանալ կուզէր:

— Այո՛, հայ իշխանները, կրկնեց Վեստ Սարգիս ժամալար:

— Իսկ շա՞տ են այդ հակառակորդ իշխաններդ:

— Խիստ շատ, միայն Վահրամեանք երեսունի չափ:

— Հը՛մ. ատոնց վրայ պէտք է աւելցնել ուրիշ երեսուն ալ, կրկնեց խորամանկ ժպիտով Պարակաման:

— Ինչո՞ւ:

— Որպէս զի գահդ ապահով ըլլայ և յաղթութիւնդ կատարեալ, ըսաւ հեգնօրէն Պարակաման:

— Այդ կայսեր ողորմած կամքն է, պատասխանեց Վեստ Սարգիս առանց հասկնալու Պարակամանի հեգնական ձեւը:

— Ուրեմն ի՞նչպէս վերցնենք այդ արգելքները, ըսաւ Պարակամանը փոքր լռութենէ մը վերջ:

— Վերցնելը շատ դիւրին է, տէր, միայն թէ ձեր աջակցութիւնը ըլլայ։

— Ի՞նչպէս.

— Երկու ճամբայ կայ զանոնք ոչնչացնելու։

— Որո՞նք են այդ ճամբաները։

— Թոյնը և սուրը։ Մէկ քանին թոյնով իսկ միւսները սուրով պէտք է ոչնչացնել, այդ է իմ կարծիքս, ատով միայն կը հանգստանայ սիրտս, ըսաւ Վեստ Սարգիս սառնօրէն։

— «Զզուելի՜ մարդ» ըսաւ իր մտքէն Պարակաման յոյն զօրավարը, զարմանալով, որ իր առջև կանգնած է հայ իշխան մը, որ իրեններուն ոչնչացման կ'աշխատի։

Ան դեռ այդ տեսակ դաւաճանի մը չէր պատահած, թէև իր մտքէն կ'ուրախանար որ գտած էր մարդ մը որը իր մտքերուն իրագործման կը նպաստէ։ Զէ՞ որ յունաց գլխաւոր նպատակը հայերը լոկ հպատակութեան մէջ պահել չէր, այլ աւելի անոնց ազգութիւնը ջնջել և Յունաց մէջ ձուլելն էր։ Իսկ Վեստ Սարգիսը ճիշդ այդ նպատակի իրագործման կը նպաստէր առանց հասկնալու որ իր երազած գահը չը պիտի ստանար Յոյներէն։

— Լաւ, համաձայն եմ, մէկ քանին թոյնով, միւսները սուրով կը լմնցնենք։ Թոյնով դուն պիտի ոչնչացնես, իսկ սուրով ես, ըսաւ Պարակաման։

Փոքր լռութենէ մը վերջ Պարակաման նորէն հարցուց.

— Իսկ ունի՞ս դուն մարդ մը, որ կարողանայ այդ բանը գլուխ հանել առանց աղմուկի։

— Ունիմ տէր, ես ունիմ հաւատարիմ մարդ մը, որ կարող է հարիւր իշխան թունաւորել։

— Լաւ, այդ քեզ կը ձգեմ, իսկ դուն ինձ այս ըսէ, Վահրամ իշխանը և իր Գրիգոր մագիստրոս զաւակը ի՞նչ մահով պիտի սպաննես, հարցուց Պարակաման։



— Սուրով, իշխան, անոնց անյարմար է թոյնով սպաննել, բայց ատկէ ծեր աղուէսը շատ զգոյշ կը պահէ ինքզինք։

— Լաւ, ինծի թող։ Ես զանոնք կռուի դաշտը կը ղրկեմ, նոյն իսկ այդտեղ կը ստանան իրենց մահը։

Պարակաման հեռացաւ Վեստ Սարգիսէն. Վեստ Սարգիսը մինակ մնալով, գլուխը ձեռքերուն մէջ բռնեց և սկսաւ շրջիլ իր շքեղ պալատին մէջ, յետոյ յանկարծ կանգ առաւ և ծափ զարկաւ։ Ծափի ձայնին վրայ երկու սպասաւոր ներս վազեցին և լուռ կանգնեցան դռներուն մօտ։

— Կանչեցէք այստեղ Եղօն, ըսաւ Վեստ Սարգիս առանց ծառաներուն նայելու։

Ծառաները դուրս գացին և կարճ ժամանակէ մը վերջ ներս մտաւ Եղօն։

Վեստ Սարգիս բռնեց անոր ձեռքերէն և նստեցնելով գահաւորակին վրայ, նորէն ետ դարձաւ, զգուշութեամբ փակեց դռները և իջեցնելով վարագոյրները կրկին մօտեցաւ Եղօյին։

Եղօ, մտազբաղ իշխանին կը նայէր։

— Եղօ, ես քեզի ծանր գործ մը պիտի յանձնեմ և յոյս ունիմ որ կրնաս կատարել։

— Պատրաստ եմ, տէր, ըսաւ մռայլ կերպով մը Եղօն։

— Լաւ, լսէ, Եղօ մեր գործերը շատ յաջող կերթան, խիստ յաջող, շուտով Վահրամ իշխանն ալ կը փճանայ, դուն ալ կ'ստանաս քու Լուսիկը։

— Ի՞նչպէս, իշխան, մի՞թէ այդ ճշմարիտ է։

— Ճշմարիտ է լոյսի պէս, բայց դուն անգործ չպիտի նստիս։

— Ես ի՞նչ պիտի ընեմ։

— Դուն պէտք է մա՛հ ցանես, ամէն կողմ, կը հասկընա՞ս։

— Ի՞նչպէս...։

— Շատ պարզ։ Ինչ որ մենք սուրով չկարողացանք դուն պիտի թոյնով կատարես, իսկ մնացածները, մենք սուրով կը վերջացնենք։

— Ինչպէ՞ս... պիտի թունաւորե՛մ և ո՞վ։

— Մեր հակառակորդները, հայ իշխանները։

Եղօն քանի մը վայրկեան լուռ կեցաւ։ Այդ վայրկեանին անոր դէմքը երբեմն կը գունատուէր, երբեմն կը շառագունէր։ Կ'երեւար, որ միտքը կը տանջուէր կարծես բան մը կ'ուզէր ըսել Վեստ Սարգիսին, սակայն չէր վստահանար։

Վեստ Սարգիս հասկցաւ անոր այլայլումը, զգաց, որ Եղօն կը տատանէր, կը վարանէր։ Հասկցաւ, որ պէտք է խրախուսել Եղօն, ուստի դէպի ան դառնալով ըսաւ.

— Անպիտան Վահրամեանք մեզի շատ տանջեցին, բայց վերջը ընկճուեցան։ Չկայ այլեւս Գագիկը, իսկ Վահրամեանք, ինչպէս դուն կը տեսնես այնքան թուլցան որ հազիւ նկատելի է անոնց գոյութիւնը։ Բայց որպէս զի անոնց գոյութիւնը իսպառ ջնջուի, որպէս զի անոնց ծուխը իսպառ մարի աշխարհիս երեսէն, վերջին հարուած մ'ալ պէտք է հասցնել, իսկ այդ վերջին հարուածը սուրն ու թոյնը ըլլալու են։ Տեղ մը սուր, միւս տեղ թոյն։ Յունաց Պարակամման զօրավարը սուրով պիտի կտրէ անոնց հետքը, իսկ ես թոյնով պիտի կարճեցնեմ անոնց կեանքը։ Թոյնը և սուրը զօրաւոր միջոցներ են Վահրամեաններու ծուխը մարեցնելու, որոնց փճացումով վերնայ արգելքը և այն ժամանակ Վեստ Սարգիսը իր գլուխը կը դնէ Հայաստանի գահը... իսկ դուն



Եղօ՛, կը ստանաս Հայաստանի թագաւորէն առատ վարձատրութիւն...։

— Բայց, Տէր, մի՞թէ բաւական չեն այնքան զոհերը, որոնք մեր ձեռքով մահացան։ Անոնց հոգիները պիտի հալածեն մեզ...։

Վեստ Սարգիս Եղօյի խօսքերը լսելով ցնցուեցաւ։ Վայրկեան մը իր դէմքին վրայէն անցաւ մահուան գունատութիւնը և վայրկենաբար մտքէն անցաւ այն զոհերը, այն վատութիւնները, որոնք գործած էր։ Քիչ մըրը, մնաց իր աչքերը մթնէին և գլուխը դառնար, բայց զըսպեց ինքզինք, հաւաքեց իր սառնասրտութիւնը և դառնալով Եղօյին ըսաւ.

— Խենթ ես, Եղօյ, մի՞թէ կը կարծես թէ մեռեալները յարութիւն կ'առնեն և կը հալածեն մեզ։ Մի՞թէ դուն կը հաւատաս թէ այս աշխարհէն զատ գոյութիւն ունի ուրիշ աշխարհ... չէ, չէ՛, սո՛ւտ են բոլորը, մարդիկ մեռնելէ յետոյ կը ոչնչանան թէ մարմնով և թէ հոգւով։ Սուտ է, երբ կ'ըսեն թէ մեռնելէն վերջ մարդկանց հոգին ուրիշ աշխարհ մը կ'երթայ, թէ անոնք կը ներկայանան Աստուծոյ ահեղ դատաստանին...։

— Բայց իշխան, ես լսած եմ որ մեռելները մինչև անգամ յարութիւն կ'առնեն գիշերները և...։

— Սուտ է, Եղօ, բոլորը սուտ է, ընդհատեց իշխանը, Եղօի վրայ այնպիսի նայուածք մը ձգելով որմէ Եղօն սարսռաց և իսկոյն լռեց։

— Լսէ՛, շարունակեց Վեստ Սարգիս, ինչ որ քեզ կը պատուիրեմ ճշմարտութեամբ պէտք է կատարես։ Վահրամ իշխանին ամենամտերիմ իշխաններէն հինգ հոգի պէտք է թունաւորես և զանոնք միւս աշխարհը ղըրկես։ Ատով դուն կը հարթես թէ՛ քու և թէ՛ իմ ճամբաս։

— Ես ձեզ կը լսեմ, իշխան, պատասխանեց Եղօն սառն կերպով։

— Ամենէն առաջ դուն պէտք է թունաւորես Մոկաց իշխան Ատոմը, յետոյ Մանաճիհր իշխանը, Գնունին, Սանաղի, իսկ վերջը Թլպաղտոյ բերդի իշխան Թորոսիկի որդին՝ Ստեփանիկը...։

— Ստեփանի՞ը... Լուսիկի նշանածին... ըսաւ Եղօն և ուրախութենէն վեր թռաւ։

— Այո՛. Ստեփանիկը, կը տեսնե՞ս, ես քեզի ալ կը մտածեմ։ Սպաննելով Ստեփանիկը, քու ճամբադ կը հարթուի։

— Այո՛, իշխան, իմ ճամբաս կը հարթուի, բայց Վահրամ իշխանը կրկին արգելք պիտի ըլլայ։

— Անոր մասին մի՛ մտածեր։

— Ի՞նչպէս։

Անոր և Հարպիկի հոգը Պարակաման իշխանն է յանձն առած։

— Ի՞նչպէս, իշխան։

— Ան զանոնք այնպիսի կողմեր կը ղրկէ, որ անգամ մ'ալ ետ չեն վերադառնար։ Սուրը անոնց կեանքը այնպէս մը կարճեցնէ, ու իրենք. հայերն ալ չեն իմանար թէ ի՞նչպէս և ուր տեղ ինկան անոնք։ Շատով մեր հակառակորդ իշխանները իրենց զօրքերովը կը ցրուին երկրին զանազան կողմերը և կամ կոչնչական պատերազմներուն մէջ։ Անոնց հոգը նոյն ինքն Պարակաման իշխանը պիտի քաշէ։

— Ես պատրաստ եմ, իշխան, կատարել ձեր հրամանը։ միայն յայտնեցէք ինձ թէ ե՞րբ և ո՞ւրտեղ պէտք է կատարել, ըսաւ Եղօն։

— Այդ թոյնը շատ դանդաղ կը ներգործէ, բայց անվրէպ մահը կը հասնի ճաշակողին։ Քեզ տեսնեմ, քանի մը օրէն Մանաճիհր իշխանին տունը մը հանդէս պիտի



կատարուի։ Այնտեղ պիտի ըլլան նաև Վահրամեան իշխաններէն շատերը, ի միջի այլոց և այդ իշխանները՝ Դուն թոյնը պիտի թափես ճիշտ այդ իշխաններուն կերակուրին մէջ առանց վրիպելու, առանց մէկուն կերակուրը միւսին հետ խառնելու, հասկցա՞ր։

— Այո, իշխան, շատ լաւ հասկցայ։

— Դէ՛, գնա, ուրեմն, նշանակուած օրը եկուր որ թոյնը միայն ստանաս, իսկ մնացածը գործդ է։

Եղօն ելաւ և դուրս գնաց, քսակ մը ոսկի նուէր ստանալով։

Արեան փրկանքը առաջուց ստացաւ, այնպէս, ինչպէս Յուդան երեսուն դահեկան ստացաւ, իր Տէրը Յիսուսը մատնելու...։

ԹԼ.

## ՍՐՏԻ ԿՍԿԻԾՆԵՐ

Լուսիկը խենթի ձեռքով ազատուելէն յետոյ կը գտնուէր Վահրամի պալատը, անոր աղջկան Գոհարիկին հետ միասին։ Երկուքը միասին ապրելով երջանիկ կը համարէին ինքզինքնին, իրարու հետ կը խօսէին, կը ծիծաղէին, բայց այդ ծիծաղը, ժպիտը դառն էր և կեղծ։ Անտեսանելի որդ մը կը կրծէր երկուքին սիրտն ալ և չէր թոյլ տար որ անոնցմէ ո՛չ մէկը լիաթոք ժպտեր, ազատ ծիծաղէր և ուրախանար։ Կարծես ծանր բան մը, սեւ ճիւաղ մը նստած էր անոնց մատաղ սրտերուն մէջ և իր անգութ ճնշումով կ'ուզէր թառամեցնել անոնց մատաղ կեանքերը։ Եւ վարդի նորաբողբոջ կոկոնները կարծես թէ թառամէին, և չորնային...։ Արդեօք ինչ բան կը ճնշէր անոնց մատաղ սրտերը... ի՞նչ պիտի պատա-

հէր, քանի որ անոնք ծլած էին ապրելու և վայելելու աշխարհը։

Ո՛հ, դաժան է, խիստ դաժան, երբ մատաղ սրտերէն կակիծներ դուրս կը թռչէին, երբ անուշահոտ վարդը դեռ չբացուած կ'սկսի թառամիլ...։

Բայց ի՞նչ վիշտ ունէին Գոհարիկն ու Լուսիկը։ Մի՞թէ անոնք կը վախնային որ չի՞ն արժանանար իրենց փափագին, ո՛չ, քանի որ Վահրամ իշխանը կը խոստանար շատ շուտով միացնելու իրենց սրտի սիրածներուն հետ։ Հարպիկն ու Ստեփանիկը դեռ ողջ էին և սրտաբեկ կ'սպասէին, որ Ս. Պսակի խորհուրդը կապէր այդ սրտերը վերջնականապէս, բայց չարաբաստիկ հանգամանքները՝ Անիի գրաւումը, Գագիկի հեռանալը Անիէն և Յունաց մուտքը արգիլք կը դառնային անոնց։

Սակայն սպասելը վերջ մը ունէր և Վահրամ իշխանը վճռած էր կարճ ժամանակէ մը պսակել զանոնք և ահա այդ առթիւ Մանաճիհր իշխանը հացկերոյթ մը պատրաստած էր, ուր ներկայ էին Վահրամեանք, Հարպիկն ու Ստեփանիկը։

Եւ ահա մինչդեռ Հարպիկն ու Ստեփանիկը Մանաճիհրի մօտ կ'ուրախանային, երկու օրիորդ ալ Վահրամի պալատէն դուրս կը նայէին և կը դիտէին հեռուն, Անիի կանաչապատ բլուրները, ուր բնութիւնը ուրախ կը ժպտէր և ուր թռչունները կը ճռուողէին իրենց քաղցրաձայն դայլայլիկները...։

Սակայն երկու օրիորդներն ալ մռայլ էին և գունատ։

Երկուքն ալ լուռ ու մտայոյզ էին։

Հեռո՛ւն բնութիւնը սիրուն և սքանչելի էր։

— Լուսիկ, ի՛նչ հրաշալի է Անին, ի՛նչ սքանչելի է բնութիւնը, ընդհատելով Գոհարիկ լռութիւնը։ Բայց Լուսիկը կարծես չլսեց զայն. ան դեռ տեսակ մը ապ-



շութեան մէջ կը գտնուէր, երբ մարդ իր հոգին ձգելով երական աշխարհը, ցնորքներու մէջ կը խորասուզուի։

— Լուսի՛կ, մի՞թէ դուն չես լսեր ինձ, կրկնեց Գոհարիկը։

— Ի՞նչ է քոյրիկ, պատասխանեց Լուսիկ, դեռ ապուշ կտրած աչքերով նայելով Գոհարիկին։

— Ես կ'ըսեմ որ հրաշալի է բնութիւնը, սքանչելի է Անին։

— Այո՛, Անին, սքանչելի է, ի՛նչ հոգ, երբ ա մերը չէ, մեզի համար չի ժպտիր բնութիւնը, ալ մեզի համար ապաստանարան չէ սիրուն Անին. ա՛խ, սիրուն Անին... ամէն բան կորսուեցաւ մեզի համար։

— Ի՞նչպէս, Լուսիկ, ի՞նչպէս ամէն բան կորսուեցաւ, դուն շատ շուտով կը յուսահատիս։

— Յուսահատուի՞մ... բայց, քոյրիկ, մի՞թէ պէտք չէ՞ յուսահատիլ, երբ մարդ իր ծնած տեղէն հեռու կը քշեն։

— Մեզ՝ ո՛չ ոք չի կրնար քշել, դուն զուր մի՛ յուսահատիր, ըսաւ Գոհարիկ, ինքն ալ իր խօսքերուն չհաւատալով։

— Պարապ մ'աշխատիր խրախուսել զիս, Գոհարիկ, քանի որ սրտիդ մէջ աւելի դառն վիշտեր կան քան իմս, մի՞թէ կը մոռնաս հայոց ծերունի Վահրամը թէ՛ ինչպէս ան անքուն գիշերներ կ'անցնէ և միշտ կուլայ ու կուլայ և հառաչանքներ կ'արձակէ, ինչո՞ւ համար, եթէ ոչ մեր սիրուն Անիին համար, որ նենգութեամբ յափշտակեցին մեզմէ Յոյները և այդ բաւական չէ, հիմակ ալ Պարակամա՛ն զօրափարը ինչեր չըներ։

— Ի՞նչ կ'ընէ.

— Ան հայ իշխաններու զանազան կողմեր կը ցրուէ և մեր քաղաքները յոյն զօրքերով կը լեցնէ։

— Ճիշդ է, Լուսիկ, ճիշդ է, ախ, արդեօք ի՞նչ

պիտի ըլլայ ասոր վերջը, ըսաւ Գոհարիկ ախ մը քաշելով։

— Ի՞նչ պիտի ըլլայ։ Միթէ պարզ չէ։ Անիի մահը Հայաստանի մահը կը նշանակէ։ Կը մեռնի Անին, նոյնպէս կը մեռնի Հայաստանը։

— Բայց միթէ այդ չե՞ն տեսներ մեր իշխանները։

— Ո՜վ, Վեստ Սարգի՞սը... Անիծեալ ըլլայ ան, ինքն է, որ Հայաստանի կործանման ճամբան կը հարթէ։

— Տե՛ս, տե՛ս, Լուսիկ, ահա կարծես ինքը, Վեստ Սարգիսն է որ կ'անցնի, ըսաւ Գոհարիկ ցոյց տալով դէպի դուրսը, ուր իրօք կ'անցնէր Վեստ Սարգիս քանի մը իշխաններու հետ։

— Այո, նա ինքն է, բայց ինչպէս մռայլ է իր դէմքը, սարսափելի՜ է դէմքին արտայայտութիւնը... ինքը դժոխքը կը սարսափի անոր դէմքէն և ես կը դողամ, ըսաւ Լուսիկ ցնցուելով։

Գոհարիկ բռնեց անոր ձեռքէն և նստեցուց գահաւորակին վրայ։ Ճիշդ այդ միջոցին էր որ նաժիշտը ներս մտաւ և յայտնեց որ Ստեփանիկ կը ցանկայ տեսնել օրիորդները։ Լուսիկի սիրտը արոփեց։ Ոտքի կանգնեցաւ և շտկուեցաւ, իսկ Գոհարիկ դառնալով նաժիշտին հրամայեց ընդունիլ Ստեփանիկը։

Ստեփանիկ ներս մտաւ, բարեւեց օրիորդները և համբուրեց անոնց ձեռքերը. յետոյ կանգնեցաւ առանց բառ մը անգամ արտասանելու։ Իր դէմքը այլայլուած էր, աչքերը անսովոր կրակով մը լեցուած էին, արդեօք ինչ կը նշանակէր այդ։ Օրիորդները զինք բնաւ այդ դրութեան մէջ տեսած չէին։

Անոնք զարմացած իրարու երես նայեցան։

— Նստեցէ՛ք, իշխան, ըսաւ Գոհարիկ։

— Այո, պէտք է նստիլ, հանգստանալ, ծունկերս կը դողան և սիրտս... ըսաւ Ստեփանիկ նստելով գա-



հաւորակին վրայ լուռ, առանց խօսքը շարունակելու։

— Ի՞նչ է սիրտդ, իշխան, դուն ուրախութենէ կը դառնաս, ի՞նչպէս անցուցիր Մանաճիհր իշխանին մօտ, ըսաւ Լուսիկ դառնալով Ստեփանիկին և աչքը չհեռացնելով անկէ։

Ան զգաց որ Ստեփանիկին չարագուշակ բան մը պատահած էր, բայց ի՞նչ — չէր կրնար հասկնալ։ Լուսիկ անոր դէմքին այլայլումը գինիի շոգիներուն կը վերագրէր։

— Օ՜... օրիորդ ուրախացանք, ուրախացանք, բայց սիրտս կուլայ։ Մի՞թէ կարող ենք մենք ուրախանալ ներկայ պայմաններուն մէջ։ Մի՞թէ Ստեփանիկի սիրտը կարող է ուրախանալ։ Չէ՞ որ ան հիմակ կ'ուլայ, կուլայ ո՞վ գիտէ ինչու համար... ինձ անհասկնալի է, օրիորդ, խրախճանքի կէսէն սիրտս տխրեցաւ, արցունքներս բղխեցան աչքերէս և դառն կսկիծներ անողորմ կերպով քաղեցին սիրտս ու հոգիս. կարծես կ'ըսէին թէ ես պիտի մեռնիմ, թէ ես այլեւս չը՛ պիտի տեսնեմ իմ Լուսիկս և ես չտապեցի վերջին անգամ զայն տեսնելու... Ներէ՛ ինձ, ըսաւ Ստեփանիկը և ծունկ չոքելով օրիորդին առջեւ, համբոյրներով սկսաւ թրջել անոր երկարած ձեռքը։

— Ի՞նչ կ'ըսես, իշխան, ինքզինքիդ եկուր, ամօթ է քեզ նման կորովի երիտասարդին մահուան վրայ խօսիլը։

Ստեփանիկ շառագունեցաւ։ Վեր թռաւ նստած տեղէն և կրկին նստեցաւ գահաւորակին վրայ։ Ապա լուռ, գլուխը ձեռքերուն մէջ դրաւ։

Օրիորդները շփոթուած զայն կը դիտէին, երբ Ստեփանիկը բարձրացուց գլուխը և ինքն ալ նայեցաւ օրիորդներուն։

Գոհարիկ և Լուսիկ զարհուրելով նայեցան անոր երեսը։

Ստեփանիկի դէմքը մեռելի գոյն մը առած էր, շրթունքները կապուտցած էին, իսկ աչքերը ակնակապիճներէն դուրս թռած։

— Սիրտս կ'այրի, օրիորդ, և ահա ես կը մեռնիմ, Մնաս բարով, մի՞թէ չես հասկնար թէ՝ ինչ կը նշանակէ սրտի կսկիծներ ունենալ... օ՜... սարսափելի է, զարհուրելի է... բայց Ստեփանիկ չի վախնար մահէն... Լուսիկ, ո՞ւր ես...

Վերջին անգամ մը համբուրեմ քեզ... Մնաս բարով... մի մոռնար զիս, գերեզմանիս վրայ վարդեր փռէ, խունկ ու մոմ վառէ... որ անուշահոտ բուրմունք մը տարածէ շուրջս... ա՜խ...

Ստեփանիկ լռեց, վար պիտի իյնար, բայց վրայ հասան օրիորդները և բռնեցին զայն։ Այդ ժամանակ սենեակին մէջ լեցուեցան ծառաներ, Գոհարիկի մայրը՝ Շուշանը և վերջը ներս եկաւ ծերունի Վահրամ իշխանը։

— Հա՛յր, օգնէ՛ Ստեփանիկին, ըսաւ Գոհարիկ դողդոջուն ձայնով մը։

Վահրամ իշխանը մօտեցաւ Ստեփանիկին, և սառած մնաց։

Ամէն բան հասկցաւ։ Ստեփանիկի բերանէն փրփուր դուրս կը թափէր և աչքերը կատաղի էին։

— Հեռացէք այստեղէն, դարձաւ ըսաւ օրիորդներուն, իսկ ինքը ծառաներու օգնութեամբ պառկեցուց Ստեփանիկը գահաւորակին վրայ։

— Ինչ է, հայր, մի՞թէ կը մեռնի, ըսաւ Լուսիկ և ծունկ չոքեց Ստեփանիկի առջեւ։

— Լուսիկ, Լուսիկ, հիւսէ ծաղկէ պսակը, սիրուն պսակ մը անթառամ ծաղիկներէ... օ՜... սրտիս կսկիծ-



ները. ո՞ւր է սուրս... տուէք սուրս, ես մխեմ սիրտըս... սարսափելի՜ կանչեց Ստեփանիկ և ուզեց ձեռքերովը ճանկռտել իր սիրտը, ուր հրդեհը անողորմաբար կը լափէր և սոսկալի տանջանքներ կը պատճառէր։

— Հայր, կ'աղաչեմ, յայտնէ ինձ, ի՞նչ է պատահած անոր, մի՞թէ պիտի մեռնի, ըսաւ Լուսիկը նորէն և արտասուքները հեղհեղացին իր աչքերէն։

— Սրբացի՛ր, աղջիկս, տար ճակատագրին այս դառըն հարուածն ալ, Ստեփանիկ իշխանը կեանքի բերել անհնար է, թունաւորուած է ան ամենասոսկալի թոյնով մը։

— Թո՛յն, թո՛յն, և պիտի մեռնի՜...։ Ահա և իմ թոյնը, որ ես կը պահէի դառն օրերու համար...։ Ես քեզի հետ եմ, իշխան, և քեզ հետ ալ պիտի երթամ միւս աշխարհը, ուր վիշտերը չեն կրծեր սիրտս, ըսաւ Լուսիկ և զգեստին քղանցքներէն հանելով սրուակ մը, վայրկեանի մէջ պարպեց մէջի հեղուկ թոյնը։

Վահրամ և ներկայ եղողները վրայ ինկան խլելու, բայց ուշ էր։ Լուսիկ, դատարկ սրուակը մէկդի նետեց և գրկեց Ստեփանիկի արդէն սառող մարմինը։

— Թաղեցէ՛ք միասին, յանկարծ լսուեցաւ Լուսիկի սրտակտոր ձայնը և ամէնքը հեկեկացին։ Քանի մը վայրկեան վերջը թշուառ Վահրամ իշխանին առջեւ երկու անշունչ դիակներ էին տարածուած...։

Խեղճ ծերունիի աչքերուն մէջ ցամքած էին արցունքներ և քար կտրած կը նայէր դաւաճանութեան անմեղ զոհերուն...։

## ԻԶ.

# ԿԸ ԲԱՆԴԵՆ

Դաւաճանին սիրտը դեռ չէր յագեցած։ Ան դեռ ծարաւի էր արեան։ Յունաց ալ ձեռքը դառնալով շատ մը հայ իշխաններու մահուան պատճառ եղաւ։ Շատերը թոյնով սպաննեց, շատերը սուրով։ Ան իր խօսքին տէրըն եղաւ։

Սուրը և թոյնը իրենց դերը կը կատարէին և Վեստ Սարգիս իր դաշնակից Պետրոս գետադարձ կաթողիկոսին հետ կը հրճուէր և դափնիներու կ՚սպասէր, երբ Հայաստանի սահմանները երեւցան Սելճուկեան Թուրքերը։ Ներքին թշնամին՝ հարազատ որդին արդէն քանդած էր և կը քանդէ, Հայաստանը, պէտք էր նաև ուրիշ արտաքին թշնամի մ՚ալ, որ Հայաստանի աւերումը կատարեալ ըլլար։

Տուղրիլ շատոնց կ՚սպասէր յարմար րոպէի մը և գտաւ այդ րոպէն։ Տեսաւ որ Հայաստանը անտէր է մնացած, յոյները միայն կը ճնշեն հայերը, կը հարստահարեն խեղճ ժողովուրդը առանց զանոնք պաշտպանելու հոգը քաշելու, ուստի ինքն ալ ուզեց այդ համեղ պատառին մասնակից ըլլալ։

Անիկա իր հրոսակները առաջ քշեց դէպի անտէր Հայաստանը։ Աւերուեցաւ Արծն բազմամարդ և ճոխ քաղաքը։ Անոր բնակիչները որոնք մօտ 150,000 կը հասնէին, սուրով ջարդուեցան և գերի տարուեցան, իսկ քաղաքին տեղ մոխրի կոյտ մը միայն թողուց։ Աւերուեցաւ իր հետ Արծկէ, Սմբատաբերդ քաղաքները և մոխիրի կոյտեր ձգելով, Սելճուկեան հրոսակները մօտեցան Պայպուրթ քաղաքին։

Ժողովուրդը կը հեծէր, կը ջարդուէր, բայց Դաւա-



ճանին սիրտը դեռ չէր յագեցած իրեններուն արեան կը կարօտէր։

Վեստ Սարգիս մտածեց հանգամանքէն օգտուիլ։ Հայրենիքը պաշտպանելու պատրուակին տակ իր զօրքերով միացաւ Վահրամին, անոր զաւկին Գրիգոր Մագիստրոսին, Լիպարիտ վրաց թագաւորին, Ահարոն Վանայ վերակացուին ու Յունաց զօրքերուն հետ և ճակատեցաւ Պայպուրթի մօտ թշնամիներուն դէմ առ դէմ։

Բայց Վեստ Սարգիսի միտքը ուրիշ էր։ Հայրենիքը պաշտպանելու չէր եկած անիկա, Տուղրիլի դէմ կռուելու, այլ եկած էր Վահրամը և անոր զաւկին Գրիգոր Մագիստրոսի կեանքին թելը կտրելու։

Եւ դաւաճանին իղձը կատարուեցաւ։

Կռուի ամենատաք ժամանակ, երբ որդին և հայրը առիւծաբար կը կռուէին Սելճուկեան Թուրքերու դէմ, դաւաճանը իր սուրը Գրիգոր Մագիստրոսի կուծքը մխեց և տեղն ու տեղը սպաննեց զայն. իսկ ծերունի Վահրամը գերի ինկաւ Թուրքերուն ձեռքը, որոնք անգթաբար տանջեցին և նահատակելով գլուխը մէկ կողմ նետեցին։

Սակայն ծերունիին գլուխը անթաղ չմնաց։ Կէս գիշերին մարդ մը կը պրպտէր անոր գլուխը և արցունքն աչքերուն. մէկ գլուխէն միւսը կ՚անցնէր։ Անիկա Խենթըն էր, ծերունի հայրենասէրին սիրելի Ներսէսը։

Երկար, շատ երկար Խենթը կը սեղմէր իր տիրոջ գլուխը և արդէն յուսահատուած արցունքներ կը թափէր երբ երկինքէն լոյս մը շողաց և լուսաւորեց ծերունիին գլուխը։ Խենթը դէպի լոյսը դիմեց։ Աստուած ինքը ցոյց կուտար իր տիրոջ գլուխը։ Առաջ գնաց և տեսաւ զայն, իր Վահրամ իշխանը երկնքի անապառ լոյսով շրջապատուած։

Խենթը ծունկ չոքեց և համբուրեց ծերունի Վահ-

համին սպիտակ ճակատը։ Ա՜խ, կարծես ան քնացած ըլլար, կարծես թէ դեռ ողջ ըլլար անիկա, սակայն մահաբեր սուրը մխուած էր անոր կուրծքին մէջ և լուռ էր, սիրտը ալ չէր բաբախէր։

— Իշխա՛ն, Խենթդ է, լսէ ինձ, ըսաւ Խենթը և կրկին համբուրեց անոր ալեզարդ դէմքը։

Բայց իշխանը լուռ էր. չէր պատասխաներ, իսկ երկինքի լոյսը աւելի և աւելի կը պայծառանար։

Խենթը շալկեց դիակը և տարաւ հեռու, հեռու...։

Քանի մը օրէն ծերունի Վահրամին դիակը հողին յանձնուեցաւ Մարմաշէնի մէջ, ուր եօթ գիշեր չարունակ անոր գերեզմանին վրայ կ'իջնէր երկինքին լոյսը։

Այդպէս կը պատմեն պատմիչները, այդպէս կը նկարագրեն հին հին դարերու գրողները, անոնք, որոնք տեսած են Վահրամը, որոնք արժանացած են անոր սուրբ դէմքը դիտելու...։

Մինչեւ այսօր ալ կայ այդ սուրբ գերեզմանը, անիկա կարմիր սիրուն քարէ տապան մ'է Մարմաշէնի եկեղեցիին մօտ, որուն հիւսիսային երեսին վրայ համեստ խաչ մը նկարուած է, իսկ վրան արձանագրուած «Աս ամփոփին Աշխարհ Վահրամայ իշխանայ իշխանին Հայոց Մեծաց ի ցեղէ Պահլաւունի, որ Ամենատակէ-ՆՇԳ.» (1047 թ. Ք.)։

ԺԳ.

## ՑԱՆԱԾԸ ԿԸ ՀՆՁԷ . . .

Ահռելի էր բնութիւնը...

Երկինք ու երկիր խառնուած էին իրար, իսկ գետինը կարծես բացած է, իր մահաշունչ բերանը և կրակէ



շանթեր կ'արձակէր չորս կողմը։ Ախուրեան գետը կամաց կամաց կը փշփշար, ծաղկաձորը ծանր ծանր կը հեծեծէր, մինչդեռ Անին իր բրջերով և աշտարակներով, իր պալատներով ու մզկիթներով ծանր կերպով կը հեկեկար։

Մութը պատած էր չորս կողմը և բան մը չէր երեւար։ Ամէն ինչ պատած էր խորին, անթափանցելի խաւարով, երբեմն երբեմն միայն, փայլակներու լոյսէն վայրկենաբար կը լուսաւորէին Անիի աշտարակներն ու շրջակայքը և յետոյ կրկին կընկղմէին խորին խաւարին մէջ, որոտման ահռելի դղրդիւնը կը լսուէր։ Կարծես գեհենին դեւերը միասին կը գոռային և կամ թէ սանդարամէտը կը խորասուզուէր դէպ անյատակ անդունդը...

Կէս գիշեր էր արդէն երբ ահռելի որոտումէ մը վեր թռաւ իշխան Վեստ Սարգիս իր փափուկ անկողնէն և վայրենաբար չորս կողմը նայեցաւ։

Բան մը չէր հասկնար թէ ի՛նչ կը կատարուի իր չուրջը. գիտակցութիւնը կարծես փախած էր իրմէ ու տեղի տուած էր տեսակ մը անմիտ տենդային դրութեան։

Ահա քանի մը օրէ ի վեր էր որ անիկա կորսնցուցած էր իր քունը, նոյնպէս իր հանգստութիւնը։ Հազիւ թէ աչքը գոցած էր, երբ զարհուրելի որոտումը վեր թռցուց զայն իր քունէն։

Վեր թռաւ և ապուշի մը պէս կանթեղին աղօտ լոյսով լուսաւորուած պատերուն կը նայէր, երբ դղրդաց երկրորդ որոտումը։

Վեստ Սարգիսը մեքենաբար երեսը խաչ հանեց։ Եւ այդ առաջին անգամն էր, որ քսան տարուան ընթացքին մէջ ան երեսը խաչ կը հանէր։ Արդեօք ի՛նչ էր պատահած իրեն։ Յանկարծ անկողնէն դուրս թռաւ, գլուխը ձեռքերովը ամուր մը բռնեց և սկսաւ արագ արագ շրջիլ ննջարանին մէջ. այնպէս ամուր բռնած էր

գլուխը, կարծես թէ զայն կը բաժնէին իր մարմնէն և կ՚անջատէին իր իրանէն նետելով հեռու հեռու։

Ճիշտ ալ այդպէս էր։ Այդ վայրկեանին անոր ուղեղն բորբոքած էր, մազերը փուշ փուշ կ՚ըլլային, իսկ աչքերը ակնակապիճներէն դուրս կը թռչէին և կըզգար թէ՝ իր գլուխը իրաւի կ՚ուզէր անջատուիլ իր մարմնէն և փախչիլ հեռու և հեռու, ո՞վ գիտէ, դէպի գեհենի բոցը կամ դէպի անյատակ անդունդը, իսկ ինքը կը մաքառէր այդ գլուխը իր մարմնին վրայ հաստատելու։

Վեստ Սարգիսը մեռնիլ չէր ուզեր դեռ ապրիլ կ՚ուզէր։

—... Ո՞ւր է գահս, արքայական գահս... ինձ խաբեցին յոյները, երեխայի մը պէս խաղցուցին և հիմա՛ կը ծիծաղին վրաս, կը ծաղրեն ինձ... և ո՞ւր, իշխան Վեստ Սարգիսին, որմէ կը դողար ամբողջ Հայաստանը... օ՜... սարսափելի է... զարհուրելի է... խաբուած ըլլայ։ Ամէն յոյս կորսուեցաւ, ամէն նպատակ փշրուեցաւ, խորտակուեցաւ սնոտի երազի մը պէս... Ինչ շահեցայ ես— Անիի կործանումը, Հայաստանի աւերումը և անթիւ զոհերու տանտանքը... ո՛հ ապերախտ յոյնե՛ր, տուէ՛ք ինձ գահս, խոստացուած գահը, թէ չէ՞ երկինքը վկայ կը կանչեմ, կը խորտակուի ձեր գլխուն, բարկութեանս բոցը։ Ինչու փախուստ տուին Սելճուկեան Թուրքերու և երեսէն, վախկոտ շուներու պէս, եւ թողուցին զիս մինակ. ինչու չէք պատասխաներ... Տուէք ինձ խոստացուած գահը, որ ես իմ հարազատներուս արիւնով գնեցի զայն... Արի՜ւն... արի՜ւն... ո՜հ, սոսկալի է...

Որոտը մէկ մ՚ալ որոտաց և խուլ դղրդիւնով մը անցաւ սենեակներուն մէջէն։

Վեստ Սարգիս լռեց։ Արձանի պէս կանգ առաւ



և դէպի իր քնարանին մէկ անկիւնը նայեցաւ։ Այնտեղ կարծես կանգ առաւ որոտը և տեսակ մը սուլում հանեց։

Վեստ Սարգիս ուշադրութեամբ այնտեղ նայեցաւ և սարսափով կարծես շարժուն առարկաներ մը նկատեց, որոնք ոչ կմախքներ էին և ոչ կենդանի մարդիկ։ Վեստ Սարգիս շփեց իր ճակատը, աչքերը աւելի լայն բացաւ, որ որոշէ անոնց ինչ ըլլալը և յանկարծ մազերը ցից ցից կայնեցան. քանի մը քայլ ետ ետ երթալով զարհուրելի ձայնով մը կանչեց.

Է՜յ, հեռացէ՛ք ինձմէ, պարապ տեղը ու՞ք գերեզմաններէն դուրս էք ելած և ձեր լալկան աչքերը դարձուցած էք դէպի ինձ... Բայց Վեստ Սարգիս զարհուրանքով կը դիտէր, որ այդ շարժուն առարկաները հետըզհետէ կատաւարանային և կը մօտենային իրեն։ Ուֆ, որչափ ալ շատ են անոնք և ինչպէս ալ զարհուրելի։ Անոնք բոլորն ալ մոլի նայուածքով կը դիտէին Վեստ Սարգիսի վրայ։ Օ՜... սարսափելի է... սարսափելի՜։ Եւ Վեստ Սարգիսը կը նայէր ու կը ճանչնար անոնք, այդ ուրուականները... Այդտեղ էր Մանաճիհր իշխանը, դարբին Ղեւոնդը, որ իր վայրենի աչքերով վրէժխընդրութեան բոցեր կ՚արձակէր... Իսկ Վահրամը, Գուրգէն իշխանը, կիներ, երախաներ, ծերեր ու երիտասարդներ... Ա՜խ, անոնք ամբողջ լեգէոն մը կազմած են և ինչ կ՚ուզեն արդեօք Վեստ Սարգիսէն...։

— Ո՛չ, Հայաստանի գահը ինձ կը պատկանի։ Ես ձեր ոսկորներուն վրայ շինել տուի այդ գահը և մէկը չի կրնար խլել ձեռքէս։ Կը գոչէր Վեստ Սարգիս և ետ ետ կ՚երթար։ Կամաց կամաց մօտեցաւ պատին եւ կըթնեցաւ անոր։ Իր շնչառութիւնը ծանր էր, աչքերը կատաղի, իսկ դէմքը զարհուրելի։ Ճիշտ այդ ժամանակ իրեն կը թուէր թէ նոյնինքը՝ Յովհաննէս Սմբատ

թագաւորը, որ ժամանակ մը իր ձեռքին խաղալիք էր դարձած, արքայական զգեստներ հագած ձեռքը կ'երկնցնէր իր գլխէն երեւակայական թագը յափշտակելու։

Վեստ Սարգիս ձեռքը դէպի գլուխը տանելով եւ ամուր մը բռնելով երեւակայեալ թագը, հեգնօրէն կը գոռայ։

— «Թուլամորթ թագաւոր, հեռո՜ւ ինձմէ, հեռո՜ւ, ինչու դուն նորէն կը ձգտիս այն բանին, որուն արժանի չէիր»։ Խօսքը կիսատ կը մնայ Վեստ Սարգսի բերանին մէջ։

Ան տեսաւ թէ ինչպէս ամէն կողմէ կը յարձակին իր զոհերը եւ կ'ուզեն խեղդել զինք։ Զարհուրած աջ ու ձախ կը նայի եւ պատէն կախուած սուրը առնելով, կը թռչի դէպի այն կողմը, վերցնելով, մերկացնելով՝ կը յարձակի իր զոհերուն վրայ։

Այդ աղմուկէ, կը բացուի Վեստ Սարգիսի ննջարանին դուռը եւ ներս կը մտնէ մարդ մը զարհուրած կանգնելով դռան մէջ։

Վեստ Սարգիս կայծակի արագութեամբ կը յարձակի անոր վրայ եւ սուրը մխելով անոր կուրծքը՝ կը պոռայ.

— Երկրորդ անգամ մեռի՛ր, անիծեա՛լ Յովհաննէս Սմբատ...։

— Դուն սպաննեցիր ինձ, իշխա՛ն, անիծեալ ըլլաս յաւիտեան, կը ձայնէ ինկած մարդը եւ վերջին շունչը կը փչէ...։

Վեստ Սարգիս վայրկենաբար կը ցնցուի։ Կը ճանչնայ այդ ձայնը։ Որո՞ւն սպաննեց — Յովհաննէս Սմբատ թագաւորին, թէ՞ ուրիշ մը...։

Վեստ Սարգիս կը նայէր իր զոհին եւ կը սարսափէր։

Իր առջեւ տարածուած էր իր հաւատարիմ ծառային՝ Եղօյի արիւնաթաթաւ դիակը։



Որոտումը կրկին գոռաց եւ որոտումով կրկին դղրդեցուց Անիի շրջակայքը, իսկ Վեստ Սարգիս դեռ խելագարի մը պէս կանգնած էր Եղօյի դիակին մօտ...։

ԹԳ.

## ԱՆԻԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Ծանր, արհաւալից տարիներ անցած էին...։

Քրիստոսի 1064 թուականն էր։

Մինչդեռ Հայաստանի բնութիւնը ուրախ ուրախ կը ժպտէր, մինչդեռ առուները ձմրան կապանքներէ նոր ազատուած՝ ուրախ ուրախ կը խոխոջային եւ քչքչալով կ'երգէին հին հին դարերու վիշտն ու խինդը, ժպիտն ու արցունքը, այդ միջոցին Անին սեւ սուգ էր մտած եւ կ'ողբար իր դառն օրերը...։

Անին պաշարուած էր։

Պաշարուած էր ան Ալփասլանի վայրենի, գազանաբարոյ հրոսակներէն, որոնց աչքերը արիւնով լեցուած բոպէ առ բոպէ կը սպասէին, որ ներս թափուին քաղաքը եւ մեծէն մինչեւ փոքր սրի անցնէին։ Անոնք ծարաւի էին արեան եւ կը փափագէին տեսնել իրենց առջեւ մոխիր եւ հուր, մինչդեռ իրենց առջեւ դեռ կանգուն էր Անին իր 1001 եկեղեցիներով, աշտարակներով, պալատներով ու հրաշակերտ շինուածքներով։

Դարերէ ի վեր մարդկութիւնը արիւն քրտինք էր մտեր այդ ճոխ, հրաշակերտ շինութիւնները մէջտեղ բերելու. հիմակ Ալփասլան իր վայրենի գունդերով կանգնած էր այդ հրաշալի քաղաքին առջեւ, ցանկանալով միայն քանի մը ժամէն հայութեան այդ կենդանի վկաները խորտակել ու փշրել, աւերել ու ջնջել աշխարհի երեսէն...

Ի՞նչ կ'ուզէր անիկա...։

Աւերել, քանդել և կոտորել…։ Ալփասլան կը հաւկնար, որ գտած է ժամանակը, և մէկ հարուածով պիտի ոչնչացնէ Հայաստանի երկրին ինքնուրոյնութիւնը։

Լաւ գիտէր, որ Անիի վերջնական կործանմամբ պիտի կործանուի Հայաստանի հոգեվարք անկախութիւնը և այդ պատճառաւ ան հարուածը կ'ուզէր ուղղակի Հայաստանի սրտին հասցնել։

Անեցիք տխուր ու տրտում էին։ Սեւ սուգ էին առած անոնք, բայց ամէն մէկ քաղաքացի վճռած էր մեռնիլ զէնքը իրենց ձեռքին մէջ, իր և Անիի փլատակներուն տակ գտնելու իրենց գերեզմանը։

Եւ անոնք իրենց խօսքը կատարեցին։

Անառիկ էր այդ միջոցին Անին։ Չկար առաջնորդ, չկար ղեկավարող։ Զառամեալ, քայքայուած Վեստ Սարգիս իշխանն էր, որ իր զօրքերը բաղդի կամքին ձգելով ինք ապաստանած էր միջնաբերդին մէջ։ Քաղաքացիք էին, որ դեռ կը կռուէին, դեռ կը դիմանային պաշարման։

Ալփասլանը բաւական երկար ատեն պաշարելով Անին, արդէն կամաց կամաց Անին կործանելու իր յոյսը կտրած էր։

Ամէն անգամ երբ Ալփասլանի հրոսակները կը յարձակէին դէպի պարիսպները, քաղաքացիք մեծ արիութեամբ յետ կը մղէին զանոնք և Ալփասլանի հրոսակներուն մէջ մեծ կոտորած մը կը ձգէին։

Յուսահատած էր Ալփասլան, յուսահատած և կատաղութենէն իր շրթունքները կը կրծոտէր։

Բայց նախանձելի չէր Անեցւոց վիճակն ալ։

Դեռ Ալփասլանի պաշարումէն առաջ յոյները փախուստ տուած էին, Անին ձգելով բաղդի կամքին։

Իսկ քաղաքացիք մինչեւ ե՞րբ պիտի կարողանային պաշտպանել, քանի որ չկային իրենց սիրելի Թագաւո-



րը՝ Գագիկ, հայրենասէր Վահրամեանները, սիրելի և ազգին նուիրուած նախարարներն ու իշխանները…

Մինչդեռ պարիսպներն արդէն կը փճանային թշնամիներու արձակած քարերէն, ահագին քարերը կը զարնուէին պատերուն, տեղ տեղ կը ճաթեցնէին հսկայ պարիսպները…։

Յանկարծ սարսափելի լուրը ցնցեց անեցիներու մարմինը։

Անոնք իմացան, որ Անիի պարիսպներէն մէկը կործանած է և այն տեղէն կուզէր ներս խուժել թշնամին։

«Տէ՛ր փրկէ՛ մեզ, մի՛ թողուր մեզ փճանալու» կանչեցին քաղաքացիք և խուժեցին դէպի կործանուած պարիսպը։

Թշնամին չդիմացաւ այդ բուռն հոսանքին, ուր յուսահատութիւնը և վրէժխնդրութիւնը իրար խառնուած հրաշքներ կը գործէր։

Եւ Ալփասլանը նահանջեց ետ ետ, փախչելով պարիսպներուն տակէն։ Հասկցաւ, որ իր գործը չէ Անին գրաւել։

Փոքրիկ բերդապահ գունդը և քաղաքացիք փլըւած պարիսպին մօտ կռուէն նոր էին վերադարձած, երբ քաղաքի փողոցներէն մէկուն մէջ երեւաց մեզի ծանօթ Խենթը։

Անոր աչքերը կատաղի էին, մազերը ցրուած, դէմքը այլայլած և հագուստները պատռտուած։ Ձեռքին մէջ մերկ սուր մը ունէր, որմէ դեռ կը կաթկթէր արիւնը։

Քաղաքացիներէն մէկը տեսնելով զայն հարցուց.

— Հէ՞, Խենթ, ի՞նչ կ'ընես։

Ինչ որ դուք կ'ընէք, պատասխանեց Խենթը լրջմտութեամբ սուրին վրայէն արիւնը սրբելով, սուրը պատեանը դրաւ։

— Շա՞տ մարդ սպաննեցի՞ր. հարցուց նոյն մարդը.

— Բայց, մէկ հոգի պակաս է։

— Ի՞նչպէս թէ մէկը պակաս էր, Խենթ, դուն կըրկին սկսար քու խենդութիւնը։

— Խենթը իր խենթութիւնը կընէ, բայց ես մէկ հոգի պակաս սպաննեցի։ Շուտով ամէն բանին վերջ կըլլայ, բաժակը լեցուած է և համբերութիւնս հատած։

— Ի՞նչպէս, Խենթ, ես բան մը չեմ հասկնար, ըսաւ խօսակիցը՝ և Խենթին առանձնացնելով հարցական կերպով անոր երեսը նայեցաւ։

— Լոյսի նման պարզ է, որ շուտով Անին կը կործանուի, բայց Անին կործանուելով՝ ան ալ կը կործանուի, ողջ պիտի չմնայ։

— Ո՞վ, Զենթ, ո՞վ չի պիտի մնայ։

— Իշխանը, մատնիչ իշխանը։

— Վեստ Սարգի՞սը... բայց ան ինչու մեղաւոր է։

— Հը՛մ... ինչու մեղաւոր է։ Մի՞թէ ձեզ յայտնի չէ, որ ան եղաւ պատճառ Անիի կործանման։ Մի՞թէ չգիտէք, որ ան յանձնեց Անին յոյներուն, իսկ հիմակ ալ կը բանակցի Ալփասլանին հետ, որ քաղաքը մատնութեամբ անոր յանձնէ, եթէ թոյլ տայ որ ինքը Անիէն ողջ հեռանայ։

— Մի՞թէ այդ ճիշդ է, Խենթ, բայց ատիկա սարսափելի է, մենք կը կործանուինք։

— Ինքն ալ մեզի հետ, պատասխանեց Խենթը և աչքերէն կայծակներ թռան։

— Ի՞նչպէս, դուն մտադիր ես զայն սպաննել։

— Անպատճառ։ Ան այս բազկէն պիտի ստանայ իր մահը, ըսաւ Խենթը և մտամոլոր առաջ անցաւ։

Խօսակիցը երկար նայեցաւ անոր ետևէն և յետոյ գլուխն օրօրելով մրմնջաց։

— Արժանի է...։ Շան մը պէս պէտք է սատկի դաւաճանը։



— Այս խօսակցութեան վրայ քանի մը օր անցած էր։ Մութ գիշեր մը ոչինչ չէր երևնար Անիի չուրջը, միայն քանի մը լոյսեր կը շողային։ Բունի մէջ էր Ալփասլանի բանակը և այնտեղ շարժողութիւն մը իսկ չկար, ոչ մէկ շշունչ չկար։ Պահապանները միայն լուռ կը հսկէին բանակը, երբ աղիողորմ ձայն մը հասաւ անոնց ականջին։

Անոնք դէպի Անի նայեցան ուր խաւարը կը տիրէր և որտեղէն կը լսուէր յուսահատութեան աղաղակ մը, լացի ու կոծի ձայներ։ Արդեօք ի՞նչ էր պատահած Անեցիներուն։ Ինչու անոնք կ'ողբային, քանի որ իրենք, յուսահատուած անեցիներու համար դիմադրութենէն վճռած էին ձգել Անին և հեռանալ այդտեղէն։

Լուրը հասցուցին Ալփասլանին։ Ան լրտեսներ ղրկեց եղելութիւնն իմանալու. որոնք լուր բերին թէ Անիի աշտարակներուն վրայ այլևս պահապաններ չեն երևար և թէ պահապան զօրքը քաշուած էր միջնաբերդը, անպաշտպան դրութեան մէջ ձգելով քաղաքացիները։

Ալփասլանը ճիշդ ատոր կ'սպասէր։ Շուտով հրաման տուաւ իր գնդերուն պատրաստուելու և յարձակելու անպաշտպան քաղաքացիներուն վրայ։

Րոպէի մը մէջ փողերուն ձայնը, զօրականներուն գոռում գոչիւնը դղրդեցուց Անիի շրջակայքի լռութիւնը և անեցիներուն մարմնէն սարսուռ մը անցուց։ Անեցիները լսեցին այդ գոռ ձայնը և լացի ու հեծկլտանքի ձայները աւելի սաստկացուցին։ Կուլային երախաներ, ծերեր ու պատանիներ և իրենց աղաչաւոր ձեռքերը երկինք կը բարձրացնէին։

Անիի մէջէն, երբ Ալփասլանի հրոսակները ներս խուժեցին քաղաքը և կոտորածը սկսան, արիւնալի, զարհուրելի կոտորածը...։

Կը ջարդէին երախաները, ծերերը ու պատանիները, իսկ չատերը ահռելի բարձրութիւններէ դէպի Ախուր-

եանի՝ քարքարուտ ժայռերը կը ձգէին։ Եւ անոնց գլուխները ժայռերու սուր սուր քարերու զարնուելով՝ անոնց ուղեղը կը ցրուէին և արիւնով կը ներկէին շրջակայքը։

Յանկարծ Անիի զանազան անկիւններէն սկսան կըրակէ լեզուներ երեւնալ, որոնք հետզհետէ սաստկանալով սկսան լափել հրաշակերտ շինութիւնները և լուսաւորել արիւնալի տեսարանը։ Գիշերի դեւերու պէս մերկ սուրերը ձեռքերնին, աչքերը արիւնով լեցուն Ալփասլանի հրոսակներն անխնայ կը ջարդէին և կը կտրէին անեցիները, իսկ կրակը կը լափէր շինութիւնները։

Չկար փրկութիւն, չկար ճար մը ազատուելու։

Խելագարի պէս կիներ, երախաներ, մեծ թէ փոքր կը վազէին Անիի փողոցներէն, բայց ամէն տեղ իրենց մահը կը գտնային։ Փողոցներուն մէջ առուի պէս կը վազէր արիւնը և այդ արիւնը քշքշալով եւ ցած վազելով կը ներկէր Ախուրեանի ջուրերը։ Արիւն կտրած էր Անին, դիակներով լեցուած էր Ծաղկոցաձորը, իսկ գետը կարմրցած էր. Ամէն կողմ դիակներ, ամէն կողմ սուր ու կրակ։ Յանկարծ Անիի միջնաբերդին դուները ջարդ ու փշուր եղան եւ այնտեղ սկսաւ սոսկալի կռիւը։

—Խնայեցէ՛ք, կ՚աղաղակեն շատեր ծունկ չոքած իրենց դահիճներուն առջեւ և գրկած իրենց սուրն անմեղ մանուկներ, սակայն դահիճները մէկիկ կը նետէին զանոնք և իրենց տեգերը անոնց մօր կուրծքը կը մխէին։

Սոսկալի եւ զարհուրելի էր տեսարանը։

Բոցերը կը ճարճատէին, աշտարակներն ու բրջերը կը կործանէին եւ իրենց փլատակներուն տակ կը թաղէին հարիւրաւոր մարդիկ։

Կատարածին ժամանակն էր, երբ մարդ մը մերկ սուր մը ձեռքին մէջ կը վազէր։ Ան չէր նայեր ոչ իր ոտքերուն տակ հառաչող դիակները, և ոչ աշտարակներուն, ոչ վայրենի աղաղակները, այլ դիակէ դիակ թռչելով՝ ան կ՚անցնէր դէպի միջնաբերդը, ուր կռիւը շատ տաք կերպարանք մը առած էր։



Այդ մարդը զարհուրելի էր։ Քանի մը թուրքեր իր առջեւ ելան զայն սպաննելու համար, սակայն իրենք արիւնաթաթաւ վար գլորեցան։ Այդ մարդը առաջ անցաւ եւ տեսաւ խումբ մը հայ զինուորներ, որոնք շրջապատած են իշխան մը եւ ամէն կերպով կ՚աշխատէին պաշտպանել զայն, խոյս տալու կռուի դաշտէն։

Ան մօտեցաւ այդ փոքրիկ խումբին եւ զարհուրելի կերպով մը գոռաց։

— Իշխա՛ն Վեստ Սարգիս, ինծի նայէ...։

Իշխանը նայեցաւ դէպի այն կողմը եւ սարսափեցաւ։ Իր առաջ կանգնած էր Խենթը, որ իր մոլի նայուածքը չեշտակի ուղղելով՝ արագութեամբ կը մօտենար իրեն։

— Վատ եւ անարգ մարդ, ո՞ւր կը փախչիս..., տսա՛նք բոլորը քու գործդ են, տես եւ կշտացիր, ըսաւ Խենթը մէկ ոստումով հասաւ դէպի Վեստ Սարգիս իշխանը, որ քարացածի պէս դեռ կանգնած էր միեւնոյն տեղը։

Խենթին շարժողութիւնը նկատելով երկու զինուոր Խենդը առաջքը կտրեցին, սակայն Խենթը այնպէս օրօրեց սուրը անոնց վրայ, որ ետ ետ քաշուեցան, իսկ ինքը առաջ ցատկեց եւ իր սուրը այնպիսի ուժգնութեամբ մխեց որ Վեստ Սարգիս ինկաւ և մահու տագնապի մէջ էր, երբ ամէն կողմէ երեւցան Ալփասլանի հրոսակները եւ շրջապատեցին Խենթը։ Խենթը վայրենի կերպով վեր թռաւ Վեստ Սարգիսի դիակին եւ կուրծքը բանալով պոռաց.

— Շունը սատկեցաւ, այժմ կարող էք...։

Խօսքը կիսատ մնաց Խենթի բերնին մէջ, երբ քանի մը տեգեր մխուեցան իր կուրծքը եւ վար գլորեցաւ։

Այդ ժամանակ մօտակայ աշտարակը փլաւ ահագին դղրդիւնով եւ ամէն ինչ ծածկեց փոշիի եւ քարերու կոյտի մը տակ։

Երկար ժամանակ ա՛լ ոչինչ չէր երեւար.....։

ԻԷ․

# ԴԱՐԵՐԷ ՎԵՐՋ

Ապառաժուտ եւ քարքարուտ տեղ․․․։

Երկու կողմէն ձոր, մէկը ծաղիկներով զարդարուած բայց քարերու կոյտերով լեցուն, իսկ միւսը խոր, անռելի, ուր հանդարտիկ կը սողար գետը եւ քերելով ժայռերու ստորոտները։ Ջուրերու գլխին վերեւ տափարակ հարթ տարածութիւն մը՝ ուր տեղ տեղ, հին հին գամբարաններու պէս սփռուած են աւերակ պարիսպներու վիթխարի շինութիւններու բեկորներ, որոնք սարսուռ կ'ազդեն մարդուն սրտին։ Այդ աւերակ պարիսպներու, բրջերու եւ աշտարակներու մէջ, տեղ տեղ թափուած են աւեծակներու կոյտեր, իսկ տեղ տեղ ալ բուսած են կանաչ խոտ եւ տատասկ։

Լուսին է։ Աստատապէս կը սփռէ իր դժգոյն եւ պաղ ճառագայթները եւ կիսակործան աւերակներ՛ը կ'երեւայ։

Հանդարտիկ քամին հեռուէն կը հնչէր, կ'ուգար եւ կը համբուրէր աւերակները, քնքուշաբար կ'օրօրէ աւերակներու մօտիկ խոտերն ու փուշերը եւ յետոյ, յանկարծ, խելագարի մը պէս ուժգին շառաչելով, զարհուրելի հառաչանք մը կը հանէ անիկա եւ կը կորսուի հեռու հեռու․․․։

Ինչէն վախցաւ ան, ինչէն սարսափեցաւ — յայտնի չէ, միայն թէ քամին աւերակներուն հետ զրկուելէն յետոյ հառաչեց ու փախաւ։ Ան զանոնք այդպէս չէր տեսած, անոնց հետ այդպէս չէր զրկուած։ Ան տեսած էր զանոնք չէն ու պայծառ, սիրուն ու կոկիկ, իսկ հիմակ ինչի կը հանդիպէր․․․։ Քամին կուգայ, քամին կուլայ ու կ'երթայ, ոչ ոք անոր կը հետախօսի, ոչ ոք պատասխան կուտայ անոր։

Այդտեղ խորին, սարսափեցնող լռութիւն մը կը տի-

րէ։ Գերեզմանական անդորր լռութիւն կը նմանի անիկա, ուր վիթխարի բրջերու մէջ ոչ մէկ շշունջ չի լսուիր, ոչ մէկ ձայն չի հաներ։ Ամէն ինչ մեռած է և անշարժ, լուռ եւ անխօս։ Կը խօսի միայն քամին եւ այն ալ կը հառաչէ, իսկ ձորերու մէջ հոսող գետը լուռ կը հեծկլտայ։ Եւ քամիի այդ հառաչանքը ու գետին հեծկլտանքին հետ միասին երբեմն երբեմն կը լսուէր բուի չարագուշակ ձայնը, որ իր վայերով կը սարսռեցնէր աւերակներն անգամ...։

Անցած են դարեր եւ այդ պատկերը կայ եւ կը մնայ։ Բայց առաջ այդպէս չէր։ Առաջ այդտեղ կեռար կեանքը, կը բաբախէր սրտերը, իսկ հիմակ լուռ էր եւ անշարժ։

Յանկարծ այդ ամայի եւ վայրենի տեղը, աւերակներուն վրայ երեւաց մարդկային արարած մը։ Ան գլուխը սաղաւարտ ունէր, մէջքէն սուր կախ։ Գլխիկոր առաջ կուգար կոխկրտելով աւերակներուն բեկորները եւ արագ արագ ոտքը կը փոխէր մէկ աւերակէն միւսը։ Կարծես անոր ոտքերուն տակ աւերակներու պաղ կոյտեր չըլլային, այլ տաքցած կրակներ կամ ահագին անդունդներ. ան այդպէս կ'աշխատէր ոտքը շուտ հեռացընելու գետնէն։

Ո՞վ էր այդ մարդը, ի՞նչ կը շինէր գիշեր ատեն այդ ամայի աւերակներուն մէջ ուր մարդկային արարածը ցերեկն անգամ չի համարձակիր ոտք դնելու. — յայտնի չէր։

Միայն գիշերային այցելուին դէմքը տժգոյն էր, խիստ տժգոյն եւ անոր նիհար, թուխ դէմքին վրայ կարտացոլէր տանջանքի եւ յուսահատութեան խորունկ դրոշմներ...։

Այդ մարդը, ինչպէս կ'երեւար, կը տանջուէր, ահաւոր տանջանքով մը և ծանր վիշտը կը կրծէր սիրտը։

Եւ դարէ դար կարծես դատապարտուած էր ան տանջուելու, չարչարուելու, մէկ բոպէ, մէկ վայրկեան



անգամ միջոց չունենալով հանգստացնելու իր յոգնած անդամները...

Զարհուրելի էր այդ մարդուն տանջանքը։ Ամէն տեղ ուր ոտքը կը դնէր օձերը կը բարձրացնէին իրենց գլուխները և յառելով իրենց ցուրտ, մագնիսական նայուածքները կը սարսափեցնէին այդ մարդը։

Անիկա կը վազէր, առաջ կը շտապէր, բայց ամէն տեղ, ամէն անկիւն օձերը կը հալածէին եւ կը սարսռեցնէին զինք։ Յուսահատութենէն իր ատամները կը կըրճտեցնէր, կը կանգնէր բեկորի մը վրայ բոպէ մը, վայրկեան մը միայն եւ սիրտ կտրտող ձայնով մը կը կանչէր.

— Ո՜հ, սարսափելի՜ է... սարսափելի՜...

Բայց երբ այդ խօսքերը կ'ըսէր, աւերակները կարծես տեղերնուն կ'ելլէին կը շարժէին, լեզու կ'առնէին եւ ամէն մէկ քարի, ամէն մէկ աւերակի տակէն կը լսուէր։

— Տանջուէ՛ յաւիտեան, ստոր դաւաճան, որ մեր կործանման պատճառը դո՛ւն եղար։

Գիշերային այցելուն կը լսէր այդ խօսքերը եւ իր մազերը փուշ փուշ կ'ըլլային և խելագարի մը պէս առաջ կը վազէր...

Դէպի ո՞ւր, ինքն ալ չգիտեր, սակայն որչափ ան վազէր, այդ աւերակներէն դուրս չէր կրնար ելլել։

Այդ տենդային փախուստի ժամանակ յանկարծ կանգ կ'առնէ և հեռուն կը դիտէ։

Այնտեղ՝ կիսակործան տաճարին առջեւ, այնտեղ ուր օծուած էր պատանի Գագիկ Հայոց Թագաւորը, կ'երեւար ուրիշ մարդ մը, որ ծունկ չոքած մոխիրէ կոյտի մը առջեւ, մոխիրը եւ մոխրին տակէն մնացած վերջին կայծը մէկդի կ'ընէ։ Ի՞նչ կ'ընէ ան. եւ ի՞նչու կրակը աւելի կը տաքցնէ կը բորբոքեցնէ, չէ՞ որ առանց անոր ալ աւերակներու քարերը տաք են եւ գիշերային այցելուին ոտքերը կ'այրեն տաքութենէն։

— Է՜յ, հեռացիր այստեղէն, հեռացի՛ր, կը պոռայ գիշերային այցելուն եւ սուրը պատեանէն կը հանէ։

Անոր ձայնը կը դղրդեցնէ աւերակները և թնդիւններ կը հանէ։

Եկեղեցիին մօտ ծունկ չոքած մարդը կը լսէ անոր ձայնը և կը ցնցուի։ Կը նայի դէպի ձայնը և երկուքին նայուածքները իրարու կը հանդիպին։

Զարհուրանքի, վրէժխնդրութեան մոլի կրակներ կը ժայթքին երկուքին ալ աչքերէն։

— Խենթն է, զարհուրելով կը բացագանչէ գիշերային այցելուն և իր մարմինը կը ցնցուի։

Յանկարծ ծունկ չոքած մարդը վեր կը նետուի տեղէն, ինքն ալ սուրը մերկացնելով կը գոռայ։

Ա՛... Վեստ Սարգիս, արեա՛ն թագաւո՛ր, ողջոյն քեզ, կ'ըսէր Խենթը և անոր վրայ կը վազէ։

Երկուքի սուրերն ալ իրարու կը մխուին, կը զարնուին և լուսնի թոյլ ճառագայթներուն տակ կայծակներ կը հանեն։

Անոնք կը կռուին անվերջ և ոչ մէկը չի կրնար յաղթել միւսին։ Երբեմն երբեմն անոնք կանգ կ'առնեն շունչերնին բերելու, յետոյ կը գոռան զարհուրելի ձայնով և կրկին իրարու վրայ կը վազեն...

— Ի՞նչ պիտի ըլլայ վերջը, ո՞վ պիտի յաղթական դուրս գայ— յայտնի չէ. միայն թէ անոնք կը կը կռուին անվերջ, մինչեւ որ առաւօտեան կենարար անդրանիկ լոյսին հետ անհետանան երկուքն ալ. բայց երբոր գիշեր կ'ըլլայ, երբոր մութը կը պատէ գետինը, անոնք դարձեալ կը հանդիպին իրարու և կը շարունակեն իրենց անվերջ կռիւը... Դարեր անցած են, անոնք դեռ կը կռուին անվերջ եւ ոչ մէկը անոնցմէ յաղթական չէ ելած։

Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վախճանը. Աստուած միայն գիտէ...

# ՎԵՐՋԱԲԱՆ

Ալփասլանի ձեռքով Անիին կործանումէն վերջ Հայաստանը կորսնցուց իր անկախութիւնը եւ ինկաւ Սելճուկեան Թուրքերուն տիրապետութեան ներքեւ։ Յոյները, որ Հայոց թագաւորութիւնը կործանած էին և գրաւած երկիրը, շատ կարճ ժամանակ վայելեցին իրենց յաջողութեան պտուղը և տեղի տալով Սելճուկեան Թուրքերուն, իրենք ալ տուժեցին կորսնցնելով նախ արեւմտեան նահանգները իսկ վերջը և իրենց անկախութիւնը։ Տարաբաղդ Գագիկը որ շնորհիւ դաւաճանութեան կորսնցուցած էր իր թագաւորութիւնը, երկար ժամանակ Կապադովկիոյ մէջ թափառեցաւ որպէս զի մէկ հնար մը գտնէ նորէն ձեռք ձգելու իր թագաւորութիւնը, սակայն բան մը չկրնալով ընել յուսահատութենէն կը տանջուէր և ականատես կ'ըլլար այն նախատինքներուն որ յոյները կը թափէին իր հայրենակիցներուն գլխուն։ Բայց Գագիկի համբերութեան բաժակը լեցուեցաւ և ան իր վրէժը Կեսարիոյ Մարկոս մետրոպոլիտէն հանեց։ Այս հայատեաց եկեղեցականը Գագիկին աւելի նախատելու համար իր շան անունը «Արմէն» դրած էր։

Գագիկ երբ իմացաւ այդ, գնաց այդ մետրոպոլիտին մօտ, կանչեց շունը և երկուքն ալ պարկի մը մէջ դնելով կապեց և այնքան ծեծել տուաւ շունը պարկին մէջ, մինչեւ որ անասունը կատղեցաւ և խածնելով սպաննեց իր տէրը։

Այդ լուրը յոյներու ականջը հասաւ և երեք եղբայրներ՝ Մանտալեանք անունով, դաւաճանութեամբ բռնեցին Գագիկը և Կիզիստրայի բերդին վրայ կախեցին։ (1079)

Այսպէս եղերակա՛ն վախճան մը ունեցաւ Բագրատունեաց վերջին թագաւորը, որ զոհ գնաց վատ խորամանկութեան մը։

Գագիկ ամուսնացած էր Սեբաստիայի Դաւիթ թագաւորին աղջկան հետ և երկու զաւակ ունէր. Յովհաննէս և Դաւիթ անուններով։ Ասոնք ալ մէկը միւսին ետեւէն թունաւորուելով մեռան և իրենց հետ թաղեցին Բագրատունեաց տոհմը։

Իսկ Անի քաղաքը, Ալփասլանի ձեռքով կործանուելէն վերջ ամայի մնաց 300 տարի չափ և խաղալիք դարձաւ այլ և այլ կուսակցութեանց, որոնք հետզհետէ իրարու ձեռքէ կը յափշտակէին մինչև որ ԺԴ.րդ դարուն մէջ զօրեղ երկրաշարժ մը վերջ դրաւ անոր տանջալից կեանքին։

Այդ միջոցին ա՛լ կենդանի չէին անոնք որոնք Հայաստանի կործանմանը նպաստեցին։

Վեստ Սարգիս՝ ինչպէս յայտնի է, ստացաւ իր արժանաւոր հատուցումը՝ գահին փոխարէն հոգեկան տանջանք, իսկ Կիրակոս քահանան, որ ոսկիները ստանալէն յետոյ անհետ կորսուեցաւ, իր անարժան մարմինը հայրենի հողը չընդունեց իր գիրկը և գազաններու կերակուր դարձաւ

Հարպիկն ալ, Հարեկի որդին, որ մինչև խոր ծերութեան համնիլը, կ՚ապրէր մութ լեռներու հայրենի Արղնոյ բերդին մէջ իր գիրկին մէջ ունենալով Վահրամին աղջիկը՝ Գոհարիկ։

Լեռներու աւազակը արդէն զաւակներու տէր էր, որոնք մեծնալով մութ լեռներու վայրենի ծերպերուն մէջ, կամաց կամաց կը հասկնային՝ չարն ու բարին, և իրենց ծնողաց շնչումը կը սնանէին։

Այդ շունչին մէջ կար հայրենիքին սէրը և վրէժխնդրութեան սոսկալի բոցը. իսկ այդ բոցը աւելի կը սաստկացնէր Հարպիկի եղբայրը՝ չարաբաստիկ անցքերու ականատես վշտաբէկ Լեւոնիկը...

ՎԵՐՋ

Տպագրիչ ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻՒՐԱՏ
Կ. Պոլիս Սուլթան Համամ Մօլլա Թ.ռ
1910

Госс. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

— Է՜յ, հեռացիր այստեղէն, հեռացի՛ր, կը պոռայ գիշերային այցելուն եւ սուրը պատեանէն կը հանէ։

Անոր ձայնը կը դղրդեցնէ աւերակները և թնդիւններ կը հանէ։

Եկեղեցիին մօտ ծունկ չոքած մարդը կը լսէ անոր ձայնը և կը ցնցուի։ Կը նայի դէպի ձայնը և երկուքին նայուածքները իրարու կը հանդիպին։

Զարհուրանքի, վրէժխնդրութեան մոլի կրակներ կը ժայթքեն երկուքին ալ աչքերէն։

— Խենթն է, զարհուրելով կը բացագանչէ գիշերային այցելուն և իր մարմինը կը ցնցուի։

Յանկարծ ծունկ չոքած մարդը վեր կը նետուի տեղէն, ինքն ալ սուրը մերկացնելով կը գոռայ։

Ա՜... Վեստ Սարգիս, արեան թագաւոր, ողջոյն քեզ, կ'ըսէր Խենթը և անոր վրայ կը վազէ։

Երկուքի սուրերն ալ իրարու կը մխուին, կը զարնուին և լուսնի թոյլ ճառագայթներուն տակ կայծակներ կը հանեն։

Անոնք կը կռուին անվերջ և ոչ մէկը չի կրնար յաղթել միւսին։ Երբեմն երբեմն անոնք կանգ կ'առնեն շունչերնին բերելու, յետոյ կը գոռան զարհուրելի ձայնով և կրկին իրարու վրայ կը վազեն...

— Ի՞նչ պիտի ըլլայ վերջը, ո՞վ պիտի յաղթական դուրս գայ — յայտնի չէ. միայն թէ անոնք կը կը կռուին անվերջ, մինչեւ որ առաւօտեան կենարար անդրանիկ լոյսին հետ աներեւութանան երկուքն ալ. բայց երբոր գիշեր կ'ըլլայ, երբոր մութը կը պատէ գետինը, անոնք դարձեալ կը հանդիպին իրարու և կը շարունակեն իրենց անվերջ կռիւը... Դարեր անցած են, անոնք դեռ կը կռուին անվերջ եւ ոչ մէկը անոնցմէ յաղթական չէ եղած։

Ի՞նչ պիտի ըլլայ ասոր վախճանը. Աստուած միայն գիտէ...

# ՎԵՐՋԱԲԱՆ

Ալփասլանի ձեռքով Անիին կործանուելէ վերջ Հայաստանը կորսնցուց իր անկախութիւնը եւ ինկաւ Սելճուկեան Թուրքերուն տիրապետութեան ներքեւ։ Յոյները, որ Հայոց թագաւորութիւնը կործանած էին և գրաւած երկիրը, շատ կարճ ժամանակ վայելեցին իրենց յաջողութեան պտուղը և տեղի տալով Սելճուկեան Թուրքերուն, իրենք ալ տուժեցին կորսնցնելով նախ արեւմտեան նահանգները իսկ վերջը և իրենց անկախութիւնը։ Տարաբաղդ Գագիկը որ շնորհիւ դաւաճանութեան կորսնցուցած էր իր թագաւորութիւնը, երկար ժամանակ Կապադովկիոյ մէջ թափառեցաւ որպէս զի մէկ հնար մը գտնէ նորէն ձեռք ձգելու իր թագաւորութիւնը, սակայն բան մը չկրնալով ընել յուսահատութենէն կը տանջուէր և ականատես կ'ըլլար այն նախատինքներուն որ Յոյները կը թափէին իր հայրենակիցներուն գլխուն։ Բայց Գագիկի համբերութեան բաժակը լեցուեցաւ և ան իր վրէժը Կեսարիոյ Մարկոս մետրապոլիտէն հանեց։ Այս հայատեաց եկեղեցականը Գագիկին աւելի նախատելու համար իր շան անունը «Արմեն» դրած էր։

Գագիկ երբ իմացաւ այդ, գնաց այդ մետրապօլիտին մօտ, կանչեց շունը և երկուքն ալ պարկի մը մէջ դնելով կապեց և այնքան ծեծել տուաւ շունը պարկին մէջ, մինչեւ որ անասունը կատղեցաւ և խածնելով սպաննեց իր տէրը։

Այդ լուրը Յոյներու ականջը հասաւ և երեք եղբայրներ՝ Մանտալեանք անունով, դաւաճանութեամբ բռնեցին Գագիկը և Կիզիստրիայի բերդին վրայ կախեցին։ (1079)

Այսպէս եղերական վախճան մը ունեցաւ Բագրատունեաց վերջին թագաւորը, որ զոհ գնաց վատ խորամանկութեան մը։

Գագիկ ամուսնացած էր Սենեքերիմի Դաւիթ թագաւորին աղջկան հետ և երկու զաւակ ունէր. Յովհաննէս և Դաւիթ անուններով։ Ասոնք ալ մէկը միւսին ետեւէն թունաւորուելով մեռան և իրենց հետ թաղեցին Բագրատունեաց տոհմը։

Իսկ Անի քաղաքը, Ալփասլանի ձեռքով կործանուելէն վերջ ամայի մնաց 300 տարիի չափ և խաղալիք դարձաւ այլ և այլ կուսակցութեանց, որոնք հետզհետէ իրարու ձեռքէ կը յափշտակէին մինչև որ ԺԴ. րդ դարուն մէջ զօրեղ երկրաշարժ մը վերջ դրաւ անոր տանջալից կեանքին։

Այդ միջոցին ա՛լ կենդանի չէին անոնք որոնք Հայաստանի կործանմանը նպաստեցին։

Վեստ Սարգիս՝ ինչպէս յայտնի է, ստացաւ իր արժանաւոր հատուցումը՝ գահին փոխարէն հոգեկան տանջանք, իսկ Կիրակոս քահանան, որ ոսկիները ստանալէն յետոյ անհետ կորսուեցաւ, իր անարժան մարմինը հայրենի հողը չընդունեց իր գիրկը և գազաններու կերակուր դարձաւ

Հարպիկն ալ, Հաբելի որդին, որ մինչև խոր ծերութեան հասնիլը, կ'ապրէր մութ լեռներու հայրենի Արղնոյ բերդին մէջ իր գիրկին մէջ ունենալով Վահրամին աղջիկը՝ Գոհարիկ։

Լեռներու աւազակը արդէն զաւակներու տէր էր, որոնք մեծնալով մութ լեռներու վայրենի ծերպերուն մէջ, կամաց կամաց կը հասկնային չարն ու բարին, և իրենց ծնողաց չնչովը կը սնանէին։

Այդ շունչին մէջ կար հայրենիքին սէրը և վրէժխնդրութեան սոսկալի բոցը. իսկ այդ բոցը աւելի կը սաստկացնէր Հարպիկի եղբայրը՝ չարաբաստիկ անցքերու ականատես վշտաբէկ Լեւոնիկը...

**ՎԵՐՋ**

Տպագրիչ ՎԱՂԻՆԱԿ Ս. ԲԻԻՐԱՏ
Կ. Պոլիս Սուլթան Համամ Մօլլա Թաշ
1910

ՄԻՍԱՔ Ս. Մ. ՔՕՉՈՒՆԵԱՆ
«ՔԱՍԻՄ»

# ԿԱՐԱՊԵՏ

Սեպտեմբեր մէկէն սկսեալ պրակ առ պրակ պիտի սկսինք հրատարակել ՔԱՍԻՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ այս վէպը․ ամէն Հայու սրտին մէջ վառ պահելով գաւառացիի կեանքը ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0322785

19.376